Լուսինն ալ կը սիրէ՞ք:	Do(you all) love the moon too?

Adjective լաւ

Լ լ լուսին

The adjective լաւ has a wide range of positive meanings: good, nice, pretty, well.[15] It is very frequently used. The translation of the word always depends on the entire context.

A few examples of usage:

Անին լաւ է:	Ani is fine (feels good, etc.).
Անին լաւ կին է:	Ani is a nice woman.
Արան լաւ մարդ է:	Ani is a good person.
Արան լաւ ամուսին է:	Ara is a good husband.
Անիին ամուսինը լաւ մարդ է:	Ani's husband is a nice person.
Լա՞ւ ես:	Are you OK?
Դուն լա՛ւն ես:	You are great!
Աս լաւ կատակ էր:	It was a good joke.
Ան լաւ սիրտ ունի:	He has a kind heart.
Լաւ, մենք տունը կ'ըլլանք:	OK; we will be at home.
Լաւ տուն մը տեսաւ եւ ներս մտաւ:	(S/He) saw a nice house and entered.
Լաւ ընկերը ոսկի է:	A good friend is gold.
Լաւ ընկերը ոսկիէն ալ լաւ է, - կ'ըսէ Արիս:	A good friend is better than gold, says Aris.
Ոսկորէ՞ն ալ լաւ է, - կ'ըսէ Սեւուկ:	Is (he/she) also better than a bone?, says Sevug.

[14] Details see in Lesson 9.

[15] See the equivalents in Lesson 8.

ASSIGNMENTS

Phonetic Exercises

1. *Practice writing the letters* Դ դ, Ը ը, Լ լ, Ք ք; *repeat each letter at least five times.*
2. *Place the letters you learned in the alphabet, Appendices 1 and 2. Choose your favorite keywords.*
3. *Try to remember the letters in the words and the words in the sentences of the lesson.*
4. *Make flash cards with pictures and learn the key words to the letters.*
5. *Fill out the chart writing the words in lower case in upper case and vice versa.*

դաս	
	ԴՈՒՆ
ամուսին	
	ԸՆՏԱՆԻՔ
ընկեր	
	ԴՐԱՄ
ոսկի	
	ԿԻՆ
լուսանալ	
	ՄԱՐԴ
քանակ	
	ՆՍՏԻԼ

Lexical Exercises

1. *Read the text, translate it, and copy it.*
2. *Make oral sentences of your own using the words you know.*
3. *Find nouns with articles in the texts. Explain their usage and write the same words without articles.*
4. *Write the possessive forms of the nouns according to the sample and make sentences with those phrases.*

Direct Form	My + Noun+ Article	Your + Noun+ Article	His/Her + Noun+ Article	His/Her (Own) + Noun+ Article
տուն	իմ տունս	քու տունդ	անոր տունը	իր տունը
դաս				
ընկեր				
ամուսին				
կատու				
ընտանիք				
տէր				
անուն				

5. *Fill in the corresponding form of the auxiliary verb* Է.

1. Աս տուն...: 2. Ես լաւ...: 3. Դուք երիտասարդ...:

4. Դուն լաւ ընկեր ...: 5. Մենք մարդ ...: 6. Ատ նաւ...:

7. Անոնք տունն ...: 8. Ան նաւաստի...: 9. Աս Անին ...:

10. Արարատը սար ...: 11. Ամերիկան երկիր...:

6. Fill in the corresponding personal or demonstrative pronouns:

ես, դուք, ան(իկա), մենք, դուն, անոնք, աս, ատ.

1. ... երիտասարդ եմ: 2. ... դաս ունիմ: 3. ... իմ ընկերս ես:

4. ... տուն եւ ընտանիք ունիս: 5. ... լաւ է: 6. ... նաւ ունին:

7. ... սուր մկրատ է: 8. ... մանուկ ենք: 9. ... լաւ սիրտ ունի:

10. ... լաւ եմ: 11. ... նոր մարդ էք: 12 ... լաւ լուր է:

13. ... նուէր ունիք: 14. ... կատու ունինք: 15. ... քսան տարեկան է:

7. Translate the following into English.

1. Ես լաւ եմ: Եւ Դու՞ք: Դուք ընտանիք ունի՞ք:

2. Արամը լաւ տուն ունի: Ընտանիք ալ ունի՞:

3. Ան մանուկ ունի: Իր մանուկը երեք տարեկան է:

4. Ելակը կարմիր է: Նետը սուր է: Մարդիկ լաւ են:

5. Մենք մանուկներ ենք: Իմ ընկերս տասներեք տարեկան է:

6. Սեւուկ իր ոսկորը կը սիրէ:

7. Արիս անոր ոսկոր մը կու տայ:

8. Աս Անին է: Անին երիտասարդ եւ սիրուն է:

9. Ես Անին եմ: Իմ անունս Անի է:

10.Անին և Արան ամուսիններ են: Անին կ'ըսէ. «Ես կը սիրեմ Արան»:

11.Անին իր ամուսինը կը սիրէ: Արան ալ Անին կը սիրէ:

12.Արան միշտ իր կինը կը սիրէ:

13.Եւ ես իմ տունս կը սիրեմ:

14.Աս տու՞ն կը կենաք:

15.Դասը կը սկսի:

8. Translate the following into Armenian:
1. This is a house. It's new. This is my house. It's mine. My house is nice. I have a family. I love my home and my family.

2. The shadows are black. The strawberry is red. Is this your son? You have a good son. My friend is a nice person. He has a heart of gold. He is twenty years old. This is his home. He loves his home.

3. That is a mountain. That is mount Ararat. That is our mountain. Where is mount Ararat?

4. Ardag is a child. He has a cat. His name is Aris. Is this your cat, Ardag? Is it yours? "Aris is mine," says Ardag, and I am Aris's.

Rules:

1. ո is [vo] in initial positions—e.g., ոսկի [vosgi] *gold*; otherwise, [o]—e.g., որոտ [vorod] *thunder*, նոր *new*.
2. The auxiliary verb is always pronounced with [e] but in the present tense forms is spelled է only twice: in the third person singular է and third person plural էք.
3. ե at the beginning of the word is pronounced [ye], except the following four forms of the auxiliary verb է: first person singular: եմ *am*; second person singular: ես *are*; first person plural: ենք *are*; third person plural: են *are*.


որոտ

Proverbs: Sayings and proverbs present the collective wisdom of a nation. They are brief and meaningful statements, often metaphorical, serving as an excellent introduction to a new culture. Beginning with this lesson we will present proverbs at the end of each lesson under the heading ժողովուրդը կ'ըսէ *the people say.*

ժողովուրդը կ'ըսէ.

Կամեցալը կարեցալ է:[16]

[16] Where there's a will there's a way. Literally: To will/want is to be able.

EASTERN ARMENIAN PARALLEL FOR LESSON 4

Phonetics: Pronunciation and Spelling

Letters:	Դ դ	Լ լ	Ո ո	Ք ք
	[d]	[l]	[vo, o]	[k']

- The letter Դ դ sounds [**d**] in EA, like in Grabar and versus WA [t']. However, the EA Դ դ in some positions has undergone the same sound change; it sounds [t'] end of the word, between vowels and before sonorants,[1] e.g., արդար *just, fair* sounds [art'ar] both in EA and WA, դադար *break* sounds [datar] in EA and [tatar] in WA. This positional change affects the words which came to the EA standard from vernaculars. Words borrowed directly from Grabar maintain the sound [d], e.g., ամարդի *inhuman, low* is pronounced phonetically both in EA [tmardi] and in WA [dmart'i], though its root, մարդ *person, human, man* is [mart'] in EA, just like in WA. Middle and New Armenian local borrowings differ in EA and WA spelling if they contain the sound [d] and, e.g., Turkish *dard "sorrow"* in EA is spelled դարդ and in WA, ատրտ. The positional sound change characterizes almost all voiced consonants in EA.[2] Thus, the EA consonant shift is midway between Grabar (with phonetic sound for these letters) and the advanced shift of WA (with voiceless aspirated sound for the same).
- The letter Ո ո is more frequent in RO because it substitutes the letter Oo (see Lesson 5) in all mid-word or final positions of the CO. Compare with the letter Ե ե. Both Ո ո and Ե ե were simple vowels in Grabar: [o] and [e], and they maintain that pronunciation in many dialect words; however, in the both standard varieties of modern Armenian they have shifted to [vo] and [ye] in initial positions.[3]

GRAMMAR

Personal Pronouns exhibit small differences; their use is practically identical.

Pronouns	EA	WA	English
1st Person Sing	ես	ես	I
2nd Person Sing	**դու**	**դուն**	you (thou)
3rd Person Sing	**նա**, ինքը	**ան**, ինք	he, she
1st Person Pl	մենք	մենք	we
2nd Person Pl	դուք	դուք	you
3rd Person Pl	**նրանք**, իրենք	**անոնք**, իրենք	they

Possessive Pronouns

1. Possessive Pronouns *քո, քոնը* and the Possessive Article *դ*

The second person possessive article -դ in EA excludes the use of the possessive pronoun, that is,

ընկերդ or քո ընկերը *your friend*, versus քու ընկերդ in WA.

Compare to the first person articles:

EA: ընկերս or իմ ընկերը *my friend*,

WA: ընկերս or իմ ընկերս *my friend.*

In EA, the substantive քոնը *yours* does not attach the article either, versus WA քուկդ. Cf.: it usage:

Քո դիմակը տանն է:	Your mask is home.
Դիմակդ տանն է:	
Քոնը տանն է:	Yours is home.

[1] Sonorants are voiced consonants capable of being syllabic, like l, r, m, n, y, Armenian լ, ր, մ, ն, յ.

[2] Particularly: բ, գ, դ, ձ, ջ, ղ, վ, see the summary in EA Lesson 13, also: appendix 4

[3] The original pronunciation is restored in compounding, for example, որակ [vorak] but բարձրորակ [barts'rorak]; երես [yeres] but աներես [aneres].

2. Possessive Pronouns նրան(ը), իր(ենը) and the Definite Articles as Possessives:

The WA անոր corresponds to two forms in EA:

Grammatical form	EA	WA
Genitive-Possessive	նրա	անոր
Dative	նրան	անոր
Substantive	նրանը	անորը

The use of the definite articles -ը and -ն as third person possessives is identical. Cf.:

EA	WA	Translation
Սա Արամի տունն է:	Այս Արամին տունն է:	This is Aram's house.
Նրա տունը լավն է:	Անոր տունը լավ է:	His house is good.
Արամը սիրում է իր տունը: or Արամն իր տունն է սիրում:	Արամը իր տունը կը սիրե:	Aram loves his house.
Իսկ դու սիրու՞մ ես նրա տունը:	Եւ դուն անոր տունը կսիրե՞ս:	And do you love his home?

The conversational substitution of possessive pronouns with anaphoric counterparts is typical to EA too:

Instead of standard: նրա, նրան and նրանը

Conversational: իր(ա), իրեն/իրան and իրենը/ իրանը

The forms with ա are colloquial. The table below summarizes EA and WA pronouns we have learned so far, differences are in bold:

Possessive Pronouns	EA	WA	English
1st P.	իմ	իմ	My
1st P. substantive	**իմը**	**իմս**	Mine
2nd Person	**քո**	**քու**	Your
2nd Person substantive	**քոնը**	**քուկդ**	Yours
3rd P.	**նրա**	**անոր**	His, her, its
3rd P. substantive	**նրանը**	**անորը**	His, hers, its
3rd P. anaphoric-reflexive	իր	իր	His, her, its
3rd P. anaphoric substantive	իրենը	իրենը	His, hers, its

Verb Infinitives

EA Infinitives have two endings, ել and ալ. The absolute majority of WA and Grabar -իլ verbs end in -ել in EA, and only a few, in -ալ, e.g.: EA: ժպտալ, ծորալ WA: ժպտիլ, ծորիլ (see the letters in Lessons 5, 11, 12). The WA ըլլալ, *to be*, is լինել in EA and լինիմ in Grabar; it is irregular throughout Armenian, like in all Indo-European languages.

EA Conjugation ե	WA Conjugation ի	Translation
կարմրել	կարմրիլ	*to redden, blush*
նստել	նստիլ	to sit
ունեմ	ունիմ	I have
սկսել	սկսիլ	to begin
տանել	տանիլ	to take

Text **ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍԵՐ**

Արան և Անին ամուսիններ են: Նրանք սիրում են իրար: Անին սիրում է Արային: Արան էլ Անիին է սիրում:

Արան ասում է. - Սա Անին է: Անին իմ կինն է: Սիրում եմ Անիին: Ես Անիին եմ սիրում:

- Անի՛, իսկ դու՞: Դու սիրու՞մ ես Արային:

- Սիրում եմ Արային: Նա իմ ամուսինն է և իմ ընկերը: Նրանն են իմ սիրտն ու սերը, - ասում է Անին:

Արան լսում է և ասում.

- Մենակ Անիին եմ սիրում: Նա իմ ընտանիքն է, իմ կինը և իմ ընկերը: Նրանն են իմ սերը, սիրտն ու դրամը:

Note for the Simple Present Tense

The present tense in EA is formed with the present imperfect participle with the auxiliary verb: սիրում եմ *I love,* սիրում ես *you love, etc.* Like in WA, it is analytical, that is consists of two parts, and like in WA, only one of them changes. Opposite to WA, the conjugation is expressed with the auxiliary verb, whereas the content verb maintains the same participle form. In WA, the particle կը remains unchanged and the content verb conjugates. In both versions, the conjugation endings make the use of pronouns unnecessary, opposite to English.

The EA present imperfect participle is formed from the infinitive by removing the endings -ել and -ալ and attaching the suffix -ում, e.g., ասել/ասում, անել/անում.

Auxiliary Verb ԵՄ in the Present Tense follows the same irregular pattern in EA, as in WA. There is a spelling difference in RO: եք for the second person plural: եմ, ես, է, ենք, **եք**, են. This spelling carries over to all verb endings, e.g.: subjunctive սիրեք, conditional կսիրեք, etc.

Irregular Verb Ունեմ in the Present Tense follows the same irregular pattern as in WA; the difference is the conjugation ե and the spelling ե in the second person plural. Thus, the verbs եմ and ունեմ have synthetic forms for the present and past tenses, and they express other grammatical meanings through the verbs լինել *to be* and ունենալ *to have*, like in WA

Pronouns		SINGULAR		Pronouns		PLURAL	
ես	եմ	ունեմ	I have	մենք	ենք	ունենք	we have
դու	ես	ունես	you (thou) have	դուք	եք	ունեք	you have
նա	է	ունի	he, she, it has	նրանք	են	ունեն	they have

Note on the Animate Direct Object in EA

In WA, the direct object (accusative case) formally coincides with the nominative or direct form of the noun. E.g., from your text: Անին կը սիրէ Արան: The word order defines who loves whom—the subject (Ani) and the direct object (Ara). The word order change, like in English, changes the grammatical function of these nouns.

EA differentiates the grammatical category of animate/inanimate direct object, or animate accusative. The latter formally coincides with the dative and the inanimate, with the nominative. Thus, the sentence above in EA sounds as:

Անին սիրում է Արային: The animate direct object Արային has a dative-like ending -ին.

Անին սիրում է իր տունը: The inanimate direct object տունը has a nominative-like form.

Animals may be referred as animate or in animate objects depending on the speaker's intention, cf.:

Անին կատու է սիրում: Ani loves cats.

Արտակը սիրում է իր կատվին՝ Արիսին: Artak loves his cat, Aris.

Many WA speakers in Los Angeles use the animate direct object due to a powerful EA interference.

Vocabulary Differences

Content words: Nouns, Verbs, Adjectives, Adverbs

EA	Translation	WA	Translation
ելնել		ելլել	to get up, rise
ասել		ըսել	to say
լինել		ըլլալ	to be
անել		ընել	to do
սանր		սանտր	comb
քանոն	ruler	քանակ	ruler HF
քանակ		քանակ	quantity HR
ավերել HR	to break, destroy	աւրել	to spoil, break, destroy
(մնալ, սպասել, ապրել)		կենալ	to stay, wait; rent, temporary live
(լսել)		մտիկ ընել	listen
մենակ		միսակ	only, alone

Functional words: Pronouns, Prepositions, Conjunctions

EA	WA	Translation
դու	դուն	you
քո	քու	your
քոնը	քուկդ	yours
նա	ան, անիկա	he/she/it
նրա	անոր	her, his, its
նրան(ը)	անոր(ը)	hers, his, its

FOR ADVANCED STUDENTS: Simple Present Tense; Direct Object:

Find the verbs in simple present tense; find the animate and inanimate direct objects. Note the use of possessive pronouns. Try to translate the poem into WA or English looking up new words in the glossary (appendix 11).

Վահագն Տերյան

Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում
Ո՛րն է լավ, որը՝ վատ.
Ես սիրում եմ աչքերդ խոհուն
Եւ խոսքերդ վհատ...

Ես սիրում եմ արտերը ոսկի
Եւ դաշտերը պայծառ,
Ես սիրում եմ խորհուրդն այն խոսքի,
Որ չասիր ու անցար...

Միայնակ՝ ես սիրում եմ նստել
Երերուն լույսերում,
Ես սիրում եմ երազ ու ստվեր, --
Ես իմ սերն եմ սիրում...

LESSON 5

PHONETICS

Letters: Ձձ [ch'] Յյ [y, h] Պպ [b]* Oo [ō]*

The Diphthong ոյ

Reduction of ոյ to ու

Phonetic Pronunciation

GRAMMAR

Simple Present Tense

եմ, ունիմ in Negative

Present Tense Negative

Defective Verb կրնամ

Կրնամ plus Infinitive

Constructions with the particle ալ

VOCABULARY

Question words ի՞նչ, ինչպէ՞ս

Words for *ALSO:* ալ, նաեւ, եւս, նոյնպէս, նմանապէս

Answer Words Այո, Ոչ

Dialogues: Family. ԸՆՏԱՆԻՔ

PHONETICS

Letters	**Vowel**	**Consonants**
Mini letter:	Oo [ō]	

Յասմիկ

Descending letters

Ձձ [cha]
Յյ [hi]
Պպ [be]

Position in Alphabet	Letter	Letter Name		Key Word	Pronunciation
21	Յ յ	յի	[hi]	յասմիկ jasmine	[h] [y] [-]
25	Ձ ձ	ձա	[cha]	ձմռուկ skates	[ch']
26	Պ պ	պէ	[be]	պնակ plate	[b]
39	O o	o	[o]	օձ snake	[ō]


Պպ պար

Pronunciation note:

Յ յ has three readings:

- At the beginning of a word it is [h]—e.g., յասմիկ [hasmig] *jasmine*; յունուար [hunvar] *January*; յաւէտ [haved] *forever*. For the sound [y] in the beginning of a word is used, e.g., Նիու Յորք, եասաման *lilac*
- In the middle of a word it is [y]—e.g., պայուսակ [bayusag] *bag*; մայր [mayr] *mother*; կայի [gayi] *I was*. Depending on the position,

- may read [y] or [h] in the same word, e.g., յայտնի *famous, well known.* Note, that the spelling and pronunciation do not change in word building, e.g., անյայտ [anhayd] *unknown.*
- At the end of a word it is a silent letter. Final silent յ occurs only after the vowels ա and ո—that is, if a word ends with the sounds [a] or [o] it should have a silent յ at the end—e.g.—հետո [hedo] *later*; երեկո [yerego], *evening*; կայ [ga] *there is.*

There are some exceptions from the last rule:

- A few monosyllabic words with a pronounced final յ, as Նոյ [noy] Noah.
- Words spelled without final յ, as այո [ayo] *yes*; ասիկա [asiga] *this*; Ամերիկա [*america*].[1]
- ա verbs in imperative forms: մնա՛ *Stay!* որսա՛ *Catch!*

Օ օ is always pronounced [o].[2]



Օ օ օձ [ots']

- Օ is used for the sound [o] at the beginning of a word[3]—e.g., օրինակ *example, sample*; օր *day*. Such words maintain their spelling if other components are added from the right—e.g., այսօր *today*, կէսօր *noon,* ընդօրինակել *copy.*
- In other than initial positions the spelling must be memorized because there are two letters, о and ո, for the sound [o]—e.g., օրիորդ *miss* օրօր *lullaby*, մօտ *near, at*, կարօտ *missing, longing.*
- At the end of a word the sound [o] is expressed with either the letter combination ոյ or the letter о. The ոյ spelling for final [o] is a tradition coming from Krapar; that is why one can write Արտո, Կարո or Արտոյ, Կարոյ but only երեկոյ.



լոյս

Diphthong ոյ

- The diphthong ոյ before consonants is pronounced [uy]—e.g., լոյս [luys] *light*; քոյր [kuyr] *sister*; կապոյտ [gabuyd] *blue*; յոյս [huys] *hope.*
- In a final position in polysyllabic words it is simple [o], that is, the final յ is silent—e.g., երեկոյ, հետոյ.
- Before vowels it is pronounced phonetically, as it is spelled [oy]—e.g., երեկոյեան *in the evening,* Նոյեան տապան *Noah's ark.*

Reduction of ոյ to ու

The diphthong ոյ changes to ու when it becomes unstressed; e.g.:

լոյս	light	⇒	լուսին	moon
յոյս	hope	⇒	յուսալ	to hope
յոյն	Greek	⇒	Յունաստան	Greece
կոյր	blind	⇒	կուրանալ	to become blind
կապոյտ	blue	⇒	կապուտակ	blue (*diminutive*)

[1] The word Ամերիկա (and many others) maintain the historical pronunciation before the shift of the simple voiceless consonants into voiced consonants, i.e., կ was an unaspirated [k], as *k* in English *scorn, skip*; cf. also Արարատ Ararat, Սպանիա Spain, Իտալիա Italy, etc.

[2] The letter ō did not exist in the Mesropian Alphabet. It was borrowed from the Latin alphabet in early Middle Armenian because of the phonetic shift of the old diphthong ու which began to be pronounced as [o].

[3] Exceptions: ով who, ովկիանոս *ocean.* These words maintain the classical spelling and pronunciation.

This change comes from Krapar and, as every old rule, it has many exceptions in the modern language. For example, կոյրնալ and լոյսնալ are often used instead of կուրանալ and լուսանալ; the word քոյր *sister* has two diminutive forms—քոյրիկ (literary) and քուրիկ (colloquial). Along with կապուտակ from կապոյտ, there is the verb կապտիլ *to turn blue,* with a total deletion of the diphthong. Thus, the change is not absolute.

Note on orthography: The final silent letter յ is dropped if a consonant is added to it. Examples:

Այս երեկոյ կը տեսնուինք:
We will see (each other) this evening (tonight).

Երեկոն կապոյտ է:
The evening is blue.

Չ չ չմուշկ
[ch'mushg]

Phonetic Pronunciation

The consonants պ and չ, presented in this lesson, as well as the vowel օ, have a phonetic pronunciation; that is, they always sound the way they are spelled; for example, պար [bar] *dance*; պայուսակ [bayusag] *bag*; չար[char] *mean, evil, naughty*; չոր [chor] *dry*; չիր [chir] *dried fruit*; չակերտ [chagerd] *quotation mark*; օր[or] *day*; այսօր [aysor] *today.*

« »
չակերտ

Phonetic pronunciation also characterizes most of the letters presented in earlier lessons: the consonants ս, տ, ն, ր, կ, մ, դ, լ, ք, and the vowels ա, է, ի, ը.
Recall the words showing the phonetic pronunciation of these characters.

Phonetic drills: Read the following words.

Lower case	Upper case	Translation
այդպէս	ԱՅԴՊԷՍ	that way
այո	ԱՅՈ	yes
այս	ԱՅՍ	this
այսպէս	ԱՅՍՊԷՍ	this way
այսօր	ԱՅՍՕՐ	today
աչք	ԱՉՔ	eye
երկայն	ԵՐԿԱՅՆ	long
պայուսակ	ՊԱՅՈՒՍԱԿ	bag
պատ	ՊԱՏ	wall
պատիւ	ՊԱՏԻՒ	honor
պատկեր	ՊԱՏԿԵՐ	picture
պար	ՊԱՐ	dance
պարոն	ՊԱՐՈՆ	mister, sir
պէս	ՊԷՍ	as, like
պնակ	ՊՆԱԿ	plate

պոչ	ՊՈՉ	tail
ոչ	ՈՉ	no
ոչինչ	ՈՉԻՆՉ	nothing
ինչպէս	ԻՆՉՊԷՍ	how
լոյս	ԼՈՅՍ	light
սակայն	ՍԱԿԱՅՆ	but
կէսօր	ԿԷՍՕՐ	noon
մանչ	ՄԱՆՉ	boy, son
մօտ	ՄՕՏ	close, near
յասմիկ	ՅԱՍՄԻԿ	jasmine
յուսալ	ՅՈՒՍԱԼ	to hope
յոյս	ՅՈՅՍ	hope
յոյն	ՅՈՅՆ	Greek
չար	ՉԱՐ	mean, naughty
եւս	ԵՒՍ	also
սաւան	ՍԱՒԱՆ	sheet
սեպել	ՍԵՊԵԼ	consider
նման	ՆՄԱՆ	like
քակել	ՔԱԿԵԼ	unknot, untie, undo
քոյրիկ	ՔՈՅՐԻԿ	sister
օրիորդ	ՕՐԻՈՐԴ	miss
օդանաւ	ՕԴԱՆԱՒ	airplane

GRAMMAR

Simple Present Tense

The present tense shows current actions that are going on at the moment of speech or take place generally, usually. It is translated into the present progressive (continuous) or simple present tenses of English.[4] The translation depends on the context and/or the lexical meaning of the verb.

Examples:

Անին *կը սիրէ* Արան:	Ani loves Ara.
Անին լաւ *կը պարէ:*	Ani *dances* well.
	or: Ani *is dancing* well.

[4] They are not differentiated in the standard. In conversational speech, the progressive adds the particle կոր; that is, Անին լաւ *կը պարէ կոր:* Ani *is dancing* well.

Regular verbs form the simple present tense with the particle կը, which is placed in front of the main verb and is spelled separately. The verb itself takes the endings **-մ, -ս, -(-), -ՈՒք, -ք, -Ո,**[5] with a preceding theme vowel, according to the verbal infinitive.

Conjugation sample:

Simple Present Tense				
Person/Number		Infinitive սիր-ե-լ	ըլլ-ա-լ	ՈՒստ-ի-լ
1st Sing.	ես	կը սիրեմ	կ'ըլլամ	կը ՈՒստիմ
2nd Sing.	դուՈ	կը սիրես	կ'ըլլաս	կը ՈՒստիս
3rd Sing.	ան	կը սիրէ	կ'ըլլայ	կը ՈՒստի
1st Pl.	մենք	կը սիրենք	կ'ըլլանք	կը ՈՒստինք
2nd Pl.	դուք	կը սիրէք	կ'ըլլաք	կը ՈՒստիք
3rd Pl.	անոնք	կը սիրեն	կ'ըլլան	կը ՈՒստին

Note the following:

- The particle **կը** loses its vowel before verbs beginning with a vowel; it is spelled with an apostrophe and merges into one syllable with the initial vowel of the verb—i.e., կ'ըլլամ instead of [*կը ըլլամ].

  Examples: ըսել *to say*, կ'ըսեմ *I say*; ուտել *to eat*, կ'ուտեմ *I eat.*
- ա verbs have the silent ending **-յ** in the third person singular; e.g.:

  ըլլալ *to be*, կ'ըլլայ *he/she is;* կենալ *to stay*, կը կենայ *he/she stays.*
- ե verbs have the vowel է in the third person singular and second person plural, according to the spelling of the auxiliary verb է in the same grammatical forms; for example:

  ըսել *to say*, կ'ըսէ *he/she says*, կ'ըսէք *you (all) say*
  սիրել *to love*, կը սիրէ *he/she loves*, կը սիրէք *you (all) love.*

եմ, ունիմ in Negative

The negative of the irregular verbs **եմ, ունիմ** is formed by adding the negative particle **չ-** to the positive forms.

Examples in use:

Ես մանուկ չեմ: I am not a child.
Անին քոյր չունի: Ani doesn't have sisters.

Person & Number	Present Tense Negative		
1st Sing.	Ես	չեմ	չունիմ
2nd Sing.	ԴուՈ	չես	չունիս
3rd Sing.	ԱՈ	չէ	չունի
1st Pl.	Մենք	չենք	չունինք
2nd Pl.	Դուք	չէք	չունիք
3rd Pl.	ԱՈոնք	չեն	չունին

Present Tense Negative

Regular verbs form the negative of the simple present tense with the negative forms of the auxiliary verb եմ (i.e., չեմ, չես, չէ, չենք, չէք, չեն) and the negative participle of the main verb. It is formed from the infinitive by replacing the final **-լ** into **-ր**; e.g.:

[5] Same endings as for the auxiliary verb է and other irregular verbs, except for the theme vowel. The simple present tense in Krapar was formed like this too, only without any particles—e.g., ուտեմ *I eat.*

Infinitive	ե Conjugation սիր-ե-լ, ըս-ե-լ	ա Conjugation կեց-ա-լ, ըլլ-ա-լ	ի Conjugation սկս-ի-լ, նստ-ի-լ
Negative Participle	սիրեր, ըսեր	կեցար, ըլլար	սկսիր, նստիր

Conjugation sample:

Present Tense Negative					
Person/Number			Infinitive սիրել	ըլլալ	նստիլ
1st Sing.	ես	չեմ	սիրեր	ըլլար	նստիր
2nd Sing.	դուն	չես	սիրեր	ըլլար	նստիր
3rd Sing.	ան	չի or չ'	չի սիրեր	չ'ըլլար	չի նստիր
1st Pl.	մենք	չենք	սիրեր	ըլլար	նստիր
2nd Pl.	դուք	չէք	սիրեր	ըլլար	նստիր
3rd Pl.	անոնք	չեն	սիրեր	ըլլար	նստիր

Note:

- The auxiliary verb has the form չի instead of չէ in the third person singular—i.e., չի սիրեր *(he/she/it) does not love;* չի կենար *does not stay;* չի նստիր *does not sit* or *is not sitting.*
- Verbs beginning with a vowel have abbreviated euphonic forms in the same third person singular, i.e., չ'ուտեր *(he/she/it) does not eat* or *is not eating;* չ'ապրիր *does not live;* չ'ըլլար *is not.*

For translation the simple present tense Negative or present continuous tense negative of English is used, depending on the context and the lexical meaning of the verb (cf. the positive forms).

Examples:

Արիսը մուկ չի սիրեր:	Aris does not like mice.
Արիսը այսօր չի պարեր:	Aris is not dancing today.
Կէսօրին դասի չենք նստիր:	We do not sit in classes at noon. *or* We are not sitting at lessons at noon.

Irregular Verb կրնամ

Կրնամ *I can* is an irregular verb.[6] It has no infinitive form and no particle կը in the present tense (cf. the verbs է, ունիմ). Կրնամ belongs to ա conjugation and it has the same endings -մ, -ս, -յ, -նք, -ք, -ն in the present tense positive. The negative forms are regular.

Simple Present Tense						
Person/Number	Ես	Դուն	Ան	Մենք	Դուք	Անոնք
Positive	կրնամ	կրնաս	կրնայ	կրնանք	կրնաք	կրնան
Negative	չեմ կրնար	չես կրնար	չի կրնար	չենք կրնար	չէք կրնար	չեն կրնար

[6] There is no special grammatical category for modal verbs (like *can, may, must, shall, will, ought to*, etc. in English) in Armenian. Modality is expressed through verbal moods. Details are given in Lesson 9.

կրնամ + Infinitive

կրնամ is usually followed by a verb in the infinitive form. *Examples:*

Ես կրնամ ըսել:	I can say.
Դուն կրնաս մնալ:	You can stay.
Ան կրնայ ընել:	He can do [so; it; that]. [7]

When emphasized, the infinitive precedes կրնամ, and the pronoun is usually dropped—e.g.:

Ըսել կրնաս, ընել չես կրնար: You can say, (but) you can't do.

The Question words ի՞նչ and ինչպէ՞ս

Question words ի՞նչ and ինչպէ՞ս correspond to English *what? and how?*

A	Ինչպէ՞ս ես:	How are you?
B	Ես լաւ եմ: Դուն ինչպէ՞ս ես այսօր:	I am fine, and how are you today?

Without interrogative intonation ինչ and ինչպէս are relative pronouns, like the English *what, how.* Also, ինչ can be translated into *thing, something, anything,* and ինչպէս into *as, like.*

In common and idiomatic constructions these words often substitute for each other—that is, ինչ can be translated into *how* and ինչպէս into *what.*

Compare the usage of these words in the dialogue continued from above.

A	Լաւ, ինչպէս երէկ: Ի՞նչ կայ-չկայ:[8]	Fine, like yesterday. How is it going?
B	Ամէն ինչ լաւ է:	Everything is OK.
A	Այսօր ի՞նչ օր է:	What day (of the week) is it today?
B	Ամէնէն լաւ օրը՝ կիրակի:	The best day, Sunday.
A	Ի՜նչ լաւ է: Ի՞նչ կ'ընես:	How great! What are you doing?
B	Դաս:	Lessons.
A	Ինչպէ՞ս կ'ընես:	How do you do it? *or:* How are you doing it?[9]
B	Ինչպէս որ կրնամ:	However I can.

Աս ի՞նչ է "What is it?"

The commonly needed question for language students to ask is "What is it?" or "What's the word for it." The question words ի՞նչ and ինչպէ՞ս can substitute for each other in this case, too. Compare:

A	Այս ի՞նչ է:	What is this?
B	Պայուսակ է:	It's a bag. [Lit. Bag is.]
A	Եւ ի՞նչ են ատոնք:	And what are those?

[7] No formal object is required in the corresponding Armenian sentences.

[8] Literally: *What's there and what is not?* This is a common idiomatic expression of frequent use.

[9] In conversational style these the present and present progressive are differentiated with the particle կոր, cf.: Ինչպէ՞ս կ'ընես: *How do you do it?* Ինչպէ՞ս կ'ընես կոր: *How are you doing it?*

B Պայուսակներ: Bags.
A Ասոր ինչպէ՞ս կ'ըսեն: How do they say it?
B Պատկեր կ'ըսեն: (They) say picture.



Note:

- Question words do not necessarily start a sentence; one can say: Այս ի՞նչ է: or Ի՞նչ է այս:
- Questions like Ասոր ինչպէ՞ս կ'ըսեն sound flimsy, however people use them.[10]
- There is no special word for *it*. If necessary the demonstrative pronouns ասյ/այս, ատ/այդ, ան/այն are used with ի՞նչ and their declined forms—ասոր, ատոր, անոր—with ինչպէ՞ս. The choice between these forms depends on the context and the style involved in communication.
- There is no grammatical necessity to formally repeat these pronouns in the replies.
- Reply words do not need articles; Պայուսակ է: means *It is a bag.*
- The auxiliary verb can be omitted from the reply: Ի՞նչ է: *What is it?* Նկար: *A picture.*

Words for *ALSO*—ալ, նաեւ, եւս, նմանապէս, նոյնպէս

There are several words meaning *also*, interchangcablc in context with stylistic differences: ալ is the most frequent and also most flexible; however, it never begins a sentence as *also.* Նաեւ is reserved in that function, because is has an additional meaning of an addendum, cf.: նաեւ պէտք է ըսեմ որ... *Also, I'd like to say that—*

Նաեւ, եւս and նմանապէս are also quite formal compared to , which, in its turn, has other meanings and uses; see below. For meaning difference cf: the following sentences, all translated as:

Aris also dances (like others do). Արիսն ալ կը պարէ: Արիսը եւս կը պարէ: Արիսը նոյնպէս կը պարէ: Արիսը նմանապէս կը պարէ:

Versus: Արիսը նաեւ կը պարէ: *Aris also dances* (in addition to say, singing).

Constructions with the Particle ալ *also*

The particle ալ *also* is emphatic. It stresses the preceding emphasized word In the following examples the pronoun subjects are emphasized.

Մենք ալ կրնանք ըսել:	We also can say.
Դուք ալ կրնաք բարեւել:	You also can greet/say hello.
Անոնք ալ կրնան պարել:	They also can dance.

When the infinitive is emphasized, ալ follows it; for instance:

Մենք ըսել ալ կրնանք:	We can say too.
Դուք մնալ ալ կրնաք:	You can stay too.
Անոնք ընել ալ կրնան:	They can do [so/it/that] too.

[10] Many puns are connected with the question Ի՞նչպէս used instead of Ի՞նչ, cf. a common witticism: Չեր անունը ինչպէ՞ս է: Լաւ ըլլալու է: The following is a true story; the famous violinist Karo Hayrapetian was asked by a local lady during his visit in Lebanon, Ինչպէ՞ս գտաք Լիբանանը: He replied: Քարտէսի վրայ: These examples demonstrate the difference between the standard, so called 'proper' language and the real language used by native speakers.

Often ալ can be substituted with the conjunctions եւ and իսկ.

Դուն կրնա՞ս ըսել:	Can you say [it]?
Այո, դու՞ն ալ: (or: եւ դու՞ն, իսկ դու՞ն)	Yes, and you?
Ըսել ալ կրնամ, ընել ալ: *or*	I can say [it] and I can do [it].
եւ ըսել կրնամ, եւ ընել:	*or* I can both say and do.

Repetition of the particle ալ can be substituted by a repetition of the conjunction եւ. In this case, եւ is emphatic too.

Մենք տեսնել ալ կրնանք, ըսել ալ:	We can see as well
Մենք եւ տեսնել կրնանք, եւ ըսել:	as we can say.

Emphatic ալ and եւ substitute for each other in other constructions as well:[11]

Այսպէս ալ կ՛ըլլայ, այդպէս ալ:	It will do (it's OK) either
եւ այսպէս կ՛ըլլայ, եւ այդպէս:	this way or that way.

As the examples above show, the particle ալ can be translated into *also, too, and,* and if repeated, into *both, either ... or, as well as*. With negative verbs the particle is translated into *no more, no longer.*

Ալ չեմ կրնար պարել:	I can dance no longer. *or* I can't dance any longer.
Այսօր ալ դաս չունինք:	Today we have no more classes. *or* Today we don't have any more classes.

Answer words Այո and Ոչ

Այո and Ոչ correspond to English *yes* and *no*. Examples of use:

Դուք Անի՞ն էք:	Are you Ani?
Այո:	Yes.
Դուք օդանաւ ունի՞ք:	Do you have an airplane?
Ոչ, տակաւին ոչ:	No, not yet.

The negative auxiliary չէ is also a negative answer word. At the end of a sentence it is used for tag questions.

Պարե՞նք:	Would you like to dance? (or: Let's dance)
Ոչ, այսօր չէ:	No. Not today. (*standard*)
Չէ, չէ, այսօր չեմ կրնար:	Oh, no, I can't today. (*conversational*)
Երէկ ինչ լաւ կը պարէինք, չէ՞:	We danced so well yesterday, didn't we?
Հա, լաւ էր:	Yeah, it was nice.

Այո also has a parallel word, հա commonly heard in oral speech.[12]

[11] Details on conjunctions are summarized in Lesson 15.

[12] The letter h is introduced in Lesson 7.

Dialogues: *Ընտանիքին պատկերներ*

Անի

Յասմիկ - Քու անունդ ի՞նչ է:[13]

Անի - Անի:

Յասմիկ - Եւ մականու՞նդ:

Անի - Ասրեան, ես Անի Ասրեանն եմ: Եւ դու՞ն:

Յասմիկ - Ես Յասմիկն եմ: Ան ալ քու ընկե՞րդ է:

Անի - Ոչ, այդ Արան է, ամուսինս: Այս ալ մայրիկիս նկարն է: Իմ սիրելի տիկին Նուարդ մայրիկս:

Նուարդ

Յասմիկ - Նուա՛րդ մայրիկ, Դուք ընտանիք ունի՞ք:

Նուարդ - Այո այս ամուսինս է: Մենք երկու որդի եւ մէկ դուստր ունինք:

Յասմիկ - Դուք ի՞նչ կ'ընէք, Նուա՛րդ մայրիկ:

Նուարդ - Ես տանտիկին եմ, տունն եմ: Պոլիսէն ենք մենք:

Յասմիկ

Անի - Եւ դուն, Յասմիկ, դուն ընտանիք ունի՞ս:

Յասմիկ - Ոչ, ես մինակ եմ: Քոյրեր ունիմ, սակայն ես մինակս կ'ապրիմ:

Անի - Անոնք ու՞ր կ'ապրին:

Յասմիկ - Սան Տիէկօ:

Անի - Ես ու Արան միասին կ'ապրինք: Մենք նորապսակ ենք:

Յասմիկ - Ի՞նչ կ'ընես:

Անի - Դասերս:

Յասմիկ - Ես ալ:

Անի - Ես ալ, դուն ալ մինակնիս դաս կ'ընենք:

Յասմիկ - Այսպէս չ'ըլլար, եկո՛ր միասին ընենք:

Նորապսակները

[13] Direct and indirect speech in writing is differentiated with quote marks, «չակերտ». In dialogues, this differentiation is often made with dashes and commas.

Արտակ

- Իսկ դու՞ն, Արտո:
- Ես ի՞նչ ըսեմ: Արի՛ս, դուն ըսէ՛:
- Միաու՛, - կ'ըսէ Արիսը:
- Դուն որու՞ն կը սիրես, Արտո:
- Ջիս, Արիսը եւ Արամը: Արամը իմ ընկերս է:
- Դուն ի՞նչ կը սիրես:
- Ամէն ինչ: Արիսն ալ: Միայն մուկ ուտել չի սիրեր:
- Ի՞նչ կ'ըսես, ես ամէն ինչ չեմ սիրեր,- կ'ըսէ Արիսը, -չէ, ասանկ ապրիլ չ'ըլլար:

Explanations to the Dialogues:

Ան ալ քու ընկե՞րդ է:	And is that your boyfriend?	ընկեր is translated into *friend, boyfriend, girlfriend* depending on the context.[14]
Ոչ, ատ Արան է, ամուսինս:	No, that's Ara, my husband.	
Իմ սիրելի տիկին Նուարդ մայրիկս	My dear mother, Mrs. Nvart.	Playful and endearing style.
Նուարդ մայրիկ	Mother Nvart	Common address form for elderly women.
Դուք ընտանիք ունի՞ք	Do you have a family?	Capitalized Դուք is used to address one person formally or respectfully.
Մենք երկու որդի եւ մէկ դուստր ունենք	We have two sons and a daughter	No plural form is required with the numeral attributes.
Դուք ի՞նչ կ'ընէք	What do you do?	Context requires a translation into simple present (not continuous) tense of English. Cf. the same question above.
տանտիկին եմ, տուն եմ:	I am a housewife, I am (usually) at home.	տանտիկին literally is *the lady of the home/house.*
Պոլիսէն ենք մենք:	We are from Bolis.	Emphatic word order.
Ոչ, ես միայնակ եմ	No, I am single.	միայնակ means *only, alone, single;* compare the next sentence.

[14] This word had a restricted use in Western Armenian because of its use as an address form for political party members; the ՀՅԴ members address each other as ընկեր or ընկերուհի. Also, in Soviet Armenia it had obtained the function of a communist address term (cf. English *comrade*). However, in Armenia the word ընկեր did not lose its main meaning in everyday speech: *friend, close friend.* It derives from Ancient Armenian *ընդ-կեր, lit., *one with whom one eats* (cf. French *copain*). The common word for *friend* in Western Armenian is բարեկամ, lit., *one who wishes well.* See Lesson 7.

Սակայն ես միանակս կ'ապրիմ	But I live alone.	միանակս with the article -ս literally means *by myself*
Մենք նորապսակ ենք	We are newlyweds.	No plural form of the predicative is required.
Ի՞նչ կ'ընես	What are you doing?	Simple present here requires a translation into continuous tense. Compare the same question below to Nvart, where it means: *What do you do generally?*
Ես ալ, դուն ալ միանակնիս դաս կ'ընենք	You and I both do lessons by ourselves.	միանակ-նի-ս is a special plural form (with article) pointing to the plurality of the subject: *you and I~we.*
Այսպէս չ'ըլլար	This won't do	Lit.: *This way does not exist.* Simple present referring to the future meaning characteristic of many languages.
եկուր միասին ընենք	Let's do it together.	եկուր *Come!* plus a verb without the particle կը form an invitation to action.
Արի՛ս, դուն ըսէ՛:	Aris, you speak.	Ըսէ՛ is the imperative form of the verb *to say.* No pronoun is required unless it is stressed, like here.
Դուն որու՞ն կը սիրես, Արտակ:	Whom do you love, Ardag?	The question words do not necessarily start the sentence.
Ամէն ինչ:	Everything.	
Մուկ ուտել չի սիրեր:	(He) does not like to eat mice.	սիրել is *to love,* and in some contexts, *to like.*
- Ի՞նչ կ'ըսես, ես ամէն ինչ չեմ սիրեր	What are you saying? I don't love everything.	Simple present translates either into simple present of present continuous.
- Չէ, ասանկ ապրիլ չ'ըլլար:	It is impossible to live like this	Literally: *Living this way won't do.*

ASSIGNMENTS

Phonetic Exercises

1. *Group the letters you know according to their position on the line: mini, tall, descending, and bisecting.*
2. *Group the letters you know according to their phonetic pronunciation. Point out in which positions the letters* ե, ո, ու, ւ, յ *have a different pronunciation.*
3. *Place the letters you learned in the alphabet, Appendices 1 and 2. Choose your favorite keywords.*
4. *Fill out the chart writing the words in lower case in upper case and vice versa.*

այսօր	
	ԱՊՐԻԼ
յետոյ	
	ԱՄԷՆ
օրօր	
	ԻՆՉՊԷՍ
կը սիրեմ	
	ՍԱԿԱՅՆ
պատկեր	

Lexical Exercises

1. *Read the dialogues, translate them, and copy them.*
2. *Practice the dialogues with improvisations.*
3. *Make oral sentences of your own using the words you know.*
4. *Find inflective forms of nouns and verbs in the dialogues. Explain their usage and write the direct forms of the same words.*
5. *Conjugate the following verbs in the present tense positive and negative:*

ուտել, ընել, տեսնել, ըսել, սկսիլ, կենալ, մնալ, որսալ, յուսալ.

6. *Fill in the corresponding personal or demonstrative pronoun:*

ես, դուն, ան, մենք, դուք, անոնք, այս, այդ. ասոնք, ատոնք.

1. ... կը սիրեմ մայրս: ... դաս կ'ընեն:
2. ... ընկերներ է՞ք: Ոչ, ... ամուսիններ ենք:
3. ... երիտասարդ ես: ... ալ երիտասարդ են:
4. ... ի՞նչ է: ... Արիսին պատկերն է:
5. ... ալ մատիտներ են:

7. *Change the Person according to the sample. Pay attention to the articles and verbs.*

Ես իմ տունս կը սիրեմ: Դուն քու տունդ կը սիրես: Ան ալ իր տունը կը սիրէ:

1. Այս իմ տունս է:
2. Յասմիկը երկու քոյր ունի:
3. Այսօր ես իմ տունս կ'ընլլամ:
4. Մենք յասմիկ ունինք:
5. Դուն քու դասդ կ'ընես:
6. Մենք Ամերիկա կ'ապրինք:

8. *Write the following sentences in the negative according to the sample.*

Անին Յասմիկին քոյրն է: Անին Յասմիկին քոյրը չէ:

1. Արան Անիին ընկերն է:
2. Յասմիկը Յունաստան կ'ապրի:
3. Յասմիկը Անիին պատկերը ունի:
4. Արտակը կ'ըսէ «Միաու՞»:
5. Ասանկ ալ ապրիլ կ'ըլլայ:
6. Այդ օրը լաւ օր էր:
7. Մենք դասի կը նստինք:
8. Ան նոյնպէս կրնայ պարել:
9. Դուք եւս տունը կը կենաք:
10. Արիսը նաեւ մուկ կ'ուտէ:
11. Նաւաստիներն ալ նաւ կը նստին:
12. Մարդիկ դրամ ունին:
13. Կոյրը լոյս կը տեսնէ:
14. Այսպէս եւս լաւ կ'ըլլայ:
15. Տիկին Նուարդը նորապսակ է:
16. Արիսը նմանապէս մարդ է:
17. Ատիկա ուտել կ'ըլլա՞յ:

9. *Put the verb in parentheses into the corresponding form and translate the sentences:*

1. Ես (սիրել) մայրս:
2. Դուն (նստիլ): Դասը (սկսիլ):
3. Մենք ելակ (տանիլ) Արտոյին:
4. Դուք ալ ելակ (սիրե՞լ):
5. Անոնք (սիրել) մայրիկը:
6. Արիսը պարել (չսիրել):
7. Նարէն (սիրել) Արարատը:
8. Մենք այսօր դաս (չընել):
9. Անին ու Յասմիկն ալ դաս (ընել):
10. Անոնք աս տունը (կենալ):
11. Մենք ամէն օր լուրերուն մտիկ (ընել):
12. Անին եւ Արան նաեւ ընկերներ (է):

Արտակը դաս կ'ընէ:

10. *Translate the following into English:*

1. Դուն կրնա՞ս մնալ: Այո, եւ դու՞ն:
2. Յասմիկը յասմիկ կը սիրէ, Անին ալ եասաման:
3. Յասմիկին կրնաս յասմիկ ալ տանիլ, ելակ ալ:

4. Դուք կրնա՞ք տեսնել այն սարը: Մենք ալ կրնանք: Անոնք չեն կրնար:
5. Անոնք կո՞յր են: Ոչ, անոնք երիտասարդ են:
6. Մայրիկիդ անունը ի՞նչ է: Անոր մայրիկին անունը ի՞նչ է:
7. Դուն մա՞յր ես: Ոչ, ես նորապսակ եմ: Դուն մայր ունի՞ս:
8. Մայր ունիմ, սակայն քոյր չունիմ: Ես մայր եմ եւ մայր ունիմ:
9. Լուսիկը Արային քոյրն է: Արա, դուն երկու քոյր ունիս, չէ՞:
10. Իմ անունս Արա է, եւ քու անունդ ի՞նչ է:
11. Աս երեկոն լաւ է: Այսօր ամէն ինչ լաւ է:
12. Արտակ, դուն դաս ընել կը սիրես, չէ՞:
13. Այո, ես ամէն օր դաս ունիմ եւ դաս կ'ընեմ, - կ'ըսէ Արտակը:
14. Չունիս, չես սիրեր եւ չես ըներ, - կ'ըսէ Արիսը:
15. Արի՞սն ալ դաս կ'ընէ: Ոչ, ան կրնայ, սակայն չ'ըներ:
16. Չէ, այսպէս ապրիլ չ'ըլլար, - կ'ըսէ Արիսը:

11. *Translate the following into Armenian:*
1. Do you have a mother? Yes, I have a mother and a sister. Where do they live?
2. Is he blind? No, he is young.
3. No way to live like this. No way to begin like that.
4. Ani is young and pretty. She is twenty-two years old. Ani has a mother.
5. This is Ani's mother. Her name is Nvart. She is a housewife. She loves Ani.
6. That is Ani's husband. What is his name? His name is Ara. He also loves Ani.
7. Ani has no sisters. Ara, do you have sisters? Yes, I have a sister.
8. This is Lusig, my sister. And is that Lusig's husband?
9. No, this is Lusig's boyfriend. He is Greek.
10. What is your name? My name is Costa. I have no wife. Lusig is my friend.
11. This is our classroom. I have classes, says Lusig. Me too, says Costa.
12. Let's do the lesson together. I can begin. But I cannot, says Lusig.

Rules:

1. The diphthong **ոյ** before root consonants is pronounced [uy]—e.g., **կոյր** [guyr] *blind*; **լոյս** [luys] *light.*
2. The letter **Յ յ** is [h] at the beginning of a word—e.g., **յասմիկ** [hasmig], **յոյս** [hoys].
3. The letter **Յ յ** is silent at the end of a word—e.g., **երեկոյ Նոյ** [yerego] *evening*; **կայ** [ga] *there is*—except for a few monosyllabic words, e.g. **Նոյ** [noy] *Noah*, and their composites.
4. The letters **օ** and **ո** are pronounced the same, [o], except in word initial positions, where **օ** is [o] and **ո** is [vo].
5. Words do not end in **-ա** but in **-այ**, where **յ** is silent, except for a few words: **ասիկա, Արա,** etc.
6. Words do not end in **-ո** but in **-ոյ**, where the **յ** is silent, or in **-օ**, except for **այո**.
7. Words do not end in **-ե** but in **-է.**

Ժողովուրդը կ'ըսէ.

Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք.[15]

[15] Better blind of sight than blind of mind.

EASTERN ARMENIAN PARALLEL FOR LESSON 5

Phonetics: Pronunciation and Spelling

Letters:	Չչ	Յ յ	Պ պ	Oo
	[ch']	]y]	[p]	[ō]

Յ յ [y] in RO always sounds [y], e.g.: յասաման *lilac,* Նյու Յորք. In any position it sounds the same—e.g., պայուսակ [payusak] *bag*; մայր [mayr] *mother*; կայի [kayi] *I was,* Նոյ *Noah.* Words with an initial letter Յյ like յասմիկ in CO, in RO are spelled phonetically, հասմիկ [hasmik] with the letter Հh (see Lesson 7).

- The silent **Յ յ** at the end of a word is dropped unless it is pronounced, as in Նոյ [noy].
- The final silent **Յ յ** of CO is restored in word building and grammatical forms, e.g., կայի, մնայի, արքայական but կա, մնա, արքա.
- Պ պ is a voiceless unaspirated **[p]**, like in English *spare, spark.* It has maintained the Grabar pronunciation; in WA, Պ պ sounds as voiced **[b]**.
- O o is always pronounced [o].
- O is less frequent in RO; it is only used for the sound [o] at the beginning of a word—e.g., օրինակ *example, sample*; օր *day*, and in words deriving from them, e.g., այսօր *today*, կեսօր *noon,* աննորինակ *exceptional.* Exceptions: ով, ովքեր *who.*
- In all other cases the letter ո is used for the sound [o]—e.g., օրիորդ *miss,* օրոր *lullaby,* մոտ *near.*

Diphthong ույ [uy]

- In RO the diphthong ույ is spelled phonetically—e.g., լույս [luys] *light*; քույր [kuyr] *sister.*
- The double diphthongs are simplified: CO—երեկոյեան, Նոյեան, RO—երեկոյան, Նոյյան.

Reduction of ույ > ու: Changes in spelling do no affect the regular reduction *or* the pronunciation: լոյս > լուսին. The WA conversational forms կոյրնալ, լոյսնալ are foreign to EA.

GRAMMAR

Simple Present Tense

Let's recall that the simple present is formed with the help of the present participle ending in - ում, which doesn't change and the conjugated forms of the auxiliary verb—e.g., ուտում եմ *I eat.* The WA simple present functions as conditional future in EA, e.g.: Սեր տաս, սեր *կստանաս.* If you give love, *you will receive love. Receiving* here is an action depending on the condition of giving. Advanced students can find poetry samples containing conditional future at the end of this lesson (details in Lesson 9).

The particle կը in RO is attached to the content verb without ը or apostrophe which does not affect the pronunciation of the schwa: կնստի [kənəsti], cf. WA: [gənəsdi]

Conjugation sample:

EA pronouns	EA Simple Present	WA Simple Present	EA Conditional Future
ես	նստում եմ	կը նստիմ	կնստեմ
դու	նստում ես	կը նստիս	կնստես
նա	նստում է	կը նստի	կնստի [kənəsti]
մենք	նստում ենք	կը նստինք	կնստենք
դուք	նստում եք	կը նստիք	կնստեք
նրանք	նստում են	կը նստին	կնստեն

Present Tense Negative in EA employs the negative forms of the auxiliary verb է, the present participle remains unchanged as in present tense positive.

Unlike the positive forms, the present tense negative of WA does not operate in EA in any capacity. The conditional future negative in EA is formed with the so called negative participle, e.g., ուտի (see Lesson 10), and the negative auxiliary.

Conjugation sample:

EA pronouns		EA S. Present Neg.	WA S. Present Neg.	EA Conditional Negative
1st Sing.	Ես	չեմ ուտում	չեմ սիրեր	չեմ ուտի, սիրի, ըստի, կարդա
2nd Sing.	Դու	չես ուտում	չես սիրեր	չես ուտի, սիրի, ըստի, կարդա
3rd Sing.	Նա	չի ուտում	չի սիրեր	չի ուտի, սիրի, ըստի կարդա
1st Pl.	Մենք	չենք ուտում	չենք սիրեր	չենք ուտի, սիրի, ըստի, կարդա
2nd Pl.	Դուք	չեք ուտում	չեք սիրեր	չեք ուտի, սիրի,ըստի, կարդա
3rd Pl.	Նրանք	չեն ուտում	չեն սիրեր	չեն ուտի, սիրի,ըստի, կարդա

Defective Verbs

1. եմ and **ունեմ in negative** are practically the same, except ունեմ belongs to the conjugation ե:

չեմ, չես, չէ, չենք, չեք, չեն. չունեմ, չունես, չունի, չունենք, չունեք, չունեն

2. Defective Verb կրնամ is non-existent in standard EA either. Instead, an analytic structure is common, consisting of the adjective կարող (see the letter ղ in Lesson 8), lit. *able,* and the conjugated forms of the copula է. That is:

Positive: կարող եմ, կարող ես, կարող է, կարող ենք, կարող եք, կարող են—*I can, you can, etc.*
Negative: չեմ կարող, չես կարող, չի կարող, չենք կարող, չեք կարող, չեն կարող *I cannot, etc.*

կարող եմ + **Infinitive** is typical to EA too, e.g., Դու կարող ես մնալ: *You can stay.*
Ասել կարող ես, անել չես կարող: *You can say, (but) you can't do it.*

The Question words ի՞նչ and **ինչպե՞ս** are common for WA and EA.
Սա ի՞նչ է "What is it?" is the most useful question in interactive language learning, accompanied with pointing to referred objects. Try in classroom or natural language settings to enrich your vocabulary:

	EA	WA	Translation
A	Սա ի՞նչ է:	Աս ի՞նչ է:	What is this?
B	Պայուսակ է:	Պայուսակ է	It's a bag. [Lit. Bag is.]
A	Իսկ դրանք ի՞նչ են:	Եւ ի՞նչ են ատոնք:	And what are those?
B	Պայուսակներ:	Պայուսակներ:	Bags.
A	Սրան ի՞նչ են ասում:	Ասոր ի՞նչ կ'ըսեն:	How do they say it?
B	Նկար են ասում:	Պատկեր կ'ըսեն:	(They) say picture.
A	Իսկ սրան ի՞նչ են ասում:	Եւ ասոր ի՞նչ կ'ըսեն:	And what do they say for this?
B	Դասարան:	Դասարան:	They say, classroom.

Words for *also:* the usage of **նաև, ևս, նույնպես** in EA is quite similar to WA; **ամենայնպես** is specific to high registers; also, instead of the common, everyday **ալ**, EA has **էլ**, a form reflective of a more general trend in sound changes. Both originate from the Grabar adjective **այլ** *other*; the diphthong **այ** shifts to **է** in conversational EA, and **ա**, WA (see diphthongs in L 13). cf.:

All Armenian Standard	EA colloquial	WA	Translation
այլ	էլ	ալ	other, even, also
այս	էս	աս	this
հայր	հեր	հար coll.	father
մայր	մեր	մար coll.	mother

էլ, like ալ has multiple meanings and uses. Cf. examples below and in the next section:

Նաև պետք է ասեմ որ... *or:* Պետք է նաև ասեմ որ... *Also, I'd like to say that—*

Aris also dances (like others do). Արիսն էլ է պարում: Արիսը ևս պարում է: Արիսը նույնպես պարում է: Արիսը ամենայնպես պարում է: (the last version stylistically is preposterous—ironic content plastered with a big word).

Versus: Արիսը նաև պարում է: *Aris also dances* (in addition to, say, singing).

Constructions with the Particle էլ *also:* Though WA particle ալ and the EA counterpart էլ derive from այլ *other, another*, the only meaning tie they maintain with it is in negative constructions with an adverb derived from այլ, cf.: *I can't any more:* EA: Այլևս (էլ) չեմ կարող: WA: Այլևս (ալ) չեմ կրնար: Այլևս, as well as այլ pertain to formal style, as all direct loans from Grabar, whereas էլ and ալ are common terms. Their usage is quite similar in positive statements, too; cf.

EA	WA	Translation
Մենք էլ կարող ենք ասել:	Մենք ալ կրնանք ըսել:	We too (also) can say.
Մենք կարող ենք ասել էլ, անել էլ:	Մենք ըսել ալ կրնանք, ընել ալ:	We can say, and also, do (as well as do).

Dialogues Երկխոսություններ *Ընտանեկան պատկերներ*

Անի

Հասմիկ - Քո անունն ի՞նչ է:[1]
Անի - Անի:
Հասմիկ - Իսկ ազգանու՞նդ:
Անի - Ասրյան, ես Անի Ասրյանն եմ: Եւ դու՞:
Հասմիկ - Ես Հասմիկն եմ: Նա էլ քո ընկե՞րն է:
Անի - Ո՛չ, այդ Արան է, ամուսինս: Սա էլ մայրիկիս նկարն է: Իմ սիրելի տիկին Նվարդ մայրիկս:

Նվարդ

Հասմիկ - Նվա՛րդ մայրիկ, Դուք ընտանիք ունե՞ք:
Նուարդ - Այո սա ամուսինս է: Մենք երկու որդի և մեկ դուստր ունենք:
Հասմիկ - Դուք ի՞նչ եք անում, Նվա՛րդ մայրիկ:
Նուարդ - Ես տանտիկին եմ, տանն[2] եմ: Մենք Պոլիսից[3] ենք:

Հասմիկ

Անի - Եվ դու, Հասմի՛կ, դու ընտանիք ունե՞ս:
Հասմիկ - Ո՛չ, ես մենակ եմ: Քույրեր ունեմ, սակայն ես մենակ եմ ապրում:
Անի - Իսկ նրանք ու՞ր են ապրում:
Հասմիկ - Սան Դիեգո:
Անի - Ես ու Արան միասին ենք ապրում: Մենք նորապսակ ենք:
Հասմիկ - Ի՞նչ ես անու՞մ:
Անի - Դասերս:
Հասմիկ - Ես էլ:
Անի - Ես էլ, դու էլ մեն-մենակ դաս ենք անում:
Հասմիկ - Այսպես չի լինի, արի՝ միասին անենք:

Արտակ

- Իսկ դու՞, Արտակ:
- Ես ի՞նչ ասեմ: Արի՛ս, դու ասա՛:
- Մյաու՛, - ասում է Արիսը:
- Դու ու՞մ ես սիրում, Արտակ:
- Արիսին ու Արամին: Արամը իմ ընկերն է:
- Դու ի՞նչ ես սիրում:
- Ամեն ինչ: Արիսն էլ: Միայն մուկ ուտել չի սիրում:
- Ի՞նչ ես ասում, Արտա՛կ, ես ամեն ինչ չեմ սիրում,- ասում է Արիսը: - Չէ, այսպես ապրել չի լինի, ես կյանք չէ:

---

[1] In EA, a dash separates direct speech from the indirect in dialogues. Quote marks, « » չակերտ, are used for quotes in texts.

[2] Note that EA uses the dative տանն եմ *I am at home* vs. WA accusative—տունն եմ for locative.

[3] See the letter Ց g in Lesson 10.

Vocabulary Differences

EA	Translation	WA	Translation
պատուհան		պատուհան	window
լուսամուտ HF		լուսամուտ LF, obsolete	window
երկար		երկայն (երկար)[4]	long
պատկեր HR, LF		պատկեր	picture
նկար HF		նկար LF	picture
--		քակել	unknot, untie, detach
քանդել	1. unknot, untie, detach 2. destroy	քանդել	destroy, ruin
ինքնաթիռ (օդանավ HR, LF)		օդանաւ	airplane
տղա		մանչ, տղա	boy, son
կարող եմ		կրնամ (կարող եմ HR)	I can
լուսանալ		լոյսնալ (լուսանալ HR)	to dawn
կուրանալ		կոյրնալ (կուրանալ HR)	to go blind

HF—higher frequency, LF—lower frequency
շատ շնորհակալ եմ	Thank you *very much*
շատ լաւ եմ	I am *very* well
շատ ու քիչ բան	Many a things
շատ տաք է	it is *very* hot

The Word ՀԻՆ

Հին *old,* applies to inanimate objects and things—e.g., **հին տուն մը** *an old house.* For people and animals the adjective **ծեր** [dzer] is used, an antonym for the word **երիտասարդ** *young*, which we will be able to write in Lesson 10.

Արտակին պայուսակը հին է. նոր մը ապսպրենք:	Ardag's bag is old; let's order a new one.
Ես շատ կը յիշեմ մեր հին պարտէզը:	I remember our old garden a lot.

It is also used as a common synonym for formal **հնամենի** *ancient*—e.g., **հին տօն մը** *an ancient holiday.* Or:



Հայերէնը հին եւ պատուական լեզու մըն է: *Armenian is an ancient and noble language.*

The adjective **հին** when applied to people and animals has only the meaning *ancient.*

Examples:

Հին յոյները իմաստուն էին:	The ancient Greeks were wise.
Տինոզաւր հին կենդանի մըն է, հիմա չկայ:	The dinosaur is an ancient animal; it does not exist now.

հայ

The Words ՀԱՅ, ՀԱՅԵՐԷՆ, ՀԱՅԿԱԿԱՆ

The words հայ, հայերէն, and հայկական are translated into English with a single adjective, *Armenian*.

Հայ is a noun, ethnonym[2]—e.g., Ես հայ եմ: *I am Armenian.*

Հայերէն is a noun too: the language name; e.g.: Ես քիչ մը կը հասկնամ հայերէն: *I understand Armenian a little.*



հայերէն

The suffix -երէն forms language names—e.g., հայերէն *Armenian*; իտալերէն *Italian*. A less frequent variation of the suffix is -արէն, e.g., յունարէն *Greek*. -երէն and -արէն are compatible with the English suffixes -ese, -ish, and -ian but more productive than their English counterparts: չինարէն *Chinese*, լեհերէն *Polish*, պարսկերէն *Persian*.

հայկական

Հայկական is an adjective for anything else Armenian[3]—e.g., հայկական կերակուր *Armenian food*; հայկական պար[4] *Armenian dance*; հայկական ըմպելի *Armenian beverage*.

Suffixes -ական, -ային, -եան

These suffixes are synonymous, they create adjectives relating the characteristics of the root noun to other nouns, cf.: հայկական անուն *Armenian name*; յունական կիսադէմ *Greek profile*; հոլանտական պանիր *Dutch cheese*; ընկերային կեանք *social life*, հանրային կայք *public property*, ատլանտեան դարպաս *Atlantic gates*, ամերիկեան երազ *American dream*.

Capitalization in Armenian

Languages have different rules for capitalization. Proper names for people, pets, and geographical sites are capitalized in Armenian, as we have seen in the previous lessons. Capitalization may change the meaning of a word, e.g., Արարիչ *Creator, God*, արարիչ *creator;* Յասմիկ *Hasmig*, a female name, յասմիկ *jasmine*, the flower. Cf:

Արարիչը իր նման արարիչ կերտեր է մարդը: *God created the man as a creator, like himself.*
Յասմիկը յասմիկին հոտը կը սիրէ: *Hasmig loves the smell of jasmines.*

Neither month or weekday names, nor ethnonyms are capitalized in Armenian, contrary to English tradition—e.g., յունիս *June*, կիրակի *Sunday*, հայ *Armenian*, յոյն *Greek*.

Holiday names are usually capitalized—e.g., Զատիկ *Easter*; Նոր Տարի *New Year*. Sometimes only the first word is capitalized—for instance, Մայրերու օր *Mothers' Day*.[5]

---

[2] For more on ethnonyms, see Lesson 15.

[3] There is another adjective meaning Armenian, հայոց (see the letter g in Lesson 10). It is the plural genitive of the word հայ in Krapar and it means հայերու *of Armenians* or *Armenians'*. Now the word has a stylistic emphasis limiting its use in regard to historical-cultural and homeland-bound values—e.g., հայոց հող *Armenian land*; հայոց լեզու *Armenian language*; հայոց պատմութիւն *Armenian history*, etc.

[4] Հայկական Պար is also a mountain chain in the Armenian Plateau.

[5] In Armenia, Mothers' Day is celebrated on April 7.

Idioms: ԱՆՈՒՇ ԸԼԼԱՅ



Idioms are fixed phrases with a special meaning which does not directly derive from or literally correspond to the meaning of its constituents.

Անուշ ըլլայ literally means *let/may it be sweet;* it is a traditional wish for good digestion and health, and it is used during or after eating, often in response to gratitude. It can be translated *Help yourself! Enjoy!* or *You are welcome!* in the context of dining and snacking.

Examples of usage:

Ա	Հրամմէք՛, համտեսէք սա տօնական բադէն:	Come on, try this holiday duck.
Բ	Շնորհակալ եմ:	Thank you.
Ա	Կը հաւնի՞ք: Հայտէ, կերէ՛ք:	Do you like it? Come on, help yourself!
Բ	Շա՜տ լաւ է:	It's very good!
Ա	Ուրեմն քիչ մըն ալ կերէ՛ք, *անուշ ըլլայ*:	Then have (eat) some more; enjoy.
Բ	Կարելի՞ է:	May I?
Ա	Հարկաւ, *անուշ ըլլայ*: Հիմա բադ մըն ալ կը բերեմ:	Sure. You are welcome. Now I'll bring another duck.
Բ	Շնորհակալ եմ, ալ բաւ է: Շիտակը կ'ըսեմ՝ ալեւս չեմ կրնար:	Thank you, that's enough. Really, I can't [eat] any more.
Ա	Բան մը չէ, բարի եկաք, *անուշ ըլլայ*: Նորէն հրամմէ՛ք:[6]	Not at all, you are welcome, may it be sweet. Come again.

Note:

The word հայտէ, of Arabic origin, is widely used in oral speech as *come on!*

The last three expressions in the dialogue: Բան մը չէ, բարի եկաք, անուշ ըլլայ are equivalent to the English response *You are welcome!* in three different situations:



Բան մը չէ:	*Not at all. Never mind! No problem.*	Following thanks	Lit.: It is not a thing.
Բարի եկաք:	*You are welcome.*	Literally and figuratively.	You are welcome.
Նորէն հրամմէ՛ք:	*Come again!*	Leave taking	Lit.: Welcome again.
Անուշ ըլլայ:	*You are welcome.*	Following or during eating.	Lit.: Let it be sweet.

Note also the use of the frozen imperative հրամմէ՛(ք) deriving from *command, order.* It is a polite expression employed in offering a favor, like in English *there you go.* Cf. also the next dialogue.

[6] This is a colloquial form; the standard form of this invitation form հրամեցէ՛ք from հրամցնել *to offer* is which we will spell out in Lesson 10.

The word ԲԱՆ

This is a word with interesting semantics. It means *issue, thing, anything, something, everything.*[7] The word is used very frequently and there are many idioms created with it. Read the following dialogue and try to use the phrases with the word բան on your own.

բարեկամները

Ա Բան մը կ'ուզե՞ս:	Do you want anything?
Բ Այո, սակայն չըլլալիք բան մըն է ատիկա: Ա՛յդ բանը կ'ուզեմ:	Yes, but that's impossible. I want that one.
Ա Ասիկա՞: Հրամմէ՛, ալ քուկդ է:	This? You're welcome (to have it). It's all yours.
Բ Օ՜հ, անհաւատալի է: Շատ շնորհակալ եմ:	Oh, that's incredible! Thank you very much.
Ա Բան մը չէ: Ի՞նչ կայ-չկայ տունը:	Never mind. How is everything at home?
Բ Ամէն բան լաւ է, յատուկ բան մը չկայ:	Everything is OK, nothing special.
Ա Շիտակն ըսեմ, լաւ է՝ երբ մասնաւոր բան չկայ:	Frankly speaking, it is good when there is nothing special.
Բ Այո՛, գուր չեն ըսեր՝ լուր չկայ, լաւ լուր է:	Yes, it's not in vain they say—no news is good news.

Antonyms

Antonyms are words with opposite meanings. Here are some antonyms we can already write:

հին	old	նոր	new
շատ	many	քիչ	few
աւելի	more	պակաս	less
հիմա	now	յետոյ	later, then
ամէնքը	everyone	ոչ մէկը	no one
սիրել	to love	ատել	to hate
բերել	to bring	տանիլ	to take away
յուսալ	to hope	յուսահատիլ	to despair
այո	yes	ոչ	no

[7] In Krapar the word had a wider meaning: *word, speech, sense,* corresponding to Old Greek *logos.* It opens the Classical Armenian translation of the Bible: Ի սկզբանէ բանն էր: *From the beginning there was the* ***word.*** Many words in modern Armenian maintain traces of his meaning —e.g. բանբասանք *gossip*; բայ *verb*; բանադրանք *anathema*; բանագող *plagiarist*; բանական *reasonable*; բանբեր *messenger*; բանախօս *speaker, orator*; բանասէր *philologist.* At the end of a compound word -բան usually corresponds to *-log(ue)* and *-ist*, e.g. կենսաբան *biologist*, լեզուաբան *linguist*, հնէաբան *paleontologist*, մարդաբան *anthropologist,* նախաբան *prologue.* In many Armenian dialects բան is *work, business*, e.g., բանուոր *worker,* անբան *lazy,* բանցնել *to use.*

GRAMMAR

Adverbial Pronouns ՀՈՍ, ՀՈՂ, ՀՈՆ

Հոս, հոդ, հոն show spatial differences by means of article roots: **ս, դ, ն** (cf. Lesson 6). Originating in Western Armenian dialects, they are specific mainly to conversational styles.[8]

հոս	here	First person: closer to the speaker		ես	այս
հոդ	there	Second person: closer to the listener	cf.	դուն	այդ
հոն	there	Third person: closer to another person		ան	այն

The Irregular Verb կայ

The irregular verb **կայ** *there is* has no infinitive form. Կայ indicates the third person singular. You have met this form in previous lessons. It is used as a direct form, along with the first person singular կամ, in dictionaries. Like եմ, ունիմ, կրնամ, it does not take the particle կը in the present tense. The negative forms are also irregular. Կան as a rule translates into *there are*. The first and second person forms, կամ, կանք, կաս, կաք, are not as frequently used; they are usually translated with the help of the verbs *to exist* or *to be* [*somewhere*].

Positive		Negative
ես կամ	I am, exist	ես չկամ
դուն կաս	you are, exist	դուն չկաս
ան կայ	there is; he, she, it is, exists	ան չկայ
մենք կանք	we are, exist	մենք չկանք
դուք կաք	you are, exist	դուք չկաք
անոնք կան	they are, exist	անոնք չկան

Examples of usage:

Հայերս կանք, կ'ապրինք հին ատեններէն սկսեալ:	We Armenians exist, live since olden times.
Դուն ու՞ր ես, չկաս: Ինչպէ՞ս ես: Կամ:	Where are you? You're nowhere (to be found). How are you? OK (lit. I am).
Հոն տուն մը կայ: Պարտէզը շատ շուշան ու յասմիկ կայ: Տան (տունին) մօտը շատ մը բոյսեր կան: Հոն շու՞ն ալ կայ: Ոչ շուն կայ, ոչ ալ մարդ: Տունը մարդ-տանտէր չկա՞յ: Կան, հոս չեն: Հիմա տունը մարդ չկայ:	There is a house there. There are many lilies and jasmines in the garden. There are quite a many plants by the house. Is there also a dog there? There is neither a dog nor anyone. Isn't there anybody, a landlord, at home? There are, (but they) are not here. There is no one at home now.

[8] Equivalents in standard derive from the same three sided opposition of roots: **այստեղ, այդտեղ, այնտեղ**. **Տեղ** is *place, location*. See the letter **Ղ** in Lesson 8.

The Irregular Verbs տալ, լալ

The verbs **տալ** *to give,* **լալ** *to cry,* employ the particle **կու** instead of **կը** in their simple present.[9] These are remnant irregular forms with the particle **կու** which was common in Middle Armenian.

Person/ Pronoun	Simple Present Tense	
	տալ *to give*	**լալ** *to cry*
ես	կու տամ	կու լամ
դուն	կու տաս	կու լաս
ան	կու տայ	կու լայ
մենք	կու տանք	կու լանք
դուք	կու տաք	կու լաք
անոնք	կու տան	կու լան

հ h հաւ

Imperative Mood of Verbs

The imperative mood expresses a wish, command, appeal, request, or invitation to action. It has singular and plural forms in the second person.

The imperative singular of regular simple verbs is formed with the help of the theme vowels **է (ե), ա, ի;** for instance:

սիրել *to love*	կարդալ *to read*	ապրիլ *to live*
սիրէ՛ *Love!*	կարդա՛ *Read!*	ապրի՛ր or ապրէ՛ *Live!*

Note the following:

- ա verbs do not have the silent ending -յ in imperative forms: մնա՛, կարդա՛. *Stay! Read!*
- ե verbs use the ending է: սիրէ՛, համբուրէ՛. *Love! Kiss!*
- ի verbs form it with the ending -իր: ապրի՛ր, մեռի՛ր. *Live! Die!* In everyday speech the imperative of ի verbs often is formed in analogy to ե verbs. Some of the most frequent verbs seldom use the -իր ending in conversational styles—i.e., **ըայէ՛, ըստէ՛, սկսէ՛** instead of the recommended standard: **ըայի՛ր, ըստի՛ր, սկսի՛ր.**[10]

The imperative plural is formed with the ending **-էք**; for example, Մտէ՛ք *Come in!* Տեսէ՛ք *See!* Մտիկ ըրէ՛ք *Listen, pay attention!* Հոս հասէ՛ք *Get here!* Simple ե and ի verbs, and all ա verbs derive the imperative plural from the past stem (details in Lessons 10-11).
The imperative plural is refers to all, as well as to one person as a respectable/formal address form.

---

[9] This line of irregularity concludes with the verb գալ *to come,* introduced in the next lesson with the letter **Գգ**.

[10] These forms are characterized not only with stylistic differentiation but also geographical distribution: **ըայի՛ր** forms are more typical to the Lebanese Armenian standard, and the **ըայէ՛** forms, to Bolis Armenian.

The negative imperative, also called prohibitive, is formed with the preceding particle **մի՛,** which is always stressed. In singular negative, the content verb employs the infinitive by replacing the final **լ** with **ր**, and in the plural negative, by replacing **լ** with **ք**, e.g.:

Infinitive	Negative (Prohibitive) Imperative	
	Singular: Referring to One Person	Plural: Formal Address for One Person or Referring to *All*
ընել *to say*	մի՛ ըներ *Do not say!*	մի՛ ընէք *Do not say!*
նայիլ *to look*	մի՛ նայիր *Do not look!*	մի՛ նայիք *Do not look!*
տալ *to give*	մի՛ տար *Do not give!*	մի՛ տաք *Do not give!*

Conjugation sample:

Indefinite	Positive	Negative		Translation
	Singular	Singular	Plural & Formal	
սիրել	սիրէ՛	մի՛ սիրեր	մի՛ սիրէք	love
լսել	լսէ՛	մի՛ լսեր	մի՛ լսէք	listen
ըսել	ըսէ՛	մի՛ ըսեր	մի՛ ըսէք	say
նայիլ	նայէ՛, նայի՛ր	մի՛ նայիր	մի՛ նայիք	look, watch
սկսիլ	սկսէ՛, սկսի՛ր	մի՛ սկսիր	մի՛ սկսիք	begin
նստիլ	նստէ՛, նստի՛ր	մի՛ նստիր	մի՛ նստիք	sit
կարդալ	կարդա՛	մի՛ կարդար	մի՛ կարդաք	read
յուսալ	յուսա՛	մի՛ յուսար	մի՛ յուսաք	hope
մնալ	մնա՛	մի՛ մնար	մի՛ մնաք	stay

Examples of usage:

Եկու՛ր, հոս նստէ՛, պատմէ՛, ի՞նչ կայ-չկայ:	Come in, have a seat here, tell me what's going on.
Է՛հ, ինչ ըսեմ: Լաւ բան չեմ լսեր Արմանին մասին՝ կ'ըսեն շատ հիւանդ է:	Oh, what can I say. I haven't heard good things about Arman; they say he is very sick.
Ամա՛ն, լաւ կ'ըլլայ: Մտիկ մի՛ ընէք ամէնուն:	O, well, it'll be all right. Don't listen to everybody.

Note: The colloquial form մի՛ք *don't* (plural) is obsolete, although found in classical WA literature.
The specific intonation of imperative verbs in writing is indicated with the stress mark [՛], versus the exclamation mark in English, e.g., Come! Եկու՛ր:
See more on punctuation after the text.

Text

ՆՈՒԱՐԴԻՆ ՀԻՒՐԵՐԸ



Այսօր Զատիկ է, հին տօն մը՝ որ միշտ կը տօնուի: Անին եւ Արաս Զատկուան նուէր կը տանին մայրիկին: Մայրիկին անուշ ելակ և անուշահոտ եասաման կը տանին:

Արաս եւ Անին հիւր եկան Նուարդ մայրիկին տունը:

- Բարեւ, մայրիկ, - կ՛ըսեն եւ կը համբուրեն մայրիկը:

- Բարեւ, հազար բարի:

- Մա, շատ կը կարօտնամ քեզի, կ՛ուզեմ միշտ քեզի հետ ըլլալ, կ՛ըսէ Անին:

- Ինչպէ՞ս էք, մայրի՛կ, կ՛ըսէ Արաս:

- Է՜, դուք լաւ ըլլաք, որդի՛:

- Մայրիկ, Ամերիկա այդպէս չեն ըսեր:

- Հապա ինչպէ՞ս կ՛ըսեն:

- Շատ լաւ եմ, շնորհակալ եմ՝ կ՛ըսեն:

կը կարօտնամ

- Չեմ կրնար ատանկ ըսել, ես պոլսահայ եմ:

- Ինչու՞ չես կրնար:

- Անհամ կ՛ըլլայ... Սակայն չեմ այպաներ զիրենք, կ՛ըսէ Նուարդ մայրիկը:

Ապա կը շարունակէ, «Լաւ, որդի՛, լաւ ըսենք, լաւ ըլլանք»:

Ան շատ կը սիրէ կատակ ընել:

Անին ելակները կը լուայ:

- Հոս եկու՛ր, մա՛, տե՛ս ի՜նչ լաւ ելակ է: Կ՛ուզե՞ս՝ համին նայէ մէյ մը:

- Շնորհակալ եմ, անուշիկ Անիս, - կ՛ըսէ Նուարդ մայրիկը, - դուք ալ կերէ՛ք: Եւ տեսէ՛ք՝ ի՜նչ հայկական կերակուրներ պատրաստեր եմ անուշիկ Անիս ու Արայիս համար: Կերէ՛ք, անուշ ըլլայ:

- Նուա՛րդ մայրիկ, հապա հայերը ինչպէ՞ս կ՛ըսեն, - նորէն կ՛ըսէ Արաս:

- Ինչի՞ն... Այո՜... կ՛ըսեն՝ լաւ ըսենք, լաւ լսենք, զաւակս...

Explanations to the Text[11]

Հին տօն մը՝ որ	An ancient holiday that	The conjunction որ is translated into *that* or *which* depending on the context.
միշտ կը տօնուի:	is always celebrated	Տօնուիլ is the passive voice form of տօնել *to celebrate*
Զատկուան նուէր	Easter present	Զատկուան *Easter's* is genitive.
կը տանին մայրիկին	(They) take (a present) for mom.	տանիլ has no exact equivalent in English. It can be translated as *take, carry along, - to, - for, -away, bring for,* etc. depending on the context.
ազուշ ելակ և ազուշահոտ եասամակ	Sweet strawberries and fragrant lilacs	The singular form is used to generally indicate objects. If one lilac or strawberry is meant, the indefinite article մը or the numeral մէկ should be used.
Հիւր եկան Նուարդ մայրիկին տունը	Visited mother Nvart's home.	Literally: came (as) guests.
Բարեւ	Hello.	For all occasions.
Հազար բարի	A thousand greetings.	Idiomatic expression in response to or following Բարեւ.
Կը կարօտնամ քեզի	I miss you.	քեզի is the dative-accusative for դուն.
Ինչպէ՞ս էք	How are you?	A semi-greeting; the formal (plural) form expresses respect The response լաւ եմ *fine* is formulaic and conventional, as in English.
Է՛, դուք լաւ ըլլաք, որդի՛	Well, may you be well, son.	A formulaic, familiar response to Ինչպէ՞ս ես/էք, used especially by older people.
Կը համբուրեն մայրիկը	(They) kiss mom.	No repetition of subject is required.
Ես պոլսահայ եմ	I am Bolsahay (Armenian from Istanbul).	The word պոլսահայ combines the place of origin with the ethnic origin. See details in Lesson 15.
Ամերիկա այդպէս չեն ըսեր.	In America they don't say it like that.	As in English, a third person plural form is used to state common truths.
Հապա ինչպէ՞ս կ'ըսեն:	Then how do they say (it)?	Or: What is the usual way to respond? ի՞նչ *what* could also be used here.
Շատ լաւ եմ, շնորհակալ եմ, կ'ըսեն	They say—I am fine, thank you.	կ'ըսեն *they say* can open or close the statement.
Անհամ կ'ըլլայ	It will be dull.	Անհամ is *not delicious*; figuratively: *dull, uninteresting.*
Սակայն չեմ այպաներ զիրենք	But I don't blame (dispraise) them	Mrs. Nvart's expression means: "I have nothing against the way Americans speak".
Ապա կը շարունակէ	Then (she) continues	The pronoun *she* is assumed from the verb.
Լաւ, որդի, լաւ ըսենք	OK, son; we say well.	լաւ is used in two meanings: *well*, as an introductory word, and the adverbial *well.*
Լաւ ըսենք, լաւ ըլլանք	Let's say well and (by it), be well.	This is another idiom in response to Ինչպէ՞ս ես.
Տե՛ս,	Look!	The imperative form տե՛ս *See!* is often used instead of նայի՛ր *Look*!
Մա՛,	Mom	Մա is a familiar address form.

[11] Some idioms in this text employ the subjunctive mood of verbs (for details see the next lesson): դուն լաւ *ըլլաս*; լաւ *ըսենք*, լաւ *ըլլանք*; լաւ *ըսենք*, լաւ *լսենք*; անուշ *ըլլայ*.

Ի՜նչ լաւ ելակ է:	What good strawberries they are!	Or: What good strawberries! The singular form has the general meaning.
Անուշիկ Անիս	My sweet Ani	The diminutive անուշիկ is an address form for children; optional translation, *sweetheart.*
Տեսէ՛ք ի՜նչ հայկական կերակուրներ պատրաստեր եմ	Look what Armenian food I have prepared	The question word ի՜նչ is often used for emphasis; cf. English: How great!
Կերէ՛ք	Eat!	The main verb is used versus the English "have some".
Անուշ ըլլայ	An invitation to food	Literally: let it be sweet.
Հապա հայերը ինչպէ՞ս կ'ըսեն	Then how do the Armenians say (it)?	The ethnonym հայ and not the language name հայերէն is used to emphasize the cultural differences in common phrases.
Ինչի՞ն... Այո՜...	To what...? O, Yes!	Ինչին is a dative case form of *what.* In conversation one does not repeat the previous, already known statements.
Կ'ըսեն՝ լաւ ըսենք, լաւ լսենք, զաւակս	(They) say, let's say good [things] and (by that) hear [back] good [things], my son.	This is another response to the question Ինչպէ՞ս ես, based on a play of words; լաւ is used in its original meaning *good* and substantive form, to mean *good things.*

Եասամաճ Նուարդ մայրիկին համար

համբոյր

Punctuation

The stress and exclamation marks represent intonation in writing, replacing the unmarked lexical stress over the last vowel of words (see also Lesson 1 and 3). All imperative verbs bear stress mark; the exclamation mark can replace it to express a plea, especially in poems.

The exclamation and stress marks can also be used on practically any word with a specific intonation to express the speaker's intent. Cf.:

Ի՜նչ լաւ օր է այսօր:	What a nice day it is today!
Եկու՜ր, քե՛զի կ'ուզեմ տեսնել:	Come, I want to see *you!*
Անուշ շրթունքդ համբուրե՜լ կ'ուզեմ:	I want *to kiss* your sweet lips!

Compare also the sentences from your text above.

Հոս եկու՛ր, մա՛, տե՛ս ի՜նչ լաւ ելակ է:	Come here, mom; look how good strawberries they are!
Կ'ուզե՞ս, համիճ ճայէ մէյ մը:	Would you like to try some?
Դուք ալ կերէ՛ք, անու՛շ ըլլայ:	You also eat.
Ինչի՞ն... Այո՜...	To what...? Yes!

Ellipsis [...] marks omitted words or expressions, something untold but understood in conversation.

ASSIGNMENTS

Phonetic Exercises

1. *Group the new letters according to their position on the line.*
2. *Fill out the chart writing the words in lower case in upper case and vice versa.*

բարեկամ	
	ՀԱՄԲՈՒՐԵԼ
շուշան	
	ԼԵՋՈՒ
հիւր	
	ՋԱՒԱԿ
հայր	
	ԿԵՐԱԿՈՒՐ
հին	
	ԱՆՈՒՇ

Lexical Exercises

1. *Read the text, translate it, and copy it. Retell the text with improvisations.*
2. *Make oral sentences of your own using the words you know.*
3. *Find inflected forms of nouns and verbs in the text and write the direct forms of the same words.*
4. *Find from the text formulaic responses to* 'How are you?' *and use them in appropriate situations.*
5 *Write antonyms for the following words:* հին, շատ, պակաս, հիմա, ատել, բերել.
6. *Write the imperative forms of the following verbs in the positive and negative. Make sentences of your own using those forms:* ըսել, ուզել, ցայիլ, ապրիլ, սկսիլ, լուալ, ըլլալ.
7. *Write the following statements in the imperative according to the sample:*

Ան կ'ըսէ իր բարեկամին՝ «Անուշ ուտելը լաւ է»: Ան կ'ըսէ՝ «Անուշ կե՛ր»:

Ան կ'ըսէ իր բարեկամներուն՝ «Հոս ապրիլը լաւ չէ»: Ան կ'ըսէ՝ «Հոս մի՛ ապրիք»:

1. Ան կ'ըսէ իր բարեկամին՝ «Մայրը սիրելը լաւ է»:
2. Ան կ'ըսէ իր բարեկամներուն՝ «Յուսահատիլը լաւ չէ»:
3. Ան կ'ըսէ իր բարեկամին՝ «Նուէր տալը լաւ է»:
4. Ան կ'ըսէ իր բարեկամներուն՝ «Ներսը կեցալը լաւ չէ»:
5. Ան կ'ըսէ իր բարեկամին՝ «Երկար ապրիլը լաւ է»:
6. Ան կ'ըսէ իր բարեկամներուն՝ «Մարդիկը ատելը լաւ չէ»:
7. Ան կ'ըսէ իր բարեկամին՝ «Ուշ մնալը լաւ չէ»:
8. Ան կ'ըսէ իր բարեկամներուն՝ «Հայերէն սիրելը լաւ է»:

8. *Translate the following into English:*

1. Աս իմ ընտանիքս է: Մանուշակը իմ կինս է:
2. Մենք երկու մանչ զաւակ ունինք՝ Լեւոն եւ Կարէն:
3. Դուստր չունինք:
4. Ես եւ կինս երիտասարդ ենք: Մեր զաւակները տակաւին պզտիկ են:
5. Մենք շատ ընկեր-բարեկամ ունինք:
6. Մեր որդիներն ալ բարեկամներ ունին:
7. Մենք հոս կ'ապրինք, այս մեր տունն է: 8. Մենք գիրար շատ կը սիրենք:

9. *Add the articles* **ս, դ, ն, ը, մը** *in place of the ellipses and translate the sentences.*

Լեւոն... երկու տարեկան է, իսկ Արէն...՝ չորս: Անոնք նոր շուն ... ունին:

-Շունի... անուն... ի՞նչ է, Արէ՛ն, - կ՛ըսէ հայրիկ...:

- Աս իմ շուն... չէ, հայրիկ:

- Հապա որու՞նն է:

- Լեւոնի... շուն... է:

- Քուկ... է, այս քու շուն... է: Դուն կրնա՞ս շունի... անուն ... դնել, մանչ...:

- Ոչ, չեմ կրնար:

- Ինչու՞:

- Ու՞ր պէտք է դնեմ անուն...՝ շունին մօտ..., շունին տակ..., - կը զարմանայ Արէն...:

- Անուն... մօտը չեն դներ, կու տան, - կ՛ըսէ հայր..., շունին անուն ... տու՛ր:

- Ոչ, չեմ տար, - կ՛ըսէ Արէն..., - ես անուն ... ունիմ, ան ալ շունի՞... պէտք է տամ: Կարելի չէ, չ՛ըլլար, - կ՛ըսէ Արէն...:

10. Put the words in parentheses into the correct form:

- Արէն, (can you) շունին անուն մը տալ:
- Ոչ, (I can't), իմ անունս իմս (is).
- Արէն, ելակ (wash):
- Ոչ, ալ ելակ (there is not):
- Արէն, (look), հոս ելակ շատ (there is).
- Ես ելակ (don't see).
- Իսկ դուն ելակ (do you like?).
- Ոչ, ես (don't like) ելակ:
- Հապա ի՞նչ (do you like?).
- Չեմ կրնար (to say).
- Ինչու՞:
- Ես ելակ (don't like), իմ բերանս ան (likes):

11. Translate the following into English:

1. Ասիկա Նուարդ մայրիկին տունն է:
2. Նուարդ մայրիկը հոս կ'ապրի:
3. Անին հոս չ'ապրիր:
4. Անին հիմա Արային հետ կ'ապրի:
5. Ու՞ր կ'ապրին անոնք:
6. Ուր կ'ուզեն՝ հոն ալ կ'ապրին:
7. Կատակ կ'ընեմ, հոն կ'ապրին:
8. Անին եւ Արան այսօր հիւր եկան:
9. Անին ելակ կու տայ մայրիկին:
10. Համտեսէ՛, մա՛, կ'ըսէ:

12. Translate the following into English paying attention to the infinitives:

1. Կ'ատեմ հիւանդ *ըլլալս*:

2. Չեմ ուզեր հիւանդ *ըլլալ*:
3. Շատ *ուտելը* լաւ չէ:
4. Երբեմն մարդիկ շատ *ուտելէն* կը հիւանդանան:
5. Անուշ *ըլլալը* ան է, երբ կ'ուտեն եւ չեն հիւանդանար:
6. Երկու բադ մէկէն *ուտել* չ'ըլլար, մի՛ ուտեր:
7. Քիչ-քիչ *ուտելը* լաւ է:
8. Հարկաւ, շիտակ *ուտելն* ալ ատեն կ'ուզէ:

13. Translate the following into Armenian:

1. There is a small garden behind our home.
   The garden is nice. It is always green.
   Are there many plants there?
   Ani, Ara, have a seat here. Look how nice our garden is!
2. "How are you, mom?," says Ara to Nvart.
   "We say well and be well," says Nvart.
   "We, Bolis Armenians, like to joke a lot", she says.
3. Do you want to dance?
   No; dance alone; you dance very well.
4. Aren is a child.
   He is four years old.
   He has a dog.
   The dog has no name.
   Aren has only one name and it is Aren.
   He cannot give his name to the dog.
   Don't be surprised; he is still a small child.
   Aren does not want to wash the strawberries.
   He eats the strawberries.
   And there are no more strawberries.

Rules:

- **ա** verbs in the imperative do not end in silent **յ**.
- **ե** verbs are spelled with **է** in three of the four possible forms: սիրէ՛, սիրեցէ՛ք, մի՛ սիրէք; only in the singular prohibitive մի՛ սիրեր is the letter **ե** used.
- **ի** verbs follow the same pattern of spelling whenever they use the same endings (see details in the lesson).
- The antonyms **հիմա** *now* and **յետոյ** *later, afterwards* are opposites also in regard to two spelling rules. At the beginning of a word, the sound [h] can be expressed with either **հ** or **յ**, and each of these words uses one of these options. **Ցետոյ** has the final silent **յ** and **հիմա** is an exception to that rule. Thus, **յետոյ** represents the rules, and **հիմա**, the exceptions.

Ժողովուրդը կ'ըսէ.

Երկու ահը մէկ մահ է:[12]
Շատ մի՛ սիրեր, ատել կայ, շատ մի՛ ատեր, սիրել կայ:[13]

[12] Two dreads are one death.

[13] Don't love too much, hatred exists; don't hate too much, love exists.

EASTERN ARMENIAN PARALLEL FOR LESSON 7

Phonetics: Pronunciation and Spelling

Letters:	Զ զ	Բ բ	Հ հ	Շ շ
	[z]	[b]	[h]	[sh]

The letter **Բ բ** sounds **[b]**; EA has maintained its Grabar pronunciation; in WA, it has shifted to [p']. In EA, **Բ բ** shifts to [p'] in some positions, cf.: **բարդ** *complex* [bart'] but **երբ** *when* [yerp'], like in WA (details see in EA Lesson 4).

The letter **Հ հ** has a higher frequency of use because it substitutes the original letter **Յ յ** in initial positions, cf.: RO: հույս *hope,* հույն *Greek,* հստակ *clear,* հղի *pregnant.*

CO: յույս յույն յստակ յղի.

On the contrary, the letter **Զ զ** is more frequent in WA as a definite preposition attached to some pronouns: զայն, զինք, զիս, զիրար.[1]

VOCABULARY

The words հայ, հայերեն, հայկական are characterized with the same specifications in EA.

Synonymous suffixes -ական, -ային, -յան (CO: -եան). Among these, -ական is more productive in EA and -ային, in WA. Examples: հայկական անուն *Armenian name*; հոլանդական պանիր *Dutch cheese*; ընկերական մարդ *friendly person,* հասարակական կյանք *social life,* հանրային կայք *public property,* ամերիկյան դեսպանատուն *American embassy.*

Capitalization in EA is more conservative. In WA, under the influence of English, month and weekday names are often capitalized, as well as book, movie, etc. titles. In RO, words of religious significance were not capitalized in the Soviet period which has been reformed now, e.g., Աստված *God,* Զատիկ *Easter.*

The Idiom անուշ լինի in EA has a different grammatical form for the verb *to be* (լինել—ըլլալ). Often, the only change in fixed phrases between EA and WA is their grammatical packaging in writing, accompanied with corresponding articulation changes in speaking, cf. the proverb: Ուշ լինի/ըլլայ նուշ լինի/ըլլայ: lit.: *may it be late but be almond,* i.e., *better late than never;* cf.: Լավ է ուշ, քան երբեք:

Անուշ լինի in EA has a counterpart with the verb *to do*—անուշ արա՛ or անուշ արե՛ք (lit. *make/do it sweet*); it is an invitation and encouragement to help oneself to food.

The verbs Հրամմէ՛/ք (standard WA: հրամեցէք՛) has only the plural form in EA: Համեցե՛ք. For the WA Բան մը չէ *never mind, no problem,* EA uses Ոչինչ. More polite expressions are presented in the **vocabulary differences.** Cf.: the last two lines from the dialogue in the WA lesson above:

Բ	Շնորհակալ եմ, բավական է: Ճիշտն ասած՝ էլ չեմ կարող:	Thank you; that's enough. Really, I can't [eat] any more.
Ա	Խնդրեմ: Բարով եկաք, անուշ լինի: Նորից համեցե՛ք:	Not at all, you are welcome, may it be sweet. Come again.

GRAMMAR

Adverbial Pronouns հոս, հոդ, հոն are not used in EA at all; they are WA innovations. Their vernacular equivalents—(ը)ստեղ, (ը)դեռ, (ը)ցտեղ —sound extremely colloquial in EA. They are based on the same article roots— **ս, դ, ց,** and derive from All-Armenian այստեղ, այդտեղ, այնտեղ.

Irregular Verb կա has the same conjugation paradigm with the same irregularities both in the present and past tenses in EA. Insignificant difference in spelling—RO: կա, CO: կայ—concerns all final silent յ-s.

---

[1] This use of the preposition զ, quite regular in Grabar, evades conversation in WA and is distinctive to the high standard in speech and writing.

Irregular Verbs տալ, լալ, and also գալ exhibit a different type of irregularity. Their present tense is formed from the future-continuous participle ending in -իս with the copula է. The verbs **լալ** *to cry,* has a parallel analytical form: լաց եմ լինում. It is more commonly used now, whereas լալիս եմ is high standard; on everyday level the latter sounds slightly oldish, archaic-poetic.

	EA	WA	EA	WA
	տալ *to give*		լալ *to cry*	
ես	տալիս եմ	կուտամ	լալիս եմ	կուլամ
դու	տալիս ես	կուտաս	լալիս ես	կուլաս
նա	տալիս է	կուտայ	լալիս է	կուլայ
մենք	տալիս ենք	կուտանք	լալիս ենք	կուլանք
դուք	տալիս եք	կուտաք	լալիս եք	կուլաք
նրանք	տալիս են	կուտան	լալիս են	կուլան

Imperative Mood of Verbs appears in the same four forms in EA: singular/plural, positive/negative. Formation shows the following differences.

- **ե** verbs in singular positive end in -ի՛ր, e.g., ապրի՛ր, սիրի՛ր,
- In negative only the particle մի՛ adds: մի՛ ապրի՛ր, մի՛ սիրի՛ր
- In casual styles, the final ր is dropped; positive ապրի՛, սիրի՛, negative: մի՛ ապրի, մի՛ սիրի.
- **ա** verbs have the same form in positive: կարդա՛ *Read!*
- The negative is again different in that it only adds the particle մի՛ կարդա *Don't read!*

EA Imperative Plural is formed from the past tense stem (see Lesson 10) and has the following forms:

- Ending **-ացեք** for the **ա** verbs: Կարդացե՛ք *Read!*
- Negative: Մի՛ կարդացեք *don't read*! (plural and reverential-formal).
- Ending **-եցեք** for **ե** verbs: Լսեցե՛ք *Listen!* Ապրեցե՛ք *Live!*
- Negative: Մի՛ լսեցե՛ք *Don't listen!* Մի՛ ապրեցե՛ք *Don't live!* These are newer generalizations. The recommended standard is the same as in WA: Մի՛ լսե՛ք, Մի՛ ապրե՛ք.

Comparison sample:

	Infinitive	Positive	Negative	
			Singular	Plural & Formal
EA	սիրել *to love*	սիրի՛ր	մի՛ սիրիր	մի՛ սիրեցեք, սիրեք
WA		սիրէ՛ սիրի՛ր	մի՛ սիրեր	մի՛ սիրեք
EA	ասել *to say*	ասա	մի ասա	մի՛ ասացեք, ասեք
WA	ըսել	ըսե՛	մի՛ ըսեր	մի՛ ըսեք
EA	նայել *to look*	նայի՛ր	մի՛ նայիր	մի՛ նայեցեք, նայեք
WA	նայիլ	նայե՛, նայի՛ր		մի՛ նայիք
EA	սկսել *to begin*	սկսի՛ր	մի՛ սկսիր	մի՛ սկսեցեք, սկսեք
WA	սկսիլ	սկսե՛, սկսի՛ր		մի՛ սկսիք
EA	կարդալ *to read*	կարդա՛	մի՛ կարդա	մի՛ կարդացեք
WA			մի՛ կարդար	մի՛ կարդաք
EA	հուսալ *to hope*	հուսա՛	մի՛ հուսա	մի՛ հուսացեք
WA	հուսալ		մի՛ հուսար	մի՛ հուսաք

Note: The irregular verbs տալ *to give* and EA տանել, WA տանիլ *to carry*, create a cross-system homonym in the negative imperative, that is:

Infinitive	Imperative positive		Imperative negative	
	Singular	Plural	Singular	Plural
EA տալ WA տալ	տու՛ր	տվե՛ք	մի՛ տուր	մի՛ տվեք
			մի՛ տար	մի՛ տաք
EA տանել	տա՛ր	տարե՛ք	**մի՛ տար**	մի՛ տարեք
WA տանիլ			մի՛ տանիր	մի՛ տանիք

Text: ՆՎԱՐԴԻ ՀՅՈՒՐԵՐԸ

Այսօր Ձատիկ է, մի հին տոն, որ միշտ տոնվում է: Անին և Արան Ձատիկի նվեր են տանում մայրիկին: Մայրիկին անուշ ելակ և անուշահոտ յասաման են տանում:

Արան և Անին հյուր եկան Նվարդ մայրիկի տունը:

- Բարև, մայրիկ, - ասում են և համբուրում մայրիկին:
- Բարև, հազար բարի:
- Մա, քեզ շատ եմ կարոտում, ուզում եմ միշտ քեզ հետ լինել, - ասում է Անին:
- Ինչպե՞ս եք, մայրի՛կ -, ասում է Արան:
- է՜, դու՛ք լավ լինեք, որդի՛:
- Մայրիկ, Ամերիկա այդպես չեն ասում:
- Հապա ինչպե՞ս են ասում:
- Ասում են՝ շատ լավ եմ, շնորհակալ եմ:
- Չեմ կարող այդպես ասել, ես պոլսահայ եմ:
- Ինչու՞:
- Անհամ կլինի... Սակայն դեմ չեմ, - ասում է Նվարդ մայրիկը: Ապա շարունակում է.
- Լավ, որդի՛, լավ ասենք, լավ լինենք: Նա շատ է սիրում կատակել:

Անին ելակն է լվանում:

- Այստեղ ե՛կ, մա՛, տե՛ս, ի՞նչ լավ ելակ է: Ուզու՞մ ես՝ անու՛շ արա մի քիչ:
- Շնորհակալ եմ, անուշիկ Անիս, - ասում է Նվարդ մայրիկը, - դուք էլ կերե՛ք: Եւ տեսեք՝ ի՞նչ հայկական ուտելիքներ եմ պատրաստել անուշիկ Անիիս ու Արայիս համար: Կերե՛ք, անուշ լինի:
- Նվա՛րդ մայրիկ, հապա հայերը ինչպե՞ս են ասում, - նորից է ասում Արան:
- Ինչի՞ն... Այո, ասում են՝ լավ ասենք, լավ լսենք, զավակս...

Punctuation—Կետադրություն: The table below is a brief summary on the punctuation marks used in Armenian.

Mark	EA term	WA term	Use	Near Equivalent in English
՛	շեշտ	շեշտ	Vocatives, Imperative verbs Interjections	Stress
՞	հարցական նշան	պարոյկ	Questions	? question mark
~	բացականչական նշան	երկար	Emphatic intonation, intcrjcctions	! exclamation mark
։	վերջակետ	վերջակէտ	End of sentence	. full stop/period
,	ստորակետ	ստորակէտ	List, pause	, comma
.	միջակետ	միջակէտ	Pause	; semicolon, : colon
՝	բութ	բութ	Pause, omission,	: colon ; semicolon
...	կախման կետ, բազմակետ	կախման կէտ, բազմակէտ	Omission	… ellipsis
-	գծիկ	գծիկ	Analytic compound words, hyphenation	- hyphen, / slash
—	գիծ	գիծ	Dialogue connection, pause	— dash
՚	ապաթարց	ապաթարց	Grammatical connection/omission	‘ apostrophe
« »	չակերտ	չակերտ	Direct speech. Titles.	“ ” quote marks
( )	փակագիծ	փակագիծ	Insert	parenthesis

Vocabulary Differences

EA	Translation	WA	Translation
ազնիվ HR	honest, noble	ազնիւ	nice, good (noble, honest)
անուշ (քաղցր)	sweet, dear	անուշ	sweet, sweets, jams
աշակերտ	pupil	աշակերտ	student
(ուսանող)	student		LF
բարեկամ	relative	բարեկամ	friend
(ճիշտ)		շիտակ	correct, right, direct
այգի (պարտեզ HR)	garden	պարտէզ	garden
(փոքր)	small, little	պզտիկ	small, little
կարոտել		կարօտնալ	to long for, miss
հուսահատվել		յուսահատիլ	to despair

Idioms and Common Expressions of Politeness

EA	WA	Translation
(խնդրեմ, ոչինչ)	Բան մը չէ:	*Not at all. Never mind!*
Բարով եկաք	Բարի եկաք:	*You are welcome.*
Նորից համեցեք	Նորէն հրամմ(եց)է՛ք:	*Come again!*
Անուշ լինի	Անուշ ըլլայ:	*You are welcome.*
Անուշ արեք	—	*Help yourself to the food.*

Cf. the Usage of Some Adjacency Pairs in Typical Situations

Հյուրեր ընդունելիս.	Receiving guests:
- Ներս համեցեք or Խնդրեմ, ներս մտեք:	Please come in.
- Շնորհակալություն:	Thank you.
Գրադարանում.	In the library:
- Այս գի՞րքն էիք ուզում: Ահա, խնդրեմ:	Was this the book you wanted? There you go.
- Շնորհակալ եմ or Շնորհակալություն:	Thank you.
- Խնդրեմ:	No problem.
Տաքսի	Taxi
- Աբովյան, խնդրեմ:	(to) Abovian (street), please.
- Հասանք, համեցե՛ք:	Here we are. There you go.
- Ապրեցեք: or Շնորհակալություն:	Thank you.

Խնդրեմ is widely circulated in EA, as an equivalent to the WA հաճիս *please* and բարի եկաք *you are welcome;* That is, it adjacent to *thank you* both as in a question and reply. խնդրեմ is frozen from Grabar simple present first person singular. Its modern EA equivalent խնդրում եմ can feature in quests but not answers. The pair համեցեք—ապրեցեք (in taxi) is somewhat colloquial but sounds much warmer, than its formal equivalent: Խնդրեմ—Շնորհակալություն. More on common phrases see in Appendix 6.

FOR ADVANCED STUDENTS: Find the imperative verbs in Isahakian's poem and form their plurals. Try to translate it into WA and/or English. This poem, like many others by Isahakian is also a popular romance.

Ավետիք Իսահակյան

Քույր իմ նազելի, նայի՛ր, քո դիմաց՝
Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել,
Ա՜խ, նվիրական ինձ քո գիրկը բա՛ց
Եւ գուրգուրի՛ր ինձ, ես շատ եմ լացել...

Քնքուշ ձեռքերով աչերս սրբի՛ր,
Մի՛ թող ինձ լալու—ես շատ եմ լացել:
Ճակատիս մռայլ մշուշը ցրի՛ր,
Եւ գուրգուրի՛ր ինձ, ես շատ եմ լացել...

LESSON 8

PHONETICS

Letters: Գ գ [k‘]* Խ խ [kh] Ղ ղ [gh] Վ վ [v]

Minimal Pairs

GRAMMAR

The Past Tense of the verb եմ
Past Imperfect Tense
Emphatic Link of Verbs
Future in the Past Tense
Regular vs. Irregular Verbs
The Defective Verb գիտեմ
Simple Past of Irregular Verbs
The Irregular Verb գալ
Constructions with եղեր
Irregular Imperatives
Future Participles

VOCABULARY

Synonyms: Words Meaning *Child*
Synonymous Adjectives աղուոր, աղէկ, and others
Text and Dialogue: ԱՐՏԱԿ

PHONETICS

Letters

Consonants

Descending letters: Ղ ղ [gh] Գ գ [k‘]

Bisecting letters: Խ խ [kh] Վ վ [v]



Խ խ խնձոր
[*khənts‘or*]

Position in Alphabet	Letter	Letter Name	Key Word	Pronunciation
3	Գ գ	գիմ [k‘im]	գառ lamb	[k‘]
13	Խ խ	խէ [khe]	խնձոր apple	[kh]
18	Ղ ղ	ղատ [ghad]	ղեկ stirring wheel	[gh]
30	Վ վ	վեւ [vev]	վարդ rose	[v]

Pronunciation note:

Ղ ղ and Խ խ represent sounds that do not exist in English.

- Ղ ղ sounds similar to the French or German uvular [gh], like in the words *Paris, merci,* or *Berlin, Reich.*
- Խ խ sounds similar to [x] in Castilian Spanish, Russian, or German, like in the words *Juan, jamas, xleb,* or *achtung, ich.*

- In Armenian Ղ ղ and differ Խ խ by only one feature: ղ is voiced and խ is voiceless. Consequently, they sound quite similar, especially to the untrained ear, but they are distinct phonemes differentiating words—e.g., վաղը tomorrow; վախը the fear; կաղ է: [ga´ghe] *(he) is lame*; կախէ´: [gakhe´] *Hang!*

Minimal Pairs: Words which differ by one phonetic feature are called minimal pairs, such as English *bet-bat, bear-beer, beer-peer, dear-tear*, etc. The sounds ղ/խ create minimal pairs, such as ուխտ *oath,* ուղտ *camel;* ախտ *disease,* աղտ *filth, grime.* Practice their pronunciation.

Վ վ վարդ

Վ վ is pronounced [v], as is the letter Ւ ւ . Վ is used in two positions:

- Initial—e.g., վարդ *rose*, վատ *bad*, վրայ *on*. The spelling does not change in compounds—e.g., Ալվարդ *female name,* lit.: *crimson rose*, անվախ *brave.*
- After the letter ո only վ is used because ւ after ո turns into ու. Examples: ով *who,* հով *wind, breeze,* կով *cow,* շուտով *soon,* համով *tasty, delicious.* Exceptions: վոհմակ *wolf pack,* սորվիլ, *to learn.*

Գ գ is pronounced [k'], exactly like the letter ք. Originally, they were different phonemes, [գ] voiced and [ք] voiceless.[1] There are homophones which differ by only these letters—for example, գայլ *wolf,* քայլ *step,* or վարգ *gallop,* վարք *biography.* Orthographic rules help to distinguish these letters; here are a few helpful hints:

գրիչ

- գ is more frequent than ք.
- գ is more often found in roots, and ք in endings, as ք is the plural ending in Krapar. As an obsolete ending, the final ք usually drops in derivation and գ, as a root component, does not. For instance:

զանգ	bell	*and*	զանգակ	small bell
վարգ	gallop		վարգել	to gallop
մէգ	fog		միգապատ	foggy
միրգ	fruit		մրգաշատ	fruitful
գիրք	book	*but*	գրել	to write
վանք	monastery		վանական	monk
վարք	biography, behavior		վարել	to conduct
խելք	intelligence, brains		խելօք	smart
միտք	mind		մտաւոր	mental

Only several words end with a root ք and they should be memorized.[2] The root ք is easy to check out by derivation—e.g., քաղաք *city,* քաղաքական *political,* քաղաքային *urban.*

[1] See the EA parallel and Appendix 4 for the consonant shift.

[2] E.g., թռք, թուք, թուրք, լաք, քուրք. Details see in Appendix 13. (The letter թ is introduced in Lesson 10.)

Phonetic Drills: Read the following words

Lower Case	Upper Case	Translation
աղէկ	ԱՂԷԿ	good, well
աղուոր	ԱՂՈՒՈՐ	pretty, beautiful
աշխատիլ	ԱՇԽԱՏԻԼ	to work
այստեղ	ԱՅՍՏԵՂ	here
գալ	ԳԱԼ	1. to come; 2. next
գարուն	ԳԱՐՈՒՆ	spring
գէշ	ԳԷՇ	bad, ugly
գոյն	ԳՈՅՆ	color
գիտելիք	ԳԻՏԵԼԻՔ	knowledge
գիրք	ԳԻՐՔ	book
երախայ	ԵՐԱԽԱՅ	child
եղբայր	ԵՂԲԱՅՐ	brother
զանգ	ԶԱՆԳ	bell
կաղանդ	ԿԱՂԱՆԴ	Christmas
կանուխ	ԿԱՆՈՒԽ	early
խաչ	✝ ԽԱՉ	cross
խաղ	ԽԱՂ	game
խաղող	ԽԱՂՈՂ	grape
խելք	ԽԵԼՔ	intelligence
հոգի	ՀՈԳԻ	soul
ոգի	ՈԳԻ	spirit
ղրկել	ՂՐԿԵԼ	to send
շուտով	ՇՈՒՏՈՎ	soon
սոխակ	ՍՈԽԱԿ	nightingale
սորվիլ	ՍՈՐՎԻԼ	to learn
վերաքաղ	ՎԵՐԱՔԱՂ	review
վրայ	ՎՐԱՅ	on
տղայ	ՏՂԱՅ	boy, son
քաղաք	ՔԱՂԱՔ	city

Synonyms: Words Meaning Child

Synonyms are words with similar meanings. Absolute synonyms—i.e., words with identical meanings—are rare in languages. Absolute synonyms differ at least by style and usage, for instance:

Literary Standard	Conversational Style	Meaning
ուղարկել	ղրկել	to send
այստեղ	հոս	here
այսպէս	ասանկ	this way, such[3]

Մանչ, տղայ, երախայ, զաւակ, որդի, դուստր relate to *child.* Yet they all have definite differences in meaning, style and use.

Word	Meaning[4]	Usage
զաւակ	own child: son or daughter	All-Armenian, more frequent in Western Armenian
երախայ, երեխայ	any child, also son or daughter	All Armenian, more frequent in Eastern Armenian
որդի	son	All Armenian, literary spheres, slightly obsolete
դուստր	daughter	All Armenian, literary spheres, obsolete
մանչ	boy, guy, young man, son, child	Western Armenian
տղայ[5]	boy, guy, young man, son, child	All Armenian

Synonymous Adjectives

խաղող

The following adjectives are not synonyms strictly speaking. Yet they all have something common in their meaning and can substitute for each other in several contexts. Also, they have common antonyms: վատ *bad* and գէշ *bad, evil, ugly.*

լաւ	good, well	աղուոր	pretty, good, nice
բարի	kind, good	սիրուն	pretty
ազնիւ	nice, noble, honest	անուշ	sweet, nice
ընտիր	choice, superior	ուրախ	glad, happy, joyful
պատուական	noble, gracious	աղէկ	good, well

[3] Review Lesson 4 for details.

[4] Most of those words have wider semantics than presented here.

[5] Originally, this Hebrew borrowing meant *lamb, child, small, little.* The meaning *little* was still alive in the Western Armenian at the turn of the 20th century; for example, one could say, Տղայ դուստր մը ունինք: *We have a small (very young) daughter.* In Eastern Armenian, *boy, guy* became the central meaning. The latter tends to be the main meaning in modern Western Armenian too.

The correct translation of these words depends largely on context because the most frequent adjectives, as a rule, lack exact equivalents in different languages. Here are a few examples to demonstrate the usage of these words:

Այսօր լաւ օր է:	Today is a nice day.
Այսօր աղուոր օր է:	Today is a lovely day.
Բարի օր:	Hello. Good day.
Բարի լոյս:	Good morning.
Դուք շատ բարի էք:	You are very kind.
Դուք շատ ազնիւ էք:	You are very nice.
Շատ բարի, ես հոն կ՛ըլլամ:	OK (all right, very well), I'll be there.
Շատ աղէկ, ես հոն կ՛ըլլամ:	OK (all right, very well), I'll be there.
Շատ լաւ, ես հոն կ՛ըլլամ:	OK (all right, very well), I'll be there.
Շատ ընտիր շոքոլայ է:	This is a very choice chocolate.
Պատուական գինին խմենք:	Let's drink the noble wine.
Ինչպէ՞ս ես: Լաւ (աղէկ):	How are you? Fine.
Ուրախ եմ քեզ տեսնելուս:	I am happy (it's nice) to see you.
Ինչ ուրախ մանչ է:	What a joyful child.
Ի՜նչ աղուոր մանչ է:	What a nice child!
Իմ անուշ զաւակս է Արտոն:	Ardo is my sweet child.
Անին աղուոր է:	Ani is beautiful.
Նարէն սիրուն երեխայ է:	Nareh is a pretty child.
Անուշ հոգի՜ մը ըլլար...	If there was a sweet soul....[6]
Բարի գիշեր եւ անուշ երազներ ամէնուն:	Good night and sweet dreams to all.



Ես կով եմ, հաւանաբար քիչ մը մու՜,
սակայն ոչ կու՜:

[6] A line from Vahan Tekeyan's poem; see Appendix 10.

GRAMMAR

Auxiliary Verb եմ in Past Tense

	Past Tense	
Person/Number	Positive	Negative
ես	էի	չէի
դուն	էիր	չէիր
ան	էր	չէր
մենք	էինք	չէինք
դուք	էիք	չէիք
անոնք	էին	չէին

Orthographic Note:

In the past tense the verb եմ is always spelled with the letter է, in contrast to the present tense forms, where է is used only twice: ան է *he/she/it is,* and դուք էք *you (all) are.*

Past Imperfect Tense

The past imperfect tense shows actions **going on and incomplete in the past**, at some moment before the speech act; for example, կը գրէի *I was writing,* կը խաղար *he was playing.*

It is formed in the same way as the simple present—that is, with the particle կը preceding the conjugated forms of the content verb. The difference is in the endings; the past imperfect employs the past tense forms of the verb եմ as endings, and the simple present, its present tense forms.

Conjugation sample:

Person/ Number	Past Imperfect Tense Positive		
	գրել to write	աշխատիլ to work	խաղալ to play
ես	կը գրէի	կ'աշխատէի	կը խաղայի
դուն	կը գրէիր	կ'աշխատէիր	կը խաղայիր
ան	կը գրէր	կ'աշխատէր	կը խաղար
մենք	կը գրէինք	կ'աշխատէինք	կը խաղայինք
դուք	կը գրէիք	կ'աշխատէիք	կը խաղայիք
անոնք	կը գրէին	կ'աշխատէին	կը խաղային

Note the following differences from the simple present tense:

- ե and ի verbs employ identical endings; that is, գրել, սիրել, աշխատիլ, ապրիլ have the same endings: -էի, -էիր, -էր, -էինք, -էիք, -էին.
- ա verbs employ practically the same endings too, but with է shifts to յ; consequently, the endings are -այի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային.

Note also the following common features with the simple present tense:

- The particle **կը** is abbreviated into **կ'** if the content verb begins with a vowel; e.g., կ'ուտէի *I was eating*; կ'ըսէիր *You were saying*; կ'աշխատէր *he was working.*
- տալ, լալ, գալ use the particle կու—e.g., կու տայի *I was giving* (see the verb գալ below).
- ունիմ, կրնամ, կամ use no particles—i.e.: ունէի *I had,* կրնայի *I could,* կայի *I was.*

The past imperfect in negative is formed analogously with the present tense negative: չեմ սիրեր/չէի սիրեր. That is, the past tense negative auxiliary (չէի, չէիր, չէր, etc.) precedes the content verb with a լ > ր replacement; e.g., չէի գրեր *I was not writing*; չէիր տար *you were not giving*; but չէր աշխատեր *he/she/it was not working.*

Past Imperfect Tense Negative		
Person/Number	Auxiliary	Negative Participle
ես	չէի	գրեր, աշխատեր, խաղար
դուն	չէիր	
ան	չէր	
մենք	չէինք	
դուք	չէիք	
անոնք	չէին	

Note:

- ե and ի verbs have identical endings in the past imperfect tense, opposite to the present tense forms.
- This is in contrast also to the negative imperative, which follows the regular pattern, cf.:

Tense		ե Verbs		ի Verbs	
Positive	Simple Present	կը գրեմ	կը տեսնեմ	կ'աշխատիմ	կը խօսիմ
	Past Imperfect	կը գրէր	կը տեսնէր	կ'աշխատէր	կը խօսէր
	Imperative	գրէ՛	տե՛ս	աշխատի՛ր	խօսէ՛, խօսի՛ր
Negative	Simple Present	չեմ գրեր	չեմ տեսներ	չեմ աշխատիր	չեմ խօսիր
	Past Imperfect	չէր գրեր	չէր տեսներ	չէր աշխատեր	չէր խօսեր
	Imperative	մի՛ գրեր	մի՛ տեսներ	մի՛ աշխատիր	մի՛ խօսիր

Usage of the Past Imperfect Tense

The past imperfect tense shows continuous actions incomplete in the past. Cf.:

Շատ կը հաւնէի սա գիրքը եւ ստէպ-ստէպ նորէն կը կարդայի:

I liked this book very much and often used to reread it (read it again). or: *would reread it often.*

The actions described with կը հաւնէի, կը կարդայի have no definite beginning or end; they were going on sometime before the act of speech. Therefore, the past imperfect tense is typical to comples sentences where it is supplemented with a subordinate clause. It describes background actions which run parallel to the action or situation in the subordinate clause. For example, the same sentence above can become the main clause:

Երբ պզտիկ էի, շատ կը հաւնէի սա գիրքը եւ ստէպ-ստէպ նորէն կը կարդայի: *When I was small, I liked this book very much and would often reread it.*

The past imperfect tense is usually translated into the past continuous forms of English. The simple past tense appears in the translation of the static verbs which lack continuous forms—e.g., կը հաւնէի is presented as *I liked* because **I was liking* is not correct in English. Often "(I) used to + infinitive" constructions are used to translate the past imperfect tense; for instance: Հոն կ'ապրէի, երբ աշակերտ էի: *I used to live there when I was a student.* The English future in the past also may be suitable for translation, as in the sentence above. Thus, the same form, say կը գրէի can be translated, depending on the context, into: *I was writing, I used to write, I wrote, I would write.*[7]

Examples of usage:

Երբ ես եկայ, դուն *կ'աշխատէիր*:	When I came, you were working.
Երէկ մենք *կ'աշխատէինք*, այսօր՝ ոչ:	Yesterday we were working, today, we don't.
Պզտիկ ատեն Արտակը հայերէն *չէր խօսեր*:	Ardag did not use to speak Armenian when he was small.
Արտակ Արիսին հետ *կը խաղար*, երբ Արամը տեսաւ:	Ardag was playing with Aris when he saw Aram.
Նարէն բարի երազներ միայն կը տեսնէր, գէշ երազներ չկային այն ատեն:	Nareh used to see good dreams only, there were no bad dreams in those times.
Արիսը չհասկնար *չէր խօսեր*, սակայն *կը հասկնար*:	Aris was not speaking Chinese, but he used to understand it.

Emphatic Link of Verbs

In emphatic speech, closely related verbs often link to share grammatical markers; that is, instead of saying կ'ուտէ եւ կը խմէ *he eats and drinks*, one may say կ'ուտէ-խմէ thus tying two actions into one entity. Individual approach is recommended for each case of translation, Cf.:

Արիսը կը խնդայ-մարի երբ Արտակը հայերէն կը խօսի:
Aris laughs up to fainting when Ardag speaks Armenian.

Քարեկամներէս մէկը կ'ուտէր-խմէր ու կ'ըսէր՝ աշխարհէս ասի կը մնա:
One of my friends used to eat and drink and he would say—this is what remains from this world.

Անին կը գրկէ-գգուի իր զաւկին, կ'ըսէ՝ «Դուն իմ հրաշքս ես»:
Ani hugs and cuddles her child and says, "You are my miracle".

Գարունը զուգեր-զարդարեր է դաշտ ու բլուր:
The spring has adorned fields and hills.

---

[7] From the mere list of possible translations it is obvious that the past imperfect in standard Armenian is semantically overloaded. There is no grammatical category to differentiate the continuous aspect, though some of its remnants are found in the verbal affixes—e.g., ունիմ - ունենամ; the latter expresses the continuous aspect. The conversational speech however clearly marks the continuity of actions with the post-particle կոր. Thus, կը խօսիմ կոր *I am talking*, and կը խօսէի կոր *I was talking* indicate the progressive present and past, whereas կը խօսիմ *I talk* and կը խօսէի *I used to talk*, the simple present and past imperfect.

Future in the Past Tense

Future in the past shows actions which would or could take place in the future. It is formed with the preceding particle **պիտի** and conjugated content verb, with the same endings as for the past imperfect; e.g., պիտի տեսնէի *I would see.* The formation is parallel to that of the simple future: պիտի տեսնեմ *I will see.* Depending on the context, its translation can employ other modal verbs too, such as: *should, had to, could.*

The negative future in the past is formed with the negative particle - չ- attached to the content verb; e.g., պիտի չտեսնէի *I would not see (should not, had not to, could not* if stressed).

Conjugation sample:

Future in the Past Positive and Negative			
Pronoun	սիրել	ըլլալ	չգիտել
ես	պիտի սիրէի	պիտի ըլլայի	պիտի չգիտէի
դուն	պիտի սիրէիր	պիտի ըլլայիր	պիտի չգիտէիր
ան	պիտի սիրէր	պիտի ըլլար	պիտի չգիտէր
մենք	պիտի սիրէինք	պիտի ըլլայինք	պիտի չգիտէինք
դուք	պիտի սիրէիք	պիտի ըլլայիք	պիտի չգիտէիք
անոնք	պիտի սիրէին	պիտի ըլլային	պիտի չգիտէին

The future in the past tense is more characteristic of complex sentences, and it is not used very frequently due to the nature of the action described: something that was to happen in a future time which is in the past when the speech act occurs; only the wider context shows whether it happened or not. E.g.,

Դրան մօտ պիտի չգտնէինք, որ չմսէինք:
We shouldn't have sat next to the door, in order not to be cold.

The following dialogue illustrates its usage. Note that the last sentence—i.e., a wide context—reveals the factuality of actions expressed by the future in the past.

Ա	Նայէ՛, քանի եղաւ է: Ալ պիտի ուշանայինք:	Look at the time. We'd be late soon.
Բ	Գիտես, ընելիք շատ կար՝ տանտէրը *պիտի տեսնէի, պիտի խօսէի* տան համար, շուկայ *պիտի մտնէի* եւ այլն:	You know, there was so much to do: I had to see the landlord, speak to him, do my shopping, etc.
Ա	Սակայն *պէտք չէ ուշանայիր*:	But you shouldn't be late.
Բ	Հոգ չէ, հոգիս, ատեն ունինք տակաւին:	Don't worry, dear; we still have time.
Ա	Լաւ, ընելիքներդ ըրի՞ր:	OK, did you do whatever you had to?
Բ	Քաներ մը ըրի, բոլորին համար ատեն *չկար*:	I did a few things; there wasn't time for all of it.

Regular vs. Irregular Verbs

The *majority* of verbs covered by the same rules are called *regular* verbs. A *smaller number* of verbs is regulated by different sets of rules in *some* tenses; hence, they are called *irregular* verbs. Common endings and pre-particles often unite both regular and irregular verbs. Some irregular verbs are also defective, as they lack some of the forms and tenses characteristic to the majority of verbs.[8] You already know the five most common defective verbs—եմ, ունիմ, գիտեմ, կամ, կրնամ, which have only present and past tense forms in indicative mood—neither infinitives, nor future, perfect, imperative, or subjunctive. For the auxiliary եմ *to be* and the existential կայ *there is* all the remaining forms are substituted with the grammatical forms of another irregular verb—ըլլալ *to be.*

Հայաստանը կայ եւ պիտի ըլլայ: *Armenia is (exists) and will be.*
Երէկ կայի եւ աշխարհ տեսայ, վաղն ալ ըլլայի եւ տիեզերքը տեսնէի:
Yesterday I was there and I saw the world; I wish I be there tomorrow too and could see the universe.
Երէկ լաւ էր, եւ վաղն ալ աւելի լաւ պիտի ըլլայ:
Yesterday it was good, and tomorrow will be even better.

As a rule, the *irregular* verbs belong to the core vocabulary and are quite frequent in everyday speech. They maintain older rules once covering the entire verbal system of the language. For example, in Krapar the simple present and past imperfect were formed without any particles, and these same defective verbs—եմ, ունիմ, գիտեմ, կամ, կրնամ—which were obviously too frequently used to undergo new rules, preserved the ancient rules after the pre-particles կու, կը had emerged in Middle Armenian. Thus, these frequent verbs became irregular in the simple past/past imperfect, not merely defective.

Other 'irregularities' reflect the rules of the prewritten period, often dating back to the times of Indo-European unity; e.g., suppletive verbs which derive their past and present tenses from different roots: կու գամ *I come,* եկայ *I came;* կ'ըլլամ *I'll be;* եղայ *I was.*[9] Analogy also plays a role in verb irregularities.[10]

The Irregular Verb *գիտեմ*

Գիտեմ *I know* belongs to the category of defective verbs forming the simple present without the particle **կը**. Գիտեմ, like կրնամ has a regular negative with the auxiliary verb—i.e., չեմ գիտեր, cf.: չեմ կրնար.[11] The other three defective verbs form the negative by simply adding the negative particle **չ-** to the conjugated stem—i.e., չէ, չունիմ, չկամ.

These verbs have no indefinite or imperative forms. Actually, they have only two tense forms: simple present and simple past.[12]

---

[8] In the Armenian grammatical tradition defective verbs are called պակասաւոր բայեր lit.: *lacking verbs.*

[9] We still miss two letters (p and g) for the third suppletive verb in modern Armenian երթալ *to go* (which is suppletive in English too). In the present tense it is կ'երթամ *I go,* and in the simple past, գացի *I went.*

[10] Irregularities in conjugation and also declension are the normal state of human languages. For example, տեսնել, մտնել in modern colloquial speech are converted into ա verbs by the analogy of հասկնալ, մոռնալ, etc. Some day, the contemporary colloquial forms տեսնալ and մտնալ may turn into standard forms.

[11] The negative form չկրնամ is in subjunctive mood and corresponds to the infinitive կարենալ; e.g., subjunctive: Չկրնամ ըլլալ, չեմ ըլլար: *If I cannot, I do not (do it).* Versus indicative: Չեի կրնար եւ չըրի: *'I could not and I did not.*

[12] For details on substitute verbs see Lesson 13 and for the complete paradigms, Appendix 8.

Simple Past of Defective Verbs

The **simple past tense** shows actions or situations **completed** in the past, in contrast to incomplete, ongoing actions expressed by the past imperfect tense. Above we have met several simple past forms, such as տեսայ *I saw,* տեսաւ *he saw,* եկաք *they came,* ըրի *I did,* etc.[13]

The abovementioned five defective verbs use past imperfect endings for the simple past tense—i.e., ունէի *I had,* էի *I was,* կրնայի *I could,* կայի *I existed,* and գիտէի *I knew.*

	Positive		Negative	
	Simple Present	Simple Past	Simple Present	Simple Past
Ես	գիտեմ	գիտէի	չեմ գիտեր	չէի գիտեր
Դուն	գիտես	գիտէիր	չես գիտեր	չէիր գիտեր
Ան	գիտէ	գիտէր	չի գիտեր	չէր գիտեր
Մենք	գիտենք	գիտէինք	չենք գիտեր	չէինք գիտեր
Դուք	գիտէք	գիտէիք	չէք գիտեր	չէիք գիտեր
Անոնք	գիտեն	գիտէին	չեն գիտեր	չէին գիտեր

The Irregular Verb *գալ*

The irregular verb գալ *to come* forms the present and past imperfect tenses with the particle **կու,** like լալ *to cry* and տալ *to give.* These are the only three verbs in this category. The negatives are regular.

	Simple Present		Past Imperfect	
Ես	կու գամ	չեմ գար	կու գայի	չէի գար
Դուն	կու գաս	չես գար	կու գայիր	չէիր գար
Ան	կու գայ	չի գար	կու գար	չէր գար
Մենք	կու գանք	չենք գար	կու գայինք	չէինք գար
Դուք	կու գաք	չէք գար	կու գայիք	չէիք գար
Անոնք	կու գան	չեն գար	կու գային	չէին գար

Գալ has other irregularities; it is suppletive and derives the simple past (or aorist) from a different root, that is:

Imperative: եկուր, եկէ՛ք *Come!* Prohibitive: մի՛ գար, մի՛ գաք *don't come!*

Simple past: եկայ, եկար, եկաւ *(I, you, s/he) came,*

եկանք, եկաք, եկան *(we, you, they) came,* etc.

[13] The simple past tense is presented in detail in Lesson 10.

Constructions with եղեր

Գառին [gagin]
պաշտպան գտանք եղեր:

եղեր is the past participle form of the irregular verb ըլլալ *to be.* With conjugated verbs, it functions as a modal verb, called evidential, to express doubt, hesitation, assumption, or improbability. It is very characteristic of oral speech and adds a tone of uncertainty to statements. For instance, the caption illustrating the picture to the left could be translated as: *Yeah, right, we got a defender for the lamb.* Narration from a not-witness is another frequent use for եղեր: some Armenian grammars refer to եղեր constructions as the Narrative Mood.[14] Constructions with եղեր are conversational, the formal standard style would instead use the adverb իբր(եւ) (թէ) *as if'* or the conjunction եթէ *if.*

The translation of եղեր depends on the context: modal verbs (such as *might, ought to, should),* or *if* constructions may combine with such verbs, as *seems, looks like.*

Examples:

Ասոնք գիտէի՞ր եղեր, ինչու՞ չըսիր:	*If* you knew these, why didn't you tell (me)?
Պոլիս կ՛ուզէ գալ եղեր, պտոյտի դրամ չունի եղեր:	S/he wants to come to Bolis (but) has no money for a trip.
Այդ գիրքը ունիմ եղեր, չեմ գիտեր՝ ուր դրեր եմ:	I *must* have that book; I don't know where I *could* have put it.
Կ՛ըսեն՝ անոնք մատներով կ՛ուտեն եղեր: Ինչու՞ մատներով կ՛ուտեն, դգալ չունի՞ն եղեր:	They say, *as if* they eat with (their) fingers. Why do they eat with (their) fingers? *Might* it be they do not have spoons?



Irregular Imperatives

The irregularity in imperative formation is disclosed in the **positive singular** which derives from the aorist (past) stem (see Lesson 10). It often coincides with the verbal stem with zero ending. That is:

բե՛ր bring! from բերել,
տե՛ս see! from տեսնել.

It may also have phonetic changes specific to the aorist:

դի՛ր for դնել, ըրէ՛ for ընել,
տու՛ր for տալ, կե՛ր for ուտել.

The **positive plural** is regular with the ending -էք: դրէ՛ք, ըրէ՛ք, տուէ՛ք, կերէ՛ք.

The negative form, which derives from the present stem, is regular with the prohibitive particle: մի՛ դներ/դնէք. Imperatives are widely used in everyday speech, e.g.: Նազ մի՛ ըներ: Չեմ ուզեր՝ գրպանս դի՛ր: *Don't toy/play (with me) I don't want it; just put it in my pocket* (idiom).

[14] See, for example, Գազանճեան, 1958, p.210. In modern American courts, this form would be defined as 'hear-say', not eyewitness account.

Positive		Negative (Prohibitive)		Infinitive	Translation
Singular Irregular	Plural and Formal	Singular	Plural and Formal		
դի՛ր	դրէ՛ք	մի՛ դներ	մի՛ դնէք	դնել	put
բե՛ր	բերէ՛ք	մի՛ բերեր	մի՛ բերէք	բերել	bring
ըրէ՛	ըրէ՛ք	մի՛ ըներ	մի՛ ընէք	ընել	do
կե՛ր	կերէ՛ք	մի՛ ուտեր	մի՛ ուտէք	ուտել	eat
տե՛ս	տեսէ՛ք	մի՛ տեսներ	մի՛ տեսնէք	տեսնել	see
ե՛լ	ելէ՛ք	մի՛ ելլեր	մի՛ ելլէք	ելլել	get up
զա՛րկ	զարկէ՛ք	մի՛ զարներ	մի՛ զարնէ՛ք	զարնել	hit, strike
տու՛ր	տուէ՛ք	մի՛ տար	մի՛ տաք	տալ	give
եկու՛ր	եկէ՛ք	մի՛ գար	մի՛ գաք	գալ	come
եղի՛ր	եղէ՛ք	մի՛ ըլլար	մի՛ ըլլաք	ըլլալ	be
տա՛ր	տարէ՛ք	մի՛ տաներ	մի՛ տանիք	տանիլ	take along, away

Future Participles

There are two future participles: endings in -իք and -ու, both formed from the infinitive, with a shift of ի verbs to ե—that is, խօս*ի*լ, տան*ի*լ, but խօս*ե*լիք, խօս*ե*լու, տան*ե*լիք, տան*ե*լու.

The future participle I shows substantivized future actions; it is used as a noun, for example, գրելիք, խօսելիք, *something to write/ to talk about.* It can be declined and takes articles. You have already seen the future participle in usage.

Frozen future participle I completely lexicalize as nouns—e.g. գալիք *future,* տալիք *debt.*

The future participle II— կարդալու, ըսելու, խօսելու—shows possible or probable action in the future with a hint of necessity and uncertainty. It links with the verb եմ.

Here are some examples of usage:

Այսօր հանդիպինք՝ խօսելիք կայ:	Let's meet today; there is *something to talk about.*
Ալ ըսելիք, գրելիք չունիմ:	I have *nothing* more *to say* and *write.*
Տեսնելիք բան է՝ պատմելով չ՛ըլլար:	It's a 'must see', telling won't do.
Ըլլալիքը պիտի ըլլայ՝ բախտէդ չես ազատիր:	*What is going to happen,* will happen; you can't get free from your destiny.
Ասիկա տալիքս է, այս ալ՝ տանելիքս:	This is my debt (lit. what I have to give), and this is what I'll take with me.
Խնդալիք բան է՝ կու լաս:	It's funny but you cry (idiomatic).
Գնորդին հետ սիրալիր ըլլալու ենք:	We have *to be* nice with the buyer.
Կ՛երեւի թէ նկարիչ ըլլալու էք:	You look like you *must/may be* an artist.

Text and Dialogue

ԱՐՏԱԿ





խաղալիկներ

Արտակը ինքզինքը կը նկարէ:

«Ասիկա ես եմ», կ'ըսէ:

«Ասի ալ Վահէն է իր եղբօր հետ: Անոնք իմ պզտիկ բարեկամներս են: Ես Վահէին հետ այլեւս չեմ խաղար: Ան տակաւին շատ պզտիկ է: Ան իր խաղալիկներով կը խաղայ: Աս ալ Արամն է: Արամն ալ իմ հետս չի խաղար: Ես շատ կ'ուզէի Արամին հետ խաղալ: Սակայն Արամը այլեւս չի խաղար: Ատեն չունի: Ան կ'աշխատի: Հոգ չէ, ես Արամին հետ կը խօսիմ: Արամին հետ խօսիլը շատ հետաքրքրական է: Ալ աւելի հետաքրքրական է անոր լսելը: Արամ շուտով տուն պիտի գայ: Ես միշտ կը սպասեմ անոր»:

Ահա, Արամը արդէն տուն եկաւ:



Արիսը տունին ետեւն է:

- Ինչպէ՞ս ես, Արտօ:
- Աղէկ եմ, իսկ դու՞ն, Արամ:
- Լաւ: Ի՞նչ բանի ես:
- Արիսին հետ եմ, նկար կ'ընէինք:
- Ու՞ր է Արիսը, չեմ տեսներ:
- Հոն է, տունին ետեւը: Հոս եկու՛ր, Արի՛ս, բարեւ տու՛ր Արամին:
- Որու՞ն հետ կը խօսէիր, Արտօ:
- Արիսին հետ: Ոչ, քեզի հետ կը խօսիմ: Եկու՛ր խօսինք, Արա՛մ:
- Եկու՛ր: Հայերէն պիտի խօսինք, այնպէս չէ՞:
- Ես հայերէն չեմ գիտեր, Արա՛մ:
- Դուն ո՞վ ես, հոգիս:
- Տղայ մըն եմ, ես աղուոր տղայ մըն եմ: Արտակն եմ:
- Դուն ի՞նչ ես:
- Հայ, ես հայ եմ:
- Հապա ինչու՞ հայերէն չես խօսիր:
- Դուն գիտես, Արա՛մ, որովհետեւ Ամերիկա կ'ապրիմ եղեր:

- Սակայն քիչ մըն ալ հայերէն գիտես, շիտա՞կ է:
- Այո... քիչիկ մը կը հասկնամ:
- Կ'ուզե՞ս լաւ հայերէն սորվիլ:
- Այո, իսկ ինչպէ՞ս:
- Պէտք է կարդաս, գրես, խօսիս:
- Կարդալ չեմ գիտեր: Անգլերէն կրնամ կարդալ: Դուն հայերէն գիրերը գիտե՞ս:
- Հարկաւ: Հայերէն գիրերը որ քեզի բերեմ, կը սորվի՞ս:
- Դուն ունի՞ս:

Արտակը կը կարդար

- Հապա: Նայէ՛, ասիկա քեզի համար է, հոգիս:
- Այս ի՞նչ է, հայերէն գի՞րք:
- Այո, եւ բոլոր գիրերը կան՝ այբուբենով կը սկսի:
- Ինչպէ՞ս պիտի կարդամ:
- Այբ, բեն, գիմ:
- Այբ, բեն, գիմ: Ինչպէ՛ս խօշիս կու գայ: Շնորհակալ եմ, Արամ: Այբ, բեն, գիմ: Ես քեզի շատ կը սիրեմ:



Արիսը մտիկ կ'ընէր

- Արիս, եկու՛ր հոս: Նայէ՛, ասի «Հայերէն»-իս գիրքն է: Դուն ամէն լեզու կը հասկնաս, չէ՞: Չոնկը քեզի հետ չինարէն խօսի նէ, դուն կը հասկնաս, եւ էնրիքէն հետդ սպաներէն խօսի, նորէն կը հասկնաս: Հիմա դուն հայերէն խօսէ՛:
- Միաու՛, - կ'ըսէ Արիս պահ մը խորհելէ ետք:

գիրք

Explanations to the Text

Արտակ ինքզինքը կը նկարէ:	Ardag draws himself.	ինքզինքը is the accusative case form of the reflexive pronoun ինք
«Ասիկա ես եմ»:	"This is me."	*or* This is I. Only nominative forms of pronouns are used in such statements, contrary to English: It's *me.*
իր եղբօր հետ	With his brother.	իր is the genitive case form of the anaphoric pronoun ինք.
Ես Վահէին հետ այլեւս չեմ խաղար	I don't play with Vahe any more	The postposition հետ requires the genitive case of objects here: Կարէն-ին. The postposition(s) itself can take article(s).
իր խաղալիկներով կը խաղայ	He plays with his toys.	The ending -ով in խաղալիկներով is another way to express the meaning *with.* The word is spelled also խաղալիք as a frozen noun from the future participle.
Արամն ալ իմ հետս չի խաղար	And Aram does not play with me.	հետ-ս has the possessive article due to the pronoun իմ.
Ես շատ կ'ուզէի Արամին հետ խաղալ:	I would like to play with Aram very much.	
Հոգ չէ	[It] does not matter.	*or* That isn't a problem; *or* Never mind.
Արամին հետ խօսիլը հետաքրքրական է:	Speaking with Aram is very interesting.	The infinitive խօսիլը functions as a present participle (-ing form) and takes an article.
ալ աւելի հետաքրքրական	Even more interesting.	աւելի forms the comparative degree of any adjective. ալ is a emphatic.
Ես միշտ կը սպասեմ իրեն	I always wait for him.	սպասել requires objects in the dative case form, here: իրեն
Ահա, Արամը արդէն տուն եկաւ:	Here, Aram already came home.	Եկաւ is in the simple past tense.
Ի՞նչ բանի ես	What are you doing?	Idiomatic; բան here means *business,activity, engagement.*
Հայերէն պիտի խօսինք, այնպէս չէ՞:	We will speak Armenian, won't we?	այնպէս չէ՞ Lit.: isn't it so? չէ՞ by itself can be used as a tag (alternative) question; see below.
Եկու՛ր հոս	Come on.	*or* Come here, depending on the context.
բարեւ տու՛ր Արամին	Say hello to Aram.	բարեւ տալ is equivalent to *saying hello.* A բարեւ in Armenian can be given, also said (ըսել), or done (ընել). There is also a simple verb բարեւել meaning *to say hello.*
Տղայ մըն եմ	I am a boy.	մըն is used instead of մը before vowel initial clitics (unstressed function words).

հոգիս	sweetheart (honey)	Intimate address form; lit.: my soul.
Քիչիկ մը կը հասկնամ	I understand a little.	The diminutive քիչ-իկ is for emphasis.
որովհետեւ Ամերիկա կ'ապրիմ եղեր	because I live in America kind of	ապրիլ requires the accusative case form Ամերիկա without prepositions. A tentative translation for եղեր in this context, *kind of*, expresses Ardag's belief that is not likely to know Armenian if one lives in America.
հապա ինչու	then, why	հապա is an introductory word; translation depends on the context; cf. the next line.
Հապա: Նայէ...	Sure. Look!	*Or:* Of course, look!
Հայերէն գիրերը որ քեզի բերեմ	If I bring you the Armenian letters	գիր is letter, character of alphabet, also any writing, letter, paper. որ is a conjunction with several meanings, *that, which, so that,* etc. here is mean *if.*
կը սորվի՞ս	Will you learn?	The present tense can be translated into the future tense of English.[15]
Ինչպէ՞ս պիտի կարդամ:	How shall I read [this]?	If emphasized, պիտի is shall, should, *must.*
այբ, բեն, գիմ		These are the first three letters of the Armenian alphabet, often used as the *alphabet* այբուբեն.
Ինչպէ՜ս խօշիս կուգայ:	How much I like it!	A common phrase in everyday speech, not recommended in standard and especially in writing.
ասի «Հայերէն»ին գիրքն է	This is the book of *Armenian (language)*	The language name հայերէն has no equivalent in English. Quote marks can envelope the word and separate it from its ending.
Չոնկը չինարէն խօսի նէ, դուն կը հասկնաս	If Chong speaks Chinese, you understand.	խօսի is a subjunctive, նէ is conversational for *if.*[16]
Հետդ սպանիերէն խօսի	speaks with you in Spanish	Articles substitute for pronouns—i.e., հետդ is used instead of քեզի հետ.
Դուն ամէն լեզու կը հասկնաս, չէ՞:	You understand every language, don't you?	Note that the tag questions such as չէ՞, շիտակ չէ՞, այնպէս չէ՞, իրա՞ւ է, etc. don't agree with the main verb, like in English (say, don't you? Isn't he?).
պահ մը խորհելէ ետք	After thinking for a minute	պահ Lit. *a short span of time*, in Diaspora school systems, also a *class session.*

[15] A future meaning of the simple present tense is characteristic of many languages, including English.

[16] *If* is եթէ; we cannot write it yet. The letter թ is introduced in Lesson 10. նէ is quite common for *if* in conversational style but not recommended in standard; it derives from the Middle Armenian նա(յ).

ASSIGNMENTS

Phonetic Exercises

1. *Group the letters you know according to their position on the line: mini, tall, descending and bisecting*
2. *Place the letters you learned in the alphabet (Appendices 1 & 2). Choose your favorite keywords.*
3. *Fill out the chart writing the words in lower case in upper case and vice versa.*

ուրախ	
	ԽԱՂԱԼ
աշխատիլ	
	ՋԱՆԳԱԿ
հետաքրքիր	
	ԱՂՈՒՈՐ
խաղող	
	ԵՂԲԱՅՐ
գիրք	
	ՎԱՐԴ
միտք	
	ԽԵԼՔ

Lexical and Grammar Exercises

1. *Read the text, translate it and copy it. Retell the text with improvisations.*
2. *Make oral sentences of your own using the words you know.*
3. *Find in the text inflected forms of verbs. Explain the usage and write the direct forms.*
4. *Conjugate the following verbs in the past imperfect tense positive and negative:*

բերել, ուտել, դնել, սեպել, սկսիլ, խօսիլ, կարդալ, խաղալ, տալ.

5. *Find appropriate examples to show that the sound [k] belongs to the ending and is therefore spelled with* ք *in the following words:* գիրք, գիտելիք, բերք, բարիք, վէրք, վանք, խելք, ընելիք, աշխատանք, սպասք, երբէք, ամէնքը.

6. *Fill in the missing forms in the table below.*

Simple Past Tense of Defective Verbs է, ունիմ, կամ						
Pronoun	Positive	Negative	Positive	Negative	Positive	Negative
ես		չէի		չունէի	կայի	
	էիր			չունէիր	կայիր	
	էր	չէր				չկար
մենք		չէինք	ունէինք			
	էիք			չունէիք		չկայիք
անոնք			ունէին		կային	

Simple Past Tense of Defective Verbs կրնամ, գիտեմ				
Pronoun	Positive	Negative	Positive	Negative
	գիտէի		կրնայի	
		չէիր գիտեր		
ան	գիտէր			չէր կրնար
մենք		չէինք գիտեր	կրնայինք	
դուք				չէիք կրնար
		չէին գիտեր	կրնային	

7. Put the verb in parentheses into the corresponding form and translate the sentences.

1. Հայրիկը միշտ ուշ ---- տուն: (used to come)
2. Դուն իտալերէն ----: (can you speak?)
3. Մենք ամէն օր ----: (were working)
4. --- մեր տուն: (Come!)
5. Հիմա ----, դասս ----: (I can't) (I'll write)
6. Ան չեկաւ, որովհետեւ դասը ----: (was learning)
7. Արեւ ----, տխուր է: (there is no)
8. Օր մըն ալ տակաւին ----: (we will wait)
9. Վաղը արեւ ----: (will be)
10. Ի՞նչ ----: (you know)
11. ----, կը յուսամ: (I do not know)
12. ----՛ Արիս, ---- այլեւս, ---- կարդանք: (Wait!) (Don't play!), (Come!)
13. Գիրքը հոս ---- եւ ----: (Put!) (Read!)
14. Վաղը նամակ մը ----: (I will write)
15. Աղի ---: Աղի ուտես նէ, --- լաւ--- (Don't eat.) (You can't) (sleep)

8. Change the verbs in the following sentences into the past tense and translate them into English:

1. Արտակ ինքզինք կը նկարէ:
2. Քոյրս երեք դուստր ունի, եւ եղբայրս՝ երկու տղայ:
3. Ինչու՞ չես խօսիր, բերանդ լեզու չկա՞յ:
4. Չեմ ուզեր խօսիլ նէ, չեմ խօսիր:
5. Արիս չինարէն չի խօսիր, սակայն կը հասկնայ:
6. Այս շատ հետաքրքրական գիրք մը կրնայ ըլլալ:
7. Կու տա՞ս, որ ես ալ կարդամ:

8. Մայրը միշտ անուշ կուտայ Յասմիկին:
9. Ամէն օր Ղուկասին նամակ կը ղրկեմ:
10. Պզտիկներուն համար ամէն բան լաւ է:

9. Translate the following into Armenian:

1. I don't want to study; I want to play.
2. You speak English and Spanish.
3. You understand Armenian, don't you?
4. Yes, a little bit, but I can't speak it.
5. We read Italian, but we don't write it.
6. I don't know Chinese.
7. Ardag is a student; he no longer plays.
8. Aram used to work a lot.
9. Ardag was waiting for Aram.
10. Aram brings an Armenian book for him.
11. Mother Nvart had guests yesterday.
12. They love grapes.
13. He is a very interesting person. He reads a lot.
14. Bring the pencil.
15. Give the cat a name.
16. Take these violets to mom.
17. I need you here. Come today.
18. Bring some roses here, my boy.
19. Good for you (thanks).

Rules

⇒ **վ** [v] is used after the letter **ն**, e.g., կով, համով, and in initial positions; exception: վոհմակ, and words beginning with **ն**, e.g., ոսկի.
⇒ **գ** and **ք** are pronounced [k']; **գ** is more frequent in roots, մէգ, and **ք** in endings, մենք.
⇒ **ա** verbs have the augmentative **յ** before the past imperfect endings: տայիք, կրնային.
⇒ **ե** and **ի** verbs have identical endings for the past imperfect tense: լսէի, խօսէի.
⇒ Five defective verbs (եմ, ունիմ, կամ, կրնամ, գիտեմ) have only present and past; they are formed without the particle կը and the past imperfect form functions as the simple past.
⇒ Three verbs (գալ, տալ, լալ) form the simple present and past imperfect with the pre-particle կու.

ժողովուրդը կ'ըսէ.

Ամէն բանին նորն է լաւը, բարեկամին և գինիին հինը:[17]
Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:[18]
Լաւ է գիտունին գերի ըլլաս, քան թէ անխելքին սիրելի:[19]
Ոչ խելք ունի, ոչ մեղք:[20]

[17] Novelty is good for everything, save old friends and old wine.
[18] As many languages you know, that many persons you are.
[19] Be a captive to the wise; don't be a darling to the fools.
[20] (He) has neither brains nor faults.

EASTERN ARMENIAN PARALLEL FOR LESSON 8

Phonetics: Pronunciation and Spelling

Letters:	Գ գ [g]	Խ խ [kh]	Ղ ղ [gh]	Վ վ [v]

Գ գ sounds [g] like in *girl, go*. EA has maintained Grabar pronunciation; in WA, it has shifted to [k']; therefore, WA homophones, as **գայլ** and **քայլ**, **գերել** and **քերել** are minimal pairs in EA. In EA, the shift **Գ գ** > [k'] is positional; therefore, some words have identical pronunciation both in EA and WA: **երգ** [yerk'], **հոգի** [hok'i], **արագ** [arak']. Cf. the positional devoicing of **Բ բ** [b] and **Դ դ** [d], details in EA Lesson 4.

Վ վ is ubiquitously used for the sound [v], except for:

1. The sound combination [vo] in the beginning of a word, like in **որակ** *quality,* **ող** *spine bone,* **ողնաշար** *vertebrae,* **ոխ** *grudge,* **ոխակալ** *rancorous* .
2. The sound combination [ev] spelled with **և**, e.g., **Երևան, հարևան,** unless it appears as a result of compounding, cf. **ոսկեվարս** > **ոսկի**+ **ա**+**վարս,** *goldilocks,* **կարեվեր** > **կարի**+**ա**+**վեր** (վէրք) *wounded.*
3. After the letter **ո**, to avoid the sound [u], as **հով, մով, սովորել**; cf. the same rule in WA. Note that there are five modes to express the sound [v] in CO—the first three function in RO too: 1.վարդ, 2. համով, 3. ող, ոխ, (CO also: 4. խաւ, դաւ, 5. ճուէր, կատուի; RO: խավ, դավ, ճվեր, կատվի).

Vocabulary

Synonyms: Words Meaning *Child.* In EA, the key word for *child* is երեխա. Մանչ-ուկ is used only as a diminutive, meaning *little boy,* and for stylistic purposes. Զավակ also is restricted to formal usage but has the same main meaning as in WA, *one's own child,* particularly, male. The word տղա extends the age stretch through infancy to young adulthood, and beyond—in casual styles.[1] The rest of words do not exhibit significant differences.

Synonymous Adjectives: աղուոր and աղէկ are not represented in EA at all, as well as the antonym գեշ. Ազնիվ means *honest, noble* but not *nice* and it is above everyday usage. Also, անուշ and պատվական are not as frequent as they are in WA; their EA common equivalents are քաղցր and պատվավոր.

GRAMMAR

Auxiliary Verb եմ in the Past exhibits **NO** differences in either formation and pronunciation, or spelling:

էի, էիր, էր, էինք, էիք, էին. However, its spelling changes to ե in synthetic tense forms, that is:
գրեի, գրեիր, գրեր, գրեինք, գրեիք, գրեին

Past Imperfect Tense is formed with the same principle—parallel to simple present, that is—present participle ending in -ում followed by the auxiliary **եմ** in the past tense. In negative, a negative auxiliary precedes the content verb. In usage, the past imperfect shows no significant differences in EA. Its overload is partially compensated with the conditional and obligatory forms in the past—կխաղայի, պիտի խաղայի, which function as key tense forms in WA—past imperfect and future in the past, corresponding to EA—խաղում էի and խաղալու էի.

- the verbs գալ, տալ, լալ use the participle ending in **-ի**
- no auxiliary is used for ունեմ, կամ, and գիտեմ *I know*, in positive or negative.

Person/Pronoun	Past Imperfect Positive	Past Imperfect Negative	Irregular verbs գալ, տալ, լալ	
ես	խաղում էի	չէի խաղում	գալիս էի	չէի գալիս
դու	խաղում էիր	չէիր խաղում	գալիս էիր	չէիր գալիս
ճա	խաղում էր	չէր խաղում	գալիս էր	չէր գալիս
մենք	խաղում էինք	չէինք խաղում	գալիս էինք	չէինք գալիս
դուք	խաղում էիք	չէիք խաղում	գալիս էիք	չէիք գալիս
նրանք	խաղում էին	չէին խաղում	գալիս էին	չէին գալիս

[1] See Gayane Hagopian, *Age Terms in Armenian* (Yerevan: Academy of Sciences Publishing House. 1995).

The Simple Past of Irregular Verbs ունեի *I had*, էի *I was*, կայի *I existed*, and գիտեի *I knew*

EA has only **four** verbs in this category versus the **five** in WA; կրնամ—կրնայի is unrepresented in EA, and its EA substitute, կարող եմ/էի does not belong in this line of irregularities.[2]

- է only differs in RO—եք in the present tense second person plural versus էք in CO.
- ունեմ in the present tense is ունիմ in WA but the past tense forms are identical: ունեի—չունեի save for the spelling; in RO, these է–s change into ե, that is, ունեի—չունեի. [3]
- կամ also differs in a minor spelling issue in the present tense: the final silent յ is eliminated in the third person singular which restores however in the plural, that is: RO կա but կայիմ.
- գիտեմ has a synthetic negative, չգիտեմ, չգիտեի analogous to the other verbs in this category, versus the analytic forms in WA, չեմ գիտեր, չէի գիտեր.[4]

Emphatic Link of Verbs: Two content verbs can connect to express one meaning unit the flexibility of the auxiliary verb makes this link more evident; cf., for example:

Emphatic link of verbs: Կույրն ուտում-խմում էր ու ասում՝ իմը քիչ էր:
The blind would eat and drink and say—mine was less.

Free verbs: Կիրակի օրերը ուտում էինք ու խմում՝ ուրիշ բան չկար:
On Sundays we used to eat and drink, nothing more.

In both cases, one auxiliary serves the same content verbs but the emphatic linkage of two actions into one entity appears in the first sentence with the auxiliary following the second participle. In the second case, the auxiliary is simply omitted for the second verb which may be replaced with any other verb, e.g., ուտում էինք ու քնում or պարում *we used to eat and sleep* or *dance*. The emphatic linkage of verbs is somewhat fixed differing from idioms with meaning variations. For instance, in our example with the *blind*, ուտել-խմել represents the basic human needs and greed, whereas in the following it stands for partying:

Ուտել-խմելիս պապս ասում էր՝ էս կմնա աշխարհից:
While partying, my grandpa would say—this will remain from this world.

Cf. *free verbs:* Գարունը զուգել է դաշտերն ու բլուրները զարդարել:
The spring has adorned fields and garnished the hills.

Emphatic link of verbs: Զուգվել-զարդարվել եմ՝ տեղ չունեմ գնալու:
I am all dressed up but have nowhere to go out.

Regular vs. Irregular Verbs: the close affinity between EA and WA is apparent especially in irregular verbs. Most of them belong to the same category of irregularity differing within it in insignificant though systematic features; cf. verbs with synthetic simple present: եմ, ունեմ, գիտեմ, կամ presented above. Defective verbs lack the same forms. Suppletive verbs with differing roots in the past and present stems unite in roots and differ in tense formation features specific for each version; that is:

Infinitive	EA Present Tense	WA Present Tense	EA & WA Simple Past
come	գալիս եմ	կու գամ	եկա
be, exist	լինում եմ	կըլլամ	եղա
eat	ուտում եմ	կուտեմ	կերա

[2] կարող is a frozen present participle (agent). Its regular modern form is կարողացող (details see in Lesson 12), whereas կարող without the auxiliary verb is an adjective, meaning *able, competent.*

[3] In the last breath of Soviet power, there were many spontaneous courses of Armenian for professionals with Russian education. With an amazing regularity, these students' spelling errors mirrored CO. Their fluency in Armenian was conversational and limited to intimate circles, which was unbefitting to their educational level, consequently not marred by years of drilling RO rules. Therefore, they had a fresh feel for writing in Armenian which resembled the writing down a spoken language for the very first time. Two of the most consistent errors related to the subjunctive past, as գրէի, and derivatives from the latter, also, words like հայերէն, Կարէն. These errors yet once again verify that CO reflects the internal laws of Armenian and therefore should be favored.

[4] Many WA dialects have developed a synthetic negative with further abbreviation, e.g., չիտեմ for *I don't know* (dialects of Karin, Giumri, Javakhk).

Future in the Past Tense is parallel in formation to the simple future; only the auxiliary verb changes its tense, that is: տեսնելու էի, տեսնելու էիր *I/you would see*, etc.

Constructions with եղեր do not exist in EA; for s similar meaning the adverb **իբր**(եւ) (թէ) *as if'* or the conjunction եթէ *if* are used in formal style, and in casual speech, the adverbial էլի. Cf.:

WA	Գառին պաշտպան գտանք եղեր:	Yeah, right, we got a defender for the lamb.
EA	Իբր թէ գառին պաշտպան ենք գտել: standard Գառին պաշտպան գտանք, էլի: casual	
WA	Կ'ըսեն՝ անոնք մատներով կ'ուտեն եղեր: Ինչու՞ մատներով կ'ուտեն եղեր, դգալ չունի՞ն եղեր:	They say, *as if* they eat with (their) fingers. Why do they eat with (their) fingers? *Might* it be they have no spoons?
EA	Ասում են՝ իբր նրանք մատներով են ուտում: Ինչու՞ պիտի մատներով ուտեն, դդալ չունեն, ինչ է:	

The Narrative Style in EA is presented with a compound tense: e.g.: գնալիս է լինում. It derives from the present continuous participle ending in ելիս, ալիս and the simple present of the verb լինել *to be*. It shows incomplete action in progression and represents a grammatical compensation for the lack of progressive tenses. However, its use is restricted to legal documents and folk tales, e.g., Էս թագավորը երեք տղա է ունենալիս լինում: *This king used to have three sons.*

Narration is also expressed with the repetition of the same verb in positive and negative but these forms also express a strict limitation, cf.: Ունեի-չունեի մի բանալի ունեի, այն էլ կորավ: · *All I had was one key, and that got lost.* Ուտի-չուտի՝ սոված է: *Doesn't matter whether he eats or not, he's always hungry.* These constructions also serve as hypothetic openings in folk tales, cf.: Կար-չկար (լինում է, չի լինում) մի թագավոր կար (է լինում): *Once upon a time there was a king.*

In modern conversational non-eyewitness accounts and narratives, the perfect tense is used versus simple past, cf.:

- Արտակը որ փոքր է եղել, հայերեն է խոսել իր պապիկի հետ: - Ի՞նչ գիտես: - Ինքն ասաց:	When Artak was little, he used to speak Armenian with his grandfather. *(non-evidential account)* How do you know? He told (me).
«Արտակս որ փոքր էր, հորս հետ հայերեն էր խոսում»:	When my Artak was little, he used to speak Armenian with my father. *In this case, the question 'how do you know' sounds absurd because it is an eyewitness account by a parent, judging from the forms* Արտակս my Artak, *and* հորս my father.

Irregular Imperatives: Opposite to WA, the imperative in EA derives from the past (aorist) stem in all four forms—positive/negative, singular/plural. However, irregular imperatives, like the majority of irregular verbs, are shared by EA and WA. Cf. the table below; difference in infinitive and irregular singular is marked in bold.

Infinitive		EA Singular Irregular	Plural and Formal	Singular Prohibitive	WA Singular Irregular
դնել	put	դի՛ր	դրե՛ք	մի՛ դիր (դնիր)	դի՛ր
բերել	bring	բե՛ր	բերե՛ք	մի՛ բեր	բե՛ր
անել	do	**արա՛**	արե՛ք	մի՛ արա (անիր)	ըրէ՛
ուտել	eat	կե՛ր	կերե՛ք	մի՛ կեր (ուտիր)	կե՛ր
տեսնել	see	տե՛ս	տեսե՛ք	մի՛ տես	տե՛ս
ելնել	get up	ե՛լ	ելե՛ք	մի՛ ել (ելնիր)	ե՛լ
զարկել	hit, strike	զա՛րկ	զարկե՛ք	մի՛ զարկ (զարկիր)	զա՛րկ
տալ	give	տու՛ր	տվե՛ք	մի՛ տուր	տու՛ր
գալ	come	**(ե՛կ) արի՛**	եկե՛ք	մի՛ արի, գա (եկ)	եկու՛ր
լինել	be	եղի՛ր	եղե՛ք	մի՛ եղիր, (լինիր)	եղի՛ր
տանել	carry, take	տա՛ր	տարէ՛ք	մի՛ տար, (տանիր)	տա՛ր

Note the following:

- In negative/prohibitive, մի՛ is added before the content verb; the recommended forms (in parenthesis), mainly coinciding with WA, sound somewhat obsolete and no longer are used by younger generations.
- In plural/formal, merely մի՛ is added before the positive plural.
- The standard forms of WA, like մի՛ դնեք pertain to bookish style, some of them don't apply in any way (մի՛ ընեք, մի՛ տեսնեք, մի՛ ելնեք, մի՛ զարնե՛ք, մի՛ տաք, մի՛ ըլլաք, մի՛ տանիք).
- On the contrary, conversational forms like մի՛ք տա, *don't give* մի՛ք գա *don't come (you all)* are quite common.

Future Participles I and II exhibit no differences in formation. Usage on the surface is quite similar—future participle I is a substantive and future participle II is used with auxiliaries; however, there are basic differences in function. EA favors the Future Participle II ending in -ու which has a key function in the formation of the simple future tense, e.g., կարդալու եմ/էի *I will read, I was going to read.* Վաղը գնալու եմ այդ համերգին: *Tomorrow I will go to that concert.* Վաղն էի գնալու այդ համերգին բայց պլանները փոխվեցին: *I was going to go to that concert tomorrow but the plans changed.* For the WA constructions with the future participle II, such as նկարիչ ըլլալու է՝ *You must be an artist, EA uses:* պետք է որ նկարիչ լինես.

Future Participle I ending in -իք is less frequent in EA and also it sounds quite conversational; e.g.: Էլ ասելիք չունեմ: *I got nothing else to say.* In formal standard, the infinitive in genitive is used, cf.: Այլևս ասելու բան չունեմ: *I have no more to say.* Also, it shows a higher degree of transfer into nouns —e.g.: գալիք *future,* ըմպելիք *beverage,* ուտելիք *food,* խաղալիք *toy.* Cf. some examples from the main lesson: (more on participles see in Lesson 10.)

EA Լինելիքը լինելու է՝ բախտից չես ազատվի: **WA** Ըլլալիքը պիտի ըլլայ՝ բախտեդ չես ազատիր: What is going to happen, will happen; you can't avoid your destiny.
EA Խնդալու (ծիծաղելի) բան է, լաց ես լինում: **WA** Խնդալիք բան է՝ կուլաս: It's funny but you cry (idiomatic).
EA Գնորդի հետ սիրալիս պիտի լինենք: **WA** Գնորդին հետ սիրալիր ըլլալու ենք: We have to be nice with the buyer.

Text and Dialogue: ԱՐՏԱԿ

Արտակն ինքնաճկար է անում: «Սա ես եմ», ասում է: «Սա էլ Վահեն է իր եղբոր հետ: Նրանք իմ փոքրիկ ընկերներն են: Ես Վահեի հետ չեմ խաղում: Նա դեռ շատ փոքր է: Նա իր խաղալիքներով է խաղում: Սա էլ Արամն է: Արամն էլ ինձ հետ չի խաղում: Ես շատ կուզենայի Արամի հետ խաղալ: Սակայն Արամն այլևս չի խաղում: Ժամանակ չունի: Նա աշխատում է: Ոչինչ, ես խոսում եմ Արամի հետ: Արամի հետ խոսելը շատ հետաքրքիր է: Ավելի հետաքրքիր է նրան լսելը: Արամը շուտով տուն է գալու: Ես միշտ սպասում եմ նրան»: Ահա, Արամն արդեն տուն եկավ:

- Ինչպե՞ս ես, Արտո՛:
- Լավ եմ, իսկ դու՞, Արամ:
- Լավ: Ի՞նչ ես անում:
- Արիսի հետ եմ, նկար էինք անում:
- Ու՞ր է Արիսը, չեմ տեսնում:
- Այնտեղ է, տան հետևը: Արի՛ այստեղ, Արիս, բարևի՛ր Արամին:
- Ու՞մ հետ էիր խոսում, Արտո:
- Արիսի հետ: Ոչ, քեզ հետ եմ խոսում: Արի՛ խոսենք, Արամ:
- Արի՛: Հայերեն ենք խոսելու, այնպես չէ՞:
- Ես հայերեն չգիտեմ, Արա՛մ:
- Դու ո՞վ ես, ջանս:
- Տղա եմ, ես մի շատ լավ տղա եմ: Արտակն եմ:
- Դու ի՞նչ ես:
- Հայ, ես հայ եմ:

- Բա ինչու՞ հայերեն չես խոսում:
- Դե դու գիտես էլի, Արա՛մ, որովհետև Ամերիկա եմ ապրում:
- Սակայն մի քիչ էլ հայերեն գիտես, ճի՞շտ է:
- Այո... մի քիչիկ հասկանում եմ:
- Ուզու՞մ ես լավ հայերեն սովորել:
- Այո, սակայն ինչպե՞ս:
- Պետք է կարդաս, գրես, խոսես:
- Կարդալ չգիտեմ: Անգլերեն կարող եմ կարդալ: Դու հայերեն տառերը գիտե՞ս:
- Անշուշտ: Հայերեն տառերը որ քեզ բերեմ, կսովորե՞ս:
- Դու ունե՞ս:
- Իհարկե: Նայի՛ր, սա քեզ համար է, ջա՛նս:
- Սա ի՞նչ է, հայերեն գի՞րք:
- Այո, և բոլոր տառերը կան՝ այբուբենով է սկսվում:
- Ինչպե՞ս պիտի կարդամ:
- Այբ, բեն, գիմ:
- Այբ, բեն, գիմ: Ինչքան է դուրս գալիս: Շնորհակալ եմ, Արամ: Այբ, բեն, գիմ: Ես քեզ շատ եմ սիրում:

- Արիս, արի՛ այստեղ: Նայի՛ր, սա «Հայերենի» գիրքն է: Դու ամեն լեզու հասկանում ես, չէ՞: Չոնգը քեզ հետ որ չինարեն է խոսում, դու հասկանում ես, ու որ էնրիկեն հետդ իսպաներեն է խոսում, էլի հասկանում ես: Հիմա դու հայերեն խոսի՛ր:
- Մյաու՛, - ասում է Արիսը՝ մի պահ մտածելուց հետո:

Vocabulary Differences

EA	Translation	WA	Translation
(սիրուն, գեղեցիկ)		աղուոր	pretty, beautiful
(լավ)		աղէկ	good, well
(վատ)		գէշ	bad, ugly
(իհարկե, անշուշտ)		հարկաւ	of course
հետաքրքիր		հետաքրքրական	interesting
վաղ		կանուխ	early
բա (հապա HR)		հապա	well, then (introductory word)
դե, դե լավ (հա դը LS)		(լաւ, էհ) հա՛յտէ	well, OK, come on (introductory word)
գալ եկող (հաջորդ)		գալ գալ (յաջորդ)	1. to come; 2. next
(ուղարկել)		ղրկել	to send
(մտածել) խորհել HR		խորհիլ	to think
սովորել		սորվիլ	to learn
դուրս գալիս ա LR		խօշիս կու գայ LR	I like it, it's nice
զանգ		զանգակ	bell
(երեխա)		երախայ	child
Կաղանդ HR		Կաղանդ	Christmas
իսպաներեն		սպաներէն	Spanish language
միրգ		(միրգ) LF	fruit
պտուղ HR	1.result. 2.fruits & vegetables	պտուղ	fruit
մրգաշատ			fruitful
տառ		(գիր)	letter, character
գիր			writing (system), note
վայրկյան	second	վայրկեան	minute

LESSON 9

PHONETICS
Review: Letters Introduced in Lessons 7 and 8

GRAMMAR
The Verb
Mood of Verbs
Indicative Mood
Imperative Mood
Subjunctive Mood
Declension
Usage of Case Forms
Case Forms with Postpositions

VOCABULARY
Homonyms
Text: ՅԱՍՄԻԿ

PHONETICS: LETTERS INTRODUCED IN LESSONS 7 AND 8

Position in Alphabet	Consonants	
2	Բ բ	[p‘]
3	Գ գ	[k‘]
6	Ձ ձ	[z]
13	Խ խ	[kh]
16	Հ հ	[h]
18	Ղ ղ	[gh]
23	Շ շ	[sh]
30	Վ վ	[v]



Ես խոզ չեմ, ես բարի բախտ եմ:

Homonyms: Homophones and Homographs

Words with an identical form are called homonyms. They are specified as *homophones*, if they sound the same but their meaning is different. The spelling can be different or identical. Homophones with identical spelling are called *homographs*. Most Armenian homophones are not homographs. They emerged as a result of the historical sound changes.

գայլ	wolf	քայլ	step
գար	if he would come	քար	stone
հօտ	flock	հոտ	smell
յօդ	article, joint	հոդ	there
սէր	love	սեր	milk cream

Minimal Pairs are near-homophones; they differ, as you know, by one sound feature. The minimal difference in their pronunciation often becomes a challenge for beginner students. Practice the differences in sound and meaning in the following minimal pairs:

Phonetic Drills			
աղտ	dirt	ախտ	disease
բոյր	fragrance	բիւր	many[1]
գայլ	wolf	գալ	to come
գիրք	book	գիրկ	lap, hug, embrace
երգ	song	երկ	literary creation
խելք	brains	ղեկ	spinning wheel
խիւս	pulp, poultice	հիւս	hair braid
խոտ	grass	հոտ	smell
խուզել	to cut short	յուզել	to excite
կաղ	lame	կախ	hanging
կիր	lime	գիր	letter, writing
մազ	hair	մաս	part
մեղք	sin; poor, wretched	մեղկ	voluptuous
յոյզ	feeling	յոյս	hope
սոխ	onion	սուղ	expensive
վաղը	tomorrow	վախը	the fear
օդ	air	ով	who
օղ	ring	ող	vertebra

GRAMMAR

The Verb

The verb is the most flexible part of speech in Armenian. It undergoes different grammatical changes to relate to participants of action—subject and/or object, and its circumstances—time, probability, continuity, etc. Verb modifications in the grammatical categories of mood, tense, person, and number constitute the conjugation of verbs. Conjugated verbs are also called oblique verbs opposite to the infinitive and participles. All verbs are also characterized with the grammatical categories of aspect and voice.

1. Verbal **mood** expresses the speaker's attitude toward the action. The verb in Armenian has three moods: indicative (real, stated action), imperative (command, request for action), and subjunctive (unreal, hypothetic action).[2]

[1] 10, 000 in Old Armenian

[2] The Old Armenian verb nominally has these same three Moods, but neither grammatical meanings nor forms are the same as in modern Western Armenian.

2. Verbal **tense** denotes the time of action relative to the act of speech: present (during the speech act), past (before the speech act), future (after the speech act).
3. Verbal **person** denotes the doer of action: first person (speaker), second (listener), third (another party).
4. Verbal **number** denotes the number of doers: singular (one), plural (two or more doers).
5. Verbal **aspect** denotes complete or incomplete of action relative to the act of speech: present perfect (complete before the speech act), past perfect (complete at some definite point before the act of speech), and continuous or progressive (incomplete action, going on at some point in the past, present, or future). Perfect tenses are presented in the next lesson, and the progressive, as we saw in the previous lesson, has no systematic expression in standard Armenian (կու գամ կոր is colloquial).
6. Verbal **voice** denotes the relation between the action and its doer. Like the aspect, it is expressed in both conjugated—oblique forms and non-conjugated—infinitive or participle forms.

- *Neutral* verbs indicate actions performed by subject, without direct objects.
- *Active* verbs indicate actions performed by subject on a direct object.
- *Causative* verbs indicate actions caused by subject and performed by direct object (details in Lesson 12).
- *Passive* verbs indicate actions performed by subject and received from indirect object (details in L 14).
- *Repetitive* verbs indicate a repeating action; they represent a lexical category of verbs (details in L 14).

Mood of Verbs

Verbal mood shows the speaker's attitude toward the action or state described. The following table illustrates verbal moods with their main tenses.

Mood For Speaker's Attitude	**Indicative Mood** Real Action, Fact, Statement, Description	**Subjunctive Mood** Possibility, Desire, Supposal	**Imperative Mood** Request, Command Directed to Listener
Tense	First, Second, Third Person, Singular and Plural		Second P., Sing. & Pl.
Present	կը տեսնեմ	-	-
Past	կը տեսնէի, տեսայ[3]	-	-
Future	պիտի տեսնեմ	տեսնեմ	տե՛ս, տեսէ՛ք
Future in the Past	պիտի տեսնէի	տեսնէի	-

Indicative Mood

The *Indicative Mood* shows **real** actions which take place in the **present**; which were going on, took place, or have taken place in the **past**; or which will happen in the **future**. This is in contrast to the imperative mood, which shows a request to action, and to the subjunctive mood, which shows unreal, desirable action. The indicative mood differentiates three grammatical persons in singular and plural, as the subjunctive mood and opposite to the imperative mood. Also, the grammatical aspect of complete vs. incomplete action is expressed in the indicative mood (e.g., past imperfect for incomplete action կ'ընէի *I was doing,* and simple past for complete action, ըրի *I did).*[4]

Imperative Mood

The *Imperative mood* has the fewest forms by virtue of the nature of the expressed action: it invites (requests, asks, commands, demands, appeals, pleads) the listener to act; and it can take place only after the invitation has been made, that is, in the future. Therefore, it only differentiates second person in the singular and plural—e.g., եկու՛ր, եկէ՛ք *Come!* The latter refers to multiple subjects/listeners, or, formally, to a singular subject (details in Lessons 7).

---

[3] Also տեսեր եմ, տեսած եմ; the perfect tense forms are introduced in Lesson 10, with the letter ծ ծ.

[4] The formation of the indicative tenses is described in Lessons 5, 6, 8, 10, 11.

Subjunctive Mood



Գորգին ցատիմ, հեքիաթին [hekiatin] հասնիմ:

The subjunctive mood shows hypothetic, **unreal actions** whose occurrence is or was desirable (subjunctive present/past). It expresses wish, willingness, dream, directive, possibility and probability. Cf.: the illustration to the left: *I wish* or *let it be that I sit on the rug and get into the fairy tale.*

The subjunctive mood differentiates all person-number forms in present and past tenses. The **present subjunctive** constitutes the content verb in simple present tense without the particle կը—for instance, *տեսնեմ let me see, I wish I see,* or *if I see.* The **past subjunctive** is the same in past imperfect form—e.g., *տեսնէի if I saw, I wish I saw,* etc. That is, the subjunctive present and past formally coincide with the conjugated verb in the indicative simple present and past imperfect without any pre-particles.

Conjugation Sample

Present Subjunctive			
Infinitive	սիրել	ըլլալ	ցատիլ
ես	սիրեմ	ըլլամ	ցատիմ
դուն	սիրես	ըլլաս	ցատիս
ան	սիրէ	ըլլայ	ցատի
մենք	սիրենք	ըլլանք	ցատինք
դուք	սիրէք	ըլլաք	ցատիք
անոնք	սիրեն	ըլլան	ցատին
Past Subjunctive			
ես	սիրէի	ըլլայի	ցատէի
դուն	սիրէիր	ըլլայիր	ցատէիր
ան	սիրէր	ըլլար	ցատէր
մենք	սիրէինք	ըլլայինք	ցատէինք
դուք	սիրէիք	ըլլայիք	ցատէիք
անոնք	սիրէին	ըլլային	ցատէին

The **negative subjunctive** shows undesirable or not recommended actions. It is formed with the simple addition of the negative particle չ- to the content verb—cf.:

Negative Infinitive	չբերել	չխաղալ	չսորվիլ
Subjunctive Present	ես չբերեմ	դուն չխաղաս	ան չսորվի
Subjunctive Past	մենք չբերէինք	դուք չխաղայիք	անոնք չսորվէին

Note:

- The modern Armenian subjunctive present and past formally correspond to Krapar simple present and past imperfect, indicative mood. The particle կը is the sole formal difference (thus, the indicator of factuality) between the modern subjunctive present/past and simple present/past imperfect in indicative.
- The five defective verbs you are familiar with—եմ, կամ, ունիմ, կրնամ, գիտեմ—have a subjunctive form in indicative. Their subjunctives are derived from lexically different verbs—ըլլալ, ունենալ, կարենալ, գիտենալ, details see in Lesson 13.
- ե and իւ verbs have the same endings in the subjunctive past, parallel to the past tense forms of the auxiliary verb եմ.
- In ա verbs a connecting յ appears before vowel endings—e.g., խաղայիք; that is, in all forms except the third person singular in the past; i.e., ըլլար, կարդար.

Use of the Subjunctive Mood

The subjunctive mood is frequently used in spoken language and in poetry to indicate nonfactual actions. Compare, for example, the following complex sentences with the subjunctive present (supposition) in the subordinate clause and the simple future tense (fact) in the main clause:

Simple Future Tense (Main Clause)	Subjunctive Present (Subordinate Clause)
Տուն պիտի գնեմ,	երբ դրամ ունենամ:
I will buy a home.	when I have money.
Buying is a fact for the future	*Having the money is desirable but not real at the moment.*
Լաւ պիտի ըլլայ,	երբ տուն ունենամ:
It will be good	when I have a home.
Being good is real for the future.	*Having the house is the desirable yet unreal action.*

The main difference from the indicative mood is that the subjunctive expresses a possible chance for action, while the indicative describes facts or real actions. Roughly, the translation of the indicative would be: կ'ընեմ *I do it,* կ'ընէի *I was doing it,* ըրի *I did it,* պիտի ընեմ *I will do it,* and the subjunctive, ընեմ *if I do it,* ընէի *if I did it.* Compare and contrast also familiar from previous lesson idiomatic responses to the question Ինչպէ՞ս ես: *How are you?*

Indicative Mood	Լաւ եմ:	I am fine.
	Աղէկ եմ:	I am fine.
	Լաւ պիտի ըսենք:	We will say fine.
Subjunctive Mood	Լաւ ըսենք, լաւ ըլլանք:	Let's say well and be well.
	Լաւ ըսենք, լաւ լսենք:	If we say good things, we hear good things.
	Դուք լաւ ըլլաք:	You be well.

The **subjunctive past** shows actions which would have been *desirable* and *sought-after* in the past, depending on a condition, contrary to the indicative future in the past, which shows actions that were actually going to take place in the past. Compare:

Երէկ ինչու՞ մեզի չեկար:	Why didn't you come to our place yesterday?
Մանչուն քովը *պիտի մնայի* եղեր, մինակ էր:	I *had to stay* with the child; he was alone.
Գայիր նէ[5], շատ *պիտի խնդայիր*:	If you *had come*, you *would have laughed* a lot.

Պիտի կենայի, պիտի խնդայիր are real actions (indicative future in the past) depending on գայիր, a desirable, conditional action (past subjunctive). The latter is unreal in any context, whereas one of the future in the past actions actually took place in the described setting—s/he *stayed*; if not, the other indicative action would convert into a fact: s/he would have had fun at his friend's home. Thus, the subjunctive in the past often shows conditional actions.

Subjunctive for Indirect Directives

Subjunctive also shows an invitation to act, especially in the first person plural: քալենք *let's walk,* երգենք *let's sing,* and in negative, second person singular: չքալես, չերգես. It is a subtle way

[5] Remember that նէ *if* is typical to conversational style; the recommended standard is եթէ preceding the verb.

Արամ լսած էր Յասմիկին մասին, բայց անիկա չէր ճանչնար:	Aram had heard about Hasmig but was not *acquainted* with her (did not know her).
Ես չէի գիտեր (չէի ճանչնար) Արտոն, Արամ մեզի ծանօթացուց:	I did not *know* (was not *acquainted* with) Ardag; Aram introduced us.
Չճանչցայ Արտաւազդը՝ ինչ մեծցեր է:	I didn't recognize Ardavazt; he's really grown up.
Այդ օրիորդը բժիշկ ըլլալու է:	That young woman must be a doctor.
Յասմի՞կը, այո՛, ուրկէ՞ գիտցար:	Hasmig? Yes, (she is), how did you *know*?
Ձինք չեմ ճանչնար, բայց բժիշկի մը նման կը խօսի:	I don't *know* her but she talks like a doctor.
Հաճիս, ծանօթացուր մեզի: Հաճոյքով:	Please *introduce* us. With Pleasure.

Lexical Substitutes for the Defective Verbs եմ, կամ, ունիմ, գիտեմ, կրնամ

These five verbs, as you know, are defective in that they have only present and past tenses, formed without the particle կը (lessons 4, 5, 6, 7, 8). The other forms derive from suppletive verbs.

The table below presents the infinitive, subjunctive, and the simple past of those substitute verbs. Subjunctive is the basis for simple present, past imperfect, and future tenses, future and present participles, and the prohibitive imperative. The simple past is basis for past participles and the positive imperative.

Defective Verbs		Suppletive Complements for Other Tense Forms		
Present Tense	Past Tense	Infinitive	Subjunctive Present & Past	Simple Past
եմ, կամ	էի, կայի	ըլլալ to be	ըլլամ, ըլլայի	եղայ
ունիմ	ունէի	ունենալ to have	ունենամ, ունենայի	ունեցայ
գիտեմ	գիտէի	գիտնալ to know	գիտնամ, գիտնայի	գիտցայ
կրնամ	կրնայի	կարենալ to be able	կրնամ, կրնայի (կարենամ, կարենայի)	կրցայ (կարեցայ)

եմ and կամ have the same lexical parallel, ըլլալ *to be,* an irregular verb you know from previous lessons. Remember that its simple present has a future modality: Կ՚ըլլայ: *That will do. OK.* Չ՚ըլլար: *That won't do; no way.*

Ունիմ, գիտեմ, կրնամ have suppletives with differing stems, not roots: ունենալ, գիտ(է)նալ, կարենալ. They add the infix -(է)ն- with the grammatical meaning of continuous or imperfect aspect. With its regular change into -եց- for the past (aorist) stem, comes the meaning of complete action or perfect aspect. This means that each pair of verbs has two past forms; i.e., եմ - էի and եղայ, կրնամ - կրնայի and կրցայ, etc. In comparison with each other, the first represents a past imperfect, incomplete action in the past, and the second, an aorist, past and completed action.

The suppletive verbs have regular past imperfect forms on their own: կ՚ունենայի, կ՚ըլլայի; they express the continuous aspect versus aorist in էի, ունէի. Also, they serve to conveying the subjunctive mood: ըլլամ/ըլլայի, etc. English has no absolute grammatical equivalents to these forms; in context, as you know, different modal verbs are employed in translation.[10]

Կրնամ is special in that the corresponding suppletive կարենալ is used as an infinite, in literary styles, also as subjunctive կարենամ, կարենայի (regularized from Krapar կարեմ/կարացի). In common speech, for subjunctives the present and past կրնամ, կրնայի are normal. The usual simple past կրցայ is from կրնամ.The older parallel կարեցայ occurs in formal speech. Examples: Վարժ խօսիլ կարենալու համար քերականութիւն գիտնալը պայման չէ: In order *to be able* to speak fluently, the knowledge of grammar is not necessary. Խօսիլ կրցայ. երանի թէ կրնայի քերականութիւնն ալ մարսել: *I became capable of speaking; I wish I could also digest the grammar.* The substitution with the parallel forms կարեցայ for simple past and կարենայի for subjunctive would make the utterance quite bookish or even pompous.

Գիտեմ և *կրնամ*: Եթէ *գիտնամ*, գուցէ թէ նաև *կարենամ*: Երբ *գիտցայ*, նաև *կրցայ*: Երբ երիտասարդ *էի*, *կրնայի* երկար վազել: Եթէ երիտասարդ *ըլլայի*, *պիտի կարենայի* աւելի երկար վազել:	I know and I can. If I know, perhaps I am also able. When I learned (knew), I also could. When I was young I could run far (or: for a long time. If I were young I would be able to run longer.

10 Many related languages have maintained similar grammatical categories. For example, in Spanish էի corresponds to era, and եղայ, to fue; ունէի is tenía, ունեցայ tuve, etc. In English, the verb *to be* has remnants of the formal subjunctive mood; that is, *I were* for ըլլայի and *it were* for ըլլար. For all English verbs, the indefinite form (without -s in the third person singular) is still used for subjunctive; e.g., so be it—թող ըլլայ.

Text

Ճակատագրական հանդիպում[11]

Յասմիկը վճռած է Հայաստան երթալ աշխատելու: Քանի մը տարի առաջ բժիշկութեան վկայականը առաւ Հարւըրտէն: Տարիներու փափաքը կատարուեցաւ: Հիմա վիրաբոյժ է և կրնայ օգնել մարդոց: Շատերու համար ուշ է այլևս: Ուշ է Հայկուհիին համար: Բայց կրնայ գէթ այլոց համար չարը կանխել:

Յասմիկը դիւրաւ գտաւ իր առաջին աշխատանքը, որովհետև առաւելագոյն բարձր նիշերով դպրոց աւարտած էր: Շատ երջանիկ կը սեպէր ինքզինք: Միշտ պարտաճանաչ, կազմակերպուած և ճշդապահ, անոր ստեղծագործ միտքը գիտութեան և իմացութեան բարձունքներ կը ճախրէր: Բայց օր ըստ օրէ կասկած մը ծնաւ անոր մէջ: Կասկած, որ այժմ գրեթէ տագնապի փոխուած էր: Եթէ ինք օր մը գործի չերթայ, ի՛նչ կրնայ փոխուիլ իրեն հիւանդներուն համար: Ոչ մէկ գէշ բան: Բժիշկները հոս շատ են: Իրեն չափ լաւ և իրմէ լաւ:

Հոն հեռաւոր Հայաստան մը կայ, ուր վիրաբոյժը հացթուխի արժէք ունի: Հոն պատերազմը և կարիքը մարդիկը կը հնձեն տակաւին: Դաւադիր ռումբերը հոն կը պայթին խաղաղ գործի անցած մարդոց և հրադադարի երազկոտ զինուորներուն գլուխներուն: Հայաստան մը, որ իր մայրիկին երազն էր: Հայաստան մը, որ իր մանկութեան երազն էր: Եւ Հայաստան մը, ուր Քարէնը կ'ապրի իր Հայկ և Հայկուհի զաւակներով: Պզտիկ Հայկ և Հայկուհի մը, որոնց մէջ իր զուարթ Հայկուհիէն մաս մը կ'ապրի: Հին հայրենիքը ծանօթ և անծանօթ, բարեկամ ու բարեացակամ մարդոցմով կը կանչէ զինք:

Վճռած է այլևս: Պիտի երթայ: Եւ վաճառքի հանած է ամէն բան, որ ունի, մէկու մը պէս, որ իր ետ գալը չի գիտեր: Իրերու մէջ ուրախութիւն չկայ: Յասմիկը կ'երթայ ուրախութիւն փնտռելու հոն, ուրկէ շատերը հոս կու գան՝ աւետեաց երկիրի մը յոյսով: Կու գան իր ընտանիքին հին երազներուն հետքերով:

Հեռաձայնը յանկարծ կը զարնէ՝ Յասմիկին միտքերը ընդհատելով:

- Այո՛:

- Կրնա՞մ ժասմինին հետ խօսիլ:

---

[11] *Predestined Encounter.* The word ճակատագրական (from ճակատագիր *destiny, fate*, lit. *writing on the forehead)* has no exact equivalent in English. It can be translated *predestined, crucial,* also, *fatal.*

- Ժասմինն է:

- Բարև ձեզ, ես Արամ Կիրակոսեանն եմ: Կարծեմ՝ էտկար Ալան Փոյին ժողովածուն կը ծախէք:

- Այո, կ'ուզէք առնե՞լ:

- Ի՞նչ կ'արժէ:

- 20 տոլար:

- Ուրախ կ'ըլլամ գնելու:

- Խնդրեմ: Եթէ հաճիք, կրնաք գալ և առնել:

- Ու՞ր կ'ապրիք:

- Ալամիտա:

- Վաղը կէսօրէ ետք, ըսենք, չորսի ատենները յարմար կ'ըլլա՞յ:

- Աւելի լաւ է ճիշդ չորսին: Գիրքերը կը բերեմ Պարթին կայարանը:

- Շատ աղէկ: Ինչպէ՞ս ճանչնամ ձեզ:

- Ես միջահասակ եմ, քսանութ տարու: Շէկ մազերով և սև աչքերով: Կապոյտ հագուստով կ'ըլլամ, գուցէ ճերմակ վերարկու մը հագնիմ:

- Շատ գեղեցիկ ըլլալու էք, արդեօք ամուսնացա՞ծ էք:

- Այո, Փոյին հետ...

Արամը չէր գիտեր, թէ հայուհիի մը պիտի հանդիպէր: Իր համար ճակատագրական ըլլալիք անունով մը, զոր լսած էր իր բարեկամներէն, բայց անունին տէրը տեսնելու առիթը չէր ունեցած: Ուրկէ՞ գիտնար Արամը, թէ պիտի սիրահարի Յասմիկին խենթ պատանիի մը հանգոյն:

Explanations to the Text

վճռած է	has decided	վճռել is to get determined, decide firmly.
երթալ աշխատելու	to go to work	Infinitive in dative shows purpose.
բժիշկութեան վկայականը առաւ	received a medical doctor's degree.	վկայական is any certificate for graduation.
Տարիներու փափաքը կատարուեցաւ:	The desire of long years is achieved.	կատարուիլ is in passive voice.
կրնայ օգնել մարդոց	she can help people	մարդ is declined as մարդոց or մարդերու in plural.
թեև շատերու համար ուշ է	though it is late for many	The adjective շատ is used as a noun in genitive plural, in the sense of *many people.*
գէթ այլոց համար	at least for others	այլոց is the old pl. dative-genitive of այլ *other* still used in standard.
չարը կանխել	to prevent the evil	չարը metaphorically is *evil, disaster.*
որովհետև դպրոց աւարտած էր	because she graduated from school	աւարտել is also *to accomplish, finish.* Note the translation of perfect into simple past.
առաւելագոյն բարձր նիշերով	with the highest grades	առաւելագոյն is *maximu;* see the superlative degree of adjectives in the next lesson.
Շատ երջանիկ կը սեպէր ինքզինք:	She considered herself very happy.	ինք-զ-ինք is a reflexive pronoun, see L 14.
պարտաճանաչ, կազմակերպուած և ճշդապահ	Responsible, organized and punctual	
անոր ստեղծագործ միտքը գիտութեան և իմացութեան բարձունքներ կը ճախրէր:	Her creative mind soared in the heights of science and cognition.	Note the difference in word order.
օր ըստ օրէ կասկած մը ծնաւ	Day by day a doubt was born	օր ըստ օրէ is a reduplicative with the preposition ըստ.
գրեթէ տագնապի փոխուած է	has turned into almost panic	Dative + փոխուիլ is to *change into.*
ի՛նչ կրնայ փոխուիլ իր հիւանդներու համար	What can change for her patients?	հիւանդ is *sick* and also *sick person, patient.*
Իրեն չափ լաւ և իրմէ լաւ	as good as her and better than her.	'Genitive noun/pronoun + postposition չափ + adjective' translates into *as* + adjective *as* + noun/pronoun
Հոն հեռաւոր Հայաստան մը կայ	There is a far away Armenia there.	
պատերազմը և կարիքը մարդիկը կը հնձեն	the war and need still mow people down	հնձել figuratively is *to kill.*
խաղաղ գործի անցած	gone to peaceful work	գործի անցնիլ is to *start* and *stick to work*
հրադադարի երազկոտ զինուոր	soldier full of dreams in cease fire	
որոնց մէջ իր զուարթ Հայկուհիէն մաս մը կ'ապրի:	in whom lives a part of her cheerful Hayguhi	
բարեկամ ու բարեացակամ մարդոցմով	with friendly people and well-wishers	Both adjectives are built in the same model: բարի *good* + կամ *will;* բարեացակամ maintains the obsolete Gen. Pl. Բարեկամ is a common word meaning *friend.*
վաճառքի հանած է	she has put out on sale	
մէկու մը պէս, որ իր ետ գալը չի գիտեր	like someone who does not know her way back	

Իրերու մէջ ուրախութիւն չկայ	There is no joy in things	Իր is *object, thing, stuff,* also, *luggage.*
աւետեաց երկիրի մը յոյսով	hoping for a promised land	Lit.: *with hopes for a promised land.*
իր ընտանիքին հին երազներուն հետքերով	by the footprints of her family's old dreams	հետք is also *trace*
յանկարծ հեռաձայնը կը զարնէ	Suddenly the telephone rings.	զարնել lit.: hit.
Յասմիկին միտքերը ընդհատելով:	interrupting Hasmig's thoughts	The infinitive in instrumental shows the manner of action.
կրնա՞մ Ժասմինին հետ խօսիլ	Can I speak to Jasmine?	Hasmig uses her name's French equivalent.
կարծեմ	I think, believe	Frozen simple present of կարծել *to suppose.*
ժողովածուն կը ծախէք	You are selling the collection	ժողովածուն refers to book or art collections.
կ'ուզէք առնե՞լ:	Would you like to buy it?	Note the use of the respectful plural throughout the conservation.
ի՞նչ կ'արժէ	How much does it cost?	A standard question for price.
Ուրախ կ'ըլլամ գնելու	I will be glad to buy it.	
Եթէ հաճիք	if you please	Formal style.
ըսենք, չորսի ատենները յարմար կ'ըլլա՞յ:	Will it be convenient, say, around four p.m.?	ըսենք is a subjunctive form, used as *let's suppose, say.*
Աւելի լաւ է ճիշդ չորսին:	Better at 4 on the dot.	Note the absence of am/pm specification.
պարթին կայարանը	the BART station	Noun attributes like պարթ-ին are used in the genitive.
քսանութ տարու	28 years old	տարու is an older form to denote age, standard—տարեկան.
Շէկ	blond	Շէկ is only for hair color, blond or red.
Շատ գեղեցիկ ըլլալու էք	You should be very beautiful.	Or: It sounds like you are very beautiful.
արդեօք ամուսնացա՞ծ էք	I wonder if you are married.	արդեօք is an interrogative impersonal word.
որ հայուհիի մը պիտի հանդիպէր	that he was going to meet an Armenian woman	The suffix -ուհի creates feminine names.
զոր լսած էր	which he had heard	զոր is the pronoun որ with the definite preposition զ. It functions as a conjunction, connecting the subordinate clause to the main clause, see L 15.
տեսնելու առիթը ունեցած չէր	He had had no chance to see (her).	առիթ is *chance, opportunity, occasion.*
Ուրկէ՞ գիտնար Արամը	How could Aram know?	Lit: From where would Aram know?
Թէ պիտի սիրահարի Յասմիկին	that he would fall in love with Hasmig	թէ substituting for որ *that* to complement the question in the main clause, see L 15.
խենթ պատանիի մը հանգոյն:	like a crazy teenager	հանգոյն is a poetic equivalent for նման

ASSIGNMENTS

Phonetic Exercises

1. *Place the letters you learned in the alphabet, Appendices 1 and 2. Choose your favorite keywords.*
2. *Examine the alphabet. Are there letters you don't know yet? If so, go back and find out what lessons/ letters you have to review.*
3. *Write down five homonyms and five paronyms.*
4. *Fill out the chart writing the lower case words in upper case and vice versa.*

առաջ	
	ՀԱՂԱՐՋ
երջանիկ	
	ՃԱԿԱՏ
ողջագուրուիլ	
	ՋԵՐՄԱՑԱՓ
ճերմակ	
	ՆԱՐԻՆՋ
ֆիննուհի	
	ՄԵԾՑՆԵԼ
ճննդուկ	
	ԿԱՄՈՒՐՋ
աղօթք	

Lexical and Grammar Exercises

1. *Read the texts, translate them, and copy them. Retell the texts with improvisations.*
2. *Find inflected forms of nouns and verbs in the texts. Explain their usage and write the base forms of the same words.*
3. *Find the pronouns in the text* Խոստովանութիւն *and explain their usage.*
4. *Describe Hasmig according to the text. Describe a friend of yours using the vocabulary to the text.*
5. *Make causatives of the following verbs and conjugate them:* մտնել, յարգել, յիշել, թռչիլ, խօսիլ, հասնիլ, պառկիլ, փակչիլ, դառնալ, լալ, կենալ, մոռնալ.
6. *Conjugate the following according to the sample:*

Imperative Plural	Simple Past	Past Participles	Imperative Singular
եկէ՛ք	եկայ, եկար, եկաւ եկանք, եկաք, եկան	եկած, եկեր	եկու՛ր, մի՛ գար
գացէ՛ք			
խօսեցուցէ՛ք			
առէ՛ք			
տուէ՛ք			
դրէ՛ք			
հարցուցէ՛ք			
ապրեցուցէ՛ք			
ճայեցէ՛ք			

7. *Make sentences with the following causative verbs. Remember that they require direct objects.*
արթնցնել, խօսցնել, մաքրել տալ, գրել տալ, խոստովանեցնել, զօրացնել, ամրացնել, զարմացնել, աշխատցնել, ծանօթացնել, սարսափեցնել.

8. *Rewrite the following sentence emphasizing different words by changing the word order.*

Էմման այդ լուրերը առած էր ճամակով:

9. Fill in the following dialogue in both Armenian and English.

Երկխօսութիւն	**Dialogue**
- Դուն ի՞նչ ես:	------
----	Armenian.
- Ոչ, կ'ուզեմ ըսել՝ ----	No, I mean, what are you doing?
- Խաղող կ'ուտեմ:	I am eating -----.
- ---- ապրուստի համար:	No, I mean, for a living.
- ---- Ուսուցիչ եմ: Իսկ դու՞ն:	I work. ----- And you?
- Կը սորվիմ: ------	I study. I am a student.
- -------	Do you have a family?
- Այո, ------- Եւ դու՞ն:	Yes, a husband and a child. And you?
- Մայր և եղբայր մը:	--------
- Անոնց հե՞տ -------	Do you live with them?
- ------ մինակս:	No, by myself.

10. Translate the following sentences paying special attention to the direct and indirect objects.

1 Այս պատմութիւնը մեծ մօրմէս լսած եմ:
Կապոյտ գոյնէն շատ կ'ախորժիմ:
Գրիչով ալ շատ չենք գրեր:
Վահանը իր ինքնաշարժերով շատ կ՛ուրախանայ:

2 Բարեկամս Հայաստանէն եկած է գործով:
Կ'ուզէ՞ք ծանօթանալ անոր հետ:
Գալ կիրակի հիւրերու կը սպասենք, դուք ալ եկէ՛ք:
Ճաշը կը սկսինք աղցանով:
Ճաշէն վերջ նարինջ կ'ուտենք, նկատի չառած փախլաւան :
Այս չորեքշաբթի ամսուն քսանչորսին կարևոր գործ մը ունինք:

3 Առտու եօթը տասնեօթ անցած է, տակաւին կանուխ է:
Անցեալ տարուընէ ի վեր եօկա կը սորվիմ:
Վենետիկ աղուոր ժամանակ անցուցինք:
Հոն կամուրջներուն տակէն երգելով կ'անցնէինք:

4 Արան կ'ախորժի ճամբորդելէ:
Անին կը սիրէ ծով, ծառ ու ծաղիկ:
«Ընելիքնիս լմնցնենք, երթանք», կ'ըսէ Անին:
«Նոր ծանօթներ պիտի գտնենք, բարեկամ և բարեացակամ մարդոց ճանչնանք», - կ'ուրախանայ Արան:
«Քեզի չափ լաւ և քեզմէ լաւ մէկը չկայ», կը մտածէ Անին:
Անոնք ինքնաշարժով շատ կը ճամբորդեն:
Բայց այս անգամ օդանաւ պիտի առնեն:
Օդանաւը կէսօրէ ետք կը մեկնի:
«Նախ գացինք սրճարան սուրճ մը առնելու», - կ'ըսէ Արան:
«Ես պաղ ջուր մը խմէի հիմա, - կ'ըսէ Անին, - շատ տաք է»:

11. Translate the following dialogue into English paying attention to the play of words with causatives:

Բարեացակամ շունը



- Դուն որմէ՞ կը վախնաս, Արի՛ս, ինծմէ՞: Ես քեզի կը սիրեմ: Եւ դո՞ւն:

- Ինչպէ՞ս քեզի սիրեմ: Ես շատ զբաղած եմ՝ ինքզինքս սիրել տալով:

- Ատո՞ր համար արդեօք քեզ այսչափ կը սիրեմ: Դու՞ն սիրել կուտաս: Եւ կրնա՞ս ոսկոր մըն ալ տալ:

-Ի՞նչ գիտնամ: Պէտք ունիմ մտածելու: Եթէ քիչ մը հեռու երթայիր, որ կարենայի հանգիստ խորհիլ...

- Հաճիս, Արիս, կ'երթամ: Դուն կրնաս քեզի ինծի սիրել տալ, ուստի և կրնաս քեզի, ոչ ինծի, ոսկոր մը տալ: Շուարեցայ, Արի՛ս, ես երթա՞մ:

- Գնա, Հաֆհաֆիկս, ես քեզի կը գտնեմ - կ'ըսէ Արիս և յօրանջելով կը մտմտայ. «Թէ կարենամ պահած ոսկորդ գտնել, հարկաւ կ'ունենաս ուզածդ»:

12. Make questions for the italicized words and translate the sentences:

1. *Քենէ ուրիշ մէկը* չունիմ իմ սիրտս բանալիք:
2. Ասո՞ր համար արդեօք *աշխարհիս ամէնէն ապերջանիկ մարդն եմ:*
3. Էմման *իմս է:*
4. Եթէ օր մը ձգէ *զիս*, երթա՛յ:
5. Մեծցնենք *լաւը:*
6. Ապրեցուր զիս, Տէր, *անանկ* ապրեցուր, որ *բեռս չհյնայ աշխարհիս վրայ:*
7. Եւ եթէ պիտի տանիս զիս, Տէր, նախ *կեանքս* առ, յետոյ՝ *հոգիս:*

13. Translate the following paying attention to causative verbs; transfer the sentences into a non-causative version.

1. Մանչուկը ինքզինքը սիրել կուտայ:
2. Նկարս փակցուր սառնարանիդ վրայ:
3. Առտու ինծի յիշեցուր, որ սա կիսատ գործերնիս լմնցնենք:
4. Ուշ չկենաս, չենք կրնար օդանաւը քեզի համար փախցնել, առաւել ևս կեցնել:
5. Նոր վիշտերը մոռնալ տուին հիները:
6. Մարդիկը վրադ խնդալ կու տաս այդպէս հագուելով:
7. Տիկին Նուարդը մարդ վարձեց եւ տունը հիմնաւոր մաքրել տուաւ Կաղանդէն առաջ:
8. Վարդը ամէնքս կը զուարճացնէր իր սրամիտ ակնարկներով:
9. Նախանձը չորցուց անոր կեանքի ծառը:
10. Ադամը զիս միշտ կը խնդացնէ, իսկ Խաչիկը կը տխրեցնէ:
11. Այնքան խնդրեցինք եւ գովեցինք, վերջը երգել տուինք Անին՝ մեր խումբին սոխակը:
12. Մա՛, Շանթը կոճակս փրցուց, կը կարե՞ս: Անոր համար Շանթը լացուցի՞ր:

14. Translate the following into Armenian.

1. a "I will go, pass away; you will stay; do not forget my words," my grandmother used to say.
2. "Do not pass your days in prayers and hopes, fill them with work," she said.
3. "My life has passed; now your turn has come."
4. "Spend your life so that you are not sorry at the end."
5. b It is eleven o'clock sharp. It is a quarter to eight a.m.
6. It is already half past nine p.m.
7. They say this winter is going to be very cold.
8. Last week we had (spent) a nice time in Philadelphia.
9. Last fall they went to Paris. There is no city as lively as Paris or better than Paris.
10. c The sun lights up the world with its rays.
11. The mother bear wakes up and feeds her cubs.
12. I will show you the new pictures.
13. This trip made me really happy.
14. These clear waters make me sing.
15. d Aram taught Ardag the Armenian alphabet.
16. Two years from now Ardag will graduate from school.
17. I think he will graduate with highest grades.
18. Ani is an Armenian woman with black hair and coffee-colored eyes.
19. Ani woke up Dikran, played with him a bit, and then fed him.
20. This Friday they took Dikran to the doctor for the annual checkup.
21. Last Monday was Dikran's birthday; he completed two years and entered the third.
22. I hardly recognized him; he has grown up so much.
23. Ara and Ani have taken their books and gone to the forest to read.
24. e I have not met a woman as pretty as Hasmig, says Aram.
25. Hasmig is going to go to Armenia.
26. She wants to work there as a doctor. She misses her sister Karen.
27. Hasmig was thinking, "We must prevent the evil, we must prevent wars", when the phone interrupted her thoughts.
28. Aram loves to read. He has a big collection of books.
29. He makes it grow day by day.
30. He invited a few friends over to show [them] his books.

14. Translate the joke:

- Եթէ մէկ միլիոն ունենայիր, ի՞նչ կ'ըսէիր:
- Պարտքերս կու տայի:
- Սնացածը ի՞նչ կ'ըսէիր:
- Սնացածն ալ ետքէն կու տայի:



ժողովուրդը կ'ըսէ.

Բերան կայ պագնելու է, բերան կայ՝ փակելու է:[12]
Ամէն չար ունի իր ճարը:[13]
Ջուրը չտեսած մի բոպիկնար (բոկանար):[14]
Ուշացողինը աղջիկ է:[15]

[12] There are mouths to be kissed, and there are mouths to be closed.

[13] Every evil has its remedy. Cf. For every evil under the sun there is a remedy or there is none.

[14] Don't take off your shoes unless you see the water.

[15] The share of those who are late is a girl. *or:* Those who are late beget a girl. This is a sexist saying; *girl* symbolizes negative results.

EASTERN ARMENIAN PARALLEL FOR LESSON 12

Phonetics: Pronunciation and Spelling

Letters:	Ճ ճ [ch]	Ջ ջ [j]	Ֆ ֆ [f]

Ջ ջ is pronounced [j] and Ճ ճ is its voiceless, unaspirated counterpart, a sound which does not exist either in WA or in English.[1] EA preserves the Grabar phonemic value for these letters, e.g., **ջերմ** *warm* [jerm], **ճոխ** [chokh] *opulent*. In WA the voiced consonants have devoiced with aspiration, that is, Ջ ջ is [ch'], as Ձ ձ, Գ գ , etc. and the voiceless have become voiced, that is, Ճ ճ is [j]; as Ծ ծ, Կ կ, etc.

In EA, the same devoicing trend has touched upon these voiced consonants in some positions, cf. **աղջիկ** *girl* [akhch'ik], **արջ** *bear* [arch'], **մեջ** *in* [mech'] are pronounced like in WA. Details on the EA consonant system see in the next lesson (also, EA Lesson 4, and appendices 3 & 13).

Note: Foreign words containing [j] are spelled with Ջ ջ in EA—Լոս Անջելես, Ջուլիա, Ջոն, and in WA, with Ճ ճ—Լոս Անճելէս, Ճոն, Ճուլիա.[2] Also, EA has an important word with ջ—ջան, an endearing address form following proper names, e.g.—Ջուլիկ ջան, Ջեմմա ջան; interestingly, this word has become a semi-formal address form occurring also outside of intimate-endearing circles. The WA ճան (ճանս, ճանիկս) is endearing intimate address form used by itself and not as common as in EA.

Ֆ ֆ has the same pronunciation, [f]. Before 12th c., foreign words containing this sound were spelled with Փ փ e.g., փաղանգ *phalanx*, փաստ *fact*, փյունիկ (< փիւնիկ) *phoenix*. EA proceeds to substitute the old [p] with Ֆ ֆ e.g., WA—Ափրիկէ, EA—Աֆրիկա. Also, some onomatopoeic words sound slightly different—ֆշշալ *to hiss*, ֆսֆսալ *to wheeze*.

Reading from the Original — Եղիշե Չարենց

In celebration of finishing the Այբուբեն, we present a poem which has become the unofficial anthem of Armenia. Poet Eghisheh Charents (1897-1937) is one of the greatest paradoxes in Armenian literature; his works were forbidden under Stalinist regime. See the translation of the poem in the keys.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնաներկ ծաղիկների ու վարդերի բու՛յրը վառման
Եւ նահրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Աբեղում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր է՛լ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սու՛ր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

---

[1] Ճ ճ [ch] and Ծ ծ [ts] are rare affricates opposite to their voiced or aspirated counterparts, [j] and [dz] found in many languages. Affricates are complex sounds, that is, they begin as one sound but end as another, e.g., Ճ = ւռ +չ, Ջ = ղ +ժ, Չ= բ +ւ, Ծ = ւռ + ւ, Ձ= ղ + գ, Ց= բ + ւ, etc. Thus, արգունք derives from արտասուք with an aspiration left in [ռս] from the dropped vowel ա.

[2] Some proper names in WA are borrowed through French, and spelled pronounced accordingly: Ժուլիէտ versus EA Ջուլիկ. EA also internalizes them with diminutive –իկ e.g., Օֆիկ, Անժիկ but Ժանննա, Ժոզէֆ.

GRAMMAR

Irregular Declensions: -o-, -ոջ, -g

The kin terms կին, քույր, ընկեր belong to the same irregular declension ոջ; եղբայր, հայր, մայր—to declension n (CO, o) and մարդ, կին to g in plural with no regularized parallel forms. Differences in declension paradigms are quite predictable:

	Singular Irregular		Plural Regular	Plural Irregular	
Nom	կին	մայր	մայրեր	մարդիկ	կանայք
Gen.-Dat.- Acc	կնոջ	մոր	մայրերի	մարդկանց	կանանց
Ablative	կնոջից	մորից	մայրերից	մարդկանցից	կանանցից
Instrumental	կնոջով	մորով	մայրերով	մարդկանցով	կանանցով

1. These nouns indicate animate objects and acquire a dative-like accusative.
2. They have no locative with -ում; as in WA, մեջ is used if necessary—մարդու, կնոջ, մոր, etc. մեջ.
3. Մարդ in plural genitive acquires the form մարդկանց versus WA մարդոց/մարդերու.
4. In ablative they assume the regular ending -ից.
5. No nasal is added before ablative and instrumental endings, as մ in WA, or ն in EA pronouns (cf. L 11).
6. The declension o is spelled with n in RO.

Direct Object and Word Order

The main difference in EA, as we already know, is the category of the animate directs object, which includes all parts of speech that can function and be declined as nouns: pronouns, verbal substantives, adjectives, etc. Note that only the definite direct object differentiates the animate/inanimate category. The indefinite direct object in EA assumes nominative form, like the WA direct object in general.

For example: Մի մրահոն աղջիկ տեսա Ռիալտոյի կամուրջին (Isahakian) *I saw a dark-browed girl on the Rialto bridge.* The indefinite direct object մի աղջիկ is in accusative-nominative form, even though its lexical meaning pertains to an animate object. If we change the category of definiteness, the same direct object turns into a dative-like accusative: Իսահակյանն աղջկան տեսավ Ռիալտոյ կամուրջին *Isahakain saw the girl on the Rialto bridge.* Fun puns originate from the subtle use of this category in EA, cf.: "In a restaurant, the guy asks his date, Դու ձուկ սիրո՞ւմ ես: The girl, gazing at the live fish in the aquarium, replies, Ես ձկներին եմ սիրում:"

The positional variation of direct object in EA is demonstrated below on examples used in the WA lesson:

Narrative styles: SVO word order	Ես սիրում եմ *մորս*: Մայրս սիրում է *ինձ*: Բանալին փակում է ճամպրուկը: Հիսուսի իջած տեղը կոչվեց Էչմիածին:	I love my *mother*. My mother loves *me*. The key locks *the suitcase*. The place Jesus descended was called *Echmiadzin*.
Non-specific direct objects: SOV	Տուն եմ ուզում: Ջուր բեր, խնդրեմ: Հաց ու մածուն առա:	I want home. Please, bring water. I bought bread and yogurt.
Emphasized direct object: SOV	Բանալին *ճամպրուկն է փակում*: Ես *մորս* եմ սիրում: Մայրս *ինձ* է սիրում:	This key locks this *suitcase*. I love my *mother*. My mother loves *me*.
Subordinate clauses as direct objects	Չգիտեմ, *թէ դրամապանակս ուր դր(եց)ի*: Հիշեցրու՛, *որ գրքերը բերեն*: *Ինչ ձեռքն ընկնի,* կառնի, տուն կբերի:	I don't know *where I put wallet.* Remind (them) to bring their books. *Whatever falls into her hands,* she gets them and brings them home.
Direct objects of participles: OV	*Նրան կորցնելու* վախն է ինձ պաշարում: Արեգակն է մեզ *լույս* և հույս *բերողը*: Արփին չի հոգնում *աշխարհը լուսավորելուց*:	The fear of *losing her* scares me. The sun is what brings us *light* and *hope*. The sun does not get tired *of illuminating the world.*

As you can see from the examples, the word order rules are quite similar; the difference is in the flexibility of auxiliary and link verbs which can follow (neutral style) or precede (emphatic style) the content word, also allow objects in-between in positive forms. In WA, the auxiliary and link verbs are fixed: they follow the content word, and in analytic negative forms, precede it. Cf.:

EA: Auxiliary/Link Mobility	WA: Auxiliary/Link Fixity
Տերը կյանք է տվել: Տերն է կյանք տվել: Ես եմ/չեմ ձեր դպրոցի տնօրենը (եմ/չեմ):	Տերը կյանք տված է: Ես ձեր դպրոցին տնօրենը եմ/չեմ:

The question word for animate-definite direct object is ու՞մ, and for the inanimate and/or indefinite, ի՞նչ.

- Դու ու՞մ ես սիրում:	Մորս եմ սիրում:	Փոքրիկներին եմ սիրում:
	Քեզ եմ սիրում:	Սիրածիս եմ սիրում:
- Դու ի՞նչ ես սիրում:	Երկիրս եմ սիրում:	Արեգակն ու ծաղիկ եմ սիրում:
	Նկարել եմ սիրում:	Շուն եմ սիրում:

Indirect Objects use dative, ablative, instrumental and also **locative** cases with or without prepositions.

Գնացքը մոտեցավ *կայարանին*: *Կայարանում* բաժանվեցի *ծնողներիցս*, բայց *գնացքիս* չհասա: Եկա *մեքենայով* և ետ եմ գնում *ոտքով*:	The train came approached *to the station*. I parted *from* my *parents* but didn't make it to my *train*. I came *in a car* and I am going back *on foot*.

The direct object of a transitive verb precedes the verb and the indirect object follows it, as in WA:

Անին *խաղող* է տալիս *Տիգրանին*:	Ani gives *grapes to Dikran*.
Մանուկը *բերկրանք* բերեց *մորը*:	The child brought *joy to the mother*.

The flexibility of word order in EA is more obvious with two objects. The last sentence, which allows six transformations by word order in WA, renders 12 versions in EA due to the mobility of the auxiliary verb.

Մանուկը բերկրանք է բերում մորը:	*Բերկրանք* է բերում մորը մանուկը:	*Բերկրանք մանուկն է* բերում մորը:
Մանուկը *մորը* բերկրանք է բերում:	Մորը *բերկրանք* է բերում մանուկը:	Բերկրանք *մորն է* բերում մանուկը:
Մանուկն է բերում մորը բերկրանք:	Մորն է *բերկրանք* բերում մանուկը:	*Բերում է* բերկրանք մորը մանուկը:
Մանուկն է բերում բերկրանք մորը:	*Մորն է* բերում բերկրանք մանուկը:	*Բերում է* բերկրանք մանուկը մորը:

Indirect objects of participles usually precede their verbs; all examples below allow a large number of possible inversions in word order. Try them on your own, considering the rules presented above.

Արի պատմեմ *նամակով ստացածս* լուրերը:	Let me tell you the news *received in the letter*.
Ինձ պատահածները գիտես *ուրիշներից*:	You know what happened *to me from others*.
Չագուկը *մորը* բերկրանք *բերողն* է:	The baby is *who brings joy to the mother*.
Քեզ հետ խոսելիք ունեմ: or *Խոսելիք* ունեմ *հետդ*.	I have *something to speak with you*.
Անիի համար առած ծաղիկները անուշոտ են:	The flowers *bought for Ani* are fragrant.
Ոտքով քայլելը հաճելի է:	*Taking a walk* (Lit.: *walking on foot)* is pleasant.

The table below presents questions for indirect objects:

- Ու՞մ ես խաղող տալիս: - Մանչուկին:	To whom do you give the grapes? The child.
- Ումի՞ց բաժանվեցի: - Ծնողներիցս:	Whom did I part from? From my parents.
- Ինչո՞վ եկա և ինչո՞վ ես գնում: - Մեքենայով եկա և գնում եմ ոտքով:	What I came in and how do I go? I came in a car and I go on foot.
- Ու՞մ համար ծաղիկ բերեց Արան: - Անիի:	Who did Ara bring flowers for? For Ani.
- Ու՞մ հետ է խոսում Արամը: - Հասմիկի:	Whom does Aram speak with? With Hasmik.

Causative Verbs derive from past stems with the same infix variations—ացն, եցն, and ցն. Verbs receiving it shift to conjugation ե. In past stems with ց, the causative ց merges with it and does not repeat; nor does it in verbs with a root-final ց or ձ.

Type of Verb	Infinitive	Past stem	Causatives
Simple ե verbs	վազել	վազեց-	վազեցնել
Simple ա verbs	խաղալ	խաղաց-	խաղացնել
Derivatives with dropping infixes ն and չ	տես-ն-ել կպ-չ-ել	տես - կպ-	տեսցնել կպցնել
Derivatives with shifting infixes են and ան	մոտ-են-ալ զարմ-ան-ալ	մոտեց- զարմաց-	մոտեցնել զարմացնել
Derivatives with a dropping ն and root ց or ձ.	անցնել դառնալ	անց դառ or դարձ	անց(ը)նել դարձ(ը)նել

EA shares the analytic causatives with the verb տալ, as well as the lexical parallels.[3]

Infinitive	Synthetic Causative	Analytic Causative	Lexical Parallel
ուտել	կերցնել	ուտել տալ	կերակրել
տեսնել	տեսցնել	տեսնել տալ	ցույց տալ
սիրել	սիրվեցնել	սիրել տալ	հիացնալ
հիշել	հիշեցնել	հիշել տալ	մտաբերել
սովորել	սովորեցնել		դասավանդել

Conjugation of Causative Verbs: Causatives are conjugated in the regular paradigm of ե verbs. In tenses produced from present stems, infixes remain intact. The three-syllabic verbs maintain the middle vowel as in non-causative forms—մեծանալ > մեծացնել, մոռանալ > մոռացնել. In WA, the penultimate vowel before the stressed syllable is weaker and often drops: մեծնալ > մեծցնել, մոռնալ > մոռցնել.

Causatives from the Present Stem	
ապրեցնել զարմացնել մեծացնել	Infinitive
մեծացնեմ, չմեծացնեմ, մեծացնեի	Subjunctive Mood
կմեծացնեմ, չեմ, չէի մեծացնի	Conditional Mood
պիտի մեծացնեի, չպիտի (չ)մեծացնեի	Obligatory Mood
մեծացնում եմ, չեմ մեծացնում	Simple Present
մեծացնելու եմ, չեմ մեծացնելու	Simple Future
մեծացնող	Present participle
մեծացնելիս	Continuous Participle
մեծացնելիք	Future participle
մի՛ մեծացնիր/մեծացրու, մի՛ մեծաց-ներ/րեք	Imperative prohibitive

Note the parallel forms for the prohibitive imperative with the present stem (formal) and past stem (common use). As you can see from these parallels, the past stem in causative verbs is formed by replacing -ցն- with ցր. The regular endings for simple past (set I with ի), past participles (-ած, -ել), and imperative plural in positive (-ե՛ք) follow ցր-, and only in the positive imperative singular a new ending emerges—ցրու՛.[4]

[3] Compound verbs formed with a root and տալ, as in WA, differ from analytic causatives (infinitive + տալ), cf.: պահ տալ= պահելու տալ *store, hide, preserve*, ետ տալ = վերադարձնել *return* or փսխել *throw up*, etc.

[4] The causative infix [ցən], shared in EA and WA derives from Grabar causative -ուց-ան-. It contains the suffix -ույց e.g., կառույց, մատույց, սառույց, հանգույց; these nouns formally coincide with the causative simple past in third person singular. The second part of the causative infix, -ան is the common indicator of imperfect aspect, e.g., մոռ-ան-ամ, գիր-ան-ամ. The infix -ուց-ան-shrank into -ց-ն- in modern Armenian but the vowel ու reemerges in the past stem: WA simple past—զարմացուցի, imperative—զարմացու՛ր and EA imperative—զարմացրու՛. The emergence of ր in the past stem is compatible with the ն > ր replacement in some irregular verbs, such as դնեմ/դրի, տանեմ/տարա, etc. Some causatives are frozen in modern Armenian and conjugate in regular paradigms, e.g., կառուցեմ—կառուցեցի, մատուցեմ—մատուցեցի, հատուցեմ-հատուցեցի. Adjectives with -ուց, the old causative, are characteristic to literary styles—ապշեցուցիչ *amazing*, լրացուցիչ *additional*, etc.

Causatives from the Past Stem	
Infinitive—present stem	մեծացնել ապրեցնել փակցնել
Imperative Prohibitive/novel parallels	մի՛ մեծացրու ապրեցրու փակցրու մի՛ մեծացրեք ապրեցրեք փակցրեք
Imperative Positive	մեծացրու՛ մեծացրե՛ք ապրեցրու՛ փակցրու՛
Past Participle I	մեծացրած ապրեցրած փակցրած
Past Participle II	մեծացրել ապրեցրել փակցրել
Simple Past	մեծացրեց ապրեցրեց փակցրեց

In simple past, causative verbs use set I endings with ի, following the infix –ցր. Հարցնել, դարձնել and վերցնել conjugate in the same pattern by analogy: դարձրի *I turned,* վերցրի *I took.*

	Causative Verbs in Simple Past Tense		
	վերջացնել ⇦վերջանալ	խոսեցնել ⇦ խոսել	հարցնել
ես	վերջացրի	խոսեցրի	հարցրի
դու	վերջացրիր	խոսեցրիր	հարցրիր
նա	վերջացրեց	խոսեցրեց	հարցրեց
մենք	վերջացրինք	խոսեցրինք	հարցրինք
դուք	վերջացրիք	խոսեցրիք	հարցրիք
նրանք	վերջացրին	խոսեցրին	հարցրին

Meaning and Use of Causatives shows no significant differences. Synthetic causatives with -ցն- show immediate involvement of the subject with the direct object and a sharing or enforcement of action. Analytic causatives with տալ indicate a subject appealing or directing the direct object to action. The lexical parallels are standard transitive verbs with direct objects merely bearing the action from the subject. Therefore, the direct object in causative structures is more important than the subject. Cf.:

S. Causative Neutral	Գործերը ձանձրացրին ինձ: Ես ձանձրացա (գործերից):	The work made me bored. I got bored (of chores).
S. Causative Neutral	Զավակը ուրախացրեց մորը: Մայրը ուրախացավ (զավակով):	The child made the mother happy. The mother got happy (with her child).
S. Causative Neutral	*Հիշեցրու* ինձ, որ տան վարձը վճարեմ: Հիշենք, որ պետք է տան վարձը վճարել:	*Remind* me to pay the rent. Let us remember that we must pay the rent.
S. Causative Analytic Causative	Համոզելով ու հեքիաթ պատմելով՝ տատիկը թոռնիկին չիլա էր ուտեցնում: Եթէ պատրաստածդ համով չլինի, միայն քեզ եմ ուտել տալու, - սպառնաց գլխավոր խոհարարը:	The Grandma coaxed her grandson to eat porridge by persuading and telling tales. If what you prepare is not tasty, I'll make you eat it alone, threatened the chef.
Lexical parallel	Տանտիկինը մտահոգվում էր, թէ ինչպես էր կերակրելու անսպասելի հյուրերին:	The landlady was worried how she would feed the unexpected guests.

Some causatives have an **additional lexical meaning**, e.g., խաղացնել is *to toy with, delay, flirt.* Also, verbs may split the difference in lexical meaning between two forms of causatives, e.g. ուտեցնել is to feed, whereas կերցնել may be used also as *to answer with a ironic or sharp remark.* On the other hand, պարզել *is to reveal, clarify,* and its causative form, պարզեցնել is *to simplify.* Կանգնեցնել as a causative from կանգնել *to stand* has a limited usage, e.g., Երեխան կանգնեցրեց (շարեց) իր զինվորիկներին: *The child made his little soldiers stand still.* Ոստիկանը կանգնեցնում է կանոնախախտին: *Police stops those who break the rules.* But it has acquired a special lexical meaning of its own as *to erect a monument,* e.g.: Ծիծեռնակաբերդում հուշարձան կանգնեցվեց Եղեռնի զոհերի հիշատակին: *In Tsitsernakaberd a monument was erected in memory of the victims of 1915 Genocide.* Some causatives are more frequent in usage than their neutral counterparts; e.g., հստակ *clear, lucid,* հստակեցնել *elucidate, clarify,* the neutral հստականալ seldom occurs.

The Verbs անցնել and անց(ə)նել are easier to confuse in EA because they do not differ in writing; the distinguishing schwa in անցəնել (present in all causatives) still allows misunderstanding, cf.:

Փողոցն *անցնում եմ* ու տանն եմ արդեն:	I *pass(cross)* the street, and I am home already.
Արիսին գրկում եմ, որ փողոցն անցəնեմ:	I hug Aris to help (make) him cross the street.

As a rule, languages do not tolerate such similar forms and find ways to differentiate them. Thus, in EA a new compound verb is generated—a causative անց կացնել *to spend, cross, make pass* equivalent to անցəնել with its neutral counterpart անց կենալ equivalent to անցնել *to pass*. Among these four forms, անցնել and անց կացնել enjoy common usage. Note that the verb կենալ has no independent use in EA, but creates compound verbs like վեր կենալ *get up*, անց կենալ *pass*, etc.

The Verbs գիտեմ, ճանաչել, and իմանալ

All three verbs mean *to know;* գիտեմ and ճանաչել relate to each other like գիտեմ and ճանչնալ in WA. EA adds here also the verb **իմանալ** *to acknowledge, be cognizant;* it is rarely used in WA. For a causative, գիտեմ and ճանաչել use the same lexical equivalent: ծանոթացնել *to introduce, cause to meet, get acquainted.*. իմանալ uses the compound իմաց տալ, *to let know, deliver news.*

Note that ճանաչել and ծանոթ etymologically have the same origin; in EA ծանոթ means 1. *acquaintance* 2. *familiar* and in WA, it additionally means *famous, well known.*

Ես գիտեմ հայերենի այբուբենը:	I *know* the Armenian alphabet.
Արամը իմացել էր Հասմիկի մասին, բայց նրան չէր ճանաչում:	Aram had learned about Hasmik but was not *acquainted* with her (did not know her).
Ես չգիտեի (չէի ճանաչում) Արտակին, Արամը մեզ ծանոթացրեց:	I did not *know* (was not *acquainted* with) Artak; Aram introduced us.
Ինձ պատահածները իմացած կլինես ընդհանուր ծանոթներից:	You must have learned what happened to me from common acquaintances.

Suppletive Forms for Defective Verbs եմ, կամ, ունեմ, գիտեմ, կարող եմ: Except for ունենալ, which is practically the same in EA and WA, these verbs show subtle differences. Note the examples of usage: *գիտեմ և կարող եմ:* I know and I can. Եթէ *գիտենամ,* գուցեև *կարողանամ:* If I know, perhaps I am also able. Երբ *իմացայ,* նաև *կարողացա:* When I learned (knew), I also could.

Defective Verbs		Suppletive Complements for Other Tense Forms		
Present	Past	Infinitive	Subjunctive Present and Past	Simple Past
եմ, կամ	էի, կայի	լինել to be	լինեմ լինեի	եղա
կարող եմ	կարող էի	կարողանալ[5] be able	կարողանամ կարողանայի	կարողացա
գիտեմ	գիտեի	գիտենալ to know իմանալ	գիտենամ իմանամ գիտենայի իմանայի	գիտեցա/ գիտցա իմացա

Text ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հասմիկը վճռել է Հայաստան գնալ աշխատելու: Մի քանի տարի առաջ ավարտեց Հարվարդի բժշկականը: Տարիների երազանքը կատարվեց: Հիմա վիրաբույժ է և կարող է օգնել մարդկանց: Շատերի համար ուշ է այլևս: Ուշ է Հայկուհու համար: Բայց կարող է գեթ ուրիշների համար չարը կանխել:

Հասմիկը հեշտությամբ գտավ իր առաջին աշխատանքը, որովհետև գերազանց գնահատականներով էր ավարտել համալսարանը: Շատ երջանիկ էր համարում ինքն իրեն: Միշտ պարտաճանաչ, կազմակերպված և ճշտապահ, նրա ստեղծագործ միտքը գիտության ու իմացության բարձունքներում էր ճախրում: Բայց օր ըստ օրե մի կասկած ծնվեց նրա մեջ: Կասկած, որ այժմ գրեթե տագնապի էր վերածվել: Եթե ինքը մի օր գործի չգնա, ի՞նչ կարող է փոխվել իր հիվանդների համար: Ոչ մի վատ բան: Բժիշկներն այստեղ շատ են: Իր չափ լավ և իրենից լավ:

[5] Regularized from Grabar կարեմ կարեմք կարէ/կարէր. կարացի, կարաց, կարող/կարացող, կարելի.

Այնտեղ մի հեռավոր Հայաստան կա, ուր վիրաբույժը հացթուխի արժեք ունի: Այնտեղ պատերազմը և կարիքը դեռ հնձում են մարդկանց: Դավադիր ռումբերն այնտեղ պայթում են խաղաղ գործի անցած մարդկանց և հրադադարի երազկոտ զինվորների գլուխներին: Հայաստան, որ իր մայրիկի երազն էր: Հայաստան, որ իր մանկության երազն էր: Եւ Հայաստան, ուր Քարենն է ապրում իր Հայկ և Հայկուհի զավակներով: Մի փոքրիկ Հայկ և Հայկուհի, որոնց մեջ իր զվարթ Հայկոյից մի մաս է ապրում: Հին հայրենիքը ծանոթ և անծանոթ, բարեկամ ու բարյացակամ մարդկանցով կանչում է իրեն:

Վճռել է այլևս: Գնալու է: Եվ վաճառքի է հանել ամեն բան, որ ունի՝ մեկի պես, որ իր ետ գալը չգիտե: Իրերի մեջ ուրախություն չկա: Հասմիկը գնում է ուրախություն փնտրելու այնտեղ, որտեղից շատերն այստեղ են գալիս՝ ավետյաց երկրի հույսով: Գալիս են իր ընտանիքի հին երազների հետքերով:

Հեռախոսն հանկարծ զանգում է՝ Հասմիկի մտքերը ընդհատելով:

- Այո՞:
- Կարելի՞ է Ժասմինի հետ խոսել:
- Ժասմինն է:
- Բարև ձեզ, ես Արամ Կիրակոսյանն եմ: Կարծեմ՝ Էդգար Ալան Փոյի ժողովածուն եք վաճառում:
- Այո, կուզենայիք գնե՞լ:
- Ի՞նչ արժե:
- 20 դոլար:
- Ուրախությամբ կգնեմ:
- Խնդրեմ: Եթե ուզում եք, կարող եք գալ և գնել:
- Որտե՞ղ եք ապրում:
- Ալամիդա:
- Վաղը կեսօրից հետո, ասենք, չորսի կողմերը հարմար կլինի՞:
- Ավելի լավ է ուղիղ չորսին: Գրքերը կբերեմ Բարքի կայարանը:
- Շատ լավ: Ինչպե՞ս ճանաչեմ ձեզ:
- Ես միջահասակ եմ, քսանութ տարեկան: Շեկ մազերով ու սև աչքերով: Կապույտ հագուստով կլինեմ, գուցե մի սպիտակ վերարկու էլ հագնեմ:
- Պետք է որ շատ գեղեցիկ լինեք, արդյոք ամուսնացա՞ծ եք:
- Այո, Փոյի հետ...

Արամը չգիտեր, թե հայուհու էր հանդիպելու: Իր համար ճակատագրական մի անունով, որը լսել էր իր ընկերներից, բայց անունի տիրոջը տեսնելու առիթը չէր ունեցել: Ի՞նչ իմանար Արամը, թե սիրահարվելու էր Հասմիկին մի խենթ պատանու նման:

Vocabulary Differences

EA	Translation	WA	Translation
ետ տալ	1. give back 2. throw up		return
դարձնել	turn, revolve		1. turn, revolve 2. throw up
ճիճու		ճճի	worm
ճանաչել		ճանչնալ	to know, recognize be acquainted
փնտրել		փնտռել	search
ֆիզիկա		(բնագիտութիւն)	physics
արթնացնել		արթնցնել	wake up
աշխատեցնել		աշխատցնել	make work
փոքրիկներ		պզտիկներ	children
թռչել		թռիլ	fly
սպանել		սպաննել	to kill
խոսեցնել		խօսեցնել	make talk
(վերջանալ)		լմննալ	end
(խնդրեմ)	(if you) please	հաճիս	(if you) please
(նման)		հանգոյն	like, as
շփոթվել		շուարիլ	be confused
չհաշված		նկատի չառած	notwithstanding

LESSON 13

PHONETICS
The Consonant System
Diphthongs

GRAMMAR
Comparative Degrees of Adjectives and Adverbs
Pronominal Declension
Interrogative-Relative Pronouns
Prepositions and Postpositions
Personal and Demonstrative Pronouns

VOCABULARY
Reading from the Original: Մայմուն by Zahrad
Feminine Suffix -ուհի
Proper Names
Comparison: Texts: Քիչ մը պատմութիւն. Քիչ մը փիլիսոփայութիւն
Directions: Text: Պարոնեան Փողոցը Ո՞ր է
Text: Սօր Աղօքքը

PHONETICS

The Consonant System

Sonorants		Voiced Consonant		Voiceless Consonants		
լ	[l]	պ	[b]	բ	փ	[p']
մ	[m]	կ	[g]	գ	ք	[k']
ն	[n]	տ	[d]	դ	թ	[t']
յ	[y]	ծ	[dz]	ձ	ց	[ts']
ր	[r]	ճ	[j]	ջ	չ	[ch']
ռ	[ŗ]	զ	[z]	ս		[s]
		ժ	[zh]	շ		[sh]
		ղ	[gh]	խ		[kh]
		վ, ւ	[v]	ֆ		[f]
				հ, յ		[h]

- Consonants are pronounced with some obstruction or friction to the air flow opposite to vowels (see vowels in Lesson 3).
- Modern Western Armenian has twenty-five consonant sounds (phonemes) written with thirty-two letters. Letters are the graphic or written representations of phonemes. Phonemes have no meaning but they are capable of distinguishing it, e.g., լուր *news,* լուռ *silent.* Phonemes may sound different depending on their position, e.g., *q*քաuun [ə*s*k'asd], *q*աւակ [zavag], or English *p*ot and sp*o*t.
- Five consonants (in the right column) are spelled each with two letters (see Appendix 4 on the historical consonant shift).

- The sonorants (liquids) ր, ն, լ, մ, ն, յ are articulated with a relatively free air flow through the vocal cords; they have no voiceless oppositions. The sonorant յ in initial positions turns into a voiceless [h]. The rest of consonants, except հ, form a dual opposition by being *voiced* and *voiceless*. Voiced consonants are uttered with the vibration of vocal cords, and the voiceless, without.
- The sound [h] has no voiced counterpart, and it is spelled with two letters: հ and յ.
- [v] has five spellings, with վ, ւ, ո, ու, և.
  - վ is used for the initial positions and after ո: վաւեր/աճվաւեր, ծով.
  - ո is for the initial sound combination [vo], except for ով [ov] *who,* ովկիանոս [ovgianos] *ocean.* The spelling of the word վոհմակ [vohmag] *wolf pack,* is an exception to both rules above.
  - ու sounds [v] before vowels: Նուարդ, զուարթ, աղուոր, կոչուիլ, գրուած.
  - ւ is used for all the remaining cases.
  - և can substitute for the letter combination եւ in the lower case, as in: արեւ or արև.
- In general features, the consonant system is quite similar to that of in English save the absence of the phonemes ռ, ղ-խ, and ծ, ձ-ց, although the last two occur in specific position, as speech sounds, as in lo*ts*, bea*ds*.

Phonetic Drills: Read the Homonyms and Paronyms

գառ	lamb	քար	stone	կար	stitch
գրել	to write	քերել	scratch	կրել	to carry
դառ	bitter	քառ	a musical instrument	տառ	letter
դեր	role	քերի	defective	տէր	lord
դեղ	medicine	կաճքեղ	lantern	տեղ	place
ողջ	whole, alive	ոչ	no	կոճ	strand
ձախ	left	ցախ	broom-wood	ծախել	to sell
ձող	rod	ցող	dew	ծով	sea
թագ	crown	թակ	knock	տակ	under
ոխ	malice, revenge	հոտ	smell	ոտ	foot, leg
աղտ	litter	հատիկ	grain	ախտ	sickness
ղեկ	wheel	հեք	poor, miserable	խելք	reason, mind
ջուր	water	չար	mean, naughty	ճար	remedy
ձեր	your	ցերեկ	day-time	ծեր	old
ձոր	gorge	ցորեն	wheat	ծորակ	faucet
օղ	ring	հող	soil	ող	vertebra
հերու	last year	առու	river stream	արու	male
յամառ	stubborn	համար	for	ամառ	summer
վար	down	աղուոր	nice	որ	that, which

Reading from the Original: **Զահրատ, by Zahrad[1]**

Մայմուն

Մայմուն որ կ'ըսեմ կապիկ չկարծէք
Տաճ սև փիսիկին աճունն է
Փիսիկ որ կ'ըսեմ աղուոր չկարծէք
Աշխարհիս ամէնէն տգեղ կատուն է

Սև է որ կ'ըսեմ սեփսև չկարծէք
Սևութեանը մէջ աչքերը դեղին են
Դեղին որ կ'ըսեմ արև չկարծէք
Արևը մէկ է - աչքերն երկու են

Երկու որ կ'ըսեմ զատ-զատ չկարծէք
Երկուքին խորն ալ երազը մէկ է
Երազ որ կ'ըսեմ մեծ բան չկարծէք
Մարդու մը կողմէ սիրուիլն է

Explanations to the Poem

Մայմուն որ կ'ըսեմ	When (if) I say maymun	Maymun, Arabic *ape, monkey.* The conjunction որ can substitute for *when* երբ and *if* եթէ in everyday speech.
կապիկ չկարծէք	Don't think of monkeys	չկարծէք, negative subjunctive of կարծել, *to consider, have the opinion, think of.*
փիսիկ	kitty, pussy-cat	Endearing diminutive for *cat.* The words կատու, cat, as well as փիսիկ and pussy are from the same (unknown) source.
տգեղ	ugly	տ- is a negative prefix; cf. գեղեցիկ *beautiful.*
սեփսև	absolutely black	Emphatic repetition of սև with the augmentative փ; cf. կա*ւ*կարմիր bright red; ճե*ւ*ճերմակ absolutely white, etc.
աչքերն երկու են	the eyes are two	The definite article ն substitutes for ը , causing the shift of the initial ե [ye] into [e] as it was in Krapar. This rule is practically dying out in modern Western Armenian.
զատ-զատ	separately	The adverb is derived by the repetition of the adjective զատ *single, separate.*
Երկուքին խորն ալ	In the depth of both	Երկուք is a declined nominal numeral, *both, the two.*
երազը մէկ է	The dream is one	Մէկ *one,* means also *the same*, in Armenian and other languages.

1 Zahrad is a modern poet and writer. He was born in 1924 in Istanbul which in the Armenian tradition is still referred to by its Byzantine name, Պոլիս (Կոստանդնուպոլիս Constantinople), the literary and intellectual center of Western Armenia before the Genocide. Lyrical, sometimes sarcastic humor and brevity characterize Zahrad's poetry, translated into many languages. Note that Zahrad does not use punctuation, except for apostrophes.

Diphthongs

Diphthongs are sound combinations functioning as oen syllabic vowel. They are formed with either two vowels (e.g., եա, իա, եօ) or a vowel with a յ or ւ (այ, ոյ, իւ). Diphthongs can shift like vowels when losing the lexical stress. The diphthongs ոյ and եա shift quite regularly, they are marked with an asterisk in the chart below; other diphthongs may shift in colloquial or obsolete forms (see also Lessons 5, 8, and 13 EA).

- The diphthongs իւ [yu] and ոյ [uy] are often confused in speech. The ոյ [uy] > [ոււ] shift is regular, as in լոյս → լուսաւոր, յոյն → յունական. իւ [yu] does not change: արիւնակից *relative,* from արիւն *blood;* ձիւնամրրիկ *blizzard* from ձիւն *snow.* Exception: some old or dialect forms, e.g., ձիւն - ձին, ձուն. Similarly, ոյ does not shift in some new forms: կոյրնալ, լոյսնալ etc.

Diphthongs	Illustrations	Diphthong in Composites and Regular Shifts
այ [ay]	լայն, ձայն, մայր	լայնակի, ձայնաւոր, մայրիկ
եա* [ya]	կեանք, մատեան, սենեակ, քրիստոնեայ	կենսագիր, մատենագիր, սենեկակից, քրիստոնէական
իա[ya]	Կիլիկիա, հեքիաթ	Կիլիկիոյ, հեքիաթային
եօ[yō]	եօթը, եօկա	եօթնեակ, ընտանեօք
ոյ* [uy]	բոյր, բոյն, բոյս, զոյգ, կոյր, լոյս, յոյս	բուրաւէտ,բնաւեր, բուսնիլ, զուգակից, կուրանալ, լուսաւոր, յուսալի
իւ [yu]	արիւն, բիւր, գիւղ, հիւր	արիւնալի, բիւրաւոր, գեղջուկ, հիւրասէր

- The diphthong իւ becomes a free sound combination [iv] at the end of a word and before vowels; e.g., հազիւ *hardly,* քիւ *cornice,* քիւի *kiwi,* ճիւաղ *monster.* If [իւ] loses the lexical stress, ի drops and ւ turns into ու to maintain the sound [v], as: անիւ →անուակ *small wheel, roller,* կռիւ → կռուախնձոր *apple of discord,* հազիւ → հազուագիւտ *rare,* etc. This is a spelling adaptation and not sound change.
- The diphthongs ոյ and այ turn into [a] and [o] in final positions (See Lesson 5), save monosyllabic words, as հայ *Armenian,* բայ *verb,* վա՜յ *oops!, oh dear!,* Նոյ *Noah,* խոյ *ram, Aries.* In derivatives from words with a final silent յ, the latter drops before consonants but not before vowels: արքայ-արքաներ երեկոյ-երեկոներ, but արքայական, երեկոյեան. The in monosyllabic words is not affected in either case: հայ - հայկական, հայեցի.
Համբուրուիլ is passive in the following: Մարդկութեան պատմութեան մէջ ահազանգ մը հնչեց, երբ Յիսուս *համբուրուեցաւ* Յուդայէն: An alarm sounded in the history of mankind when Jesus *was kissed* by Judas.

Շուն ու կատու իրարու *կը վարժուի՞ն*:	*Reciprocal*: Do a dog and cat *get used* to each other?
Շունը վարժուեցաւ նոր տիրոջը:	*Reflexive:* The dog *got used* to the new owner.
Ոստիկանական շները մասնագէտներէն կը վարժուին:	*Passive:* The police dogs *are trained* by specialists.
Մասնագէտը կը վարժեցնէ շունը:	*Causative:* The specialist *trains* the dog.



Արևը ոսկի՞ է:

Colors: Text

ԱՐԻՍԻՆ ԴԱՍԸ

Արևը կ՛ուտուի՞:

- Արի՛ս, դուն արևը կը սիրե՞ս: Միշտ կը պառկիս արևուն, ուրեմն կը սիրես: Ես ալ: Կ՛ըսեն՝ դուն գոյները չես տեսներ, ատ շիտա՞կ է: Չեմ կրնար հաւատալ: Ինչու՞ պիտի չտեսնես: Հա, գիտեմ, որովհետև ոչ մէկը քեզի սորվեցուց զանոնք:

Արտակ - Հոս նայէ, Արի՛ս, արևը դեղին է:

Արիս - Արևը դեղի՞ն է:

Արտակ - Պարզ դեղին մը չէ, ոսկի է, կրակ է:

Արիս - Ճերմակ ալ կ՛ըլլայ, ցերեկը:

Արտակ - Իսկ առտու՝ կարմիր է:

Արիս - Իրիկունն ալ կարմիր է:

Արտակ - Ճիշդ է:

Արիս - Կանաչ չ՛ըլլա՞ր:

Արտակ - Չէ, տերևը կանաչ կ՛ըլլայ, ծառին տերևը:

Արիս - Իսկ երկի՞նքը, ան կանաչ կ՛ըլլա՞յ:

Արտակ - Ոչ, երկինքը կապոյտ է:

Արիս - Ծովուն պէս:

Արտակ - Բայց ջուրը թափանցիկ է, գիտե՞ս:

Արիս - Բայց կապոյտ կ՛երևի:

Արտակ - Ճիշդ երկինքին պէս:

Արիս - Իսկ եթէ ա՞մպ է:

Արտակ - Կը սևնայ:

Արիս - Երկինքը սև՞ է:

Արտակ - Այո, գիշերը:

Արիս - Հապա աստղե՞րը:

Արտակ - Աստղերը գիշերուան աչքերն են՝ ոսկեգոյն, կարմիր, կապոյտ: Քու աչուկներուդ պէս, Արի՛ս, հոգի՛ս...

- Զարթի՛ր, Արտա՛կ, հոգի՛ս, ուշ է, դասի պիտի երթաս:

- Կեցի՛ր, մա՛, Արիսը գոյները կը սորվի... Ծիածանը... ծիածանը բնաւ տեսա՞ծ ես, Արի՛ս...



Արփի, արեգակ, արև



Ծիածան և ամպ



Աստղեր և երկնակամար

Explanations to the Text and the Colors

Աչուկ	from աչք *eye*; endearing diminutive	Գոյներ	**Colors**
Ինչու՞	why	Ճերմակ	white
Ծիածան	rainbow	սպիտակ	shining white (poetic)
Աստղ	star	սև	black
Ամպ	cloud; here: cloudy	կարմիր	red
Գիշերը	here: in the night (accusative)	դեղին	yellow
Եթէ	if	կանաչ	green
Երկինք	sky	կապոյտ	blue
երկնակամար	the canopy of sky	սրճագոյն	dark brown, coffee
Պառկիլ	to lie down	լազուր	azure
Պարզ	simple, plain	երկնագոյն	sky blue
Պէս	like, as	գորշ	gray, dusky
Ուրեմն	then, consequently	ալ	scarlet
Հաւատալ	to believe	բոսոր	crimson
Ճիշդ	right; here: just	շառագոյն	vermilion, blush
Ցերեկը	in the daytime; cf. գիշերը	նարնջագոյն	orange
Կ'երևի	looks, seems	մոխրագոյն	ash gray
Կ՛ուտուի՞	Is (it) edible?	շագանակագոյն	brown, maroon
Բնաւ տեսա՞ծ ես	Have you ever seen?	վարդագոյն	pink

ASSIGNMENTS

Lexical and Grammatical Exercises

1. *Read the text and dialogues, translate them, and copy them. Improvise the dialogues with a friend.*
2. *Tell about your family using the word list to the joke:* Արեւակցութիւն.
3. *Describe a friend using the word lists for family and colors.*
4. *Form adverbs from the following words:* մանուկ, մայր, երկու, ազնիւ, դառ, դժուար, դիւրին, գաղտնի, խիստ, մեղմ, նոր, պարզ, ջերմ, քիչ, կաղալ, վազել, յանկարծ, վաղը, վեր, վրայ.
5. *Write your address and phone number in Armenian.*
6. *Write these numbers in words:* 7, 81, 55, 124, 536, 1442, 1st, 3d, 12th, 16th, 54th , 109th, 5767th.
7. *Form adjectives from the following nouns:* ադամանդ, զմրուխտ, մոխիր, մազ, երկաթ.
8. *Define the stems of adverbs by separating the adverbial suffixes from adverbs in the table on page 283. Group the stems by part of speech and translate them according to the sample:* գաղտնաբար *secretly* - գաղտնի *secret, covert* (adjective). Use Glossary 11, if necessary.
9. *Find the passive verbs in the poem* Քու յիշատակդ.
10. *Make sentences using imperative verbs according to the sample and translate the sentences.*
    Խաչմերուկէն աջ երթալ
    Խաչմերուկէն աջ գնա՛: Go right from the intersection.

1.	Անկիւնէն	ձախ	երթալ
2.	Անտառէն	ետ	դառնալ
3.	Ճատրակը	առաջ	բերել
4.	Պատկերը	շիտակ	դնել
5.	ժամացոյցդ	ետ	առնել
6.	Օդանաւս	ետ	տալ
7.	Խխունջը	վար	դնել
8.	Նուռը	վեր	տանիլ
9.	Խնձորը	վարէն	վերցնել
10.	Պատուհանէն	դուրս	նայիլ
11.	Ծիածանը	անկէ	տեսնել
12.	Մանչը	ներս	կանչել

11. Use the italicized postpositions with objects in the appropriate substantive forms to include objects according to the sample and translate the sentences:
Վերի գաւաթներուն չեմ հասնիր, վարի գաւաթներէն (=վարիններէն) բերե՞մ:

1. Վրայի հացը չորցած է, տակի հացը ուտենք:
2. Ոսկեայ գաւաթին մէջի գինին տաքցած է, եկուր կաւի մէջի գինին խմենք:
3. Վարի դրացիս չեմ ճանչնար, բայց վերի դրացիներէս շատ կ'ախորժիմ, լաւ են:
4. Առջևի տունը չէ, ետևի տունն է մերը:

12. Write questions for the italicized words and translate the sentences according to the sample:

Շունս կը փնտռեմ: Ի՞նչ կը փնտռես:

1. Ամբողջ գիշերը չկայ, կորսուեր է:
2. Դուռը գոցուեր է, օգնէ բանամ:
3. Ամէն մարդ կ'ուզէ սիրուած ըլլալ:
4. Վաղը՝ ճիշդ այս ժամուն, ամէն բան լմնցած կ'ըլլայ:
5. Սուրճս լմնցուցի, հիմա դասս կը սորվիմ:

6. Անին Տիգրանը պառկեցուց քնացալու:
7. Գեղեցիկ հագուիլը դրամի խնդիր չէ:
8. Գեղեցիկ հագուիլը լոկ ճաշակի խնդիր ալ չէ:
9. Արիս, դու՛րս եկու՛ր սեղանին տակէն:
10. Չէ, ճանս, չէ, սեղանին վրայէն մի՛ քալեր, կարելի չէ:

13. Write the passive, causative and repetitive forms of the following verbs according to the sample and make sentences with them: գրել, խօսիլ, կլլել, յիշել, պատռել, վազել, փետրել, փշրել.

Active	Passive	Causative	Repetitive
կտրել	կտրուիլ	կտրել տալ	կտրատել

14. Define the formation of the following reciprocal verbs and deduce their simple forms. Make sentences using both forms: գգուըռտիլ, խօսակցիլ, ծեծկըռուիլ, կիսուիլ, կռուըռտիլ, վարժուիլ.

15. Write the following sentences in the passive voice and translate them.

1. Կը սիրեմ շունս և տունս:
2. Սաստիկ աղմուկ մը կը լսեմ:
3. Մոռցեր են հին ու յայտնի երգերը:
4. Առաջին անգամ տուն առնողներուն զեղչեր կու տան:
5. Արտակը աղուոր պատմութիւններ կը գրէ:
6. Այս գիշեր հին սէրս յիշեցի, կարօտը կոկորդս սեղմեց:

16. Write the following sentences in the active voice and translate them.

1. Այս գիրքը արդէն կարդացուած է:
2. Լեզուով կը խօսուի:
3. Ականջով կը լսուի:
4. Լուրն ալ կը լսուի:
5. Պատմութիւն մը կը պատմուի:
6. Երգերն ալ կ՛երգուին:
7. Պատկեր մը կը ցուցադրուի:

17. Translate the sentences paying attention to the verbs: active, passive, reflexive, reciprocal, repetitive.

1. Շուն և կատու իրարու կը վարժուի՞ն եղեր: Հարկաւ, եթէ տէրը վարժեցնէ:
2. Անին և Արան այնքան վարժուած են իրարու՝ որ առանց խօսքի իրարու կը հասկնան:
3. Կեա՞նքը հաշտեցուց զանոնք թէ՞ մահը:
4. Ով ինչ գէշութիւն ընէ, ինքիրեն վերջ ի վերջոյ կ՛ընէ:
5. Արիսը օրը քանի մը անգամ կը լուացուի:
6. Բոցերը երկվայրկեանի մը մէջ լափլփեցին պատռտած փաստաթուղթերը:
7. Յասմիկը սրտանց փարած է Հայաստան աշխատելու գաղափարին:
8. Քարէնն ու մայրը համակերպեցան իրարմէ զատ և հեռու ապրելուն:
9. Կ՛ըսեն թէ մեռած սիրահարներուն աստղերը կը գտնեն մէկ մէկու և կը համբուրուին երկնակամարին մէջ:
10. Ժամանակդ լաւ անցընես, թէ գէշ, կեանքդ կ՛անցնի, կ՛երթայ:
11. Բարակ թելը դիւրին կը կտրուի:
12. Անին մազերը կտրել տուած է: Տիգրան թուղթէ ծաղիկ կը կտրտէ:
13. Երկար թղթակցելէ վերջ բարեկամները սկսան գործակցիլ:
14. Երբ որ ծառեր հագնին տերև...

15. Յասմիկ և Արամ երբէք հիասթափեցան իրարմէ:
16. Ես բաժնուեցայ ընտանիքէս, փարեցայ նոր գաղափարի մը, ապա հիասթափեցայ ատկէ և վարժուեցայ և համակերպեցայ նեղութեանց:

18. Put the verbs in parentheses into the appropriate form and translate the sentences, paying special attention to the passive forms and adverbs.

1. Ծովուն ալիքը (սիրել) ժայռը և ժայռը (սիրուիլ) անորմէ:
2. Ալիքը իր փրփուրներով ուժգին (փարիլ) ժայռին և քնքշօրէն (գուրգուրալ) անոր վրայ:
3. Անոնք (համբուրուիլ) և ալիքը մեղմիւ ետ (սահիլ):
4. ժայռը տրտմօրէն (խնդրել) անոր ետ իր գիրկը գալ՝ ինք երթալ (չկարենալ):
5. Ինչու՞ միշտ ես (գալ), - օր մը (զայրանալ) ալիքը, - դուն (գալ):
6. Եւ կարօտագին (տապալուիլ) ժայռը հիմնիվայր և գլխովին (իյնալ) ալիքին գիրկը:
7. (փշրտիլ) ժայռը փշուր-փշուր և վերջին շունչի հետ (ողջագուրուիլ) ալիքին հետ՝ ծովին հատակը (սուզուիլ) սիրաբար:
8. Ալիքը, խենդ ալիքը, զինք (խաբուիլ) (սեպէ) և փութանակի (սուրալ) նոր ժայռի մը քով:

19. Match the colors with the objects:

1	ճերմակ	ադամանդ	9	երկնագոյն	սուրճ
2	սպիտակ	երկնակամար	10	կարմիր	ծառ
3	սև	ոսկի	11	բոսոր	հաղարջ
4	գորշ	աչքեր	12	շառագոյն	հող
5	մոխրագոյն	արև	13	նարնջագոյն	ձիւն
6	կանաչ	արջ	14	դեղին	մոխիր
7	լազուր	այտեր	15	սրճագոյն	ակնոց
8	կապոյտ	մազեր	16	վարդագոյն	նարինջ

20. Chose one of the verb forms and explain your choice. Trnaslate the text:



Դահլիճին մէջ բոլոր տեղերը --(զբաղած, զբաղուած) են: Բանուորը շուտով -- լոյսերը: Վերջապէս լոյսերը --(կը մարէ, մարեցաւ մարուեցաւ): Շարժանկարը --(սկսաւ սկսուեցաւ): Հերոսը շատ մը փորձանքներէ --: Եւ ապա -- իր հերոսուհին (ազատեցաւ, ազատուեցաւ, ազատեց): Շարժանկարը -- (աւարտեցաւ, աւարտուեցաւ): Իրարու -- զոյգերը դէպի ելքը (փարած, փարուած, ուղղեցին, ուղղուեցան):

21. Fill in with the postpositions վրայ, վար, տակ, հետ, ներս, դուրս, քով, դէմ, առջև, *putting them into the appropriate declined form. Translate the sentences.*

1. over — Տիգրան իր արջուկը կը գլտորէր սեղանին ..:
2. down — Արծաթին սէրը ... կը քաշէ մարդս:
3. out — Անձրևի ժամանակ Արիս տունէն ... չ՛ելլեր:
4. below, over — Գետը կամուրջին ... կ՛անցնի, մարդիկ՝ ...:
5. in front of me, with me — Երբ գողը ... ելաւ, դրամապանակս ... չունէի:
6. with you — ... խխունջ մը բե՛ր ծովերէ:
7. the one in front of, the one behind — Այս նկարին մէջ ... հայրս է, ...՝ հօրեղբայրս:
8. from under — Խօսքերուդ ... աղուոր գաղափար մը կ՛ելլէ:
9. from before — Պատկերդ աչքերուս ... չ՛երթար:
10. to those who are inside, to those who are outside — ... պաղ ջուր հրամցու՛ր, ...՝ տաք սուրճ:
11. all over, (from up and down) — Աճապարենք, հոս ... մաքրենք, հիւր պիտի գայ:
12. in front — Կը ճանչնա՞ս ... ով է՝ Պերճուհիին զարմիկն է:

22. Translate the following into English:

1. Այս պատմութիւնը վաղուց ի վեր գրուած է:
2. Հին ժամանակները իշխանները գրիչներուն գրել կու տային իրենց տուներուն պատմութիւնները:
3. Սաստիկ հովը կը քաշքշէր Յասմիկին ճերմակ վերարկուն և անոր մազերը երեսն ի վեր կը թափթփէր:
4. Քարէ գլուխ չունիս եղեր, որ քարի զարնես, ամէն քարի հետ գլուխ մի՛ դներ:
5. Լերան անուշ օդը ոսկիի երանգներով ցոլաց:
6. Կատուները իրենք զիրենք կը լուան ու լոգցնեն:
7. Ինքզինքէդ գո՞հ ես ըրածիդ համար:
8. Արամ և Անին կը սիրեն իրարու:
9. Ձեր ինքնաշարժերը մերիններուն ետևէն կու գան:
10. Խմիներս լաւ են, ձերիններէն ի՞նչ լուր:
11. Ծերերը կը խնամեն մէկզմէկ և կը գուրգուրան մէկմէկուն վրան:
12. Շատ շնորհակալ անձ մըն է ծերուհին զոր կը խնամեմ:

23. Translate the following into Armenian.

a. Today is Sunday, May 1, 1999. It is a quarter past one a.m. Dikran was born on August 4, 1997. Aram and Hasmig first met on April 2, 1998, at 4 p.m.

b. Aris is returning home from his night walk. He never loses his way home. He manages to come back safely from his long trips. "I won't take my coat in for dry cleaning; I can clean it by myself," he says. Ardag loves to draw faces. I think one day Ardag will become an artist. He does not get tired of reading, but he has no love for writing. When Aram is about to bring a good book, Ardag considers himself very happy. He also creates nice stories. "But whom can I make write them down?" he thinks. One day he was about to write his story when his mother woke him up. "I have lost my writing," he says; "Aris, let's look for it." I think Ardag needs a recorder.

c. Hasmig is going to tolerate many hardships. Hasmig and her mother gently hugged each other before parting. After work Ara will see his friend. Long ago people lived without cars. Come, I want to speak with you. You still have my book; can you bring it back? Above us is the canopy of the skies; beneath us is the sea. The world got well washed by the rain. Every morning I wash myself before dressing myself. At night I wash myself again after undressing myself.

d. This world is a window. The pair of aspen trees in love kiss each other in the stars. When I was on my way to kiss the violets of her eyes—

24. Translate the following joke; pay attention to the play on words.

- Աս ի՞նչ է:
- Սև հաղարջ:
- Հապա ինչու՞ կարմիր է:
- Որովհետև դեռ կանաչ է:



Ժողովուրդը կ'ըսէ.

Պտուղը ծառէն հեռու չ'իյնար:[18]
Լաւ է՝ մարդուս աչքը դուրս գայ, քան թէ անունը:[19]
Յօնքը շինելու տեղ աչքը հանեցին:[20]

---

18 The fruit does not fall far from the tree. [A child resembles his/her parents].
19 Better is if the eye pops out, than the name is ruined.
20 Instead of mending the eyebrow, they plucked out the eye. [Help may hurt].

EASTERN ARMENIAN PARALLEL FOR LESSON 14

Everyday Vocabulary: The major difference between EA and WA everyday vocabulary is in functional words—pronouns, prepositions, conjunctions and interjections—not only in their direct and oblique forms but also in usage. Everyday content words—the core content vocabulary of Armenian language of nouns, verbs, adjectives, adverbs, numerals—is practically shared between WA and EA, although subtle differences are found on every linguistic level: phonetic and grammatical, semantic, and pragmatic. In the **Family and Kinship Terms** below the focus is on differences in this domain; the kaleidoscope of colloquial terms is disregarded.

որդի, դուստր	Both in EA and WA belong to the high standard styles.
մանչ WA	In EA used only as diminutive-endearing մանչուկ *little boy* in literary styles.
զավակ	More frequent in WA; in EA it is limited to poetic and formal styles.
տղա, աղջիկ	Common terms both for *boy/girl* and for *son/daughter* in both versions.
էրիկ, կնիկ WA	*Husband, wife* frequent in classical WA literature, the modern standard is the same as in EA: կին, ամուսին
պապ, տատ EA մեծ հայր/մայր WA	Main terms for *grandfather* and *grandmother* respectively.
մորաք, հորաք WA	Not used in EA at all, the common abbreviations are մորքուր, հորքուր.
զարմիկ, զարմուհի	Not frequent in EA; descriptives as մորաքրոջ աղջիկ, մորքուրի տղա are common references for these relations
քեռորդի, եղբորորդի	Used in literary styles in both versions

Body Parts: In this domain there are only two words with salient differences; WA ակռայ *tooth* is ատամ in EA. A plural form ակռեք in EA occurs as a derogatory colloquialism; ատամնաբոյժ is *dentist* in both versions.[1] Also, the WA կզակ for *chin* is high standard in EA; the common word is դունչ used for humans and animals. In WA, the latter is designated for animals.

Dialogue: Joke Երկխոսություն-Կատակ **Արյունակցություն**

Մեծ մորաքույրներ	- Դու ու՞մ տղան ես, բալե՛ս:
Հրաչիկhyjuyy	- Վարդանի:
Մեծ մորաքույր Աստղիկ	- Մայրդ Անու՞շն է:
Հրաչիկ	- Ըհը:
Մեծ մորաքույր Լուսիկ	- Ինչու՞ ես հարցնում, չե՞ս տեսնում, Անուշի աչքերն ունի:
Մեծ մորաքույր Աստղիկ	- Ճիշտ է, հոնքերն էլ տատիկինն են:
Մեծ մորաքույր Լուսիկ	- Բա մի քերանին նայի՛ր, այդ շրթունքն ու ատամները մյուս տատինը չե՞ն:
Մեծ մորաքույր Աստղիկ	- Ճի՛շտ ես ասում: Քիթն էլ պապինն է:
Մեծ մորաքույր Լուսիկ	- Ականջները իսկը հորն են:
Մեծ մորաքույր Աստղիկ	- Դիմագծերը կարծեմ քեռունն են:
Մեծ մորաքույր Լուսիկ	- Այդ է, որ կա: Մազերն էլ հորաքրոջն են:
Հրաչիկ	- Տաքատս էլ մեծ եղբորս է:

[1] The ակռայ - ատամ difference is the background of a fun story I heard from my students. A WA dentist asks his EA assistant to bring a denture, gesturing toward a room and calling it just *the tooth*—քե՛ր ակռան. The assistant goes on looking for the *raven* and cannot find it, he comes back declaring—ագռավ չկա. The misunderstanding arises from the similarity in pronunciation [agra] – [agrav] and because the word ակռայ is not represented in EA; note that native speakers of any language tend to omit or blur the final sounds of words. With more exposure to the other version, native speakers of Armenian begin to internalize the consonant shift and hear and identify phonemes according to the pronunciation in their native version, especially within shared words.

Reading from the Original **Հովհաննես Թումանյան**[2]

Աստծու բանտն են տաճարները—աշխարհքներում բովանդակ.
Իբր էնտեղ է ապրում Տերը, պաշտողների փակի տակ:
Հարկաւ ազատ Նա ժպտում է ամենուրեք ամենքին,
Բայց դու նայիր խեղճ ու կրակ մարդու գործին ու խելքին:
***
Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար տարում հազիվ դառավ Մարդասպան,
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:
***
Քուն թե արթուն՝ կյանքիս շատը երազ եղավ, անց կացավ,
Երազն էլ նուրբ ու խուսափուկ՝ վոազ եղավ, անց կացավ
Վոազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին...
Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անց կացավ:
***
Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի,
Խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի.
Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին...
Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին:
***
Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում սպասում են իմ հոգուն.
Ի՜նչ եմ չինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՜խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտեղ, դեպի տուն...
***
Բարձր է հնուց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նրա հետ...
Անհաս բանից, սկզբանից, երբ չկան էլ դեռ չկար,
Մինչև վախճանն անվախճանի քննում է դարեդար:
***

Numerals exhibit the following differences:

- ◊ Standard EA has dropped the final [ը] from յոթ *seven* and տաս *ten*; in WA they maintain the schwa preceding the final ն in Grabar—եօթն, տասն. In conversational styles, numbers *four* to *ten* may take this schwa which by modern speakers is perceived as the definite article.
- ◊ The nominal form for *two* is երկուս from Grabar accusative in plural; e.g.—Երկուսով գնացինք: *We both [the two of us] went.*
- ◊ For dates, as in WA, cardinal numbers are used but the *month* name is in genitive: Այսօր *հունիսի* երեքն է: Today is the third *of June.*
- ◊ In the formation of ordinals, a systematic difference involves compound numerals ending in 2^{nd}, 3^{rd}, and 4^{th}. EA derives them from the respective cardinal with the common suffix -երորդ; that is, 12^{th} is տասներկուերորդ versus WA տասներկրորդ, 23^{th} քսաներեքերորդ vs. WA քսաներրորդ, and so on: 14^{th} տասնչորսերորդ, 102^{nd} հարյուրերկուերորդ, 1003^{rd} հազարերեքերորդ, etc.

[2] Hovanes Toumanian has been called the *passport* of the Armenian nation. Author of groundbreaking poetry and prose, Toumanian is also an eminent public and literary figure in a turbulent era of drastic changes for Armenia, end of 19^{th}-beginning of 20^{th} cc.

Word Building: The Suffixes -եայ, -է, ի, -եղէն: Among these suffixes, **եայ**—RO **յա**—is more productive in WA, and -է—RO -**ե**—in EA. The latter represents a frozen ablative; that is, փայտե and ոսկե, etc. are generic adjectives versus the ablatives փայտից, ոսկուց with a limiting meaning.

Adverbs. The same adverbial suffixes are productive in EA: -որեն, -բար, -պես, -ովին, -գին, -ակի. In both versions, the last three produce words primarily in literary styles. Among the first three, -բար is more frequent in EA, and -որեն, in WA. -բար derives from the noun root *moral, mores.*[3] -Օրէն, in RO spelled unrecognizably -որեն, derives from the root *custom, law,*[4] e.g., հայրորեն, մեղմորեն խրատել.

Adverb derivation with the indefinite article մի is quite limited, versus its productivity in WA but in both versions they pertain to conversational styles; cf., Մի լավ տվին իրար ու էլ երբեք չխոսեցին:[5] *They had a run in and never talked again.* Մի քեթև խոսեցինք բայց տեղ չհասանք: *We talked a little but got nowhere.*

Among the simple, frequent adverbs in common use, a major difference is found between two temporal adverbs: *early* in EA is վաղ versus WA կանուխ. Շուտ is an EA conversational synonym for վաղ. Շուտ also means *quick(ly)* and is used in WA only in this latter sense. Note that adverbs derived from շուտ maintain this semantic dichotomy: շուտափույթ *promptly*, is characteristic to literary, formal standard in both versions; շուտով *soon* in EA, in WA means *at once, quickly.* Also շուտ-շուտ *often*, a conversational reduplicative in EA is foreign to WA.

The comparison of WA նորեն with EA նորից *again* reveals that its ablative form is not completely frozen, cf. English *anew.* Աղեկ *well* which is typical of Պոլսահայերեն—the Constantinople WA standard, is not used in EA at all. Շիտակ, a multifunctional modifier in WA, is foreign to standard EA but occurs in colloquial speech.

Grammatical terminology is a key difference: EA մակբայ is coined from Greek *epirrhēma* (Latin *ad-verbium*), lit: մակ- *over, ad, sur* + բայ *verb.* [6] WA uses two terms: մակբայ and ընդունելություն.

GRAMMAR

Declension of Postpositions: A consistent difference is observed in the common use of spatial postpositions in instrumental, e.g., Արիսը սեղանի *վրայո՞վ* է քայլում, թէ՞ *տակով*: *Is Aris walking on the table or under it?* In WA, the same postpositions with same meanings require ablative, that is, Արիս սեղանին *վրայե՞ն* կքալե թէ՞ *տակեն*: WA քով *at,* and ետք *after,* are not used in standard EA.

Postpositions with articles substitute for possessive pronouns, as in WA. Cf. some of the above examples rendered in EA—the translation does not change: *Հետդ* առանձին խոսել եմ ուզում: Լեառն Արարատ *դեմս* (=իմ դեմ) հառնեց մշուշներից:

Substantive pronouns in plural contain the only remnant of the double plural with -ին in EA; cf. *Հետ<u>ը</u>նս* եկան: WA—*Հետ<u>ե</u>րնիս* եկան: They came *with us.* *Մեջ<u>ը</u>նդ* նոր մարդ է հայտնվել: WA—*Մեջ<u>ե</u>րնիդ* նոր մարդ մը հայտնված է: A new person has appeared *among them.*

Three Functions of the Article -*u* are observed in EA too. Cf.:

- Possessive article: Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի... Toumanian.
- Demonstrative article: Մինչև օրս Պարոնյան փողոցն եմ փնտրում: (Lesson 12)
- Appositive: Մենք բոլորս, որ գնում ենք տրտում, մենակ... *Charents.* Մենք՝ ներքոստորագրյալներս, մամլո ազատություն ենք պահանջում:
- Formal value in fixed phrases, e.g.: Մարդս մարդով է մարդ:

---

[3] Cf.: բարի, բարեւ, բարք, բարոյական, etc. This root gave rise also to an adjective-building suffix, with a frozen genitive ending e.g.: հայրաբարոյ father-like, մեղմաբարոյ gentle-natured, etc., which belong to the high standard vocabulary in both versions.

[4] If we go back into ancient history, we can see that laws appeared as legalized customs.

[5] իրար տալ is idiomatic: refers both to verbal and physical confrontation.

[6] Cf. the prefix մակ- in մակերես *surface,* մակդիր *epithet,* մակնիշ *brand,* մակարդ *culture (yogurt),* etc.

The Passive Voice of Verbs is formed and functions identically to indicate a subject bearing action produced by an indirect object. Verbs in conjugation ե derive passives from the present stem, and ա verbs, as well as the irregulars, use the past stem as in WA; see the chart below. The infix is spelled վ in RO. In EA, it does not affect the conjugation type; that is սիրել-սիրվել versus WA—սիրել-սիրվիլ.

Verb Type	Active Infinitive	Passive Infinitive	Simple Present	Simple Past
From the Present Stem				
ե verbs	կցել *to attach*	կցվել *to be attached*	կցվում է	կցվեց
Causatives	մոտեցնել	մոտեցվել	մոտեցվում է	մոտեցվեց
From the Past Stem				
ա verbs	իմաճալ	իմացվել	իմացվում է	իմացվեց
Irregulars	աճել	արվել	արվում է	արվեց

With the elimination of the conjugation ի, all traces of Grabar passive voice formation are practically gone—cf.: ազատել-ազատվել, այրել-այրվել, փարել-փարվել, etc. A vague exception is the past participle I which remains in the category of *simple verbs* especially as a substantive—noun or adjective, e.g.: աղացած սուրճ *ground coffee,* but Սուրճն աղացվեց: *The coffee got ground.* Հացը *դրած*, գործն *աճիծած*: (proverb). Cf.: also Գիշերվա կերածը կորած է: *What is eaten at night is lost* (proverb). Դուն կրակ, *հագածդ* կրակ, վուր մե կրակին դիմաճամ: Sayat-Nova. Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու, երկու ճամփորդ *պատառոտած* շորերով: Charents. I don't know about Sayat-Nova's time, but now a formal passive in such instances is applied in "*extra-proper*" speech, that is—*աղացված* սուրճ, *պատառոտված* շորեր. Note that the verb կորչել *to be lost* has no passive in EA as it lacks a simple transitive form in WA: կորսվիլ.

Usage of the Passive Voice does not exhibit significant differences in EA and WA, cf. examples from the WA lesson: Ադամանդները գողացվեցին և գողը երբեք չբռնվեց: Տերը *խաչվեց* հանուն մարդկանց:

The passive voice is less common in Armenian, both EA and WA, than in English.[7] For example, in Charents's poem quoted above, *The Travelers of Milky Way,* there are only seven instances of passive voice among sixty verbs.[8] This frequency reflects also the use of transitive verbs which produce passive voice:

Ու օրերում բազմագույն ու բազմազան *վառվեց, վառվեց ողջակիզվող* սիրտը մեր...
Ու *բզկտվեց* հայացքներից անկենդան որբ սիրտը մեր երազորեն—հոգևար...
Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն կապուտաչյա երջանկության առասպել
Ու փնտրում ենք անկարելի մի խնդություն, բայց չենք գտնում՝ վազքով *տարված ու զբաղված*...

Note that the indirect object—logical subject is present twice: բզկտվեց *հայացքներից* was mauled *from gazes* and *վազքով* տարված ու զբաղված... driven and preoccupied *with rushing.*

Repetitive Verbs (բազմապատկական բայեր lit.: multiplying verbs) exhibit individual formal differences expressed in the frequency and combination of infixes: -ռ-,-ատ-, -կոտ-, -ոտ-. The infixes containing ր and ո are not as widespread in standard EA, as in WA. The use of repetitive verbs is illustrated in the text that follows. Note that reduplication in Armenian creates also nouns— վազվզոց, adjectives—կաս-կարմիր, ճեփ-ճերմակ, adverbs—մեծ-մեծ(խոսել), օրեցօր (աճել). etc.

WA Repetitive Verbs	EA Repetitive Verbs	Source Verb Translation
թռչտիլ	թռչկոտել	to fly
խածկտել	խածատել, կծոտել	to bit
խառնշտկել	խառնշ(տր)ել	to mix
կոտրտել	կոտրատել	to break
քաշկռտել	քաշքշել	to drag

[7] Several decades ago formal English was overloaded with passive constructions. Current handbooks on writing instruct one to avoid it. In general, the active voice is more characteristic of human thinking.

[8] One of them is a reflexive verb in the idiom: Սիրտս *լցվեց—I felt like crying*, lit.: *my heart was filled.*

Text: **ՏԻԳՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ**

Առաջին անգամն է, որ Անին ցերեկային խնամքի կենտրոն է բերել Տիգրանին: Նվարդ մայրիկն էր միշտ օգնողը, բայց հիմա նա արձակուրդ է վերցրել, լեռները գնացել:

Ահա և այստեղ են Անին ու Տիգրանը:

Անին մտահոգ դիտում է ընդարձակ խաղասենյակը: Չորս-հինգ մանուկ վազվզում են ու թռչկոտում, թաքնվում ու գոռգոռում, երբեմն էլ ինչ-որ բաներ են կոտրտում ու թափթփում: Մի միրգ են կծոտում ու մոռանում, մի գիրք են կարդում ու պատառոտում, որ կարդացածը մտապահելու եղանակ են համարում հավանաբար: Չվարճանում են:

Պարզ դիտողի դերից հոգնելով՝ Տիգրանը թողնում է մոր ձեռքը և թաթիկները հավասարակշռության համար առաջ պարզած թփթփալով գնում դեպի ընկերակիցները՝ գլորվելով փափուկ և իրենից խոշոր մի արջուկի վրա: Եվ փորնիվայր պառկած դիրքից մորն է նայում՝ իր արկածից գոհ կչկչալով:

- Դուրդ գալի՞ս է այստեղ, բալի՛կս, - ասում է Անին՝ իր անվստահությունը կոծկելով: - Քեզ այստեղ եմ թողնելու՝ երեք ժամ միայն, - բացատրում է՝ Տիգրանի փամփլիկ մատների վրա հաշիվ անելով: - Դու խաղա՛, ջանիկս, ես շուտով կգամ:

Անին դեռ մի քիչ էլ է զրուցում մանկավարժուհու հետ, և ապա, աչքը ետ, բայց սիրտը հանգիստ, դուրս է սահում՝ իր գործերին շտապելով:

Reflexive and Reciprocal verbs share the same common features.

Reflexive verbs return the subject's action onto itself, cf.: Մեղմ անձրև *սկսվեց*, ապա վարարեց, *թափվեց*: A gentle drizzle *began*; then it gashed, and *poured*. Ամեն առավոտ ե՛լ, *լվացվի՛ր, հագնվի՛ր, սանրվի՛ր*, վերջում նորից *հանվի՛ր, մաշվի՛ր*՝ ինչ տաղտուկ: Every morning get up, *wash, dress, comb yourself*, at the end again *take off, wear down*—how boring.

Reciprocal verbs require at least two subjects to perform a mutual action. Cf.: Արան և Անին *համբուրվեցին* խորանին առջև: *Ara and Ani* kissed each other *in front of the altar.*
Հակառակորդները երկար *բանակցեցին,* հաշտվեցին և ի վերջո գործակցեցին: The opponents negotiated for a long time, reconciled and at length cooperated.

The same verb may be passive, reflexive or reciprocal in different contexts and it may require different verbs in translation, cf.: the verb տնկվել *to be planted* (active voice տնկել *to plant*) in the following:

Passive: Զույգ բարդիները Արարատի դեմ-հանդիման նախորդ դարում են *տնկվել*՝ ով գիտե ում կողմից: The pair of aspen trees *were planted* in front of mount Ararat in the last century who knows by whom.

Reflexive: Պարտականության ու սիրո միջև այդ ես եմ տնկված՝ ուղեփակոցի գերանի նման...(Պարույր Սևակ) It is me planted (fixed, lodged) between responsibility and love like the arm of the crossing gate.

Reciprocal: Երկու այծ տնկվել-քարացել են լերկ քարափի հանդիպակաց եզրերին: Two goats *have planted themselves* and frozen across the edges of the bare crevice.

Text: Colors. Գույները **ԱՐԻՍԻ ԴԱՍԸ**

- Արի՛ս, դու արևը սիրու՞մ ես: Միշտ պառկում ես արևին, ուրեմն սիրում ես: Ես էլ: Ասում են՝ դու գույները չես տեսնում, ճի՞շտ է: Չի կարող պատահել, չեմ հավատում: Ինչու՞ չպիտի տեսնես: Հա, գիտեմ, որովհետև քեզ ոչ ոք չի սովորեցրել:

Արտակ - Նայի՛ր, Արի՛ս, արևը դեղին է:
Արիս - Արևը դեղի՞ն է:
Արտակ - Պարզ դեղին չէ, ոսկի է, կրակ է:

Արիս - Սպիտակ էլ է լինում, ցերեկը:
Արտակ - Իսկ առավոտյան՝ կարմիր է:
Արիս - Իրիկունն էլ կարմիր է:
Արտակ - Ճիշտ է:
Արիս - Կանաչ չի լինու՞մ:
Արտակ - Չէ, տերևն է կանաչ լինում, ծառի տերևը:
Արիս - Իսկ երկի՞նքը: Երկինքը կարո՞ղ է կանաչ լինել:
Արտակ - Երբեմն՝ մայրամուտին: Սովորաբար, երկինքը կապույտ է:
Արիս - Ծովի պես:
Արտակ - Իսկ ջուրը թափանցիկ է, գիտե՞ս:
Արիս - Բայց կապույտ է թվում:
Արտակ - Ճիշտ երկնքի պես:
Արիս - Իսկ եթե ա՞մպ է:
Արտակ - Սևանում է:
Արիս - Երկինքը սև՞ է:
Արտակ - Այո, գիշերը:
Արիս - Հապա աստղե՞րը:
Արտակ - Աստղերը գիշերվա աչքերն են՝ ոսկեգույն, կարմիր, կապույտ: Քո աչուկների պես, Արի՛ս, ջա՛նս...

- Ջարթնի՛ր, Արտա՛կ, ջա՛նս, ուշ է, դասի ես գնալու:
- Սպասի՛ր, մա՛, Արիսը գույներն է սովորում... Ծիածանը...ծիածանը տեսած կա՞ս, Արի՛ս...

VOCABULARY DIFFERENCES

EA	TRANSLATION	WA	TRANSLATION
(վատություն)		գէշութիւն	badness
արկած	adventure		accident, misfortune; also: adventure
արկածախնդրություն	adventure, exploit	արկածախնդրութիւն	adventure
վթար	accident	-	damage, ruin, wreck
(վայրկյան)		(երկվայրկեան)	second, moment
(ծիածան)		ծիրանի գոտի	rainbow
ներքոստորագրեալներ		ստորագրեալներ	undersigned
կինոնկար		շարժանկար	movie
շտապել		աճապարել	to hurry, hasten
(կուլ տալ) կլանել		կլլել	to swallow
(դանդաղ)		կամաց	*slowly*
(փափուկ)		կակուղ	soft, tender
մեկ մեկի, մեկ մեկու		մեկ մեկու, մէկզմէկ	Each other
ինքն իրեն		*ինքիրեն*	to him/herself
կծոտել		խածկտել	take bites
թմբլիկ, փամփլիկ		թոմպուլիկ	pudgy, plump
պահ մտնել		պահուրտիլ	to hide
գոռգոռալ		պոռպոռալ	yell, scream
(սպիտակ)		(ճերմակ)	white: *main color term.*[9]
շագանակագույն	brown, main color name. lit.: chestnut colored.	(սրճագոյն)	brown, main color name. lit.: coffee colored.
երկնագույն	sky-blue[10]	(բաց-կապոյտ)	light-blue

[9] Each version uses the other word for *white* for stylistic, mostly poetic, purposes. Details in EA Lesson 6.
[10] Wide spread in EA due to Russian interference, cf.: *goluboy.*

LESSON 15

GRAMMAR

Declension Types
Transfers between Parts of Speech
Sequence of Noun Endings
Verb: the Expression of Grammatical Meanings
Impersonal Verbs
Conjunctions
Pronoun որ and the Conjunction որ
Conjunctions որ, թէ, կամ, եթէ

VOCABULARY

Ethnonyms
Idioms
Reading from the Original: Լոգանքէն վերջ by Taniel Varuzhan
Text-Dialogue: Պարահանդէս
Text Epilogue: Ճանապարհ Դէպի Տուն

VOCABULARY



Ethnonyms

The name of a people by national or ethnic affiliation is an ethnonym—e.g., հայ *Armenian*, հնդիկ *Indian*, ամերիկացի *American* (person).[1] Some of the oldest ethnonyms are simple words, mainly the names of historical neighbors of Armenians. All other ethnonyms are composed from the country names with the suffixes -գի, -եցի, -ացի. They are not capitalized in Armenian.

Simple Ethnonyms		Complex Ethnonyms	
հայ	Armenian	ամերիկացի	American
արաբ	Arab	իտալացի	Italian
հնդիկ	Indian	գերմանացի	German
յոյն	Greek	անգլիացի	English
թուրք	Turk	ֆրանսացի	French
պարսիկ	Persian	պելճիքացի	Belgian
չեխ	Czech	մեքսիքացի	Mexican
լեհ	Pole, Polish	նեփալցի	Nepalian
ռուս	Russian	եթովպացի	Ethiopian
ֆինն(լանդացի)	Finn	պրազիլացի	Brazilian

The suffixes -գի, -եցի, -ացի can be attached to practically any geographical name to show origin which is not necessarily nationality or ethnicity; for instance, լեռնցի *a person from (or born in) a mountainous region,* գիւղացի *villager, peasant,* քաղաքացի *urban dweller* or *citizen.* For citizenship and ethnicity names complex ethnonyms are used, similar to hyphenated ethnonyms in English which indicate both the origin and the host country or city; e.g., յունահայ Greek Armenian, ամերիկահայ American-Armenian, պէյրութահայ Armenian from Beirut, etc. The same suffixes indicate what city one is from or

[1] Remember that Armenian has ethnonyms—հայ, language names—հայերէն, and general adjectives—հայկական which often correspond to one word in English words—*Armenian,* details see in Lesson 7.

where one comes from; e.g.: լոնտոնցի, սան-ֆրանսիսքոցի, պէյրութցի, երեւանցի, մշեցի, գիւմրեցի. Though derived from proper names, they are not capitalized either.

The question for ethnonyms is ի՞նչ.

Դուն ի՞նչ ես:	*What are you?*
Ամերիկացի եմ:	*I am American.*
Հայ եմ:	*I am Armenian.*

The question ուրկէ՞ assumes two types of replies:

Ուրկէ՞ ես:		*Where are you from?*
Պոսթոնցի եմ	or	Ամերիկայէն եկած եմ:
I am from Boston.	or	*I have come from America.*
Երեւանցի եմ	or	Հայաստանէն եկած եմ:
I am from Yerevan.	or	*I have come from Armenia.*

Suffixed forms, like ամերիկա*ցի* (եմ) indicate permanent features, and the oblique forms, like Ամերիկա*յէն* (եկած) եմ, temporary features. Cf.:

Ծնողքս Եւրոպայէն գաղթած են, բայց ես ամերիկացի եմ:	My parents emigrated from Europe but I am American.
Ծագումով հայ եմ, քաղաքացիութեամբ՝ ամերիկացի:	I am Arab by origin; by citizenship, American.
Ես լոնտոնցի եմ, բայց հիմակուհիմա պոսթոնցի դարձած եմ՝ հոն կ'ապրիմ:	I am a Londoner, but now I have become a Bostonian; I live there.
Ռուս եմ, բայց այժմ Ֆրանսայէն կու գամ:	I am Russian, but now I come from France.
Ֆրանսահայոց գաղութը կը նուազի և ընդհակառակը, ամերիկահայերունը կը մեծնայ:	The French-Armenian community is decreasing, and in contrast, the American-Armenian community is getting larger.



Գործերուն տակէն աչք չեմ բանար:

Idioms

You have reached the last lesson in your Armenian textbook. You know at least two languages, Armenian and your mother tongue, and if it is not English, also English; and you may have noticed that each language has its own way of thinking, depicting the real world, and expressing ideas in that world—that is, an idiosyncratic mode of communication. Individual speech, depending on the speaker and circumstances, may be straightforward or metaphorical, interesting or dull. A language can be anything but dull. Every language has the means to express the precision of say Einstein's scientific mind, the philosophical sophistication of Plato, the drama and lyrics of Shakespeare. It depends on a user's ability to draw on the richness of a language—not in the grammatical correctness of forms (which is understandable by itself) but in the specific ways of combining the words. *In the beginning there was the word.*

Idioms are fixed combinations of words with a meaning that is more than the sum total of their components: "A speech form or an expression of a given language that is peculiar to itself grammatically or cannot be understood from the individual meanings of its elements, as in *keep tabs on.*"[2]

Compare, for example, the picture caption: Գործերուն տակէն աչք չեմ բանար. The whole sentence is idiomatic, meaning *I am too busy.* It derives from the image of being too busy to see anything else except work. A literal translation does not help in the case of idioms—they represent one unit of meaning. Idioms which are similar in different languages often diverge in meanings, cf., *dog days* 'hot, sultry period in summer' in English and շան օրի հասած 'in a miserable condition with no way out' echoing with the English 'lead a dog's life'; or *get under one's skin* 'upset, bother someone' resembles the Armenian idiom մորթին վրայ զգալ which refers being sensitive to someone else as *be in someone's shoes,*

[2] http://dictionary.reference.com/search?q=idiom 11/13/2004

whereas the idiom երկու ոտքը մէկ կօշիկ դրաւ refers to forcing someone into something without leaving a choice. See some common idioms in Appendix 6.

Below are idioms from previous lessons with the lesson and page numbers. Try to remember their meaning and usage. Note that idioms are stable constructions very sensitive to changes, for example, անուն դնել is *to call names,* while with articles, անունը դնել or անուն մը դնել, *to name, to give a name.*

Ի՞նչ կայ-չկայ	6-85	Շատ ապրիս	7-99	Քունս կը տանի	10-180
Տակէն չենք ելլեր	6-85	Անուշ ըլլայ	7-101	Բան ու գործը ձգել	11-205
Սիրելը՝ սիրենք...	6-85	Բան մը չէ	7-102	Քիթը խոթել	13-264
Լաւ ըսենք, լաւ լսենք	7-106	Անունը դնել	7-110	ճամբայ բռնել/ելլել	13-269
Լաւ ըսենք, լաւ ըլլանք	7-106	Տակէն վրայէն մաքրել	9-151	Գլուխ դնել	14-299

Idioms are language specific meaning units; but the human thinking across languages and cultures unites with many universals which are reflected in idioms, proverbs, etc. Therefore, some idioms have lexical if not literal equivalents in unrelated languages. Idioms also travel from language to language through literary translations and by the word of mouth and sometimes it is hard to define the original source language.

Idioms as a rule are based on metaphorical thinking but not every metaphor is an idiom—the latter are fixed phrases used from generation to generation. Poets always come up with new metaphors by using the immense potential of languages to captivate our mind, to picture the world in fresh ways both cognitively and emotionally. Compare you reading from the original below.

Reading from the Original:

Դանիէլ Վարուժան

by Taniel Varuzhan[3]

Լոգանքէն վերջ

Լոգանքէն վերջ հետդ առանձին՝
Քալենք, քալենք ծովափին վրայ,
Հուրերուն տակ արեգակին,
Մինչև որ թաց հերքդ չորնայ:

Նուրբ աւազին ծոցը ջերմիկ
Թաղուին ոտքերդ հոլանի՝
Զոր հեւիհեւ մեն մի ալիք
Գայ համբուրել ու չհասնի:

Հուսկ արբեցայ ծովով երկա՜ր,
Բերանս ծով աչքերուդ վրայ.
Արեւուն տակ, ուսերդ ի վար,
Մինչև որ թաց հերքդ չորնայ:

[3] Taniel Varuzhan (1884–1915) is one of the most eminent figures in the classical Western Armenian literature. His books of poems—Սարսուռներ (1905), Ցեղին սիրտը (1909), Հեթանոս երգեր (1912), Հացին երգը (1921)—have been translated into many languages. A poet; professor of literature, political science, and ethics, newspaper editor, and an imposing figure in social-political and cultural life, he was the director of the Lusavorchian school in K. Polis (Istanbul). His vigorous, spirited lyrics inspired many generations of Armenians to cherish life and fight for a better future without compromise. Varuzhan fell a victim in the Genocide of Armenians, April 24, 1915, along with the majority of Western Armenian intellectuals.

Explanations to the Poem

Լոգաննէն վերջ	After swimming	Լոգանք is also *bath*; *to swim* is լողնալ, *to bathe*, լոգնալ
հետդ առանձին	with you alone	The article -դ substitutes for քեզ *you* in the dative.
Քալենք, քալենք ծովափին վրայ	Let's walk on the beach	The entire poem is built on the subjunctive mood of verbs which make it a dream: let it happen! If it be! The repetition of քալենք emphasizes the desirability.
Հուրերուն տակ արեգակին	Beneath the sun's fires	Հուր is *fire;* արեգակ *sun,* poetic style. You know their common synonyms: կրակ, արեւ.
Մինչև որ քաց հերքդ չորնայ	Until your wet hair gets dry	հեր-ք is a poetic hair, with the obsolete plural -ք.
Նուրբ աւազին ծոցը ջերմիկ	into the warm lap of the delicate sand	The diminutive of ջերմ *warm, ardent*, bears emotional emphasis.
Թաղուին ոտքերդ հոլանի	let your well-shaped feet get immersed	թաղուիլ *to be embraced, interred,* lit.: *sunk,* passive voice
Զոր հնիհն մէն մի ալիք գայ համբուրել ու չհասնի	to kiss which comes a single undulating wave and does not reach	զ-որ, a relative pronoun in the accusative, functions as a conjunction. մի is the old indefinite article reduplicating մէն *only one*. In standard, the dative of purpose would be used: գայ համբուրելու.
Հուսկ արբենայ բերանս	Let my mouth get intensely inflamed	արբենալ is poetic, *to get drunk, inspired*
ծով աչքերուդ վրայ	Over your sea-eyes	վրայ is both *over* and *on*; cf. տակ *beneath & under*. *Eyes like the sea* express the beauty of the beloved and the depth of her personality.
ուսերդ ի վար	down your shoulders	ի վար shows direction, վար—location.

GRAMMAR

Declension Types

1. Nouns have six cases but four forms: the nominative and accusative coincide in form, as well as the genitive and dative. Some pronouns have suppletive forms to differentiate the latter, e.g.: ըnu - քեզ (details in Lessons 9 and 14).

2. The most productive declension pattern in Western Armenian has -ի for the genitive singular and -ներ for plural. The majority of nouns and many pronouns belong here, as well as the majority of substantives (words used like nouns) and practically all new words which enrich the vocabulary on a daily basis through loans or word building. A current trend generalizes this pattern for nouns from other declensions.

3. All other declensions except -ի are limited either by the form or the meaning of the words involved.

4. Traditionally declensions are divided into regular and irregular. The so-called *irregular* declensions have a regular paradigm but they contain a few words; they are closed or dead patterns which may lose but not acquire new members. Regular declensions are productive—they involve many words and they are open to novel members.

5. External declensions add the endings -ի -ու, -ոյ, -ուան, -ան, -ոջ, -եան in genitive singular (քերքի, հայու, սիրոյ, օրուան, մանկան, բրոջ, ծննդեան). The regular plural adds -ու. The declension ց emerges only in plural, with the old genitive plural ending ց—Վարդանանց.

6. The internal declensions have three basic patterns: տուն - տան, հայր – հօր, արիւն - արեան. These are remnants of the older ablauting system where the grammatical meaning is expressed by a change in the root vowel or diphthong. Not to be confused with the vowel shift resulting from the loss of stress in external declensions, e.g., սրտի, սիրոյ, կնոջ.

7. The ablative and instrumental cases add -է and -ով respectively to the direct form, e.g.: սրտէ, սրտով. In irregular declensions, endings add to the ablauting or suppletive genitive/dative: e.g.: հայր - հօր - հօրմէ, դուն - քեզ - քեզմէ.

8. The instrumental ending, -ը is employed only in declensions -ան and -եան; the addition of -ը turns the final ն into մ, e.g., արիւն-արեան-արեամբ, ուսում-ուսման-ուսմամբ. This instrumental is especially characteristic to words derived with the suffix -ութիւն, e.g., բարութեամբ, ուրախութեամբ. However, all these nouns generate conversational instrumental forms with -ով, բարութիւնով, արիւնով, etc.

9. The genitive/dative and ablative endings are usually followed by articles (ծաղ(ի)կիս, ծաղկիդ, ծաղկին, ծաղկի մը and տ(ու)նէս, տ(ու)նէդ, տունէն, տունէ մը). The definite article is the most common and therefore, in some grammars it is ascribed to the case ending but it ought to be separated in structural description as it is in nominative and accusative.

The Declension ի is the regular pattern in singular for nouns and some pronouns. It has the ending -ի for the genitive/dative, -է for the ablative and -ով for the instrumental—e.g., փիսիկի, աշխարհի, իմ չի. Many nouns belonging to other declensions generate parallel forms with ի.

The Declension ու statistically is the most widespread type because it covers all infinitives, some singular nouns and practically all plural nouns, examples:

- Plural nouns which in singular belong to different types: cf.: հայրերու, օրերու, բարութիւններու, ձիւներու, մարդերու, իմչերու, եղածներու.
- Verbal infinitives, e.g., սիրելու, տալու. Remember: ի and ու verbs shift to ե: ապրիլ - ապրելու, զբօսնուլ - զբօսնելու, բողոքել - բողո(ե)լու.
- In singular the declension ու is limited to some monosyllabic nouns of frequent usage—e.g., գահ - գահու. Also: մարդ, մանչ, էշ, ծով, շահ, մահ, ծեր, պապ, մամ, արջ, ձի, թի, կով, ծով, հով, հաւ, այգ, դար, պահ, ժամ, չար, չին.
- Some colloquial or obsolete parallel forms of nouns regularly declined with ի or in another pattern: արև, գլուխ (գլխու), տղայ (տղու), շաբաթ (շաբթու), ամիս (ամսու).

The Declension ց functions only in the plural; formally it is limited to words ending in ը. Exception: մարդիկ -մարդոց with the more common parallel մարդերու.

- Proper names suffixed with -անք, -ենք, -ոնք, -իք; for instance, Վարդանանք, Հայկազեանք, Արշակունիք. These have maintained the regular declension in Krapar—e.g., Վարդանանց պատերազմ *war of the Vartanids,* Հայկազեանց գարմ *the race of Haykazeans (Armenians),* Արշակունեաց գահ *throne of the Arsacids.* Such forms are found frozen in idiomatic expressions:Սահմանք քաջաց զէնք իւրեանց: *The limits for the brave(are) their weapons.*
- Several common names declined in this pattern have regular parallel forms—e.g., անձինք - անձանց/անձերու, ծնողք - ծնողաց/ծնողներու, կանայք - կանանց/կիներու, մարդիկ - մարդոց/մարդերու, տղաք - տղոց/տղա(ք)ներու, այլք - այլոց/այլերու.
- In literary styles, long words ending in -ութիւն retain the old -ց in plural, i.e., նախադրութեանց, նեղութեանց instead of the regular: նախադրութիւններու, նեղութիւններու.
- In pronouns with a final ը: ասոնք - ասոնց, իրենք - իրենց, որոնք - որոնց, etc.

The Declension ուան is limited to words indicating time, for instance, տարի-տարուան, օր-օրուան. Also: երբ, ժամ, ժամանակ, ատեն, հիմա (հիմակուան), շաբաթ, ամիս, առտու (առտուան), անգամ, ցերեկ, իրիկուն, գիշեր, երէկ, վաղը, ամառ, ձմեռ, հերու, առաջ.

In ablative, they acquire the ending -ուընէ—e.g., առտուընէ, հիմակուընէ, օրուընէ, except for ամիս, ատեն, շաբաթ, which derive the ablative from the direct form: ամիսէ.

The instrumental is derived from the base form: *Գիշերով* ճամբայ ելանք: *We took off for the road by night.*

Many of these words may change the declension type to signify a meaning change, for example ժամ *hour,* regular gen. ժամուան, uses ու when it means *church*—e.g., ժամուն բակը *the churchyard.* Տարի *year,* regular gen. տարուան, employs ու to refer to the age. Cf.:

Տիգրան երկու տարու մանչ մըն է:	*Dikran is a two-year-old boy.*
Անցեալ *տարիէն* Եորք փոխադրուած եմ:	Since last year I have moved to York.
Կէսօրուան արևը ուժգին է:	The sun at noon is intense.
Կէսօրին կը տեսնուինք:	We'll see each other at noon.

- Ամիս has parallel forms with ի, ու and ոյ. The latter is typical to formal speech especially as ամսոյս, meaning of *this* month—e.g.: Ժողովը *ամսոյս* տասին է: *The meeting is on the tenth of this month.*
- The season names ամառ *summer* and ձմեռ *winter* have obsolete parallels still in use: ամրան, ձմրան, along with the standard: ամառուան, ձմեռուան.

The Declension ան has both semantic and formal limitations:

- Age terms with blended diminutives -ուկ and -իկ: մանուկ *child* մանկան, աղջիկ *girl* աղջկան, էրիկ *husband, man* էրկան, կնիկ *wife, woman* կնկան. All have regular parallels with ի save աղջիկ.
- Abstract nouns with the suffix -ում: ուսում *study* ուսման, անկում *drop, decline* անկման.
- Some monosyllabic words maintain the Krapar -ան for genitive but have regular forms with ի too: լեռ, դուռ, բեռ, բոռ[4] and the season names գարուն, աշուն—գարնան, աշնան, լերան, դրան, բեռան, բոռան. The latter also have newer parallels with ի—լեռի(ն), դուռի(ն).

The Declension -ոջ covers some kinship terms: կին, քոյր, աներ, սկեսուր, տագր, տալ, ներ, and the words տէր, ընկեր; e.g., քոյր - քրոջ, ընկեր -ընկերոջ. In the ablative and instrumental they add an augmentative -մ- before the endings -է and -ով, կնոջմէ, քրոջմով. Parallels based on the direct forms, as ընկերի, ընկերէ, ընկերով occur in conversational speech.

The Declension -ոյ is limited to three frequently used words: Աստուած, սէր, յոյս. They all undergo a phonetic shift of the root vowel: Աստուծոյ, սիրոյ, յուսոյ (see the paradigms in Lesson 11). All other words below are either frozen or obsolete forms with regular parallels in standard:

- Obsolete forms of geographical names, e.g., Ասիա - Ասիոյ, Ֆրանսա - Ֆրանսիոյ. Novel regular forms with ի are more frequent, such as Ռուսիայի, Ֆրանսայի.
- Some words maintain their obsolete forms with -ոյ in frozen phrases, such as հուր in Հրոյ Երկիր *Land of Fire* (toponym); լոյս in Առաւոտ լուսոյ *Morning of light* (from a famous medieval song by Nerses Shnorhali); մամուլ in մամլոյ ազատութիւն *freedom of press;* խնդիր in խնդրոյ առարկայ *the matter in question;* եկեղեցի in եկեղեցւոյ պատուիրակ *church delegate,* etc.

The Declension -եան is the only productive type among internal declensions. Formally it is limited to nouns ending in –իւն, including nouns suffixed with -ութիւն which keep this declension open to new words. The ablative derives from the base form, and in instrumental they have the standard ending -եամբ. For instance: ուրախութիւն, ուրախութեան, ուրախութենէ, ուրախութեամբ; արիւն, արեան, արիւնէ, արեամբ. Note that the suffixed words in the ablative shift into -ութենէ. All these words in casual styles occur also in the regular pattern with ի: արիւնի, արիւնէ, արիւնով/արեամբ.

The Declension ο is limited to three kinship terms—հայր - հօր, մայր - մօր, եղբայր - եղբօր—and their derivatives, such as մեծ հայր - մեծ հօր *grandfather's,* կնքամայր - կնքամօր *godmother's,* հօրեղբայր - հօրեղբօր *paternal uncle's.*

The Declension ա is limited to two words: առն - առն, շուն -շան. Note that their derivatives have parallel declensions—e.g., ծովաշուն *sea dog,* ծովաշան or ծովաշունի, դրամատուն *bank,* դրամատունին or դրամատանը մէջ; but: մեծատուն *rich person,* only մեծատունի, e.g.: Մեծատունին քսակը անտակ է: *A rich man's purse is bottomless.*

[4] In Krapar this is an internal declension because these words end in -ն in nominative.

Transfers between Parts of Speech

The parts of speech in Armenian are formally better differentiated than they are in English. This is due to grammatical or derivative affixes and also word building models, specific to particular parts of speech. Transfers between the parts of speech occur on three levels: word-building and morphological transfers entail formal changes, while syntactic transfers do not.

1. On the level of word building, words transfer from one part of speech to another with the help of affixation or compounding.

բախտ, ու-մարդ-ի, չ-բեր. Note that some suffixes are multifunctional, as: -ի—սքանչելի adjective, ածելի noun; -ած—հոգնած verb, քերթված noun; վոր—վիրավոր adjective, բանվոր noun. Also, an affixed stem may add more affixes and continue the transfer in parts of speech, cf.: մարմն-եղ-են-ություն *corpulence*, ան-վերջ-ան-ալ-ի-որեն *endlessly*.

2. On the morphological level, the transfer of the parts of speech takes place in substantives, when verbal participles, adjectives and numerals function as nouns. Below are several examples from the classical EA poetry:

Զոհվում է լավը վատերի համար, և վատն ու չարը կկում են, տանջում մի բուռ լավերին այս վատ աշխարհում: (Իսահակյան)	The *good* sacrifices itself for the *bad* and the *bad* and the *evil* torture and torment the handful of *good* (people) in this world.	The adjectives լավ, վատ, չար function as nouns—subject and objects.
Մեկը լավ է, երկուսը բավ է, բայց լավ իմացիր, երեքը ցավ է: (Չիրազ)	One is good, two is enough, but mind—three is pain (about drinks)	The numeral substantives are subjects.
Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար... (Տերյան)	*Dying* for you is sweeter than *living*.	The infinitive- substantives ապրելուց and մեռնել function as objects (nouns).
Դու ծարավ աղջիկ, կապույտը՝ գինի... (Չարենց)	*You (are) a thirsty girl, the blue (is) wine.*	The adjective-substantive կապույտը functions a subject.
Դու միֆ դարձած ու սրբացած մեռելների սուգը տոնող տրտում քողն ես հոգուս համար... (Չարենց)	You are the sad veil for my soul *celebrating* the *mourning* of the *mythical* and *holy dead.*	The participle-substantives դարձած, սրբացած, մեռելների, տոնող function as attributes.

3. The syntactic level transfers between parts of speech involve only word orders changes just like in WA *and* in English. The majority of these transfers are recorded in dictionaries as facts of language flexibility; others occur in speech only. Try to render into EA thc examples in this section from the WA L15 and note the transfers.

The Sequence of Noun Endings does not exhibit major differences, cf.: վարդ-եր-ի-ս. Note the following details:

1. In plural declension, ի dominates.
2. Double plurals have practically died out.
3. The indefinite article մի precedes the modified noun or substantive and is less frequent and less functional than մը in WA.
4. In the presence of possessive pronouns, possessive articles are excluded—իմ տունը, versus WA իմ երգս.

Text-Dialogue: **ՊԱՐԱՀԱՆԴԵՍ**

Անին և Արաս պարահանդես էին գնացել: Սովորական հայկական պարահանդես էր Հայոց եկեղեցու սրահում՝ բազում տարեկան տոներից մեկի առիթով: Նախատեստներով լեցուն սեղանները շարված էին խիտ՝ սրահի մեջտեղում մի ընդարձակ պարահրապարակ թողնելով: Եվ մի հայկական ճվագախումբ էր ննդում՝ բոլորին շուրջպարի կանչելով: Թե՛ ճվագախումբը, և թե՛ ծանրաբեռ սեղանների համադամ ուտեստները ավելի շուտ միջազգային էին և ի մի էին բերում հայոց տարբեր գաղութների ներծծած մեղեդիներն ու բարքերը, համերն ու բույրերը: Բայց շուրջպարը բուն հայկական էր, որ խոլագին պտտվում էր հայոց խրոխտ լեռների պես կենսալի, անմատչելի և մշտահմա...

Անին՝ մոռացած ուտելիքները և անգամ Արային, պայիկի պես սահում էր շուրջպարի գլուխ՝ ճերմակ թաշկինակը ծածանելով և պարող շրջանը իր ետևից տանելով: Արաս հմայված դիտում էր՝ անհաղորդ իր իսկ ոտքերի ռիթմիկ դողին, որ

հուշում էր, թե Անիի տված տնային պարի դասերը իրենց գործն արդեն արել էին և ինքն էլ կարող էր շուրջպար մտնել: Հանկարծ մի գոռացող ձայն Արայի ականջը խոցեց.
- Բարև՛, տղա՛ս: Ճանաչեցի՞ր ինձ:
- Իհարկե, մե՛ծ հորեղբայր, մայրիկիս հորեղբայրն էք, Բոստոնում ենք հանդիպել:
- Դու ու՞մ տղան ես, Արաքսյայի՞, թե՞ Աստղիկի:
- Աստղիկն է մայրս, մե՛ծ հորեղբայր, Արաքսյան մորաքույրս է:
- Էհ, ինչպե՞ս են աղջիկները, լա՞վ են, վաղուց չեմ տեսել:
- Մայրիկս լավ է, բայց մորաքույրս անցյալ ամառ մահացավ:
- Ի՞նչ ես ասում, չէի իմացել, ափսոս, շա՛տ ափսոս:
- Արդեն մի քանի տարի էր, ինչ մորքուրը լավ չէր:
- Իսկապե՞ս, ի՞նչ ուներ, սի՞րտն էր:
- Այո, հորեղբայր, շատ հիվանդ էր արդեն:
- Է՞հ, արևը ձեզ բաշխեց, գնաց, ողորմի իրեն, դուք ողջ լինեք: Աստղիկս ինչպե՞ս է, առո՞ղջ է:
- Այո՛, լավ է, շնորհակալություն:
- Աստված պահապան: Բարևներս չմոռանաս հաղորդել: Հայրիկդ ինչպե՞ս է, Գրիգորս ինչպե՞ս է:
- Հայրիկս լավ է, շնորհակալություն: Իսկ Գրիգո՞րը ով կլինի:
- Ինչպե՞ս, Գրիգորը հայրդ չէ՞:
- Ներողություն, հայրիկիս անունը Հակոբ է:
- Սպասի՛ր, հայրդ Հակոբն է, դու որեմն Հակորի՞նն ես, ինչու՞ կարծեցի թե...իսկապես էլ Հակոբ էր... ի՞նչ հարսանիք արինք Աստղիկին ու Հակոբին, ոնց էինք պարում, բալամ, այս երիտասարդները պարել էլ չգիտեն... Ի՞նչ հարսանիք էր, հեյ վա՛խ, ի՞նչ հարսանիք...հիշում ե՞ս, տղա՛ս:
- Վախենամ թե չհիշեմ:
- Անշուշտ, անշուշտ, ի՛նչ եմ խոսում... Հա՛, հա՛, հա՛, տղաս, մեծացել-ցնդել եմ, հա՛, հա՛, հա՛... արի՛ պարենք, ինչու՞ ենք այստեղ կանգնել, արի՛, արի՛ գնանք պարելու, տղա՛ս...

Verb: the Expression of Grammatical Meaning maintains the same systematic features in both standard versions of Armenian; that is, verbs express grammatical meanings mainly in synthetic mode with the help of the following:
1. *Roots and Stems*: present and past (aorist).
2. *Affixes* express a series of grammatical meanings. They function in stems and form them.
3. *Pre-particles* are used for the analytical forms in combination with other means:
4. *Participles* also combine different means to express verbal and substantive meanings.
5. *The auxiliary and link verbs* form tenses and predicates.
Differences in the formation of verb mood, tense, voice, aspect, and person have been presented in corresponding sections; see the regular and irregular verb paradigms in appendix 8.

Impersonal Verbs: Some verbs that are impersonal in WA are formally personal in EA. For instance, EA commonly uses անձրև or ձյուն է գալիս, whereas WA prefers—կաձրևե and կձյունե. Also, EA has constructions with a dative subject, such as, ինձ դուր է գալիս, *I like it,* lit.: *melikes it;* ինձ պետք է *I need it,*[2] which are foreign to WA. Also, the WA Հոգ չէ it's *OK, never mind* seldom occurs EA, mainly in high standard or poetic styles. The common causal phrase is Պետքս չէ *I don't care.*

Conjunctions do not exhibit major differences in EA. Obviously there are subtle differences in frequency and use, which are the hardest for a language student to master. Also, each version has a few conjunctions and conjunctives rarely occurring in the other. For example, the subordinate conjunction qh specific to WA

[2] Cf. Spanish *me gusta, me hace falta.*

literary styles is unrepresented in EA, and of its derivatives—վասնզի, քանզի, որպես զի only քանզի and որպեսզի are found. Also, մանավանդ, թեպետև, ուստի occur more frequently in WA. In EA, the conjunctive (relative pronoun) որը is used quite frequently and as a rule with the definite article, whereas in WA, the definite article is often omitted, and instead the preposition զ is attached—զոր. On the other hand, EA applies several composite conjunctions, frozen oblique forms— չնայած որ, չհաշված, նայած թէ, հենց որ, etc. which are foreign to WA. Below is a fragment from Paruyr Sevak's poem *The Turn of Generations* to illustrate the use of conjunctions. Try to define the type of conjunctions, coordinate or subordinate and their structure (see the complete poem in Appendix 10).

Ամեն սերունդ
Նախ և առաջ մտածում է լռության մեջ,
Իսկ երբ խոսել է սկսում,
Բարկացնում է ավազներին
Եվ բարկացնում անկեղծորեն
Որպիեսև կրտսերը միշտ անհասկացող,
Իսկ ավագը հասկացող է:

The Conjunction թե is multifunctional in EA as well. Its main meaning is to express doubt; no wonder the word թեական means *hypothetical*, and մի՞թե is an interrogative word which translates into an entire clause in English: *is it possible that*— մի՞թե վերջին պոետն եմ ես, վերջին երգիչն իմ երկրի, մահն է արդյո՞ք թե նիհջը քեզ պատել, չքնա՛ղ Նաիրի.[3]

- When **թե** connects a subordinate clause to the main, it can be substituted with the conjunction **որ** *that,* with a subtle change in meaning. Թե relates to assumptions, and որ, to statements, cf.: Լսեցի, որ հյուրեր ունեիք: I heard that you had guests. Լսեցի, թե հյուրեր ունեիք, ճի՞շտ է: I heard that you had guests; is that true?
- When **թե** connects words, it pairs with the coordinate conjunction **կամ** *or.* The latter relates to statements, and թե to assumptions, questions, or hypothesis; cf.:

Դուռը բա՞ց է, թե փակ:	Is the door open or closed?
Թեյը տաք կամ սառն են խմում:	[They] drink tea hot or cold.
Դու տա՞ք կուզեիր, թե՞ սառը:	Would you like [it] hot or cold?

- A repeated թե connects words and means *both* (emphatic):

Եւ լայն օրում թե՛ ընկերներ, թե բարեկամ ճանաչի՛ր,
Իսկ նեղ օրում ընկերներիդ ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր: (Խսահակյան, *Գտակ*)

The repetitive թե is synonymous to the repetitive conjunction և, cf.: Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու, Աստղերի պես և հարազատ և օտար...

- Թե is also an abbreviation from the formal եթե *if,* a hypothetical subordinate conjunction. In this function, թէ որ is a conversational substitute: cf.

Formal: Եթե ուզես՝ թատրոն կգնանք: If you wish we'll go to the theater.
Casual: Թե որ ուզես՝ սուրճ էլ կխմենք: If you wish, we can have coffee too.

The Conjunction որ and the Conjunctive Pronoun որ

Though homonymous, these two forms are functionally distinct both in WA and EA.

The subordinate **conjunction** որ *that,* connects clauses, e.g. Գիտենք, որ Երկիրը կլոր է: We know *that* the Earth is round. It may be omitted, like the English *that.* Որ is also short from որպեսզի, a subordinate conjunction corresponding to *in order to*, cf.: Հանգցրե՛ք նրանց ջահերն այլազան, որ եղիցի լույս (Սևակ).

---

[3] "*Is it possible that I am the last poet, the last bard of my country? Is it death or slumber that has cloaked you, gorgeous Nairi?*" wrote Vahan Terian in 1915 when the crown of the Western Armenian intelligentsia was treacherously assassinated by the Ottoman government and the entire Armenian population of Western Armenia was slaughtered or driven from their homeland.

Որ *which,* is an interrogative/relative pronoun, e.g., Ո՞ր թփի տակ կորար մեճակ (Թումանյան, Չարի վերջը). As all relative pronouns, it can be declined (որը, որի, որ, որից, որով) and also function as a **conjunctive**. It translates into *who, which, whichever*; and its oblique forms combine *which* with prepositions, e.g.: Երկիրը կլոր է, որից հետևում է շուրջերկրյա ճամփորդության հնարավորությունը: The Earth is round, *from which* follows the possibility of a travel round the world. As a conjunctive, its antecedent can be found in the main clause: *Որ* երկիրը գնաս, *այնտեղի* գլխարկը դիր: *To whichever* country you go, put on *its* hat (proverb).

As stated above, the use of these conjunctions is quite similar in EA and WA. So, I will conclude the last explanations with excerpts from two landmark poems written in WA, *Rusinian's Cilicia*, which has turned into the unofficial anthem of the Armenian Diaspora:

Աշխարհ, *որ* ինձ ետուր արև... (See the poem in Appendix 10 and try to render it in EA).

The second excerpt is from Tekeyan's *The Language in which I Write,* which brings together the pain of every Armenian writer, especially in Diaspora.[4]

Լեզուն, *որով* գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կկարդային զայն արդեն ու պակսեցա՛ն անոնք ալ...
Տե՜ր, ցավ մ'ալ այս է հիմա, ցավերեն ետք անհամար,
Որոնց մեջեն անցնելով, *որոնցմե* չիք մ'առնելով
Ես կազմեցի այս տաղերն ու հոս դրի քովե քով...

Text: **ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՏՈՒՆ**

Մի քանի շաբաթից Հասմիկի ընկերները եկել էին հրաժեշտ տալու: Շատ գինի կար և շատ բարեմաղթանք: Հյուրերը ուրախ էին, բայց օդի մեջ մի անուշ տխրություն էլ կար՝ բաժանման տխրությունը: Արամը գրպանի մեջ սեղմած պահում էր ադամանդե մատանու փոքրիկ տուփը, որն այսօր իսկ գնել էր՝ անջատումը կանխելու մի թույլ հույսով: Երբ բոլորը գնացին, Արամը հանեց մատանին: Սեր չէին խոստովանել ու խոստացել իրար՝ ժամանակ չկար: Բայց այնքան էին մտերմացել, որ արդեն թվում էր, թե մի ամբողջ կյանք գիտեին մեկմեկու: Հասմիկը շփոթված դիտում էր մատանին:

- Արա՛մ, ինչպե՛ս... չեմ կարող, Արա՛մ...
- Մի՛ գնա, Հասմիկ: Ես սիրում եմ քեզ:

Հասմիկը ուղիղ նայեց Արամի աչքերի մեջ, թեև դեռ երբեք այս խոսքերը չէր լսել նրանից:

- Գիտեմ, Արամ: Բայց դու էլ գիտես, որ գնալու եմ:
- Ինչու՞:
- ...
- Այնտեղ դժվար է, վատ է, ցուրտ է... Օրենք չկա, կարգ չկա: Այնտեղ քո հավանած բաները չկան: Հիմա մի՛ գնա, Հասմիկ, հետո՝ երբ լավ լինի, իրար հետ կգնանք:
- Եվ դու՞, Բրուտոս... Դու՞ էլ բոլորի նման... երբ լա՞վ լինի... Ես լավի ետևից չեմ գնում, Արա՛մ, ես լավացնելու եմ գնում:
- Հասմիկ, դու հերոսի հոգի ունես: Ես սիրում եմ քո այդ ընբոստ հոգին: Հասմիկ, ես քեզ եմ սիրում: Մի՛ գնա: Մեճակդ ի՞նչ կարող ես անել:
- Ինչու՞ մեճակ՝ այնտեղ շատ մարդ կա: Եվ ես բժիշկ եմ, Արամ, ես պետքական կլինեմ: Ես պիտի կարողանամ պիտանի լինել:
- Դու ինձ ես պետք, Հասմիկ:
- Դու էլ ինձ, Արա՛մ, բայց իմ միտքն այլևս այնտեղ է, այստեղ էլ գործ չունեմ:

[4] And not only in Diaspora. While creating this textbook, Charents, speaking about Abovian, has been with me far too often—Ի՞նչ է ասում այս գիրքը և ի՞նչ է բարբառում. Ջուր չի վատնել արդյոք անհատնելի իր ծիրքը ...

- Իսկ մե՞նք:
- Չգիտեմ, մի՛ հարցրու, Արամ, մի՛ տանջիր ինձ: Խնդրում եմ, փակիր այդ տուփը,
- ասում է՝ մատների ծայրով տուփիկը պահող Արամի ձեռքին մեղմիվ դիպչելով:

Եվ Արամը կատարում է Հասմիկի խնդրանքը՝ փակում է զարդատուփը կարծես դրախտի դարպասները փակելով:

Կես տարուց ավելի անցավ Հասմիկի մեկնումից և նա ոչ մի անգամ չզանգեց Արամին: «Չեմ ուզում ես նայելով առաջ գնալ», ասաց հրաժեշտի պահին: Արամը նրա ծնողներից էր լուրեր ստանում. գիտեր, որ Հասմիկը նորաշեն մանկական հիվանդանոցում էր գործի անցել: Եվ երջանիկ էր:

Հիմա Արամը դարձյալ ճամպրուկ է դասավորում: Ոչ Իտալիա, և ոչ աշխատելու: Գնում է այնտեղ, ուր դժվար է, վատ է, ցուրտ է: Ուր Աստծո ամեն օրը կռիվ է ու գալիքն՝ անորոշ: Եվ ուր միշտ երազել է գնալ և միշտ հետաձգել՝ ավելի կարևոր գործերի պատճառով և ավելի բարեպատեհ առիթի սպասելով: Հիմա մի հրամայական այնտեղ է առաջնորդում իրեն՝ վախի և հույսի անորոշ խառնուրդով: Գնում է Հասմիկին և Հասմիկի երջանկությունը հասկանալու:

VOCABULARY DIFFERENCES

EA	WA	TRANSLATION
(օգտագործել)	գործածել, բանեցնել	use
շահագործել	(օգտագործել)	exploit, take advantage
բավական լինել	բաւել	to be enough
պաչ	պագ	kiss, peck
(խեղճ)	հէք	humble, poor
թույլ, հիվանդ	տկար	weak
գեր, չաղ	գէր	fat
կահույք	կարասիները	furniture
Introductory and Modal Words		
(իհարկե)	հարկաւ	Of course
իսկապես	իրաւ	Really
արի (քեզ LS)	քալէ՛	Come on
արի	եկու՛ր	Come on
դե, դե լավ (հա դը LS)	հա՛յտէ	OK, come on

The spelling of the geographic names is a source of constant confusion between EA and WA.

1. Some names are spelled traditionally—as in Grabar, regardless of modern pronunciation particularly in WA, e.g., Արարատ, Վենետիկ, Պարսկաստան, Կիպրոս, Եգիպտոս, Իտալիա, Եդեմ.

2. Another group of names is spelled according to a novel tradition idiosyncratic to EA or WA, e.g., Շվեյցարիա/Զուիցերիա, Բելգիա/Պելճիքա.

3. In a third group, each version transcribes a name according to modern pronunciation, WA: Պոսթըն EA: Բոսթոն. The latter is the most baffling group, especially since the EA transcription/transliteration is affected by Russian, and the WA, by English, French, and other dominant languages. It is in advantage of all Armenian readers to eliminate the third group and *transliterate* geographic names according to the classical standard found in Grabar.

Geographical Names		
Կուբա	Քուպա	Cuba
Վաշինգտոն	Վաշինկթօն, Ուոշինկթըն	Washington
Բելգիա	Պելճիքա	Belgium
Ռուսաստան	Ռուսիա	Russia
Շվեյցարիա	Զուիցերիա	Switzerland
Լոնդոն	Լոնտոն	London
Բոստոն	Պոսթըն	Boston
Ճապոնիա	Ճափոն	Japan

Letter Name & Position in Alphabet		Pronunciation EA	WA	Characters				*Italics*	Key words with pictures	
6	զա	[z]	[z]	Զզ	Զզ	Զզ	Զզ	*Զզ*	Զզ զանգ	
10	ժէ	[zh]	[zh]	ժժ	ժժ	ժժ	ժժ	*ժժ*	ժժ ժամ	
14	ծա	[ts]	[dz]	ՇՇ	ՇՇ	ՇՇ	ՇՇ	*ՇՇ*	ՇՇ ծիծաղ	
17	ձա	[dz]	[ts‘]	Ձձ	Ձձ	Ձձ	Ձձ	*Ձձ*	Ձձ ձիւն	
19	ճէ	[ch]	[j]	ՃՃ	ՃՃ	ՃՃ	ՃՃ	*ՃՃ*	ՃՃ ճաշ	
21	յի	[y]	[y] [h] [-]	Յյ	Յյ	Յյ	Յյ	*Յյ*	Յյ յասմիկ	
23	շա	[sh]	[sh]	Շշ	Շշ	Շշ	Շշ	*Շշ*	Շշ շուն	
25	չա	[ch‘]	[ch‘]	Չչ	Չչ	Չչ	Չչ	*Չչ*	Չչ չոր	
27	ջէ	[j]	[ch‘]	Ջջ	Ջջ	Ջջ	Ջջ	*Ջջ*	Ջջ ջութակ	
33	ցո	[ts‘]	[ts‘]	Ցց	Ցց	Ցց	Ցց	*Ցց*	Ձց ցորեն	

Position of the Characters on the Line

All upper case typewritten characters are *tall* and the differentiation of *mini, tall, descending and bisecting* position of the characters concerns the lower case only (details in Lesson 1).

Position	Typed Characters
Mini	Աա Ոո Ուու Օօ Ռռ Սս Տտ Րր Իւ
Tall	Եե ժժ ՇՇ Հհ Ձձ ՃՃ Մմ Նն ԵՒ
Descending	Բբ Գգ Դդ Զզ Ըը Թթ Լլ Ղղ Յյ Շշ Չչ Պպ Ջջ Ցց Քք
Bisecting	Էէ Իի Խխ Կկ Վվ Փփ Ֆֆ

Characters with Differing Position in Typed and Cursive Fonts

The chart below presents some common types of cursive; it does not tend to cover all schools of paleography.

Position	Typed Characters	Position	Cursive Characters
Mini	ո (lower case)	Descending	
Tall	ձ (lower case)	Descending	
Tall	Ը Լ Ղ Ձ (upper case)	Descending	
Tall	Բ Գ Դ Թ Կ Յ Պ Ց Ք (upper case)	Bisecting	

ALPHABET WITH LETTER NAMES AND KEY WORDS IN PICTURES

1. Ա այբ [a] առիւծ	11. Ի ինի [i]  ինքնաշարժ	21. Յ յի [y, h, ø] W. [y]E յուշկապարիկ	30. Վ վեւ [v]  վարդ
2. Բ բեն [p‘] W. [b]E  բու	12. Լ լիւն [l] լուսին	22. Ն նու [n]  նուռ	31. Տ տիւն [d] W. [t] E տաճար
3. Գ գիմ [k‘] W. [g] E  գորտ	13. Խ խէ [kh]  խոզ	23. Շ շա [sh] շուն	32. Ր րէ [r]  րոպէ
4. Դ դա [t‘] W. [d] E դրամ	14. Ծ ծա [dz] W. [ts] E ծաղիկ	24. Ո ո [vo. o] ոզնի	33. Ց ցո [ts‘] ցուլ
5. Ե եչ [ye, e] եղնիկ	15. Կ կեն [g] W. [k] E կատու	 * ՈՒ ու [u] ուրուական	34. Ւ յիւն [v]  նաւ

6. Զ զա [z] զանգակ 	16. Հ հո [h] հնդկահաւ 	25. Չ չա [ch] չղջիկ 	35. Փ փիւր [p‘] փիղ 
7. Է է [ē] էշ 	17. Ձ ձա [ts‘]W. [dz] E ձուկ 	26. Պ պէ [b] W. [p] E պատկեր 	36. Ք քէ [k‘] քանակ
8. Ը ըթ [ĕ] [ə] ընձուղտ 	18. Ղ ղատ [gh] ղեկանիւ 	27. Ջ ջէ [ch] W. [j] E ջութակ 	* և [yev, ev] արև 
9. Թ թո [t‘] թիթեռ 	19. Ճ ճէ [j] W. [ch] E ճուտ 	28. Ռ ռա [ṛ] ռնգեղջիւր 	37. Օ օ [ō] օձ 
10. Ժ ժա [zh] ժպիտ 	20. Մ մեն [m] մուկ 	29. Ս սէ [s] սֆինքս 	38. Ֆ ֆէ [f] Ֆրանսա

The Armenian Alphabet

Character, its Position in Alphabet & Name			Pronunciation Old Armenian	EA	WA	Keyword	Lesson Introduced
1.	Ա ա	այբ	a	a	a	առիւծ	1
2. *	Բ բ	բեն	b	b	**p'**	բադ	7
3. *	Գ գ	գիմ	g	g	**k'**	գառ	8
4. *	Դ դ	դա	d	d	**t'**	դիմակ	4
5. *	Ե ե	եչ	e	**ye, e**	**ye, e, y**	եղնիկ	2
6.	Զ զ	զա	z	z	z	զանգակ	7
7. *	Է է	է	ē	**e**	**e**	էշ	1
8.	Ը ը	ըբ	ĕ, ə	ĕ, ə	ĕ, ɔ	ընտանիք	2
9.	Թ թ	թո	t'	t'	t'	թիթեռ	10
10.	ժ ժ	ժա	zh	zh	zh	ժամացոյց	11
11.	Ի ի	ինի	i	i	i	իշխան	2
12.	Լ լ	լիւն	l	l	l	լուսին	4
13.	Խ խ	խէ	kh	kh	kh	խնձոր	8
14. *	Ծ ծ	ծա	ts	ts	**dz**	ծաղիկ	10
15. *	Կ կ	կեն	k	k	**g**	կօշիկ	2
16.	Հ հ	հո	h	h	h	հաւ	7
17. *	Ձ ձ	ձա	dz	dz	**ts'**	ձուկ	11
18. *	Ղ ղ	ղատ	ł	gh	gh	ղեկ	8
19. *	Ճ ճ	ճէ	ch	ch	**j**	ճուտ	12
20.	Մ մ	մեն	m	m	m	մուկ	2
21. *	Յ յ	յի	y	y	**h, y, ø**	յասմիկ	5
22.	Ն ն	նու	n	n	n	նուռ	1

23.	Շ շ	շա	sh	sh	sh	շուն	7
24. *	Ո ո	վո	o	**vo, o**	**vo, o**	nqûի	4
*	ՈՒ ու	ու	u	u	**u, v**	ուղտ	2
25.	Չ չ	չա	ch‘	ch‘	ch’	չմուշկ	5
26.	Պ պ	պէ	p	p	**b**	պար	5
27. *	Ջ ջ	ջէ	j	j	**ch‘**	ջուր	12
28.	Ռ ռ	ռա	ṛ	ṛ	ṛ	ռûգեղջիւր	10
29.	Ս ս	սէ	s	s	s	սկիւռ	1
30.	Վ վ	վեւ	v	v	v	վարդ	8
31. *	Տ տ	տիւն	t	t	**d**	տուն	1
32.	Ր ր	րէ	r	r	r	րոպէ	1
33.	Ց ց	ցո	ts‘	ts‘	ts‘	ցûցուղ	10
34. *	Ւ ւ	յիւն	w	v	**v, w**	ûաւ, սիւն	2
35.	Փ փ	փիւր	p‘	p‘	p‘	փիղ	11
36.	Ք ք	քէ	k‘	k‘	k‘	քաղաք	4
*	Եւ և	և	ew	yew, ew	yew, ew	արև	11
37. *	Օ օ	օ	ō	**o**	**o**	օդ, օձ	5
38. *	Ֆ ֆ	Ֆէ	f	f	f	Ֆուբպօլ	12

1. The first column presents the character position in the alphabet. All characters which have undergone a sound change in WA and EA have an asterisk in this column. The original Mesropian alphabet from the 5th century has 36 letters. The digraphs ու and և have no value of a letter in it although they are used in writing. In standard Middle Armenian, since 12th c. the letters օ and Ֆ were added. The modern WA alphabet presents these 38 letters. The digraphs ու and և were included into the RO alphabet and ւ was eliminated and as the 34th character. In all other alphabetical lists, like dictionaries, ու follows ո with no position of its own in the alphabet save the publications in RO. Recently, the status of և changed anew; it is called a writing symbol (ստուգաշան) and the alphabet both in Armenia and Diaspora has 38 characters.

2-3. The second column presents the characters, and the third, their alphabetical names. In WA and Iranian EA schooling, they are employed in the alphabet recitation (*ayp, pen, kim, ta, yech, za*, or *ayb ben gim da,* etc.), whereas in RO schooling the sound values of characters are used (a, bĕ, gĕ, dĕ, ye, zĕ, etc.).

4-5-6. The next three columns present the pronunciation of characters in Old, Eastern and Western Armenian. Three characters are represented with two sets of symbols, one for transcription: Ըը ə, Էէ e, Օօ o and another, transliteration: Ըը ĕ, Էէ ē, Օօ ō. The sound changes are marked with bold characters. Obviously, there are no

audio-records from Old Armenian. Linguists recover the original sounds and their changes by examining 1) errors of scribes, 2) borrowings from other languages and 3) modern dialectal sounds. For example, the letter n originally sounded [o], otherwise the Greek *ocean* (spelled with an initial ω) would not be transcribed into nվկիաճnu in Old Armenian. This old pronunciation remains in the word nվ in standard WA and EA and in several dialects, e.g., nuկի is [oski] and nչխաp is [ochkhar] in Karin dialect and its Giumri branch. Likewise, ե is still simple [e] in some dialects, e.g., երթալ is [etal] in Yerevan colloquial speech (dialect of Ararat valley and others). For modern Armenian, the symbols [ē] and [ō] transliterate է and o, that is, they show the way words are spelled. In transcription which shows their pronunciation, they are identical with ե [e] and n [o] save initial positions, where the latter sound [ye] and [vo]. Foreign borrowings containing the sound [l] in Old Armenian were transcribed with ղ [gh], e.g., Ղուկաս from Greek *Lukas*. These four sound changes է > [e], ե > [ye], n > [vo] and [l] > ղ, are characteristic to both modern standards of Armenian. There are three more common sound changes which have been obscured by RO: յ [y] > [h], nւ [u] > [v] before vowels, and ւ [w] > [v] except in diphthongs. And finally, again around Middle Armenian, we learn about the consonant shift both from scribes' errors and from the transcription of borrowed words, e.g., the French *baron* is written պարոն which means that the voiceless consonants sound as voiced, like in modern WA; there is linguistic and historic evidence that the consonant shift precedes the era of Middle Armenian. Evidently, around 5th c. when Mesrop created the alphabet, the standard Old Armenian was based on a group of dialects that later would be referred as Eastern, whereas the standard Middle Armenian is based on dialects later referred as Western.

7. Keywords in lessons and in appendices 1, 2 and 3 are often different. In lesson-chapters, we tend to use keywords we could write with already introduced letters. The variation in appendices pursues to present common words used in both modern versions and allows you to choose your favorite to associate it with a letter in your learning process.

8. In the last column, the Lesson numbers refer you to the details of pronunciation and spelling.

The chart below presents the Armenian alphabet in different fonts to assist you to perceive and observe the permissible variations in character shapes.

The Armenian Alphabet in Different Fonts with the Original Pronunciation

Letter Name, Position & Original Pronunciation			**Characters in Different Fonts**					*Italics*	
1.	այբ	[a]	Աա	Աա	Աա	**Աա**	Աա	*Աա*	*Աա*
2.	բեն	[b]	Բբ	Բբ	Բբ	**Բբ**	Բբ	*Բբ*	*Բբ*
3.	գիմ	[g]	Գգ	Գ գ	Գ գ	**Գ·գ**	Գ գ	*Գգ*	*Գ գ*
4.	դա	**[d]**	Դդ	Դդ	Դդ	**Դ·դ**	Դդ	*Դդ*	*Դդ*
5.	եչ	**[e]**	Եե	Եե	Եե	**Եե**	Եե	*Եե*	*Եե*
6.	զա	[z]	Զզ	Զզ	Զզ	**Զզ**	Զզ	*Զզ*	*Զզ*
7.	է	**[ē]**	Էէ	Էէ	Էէ	**Էէ**	Էէ	*Էէ*	*Էէ*
8.	ըթ	[ə]	Ըը	Ըը	Ըը	**Ըը**	Ըը	*Ըը*	*Ըը*
9.	թո	[t‘]	Թթ	Թթ	Թթ	**Թ·թ**	Թթ	*Թթ*	*Թթ*
10.	ժէ	[zh]	Ժժ	Ժժ	Ժժ	**Ժ·ժ**	Ժժ	*Ժժ*	*Ժժ*
11.	իւի	[i]	Իի	Իի	Իի	**Իի**	Իի	*Իի*	*Իի*
12.	լիւն	[l]	Լլ	Լլ	Լլ	**Լլ**	Լլ	*Լլ*	*Լլ*
13.	խէ	[kh]	Խխ	Խխ	Խխ	**Խխ**	Խխ	*Խխ*	*Խխ*

14.	ծա	**[ts]**	Ծծ	Ծծ	Ծծ	**Ծծ**	Ծծ	*Ծծ*	*Ծծ*
15.	կեն	**[k]**	Կկ	Կկ	Կկ	**Կկ**	Կկ	*Կկ*	*Կկ*
16.	հո	[h]	Հհ	Հհ	Հհ	**Հհ**	Հհ	*Հհ*	*Հհ*
17.	ձա	**[dz]**	Ձձ	Ձձ	Ձձ	**Ձձ**	Ձձ	*Ձձ*	*Ձձ*
18.	ղատ	**[l]**	Ղղ	Ղղ	Ղղ	**Ղղ**	Ղղ	*Ղղ*	*Ղղ*
19.	ճէ	**[ch]**	Ճճ	Ճճ	Ճճ	**Ճճ**	Ճճ	*Ճճ*	*Ճճ*
20.	մեն	[m]	Մմ	Մմ	Մմ	**Մմ**	Մմ	*Մմ*	*Մմ*
21.	յի	**[y] [h]**	Յյ	Յյ	Յյ	**Յյ**	Յյ	*Յյ*	*Յյ*
22.	նու	[n]	Նն	Նն	Նն	**Նն**	Նն	*Նն*	*Նն*
23.	շա	[sh]	Շշ	Շշ	Շշ	**Շշ**	Շշ	*Շշ*	*Շշ*
24.	վո	**[o]**	Ոո	Ոո	Ոո	**Ոո**	Ոո	*Ոո*	*Ոո*
	ու	**[u]**	*Ուու	Ուու	Ուու	**Ուու**	Ուու	*Ուու*	*Ուու*
25.	չա	[ch‘]	Չչ	Չչ	Չչ	**Չչ**	Չչ	*Չչ*	*Չչ*
26.	պէ	**[p]**	Պպ	Պպ	Պպ	**Պպ**	Պպ	*Պպ*	*Պպ*
27.	ջէ	**[j]**	Ջջ	Ջջ	Ջջ	**Ջջ**	Ջջ	*Ջջ*	*Ջջ*
28.	ռա	[ṛ]	Ռռ	Ռռ	Ռռ	**Ռռ**	Ռռ	*Ռռ*	*Ռռ*
29.	սէ	[s]	Սս	Սս	Սս	**Սս**	Սս	*Սս*	*Սս*
30.	վեւ	[v]	Վվ	Վվ	Վվ	**Վվ**	Վվ	*Վվ*	*Վվ*
31.	տիւն	**[t]**	Տտ	Տտ	Տտ	**Տտ**	Տտ	*Տտ*	*Տտ*
32.	րէ	[r]	Րր	Րր	Րր	**Րր**	Րր	*Րր*	*Րր*
33.	ցո	[ts‘]	Ցց	Ցց	Ցց	**Ցց**	Ցց	*Ցց*	*Ցց*
34.	յիւն	**[w]**	Իւ	Իւ	Իւ	**Իւ**	Իւ	*Իւ*	*Իւ*
35.	փիւր	[p‘]	Փփ	Փփ	Փփ	**Փփ**	Փփ	*Փփ*	*Փփ*
36.	քէ	[k‘]	Քք	Քք	Քք	**Քք**	Քք	*Քք*	*Քք*
	եւ	**[ev]**	*և	և	և	**եւ**	և	*և*	*և*
37.	օ	**[ō]**	**Օօ	Օօ	Օօ	**Օօ**	Օօ	*Օօ*	*Օօ*
38.	ֆէ	[f]	**Ֆֆ	Ֆֆ	Ֆֆ	**Ֆֆ**	Ֆֆ	*Ֆֆ*	*Ֆֆ*

APPENDIX 4 THE CONSONANT SHIFT IN ARMENIAN

DUAL OPPOSITION OF VOICED AND VOICELESS CONSONANTS IN WESTERN ARMENIAN

The historical consonant shift, which took place in or before Middle Armenian (12th-16th centueis), brought about a new consonant system in standard WA with dual oppositions similar to the English consonant system. As a result, the five voiced consonants in the chart below maintain a phonetic writing, although they became voiced compared to voiceless sounds in Grabar. The other ten characters pair up for only five consonant sounds—two letters for each voiceless aspirated phoneme (details in Lesson 13).

VOICED		VOICELESS, ASPIRATED		
Պ պ	[b]	Բ բ	Փ փ	[p‘]
Տ տ	[d]	Դ դ	Թ թ	[t‘]
Կ կ	[g]	Գ գ	Ք ք	[k‘]
Ճ ճ	[j]	Ջ ջ	Չ չ	[ch‘]
Ծ ծ	[dz]	Ձ ձ	Ց ց	[ts‘]

TRIPLE OPPOSITION OF VOICED, VOICELESS, AND ASPIRATED CONSONANTS IN EASTERN ARMENIAN

*VOICED		VOICELESS		VOICELESS, ASPIRATED	
Բ բ	[b]	Պ պ	[p]	Փ փ	[p‘]
Դ դ	[d]	Տ տ	[t]	Թ թ	[t‘]
Գ գ	[g]	Կ կ	[k]	Ք ք	[k‘]
Ջ ջ	[j]	Ճ ճ	[ch]	Չ չ	[ch‘]
Ձ ձ	[dz]	Ծ ծ	[ts]	Ց ց	[ts‘]

The Grabar consonant system is better preserved in the standard EA. The voiced consonants, marked with an asterisk in the chart above, undergo quite systematic but only positional devoicing and aspiration in EA (details in EA Lessons 4 and 13).

Appendix 5 Numbers and Dates Թիւ եւ Թուական

1. *The Numerical Value of the Mesropian Alphabet:*
Year 2005 **ՍՋ թուական.** Appendix 5 **Յաւելուած Ջ.**

Ա	1	Ժ	10	Ճ	100	Ռ	1000
Բ	2	Ի	20	Մ	200	Ս	2000
Գ	3	Լ	30	Յ	300	Վ	3000
Դ	4	Խ	40	Ն	400	Տ	4000
Ե	5	Ծ	50	Շ	500	Ր	5000
Զ	6	Կ	60	Ո	600	Ց	6000
Է	7	Հ	70	Չ	700	Ւ	7000
Ը	8	Ձ	80	Պ	800	Փ	8000
Թ	9	Ղ	90	Ջ	900	Ք	9000

2. Months and Week Days with Numbers

ՔԱՆԱԿԱԿԱՆ Cardinal	ԴԱՍԱԿԱՆ Ordinal	ԱՄԻՍ Month	ՇԱԲԱԹ Week
1 մէկ	1st առաջին	յունուար	կիրակի
2 երկու	2nd երկրորդ	փետրուար	երկուշաբթի
3 երեք	3rd երրորդ	մարտ	երեքշաբթի
4 չորս	4th չորրորդ	ապրիլ	չորեքշաբթի
5 հինգ	5th հինգերորդ	մայիս	հինգշաբթի
6 վեց	6th վեցերորդ	յունիս	ուրբաթ
7 եօթը WA, յոթ EA	7th եօթներորդ	յուլիս	շաբաթ
8 ութ	8th ութերորդ	օգոստոս	
9 ինը	9th իններորդ	սեպտեմբեր	
10 տասը WA, տաս EA	10th տասներորդ	հոկտեմբեր	
11 տասնմէկ	11th տասնմէկերորդ	նոյեմբեր	
12 տասներկու	12th տասներկրորդ WA	դեկտեմբեր	
20 քսան	20th քսաներորդ		
22 քսաներկու	22nd քսաներկրորդ WA	քսաներկուերորդ EA	
30 երեսուն	30th երեսուներորդ		
33 երեսուներեք	33rd երեսուներրորդ WA	երեսուներեքերորդ EA	
40 քառասուն	40th քառասուներորդ		
50 յիսուն	50th յիսուներորդ		
60 վաթսուն	60th վաթսուներորդ		
70 եօթանասուն	70th եօթանասուներորդ		
80 ութսուն	80th ութսուներորդ		
90 իննսուն	90th իննսուներորդ		
100 հարիւր	100th հարիւրերորդ		
200 երկու հարիւր	200th երկու հարիւրերորդ		
1000 հազար	1000th հազարերորդ		

Common Phrases and Everyday Expressions

These common phrases will be helpful for you in everyday communication. Phrases are presented by topics—address forms, greetings, thanks, etc. Phrases specific to WA or EA are marked toward right WA/EA. Unmarked phrases are used both in WA and EA (though frequency may differ). Grammatical differences between WA and EA are given either through parenthesis and/or repetition; that is, Բարև ձեզ is the all-Armenian form, in WA also—(ձեզի WA) or: Ապրի՛ս: Ապրի՛ք: WA; Ապրե՛ս: Ապրե՛ք: EA. *RO is ignored.*

Address Forms

Պարոն *Sir.* **Պարոն Հուրեան** *Mister Hourian*
Պարոններ, պարոնայք *Gentlemen*
Տիկին *Madam.* **Տիկին Հուրեան** *Mrs. Hourian*
Տիկիններ, տիկնայք *Ladies*
Օրիորդ *Miss*
Բարեկամ *Friend*
Եղբայր *Brother.* All blood-kinship terms are used as informal-friendly address forms; also for semiformal-polite address esp. in colloquial speech: **ապէ, քուր(օ), հոպար, մօրքուր/մօրաք.**
Արա EA coll., **ծո** WA, colloquial; common interjection—address for men, also a filler in conversation. Rude if addressed off intimate circles.
Ընկեր/ընկերուհի WA: political party address form between members. EA: formal/semiformal address form in communist times, esp. with preceding interjection **այ**
Ընկեր EA: conv. Informal address between friends and acquaintances, often followed with **ջան**
Քաղաքացի/քաղաքացուհի EA: formal address form in communist times, esp. in the legal sphere.

Endearing Expressions as Address Forms

Անուշ(իկ)ս *Sweetheart*
Ուտեմ քեզ(ի) *Darling, dear.* Lit. I'd eat you.
Ճանս, ճանիկս WA **Ջանս, ջանիկս** EA *Darling, dear*
Հոգիս WA *My soul*
Հոգիդ սիրեմ WA *May that I love your soul.* An opening for an intimate warning or reproach.
Ցաւդ տանեմ EA *May that I take your pain.*
Բալիկս EA, **Ձագուկս** WA *My child* (first name) **ջան** EA *Dear (name),* intimate, semi-formal
Քաղցրս EA *Sweetheart (my sweet)*
Մատաղ (լինեմ) քեզ EA *May that I be a sacrifice for you.* informal, endearing.
Կեանքիդ մեռնեմ EA *I'd die for you.* Blessing

Greeting and Leave-taking

Բարեւ, բարև *Hello;* Common greeting for all occasions
Բարև ձեզ (ձեզի WA) *Hello*; plural or formal-reverential-singular
Բարի եկար/եկաք WA; **Բարով եկար/եկաք** EA *Welcome.* Accepting guests; thanking. Formal, semiformal
Բարով եկար/եկաք, հազար բարի: *Welcome, a thousand greetings.* Accepting guests; semiformal
Ողջոյն(ներ) *Hi. Ciao.* Greeting and leave-taking, for all occasions
Բարի լոյս *Good morning* Formal, semiformal
Բարի օր *Good day, hello* Formal, semiformal
Բարի կէսօր WA *Good afternoon, hello.* A calque from English good afternoon, common in American-Armenian Diaspora; formal, semiformal
Բարի երեկոյ *Good evening.* Formal, semiformal
Բարի իր(ի)կուն *Good evening.* Informal
Ցտեսութիւն *Good bye.* Lit. *Till next meeting.* For all occasions; formal, semiformal
Ցը *Bye. See you.* Informal, from ցտեսութիւն
Երթաս/ք բարով WA. **Գնաս/ք բարով** EA *Good bye* Go with goodness. Addressing the leaving party; formal, semiformal.
Մնաս/ք բարով *Good bye* Stay with goodness. Addressing the staying party; formal, semiformal.
Բարի գիշեր *Good night*
Գիշեր բարի *Good night;* in response to բարի գիշեր.
Լոյս բարի *Good night.* In response to **բարի գիշեր** or **գիշեր բարի.**
Կը տեսնուինք WA *See you. We'll* see each other. Calque from English See you.
Հելանք, (դէ) կը զանգուինք EA, coll.; *let's get going, we'll call each other.*
Առայժմ EA *Bye, see you, so long, ciao.* Formal, semiformal.

Յաջողութիւն EA *Good bye. Good luck.* Lit. *Success. Go with goodness/success.* For all occasions. Formal, semiformal.

Յաջող EA *Bye. See you.* Informal; from յաջողութիւն.

Լաւ կաց(էք), մնա(ցէք) EA *Bye. Be well.*

Ձիզ մնա(ցէք) EA *Bye. Stay strong.*

Ոչ ու բարով էինք հանդիպել EA *I wish we'd never met.* To express regret and blame; informal

Բարեւէ՛ / Բարևի՛ր *Say hello to* Imperative Singular of the verb բարևել to greet.

Բարին ձել (քեզ) հետ EA *May goodness be with you.* Formal, semiformal

Յարգանացս հաւաստիքը *Best regards* Lit. *(sending-presenting) the guarantees of my regards/respects.* Formal; loan from Grabar.

Ողջ լե՛ր Sn. **Ողջ լերուք** PL. Be well *Stay/be well/safe.* Formal, loan from Old Armenian

Հրաժեշտ Farewell *Noun*—հրաժեշտի պահ, օր *moment, day of farewell.* Հրաժեշտ տալ *say farewell;* .e.g., Եկայ հրաժեշտ տալու *I came to say good bye.* Հրաժեշտ առաւ: *He bid good bye.*

Ինչպէ՞ս ես *How are you?* Formal, semiformal

Ինչպէ՞ս էք *How are you?* Plural or formal-reverential-singular

Ի՞նչ կայ-չկայ *How is it going? What's up?* Informal

Ո՞նց ես (էք) EA *How are you?* Informal

Լաւ (եմ, չեմ) *Fine (I am, I am not).*

Աղէկ (եմ, չեմ) WA *Fine. Well.* Bolis Armenian

Հոյակապ, հրաշալի *Great, wonderful.*

Կամաց-կամաց *So-so, OK.*

Վատ չեմ *Not bad. OK*

Գէշ չեմ WA *Not bad. OK*

Ոչինչ EA *So-so, OK.* Lit: *Nothing (special is going on).* Formal, semiformal

Ըսենց էլի EA *So-so.* Lit: *Like this.* slang.

Ըսենց էլ որ մնա լաւ ա: EA *OK.* Lit: *it's OK if it stays as is.* Coll, informal

Մի քիչ էլ կը վատանայ ու յետոյ լաւի կ'երթայ EA, coll; *It will worsen somewhat more and then get better.*

Մի քիչ էլ կը վատանայ ու էդպէս օլ կը մնայ EA, coll; *It will worsen somewhat more and stay like that.*

Բա՞ն (մը WA) կայ *Is something wrong?* Lit. *Is there anything?*

Բա՞ն է եղել EA **(էլել** coll.) *Is something wrong?*

Բան չկայ *Nothing special.* Lit. There's nothing

Thanks, You Are Welcome; Please; Sorry

Շնորհակալութիւն *Thank you. Thanks.* Thank you. For all occasions.

Շնորհակալ եմ *Thank you. I thank (you).* For all occasions.

Երախտապարտ եմ *I am grateful.*

Զգացուած եմ *I appreciate it, I am moved.* I am moved, excited.

Կեցցե՛ս: Կեցցէ՛ք: *Bravo! Good for you. Viva!* For approval, praise, *semiformal.*

Ապրի՛ս/ք: WA. **Ապրե՛ս/ք:** EA *Good for you. Thanks Live (long)!* Sn. & Pl. Informal approval for persons younger than the speaker

Վարձքդ կատար WA. *Thank you.* Lit. May that you be paid. Formal, semiformal

Ձեռքերդ դալար *Thank you.* Lit. May your hands stay fresh, supple. Formal, semiformal

Պարտական եմ EA *I owe you one.* Formal, semiformal

Գոհ եմ/ենք *Thank you.* Lit. I am happy/satisfied. Formal, semiformal

Բարով եկար/ք: *You are welcome.* Welcome! Formal, semiformal.

Խնդրեմ *You are welcome. Please* Frozen from **խնդրել** to ask for. For all occasions. More frequent in EA

Սիրով *Sure, with love.* Formal, semiformal.

Հաճոյքով *Sure, with pleasure.* Formal, semiformal.

Ուրախութեամբ *Sure, Gladly.* Formal, semiformal.

Չ'արժէ EA, **չ'արժէր** WA *Not at all. Sure.* Lit. It is (was) not worth (thanking).

Անուշ ըլլայ/լինի *You are welcome!* Lit. Let it be sweet. For eating situations.

Անցած ըլլայ/լինի *It will be OK.* Lit. *May it(trouble) be gone, forgotten.* After thanking, apologizing, as consolation, semiformal.

Հաճիս/ք WA *Please.* For all occasions.

Կը խնդրեմ WA. **Խնդրում եմ** EA *Please. Would you please?* Formal, semiformal

Շնորհ ըրէ՛ք / արէ՛ք *Would you please?* Lit. *Do me a grace/favor.* Formal

Համեցէ՛ք Համեցիր EA. **Հրամմեցէ՛ք**

Հրամմէ՛ WA *Please. Come in. Help yourself.* Invitation to act. For all occasions.

Բան չկայ *Never mind.*

Վնաս չունի: *It's OK. No harm done.*

Բան մը չէ WA *Never mind. It's OK* Lit. *It's nothing.* For all occasions.

Ոչինչ EA. **Ոչինչ բան է** WA *Not at all.* Lit. *It is nothing.* For all occasions.

Ողորմի հօրդ (մօրդ) EA *Please. Be blessed.* Lit. *May your father (mother) rest in peace.* Informal, used by older generations as 'would you please?'
Ներողութիւն *Excuse me, I'm sorry.* For all occasions, formal, semiformal
Ներեցէ՛ք *Excuse me. Pardon.* Pl. for all occasions.
Կը ներես *Excuse me. Forgive me.* Sn. for all occasions, informal.
Ներող կ'ըլլաս WA / կը լինես EA *Excuse me. Pardon..* Semiformal.
Ներողամիտ եղէ՛ք: *Pardon. Excuse me..* Formal.
Ներէ՛: Ների՛ր *Sorry; forgive (me).* Sn. informal.
Ափսոս *Sorry.* Semiformal; formal in WA.
Մե՛ղք (է) WA *Sorry* Lit. *It is a pity.* For all occasions, semiformal, informal.
Ցաւալի է *It's sad/ painful/ regretful* Formal.

Congratulations

Շնորհաւոր. Շնորհաւորութիւններ. Շնորհաւորանքներ *Congratulations* For all occasions; formal, semiformal.
Շնորհաւոր Սբ. Ծնունդ *Merry Christmas* Congratulations for the occasion of the Sacred Birth.
Շնորհաւոր Նոր Տարի *Happy New Year*
Շնորհաւոր Կաղանդ *Merry Christmas, Happy New Year*
Շնորհաւոր տարեդարձ Ծնունդդ շնորհաւոր EA. Քարի տարեդարձ, Շատ տարիներու WA *Happy birthday*
Շնորհաւոր տօնդ / Ձեր տօնը (Մայրերուն օրը WA. Մայրերի օրը EA) *Happy Holidays (Happy Mothers' Day);* formal, semiformal.
Շնորհաւոր Ձեր յոբելեանը *Happy Jubilee* Formal, semiformal.
Շնորհաւորանքներ յոբելեանի առթիւ *Happy Jubilee Congratulations for the occasion of the jubilee.* Formal

Opinion, Feelings and Situations

Այո: Հա *Yes. Yeah*
Ոչ: Չէ *No*
Չէ հա *Yeah right!*
Հապա *Then. Well. Introductory word*
Նոյնիսկ *Even.* Անգամ EA *Even*
Այս պարագային WA Այս պարագայում, դէպքում EA *In this case*
Մանաւանդ (որ), նամանաւանդ *Especially*
Նոյնպէս *Also, as well*
Նմանապէս *Also, the same as*
Իհարկէ *Sure, of course, certainly*
Հարկաւ *Of course*
Անպայման *Sure*
Առանց խօսքի EA *Sure*
Որոշակիօրէն EA *Definitely*
Հաստատ EA *Sure*
Վստահ WA *Sure*
Անշուշտ *Sure*
Բացարձակապէս *Absolutely*
Ճիշդ է *That's right, correct*
Ճիշտ է, այդ է որ կայ EA *Right; that's just it.*
Շիտակ է WA *That's right. Correct*
Սխալ է *That's wrong*
Բնական է: *It is natural, normal.*
Իրաւունք ունիք WA *You are right.*
Իրա՞ւ WA *Really? Is that right (true)?*
Լաւ գաղափար է: *Good idea*
Հաճելի է: *It is nice (pleasant).*
Հրաշալի է: *It is wonderful.*
Հոյակապ է *It is magnificent, gorgeous.*
Շքեղ է: *It is grand, splendid.*
Գուցէ *Perhaps*
Մի՞թէ *Is that true? I wonder*
Իսկապէ՞ս *Really?*
Կարելի՞ է: *Really? May I?*
Կարելի է: *Maybe, perhaps. One may/can.*
Կարծեմ (թէ) *I think. I suppose*
Հաւանաբար *Probably*
Հաւանական է: *It is probable.*
Հնարաւոր է: *It is possible.*
Անհաւատալի *It's unbelievable, incredible*
Անկարելի չէ: *It is not impossible.*
Անհնար(ին), անկարելի է *It is impossible.*
Ըսենք (թէ) WA Ասենք (թէ) EA *Say, let's assume*
Դիցուք EA *Let's assume* science textbook use from Grabar subjunctive for դնել
Նշան(ակութիւն) չունի: *Doesn't matter. I don't care.*
Ձգէ՛: WA Թող EA *Let it go!* Informal
Գրողի ծոցը *Go to hell; I don't give a damn.* Curse, Rude
Աստուած հետը: *Forget it (him, her). Lit. May God be with it (him her—not me/us).*
Ինչ փոյթ: WA.Ցետոյ ինչ: EA *Never mind. So what? Who cares?*
Պէտքս չէ: Շատ (էլ) պէտքս է: EA *I don't care. Doesn't matter.* Informal, rude
Կա՛ց EA *Hold on! Stop!*

Կեցի՛ր: Կեցէ՛ք WA *Hold on! Stop!*
Սպասեցէ՛(ք): *Wait!*
Զգո՛յշ: *Watch out. Be careful!*
Եկ՛եք: Եկու՛ր: Հա՛տէ WA **Արի: Դէ՛ արի** EA *Come on.* Informal
Պէտք է: *It is necessary.*
Ուրախ եմ: *I am happy (glad).*
Գոհ եմ: *I am glad/ pleased*
Կատարեալ գլուխգործոց (մըն) է: *It is a genuine masterpiece.*
Ահ, ի՛նչ երջանկութիւն: *Oh, what a happiness!*
Բախտս բերաւ / բերեց *I got lucky.*
Բախտս չբալեց WA *I got no luck.*
Զարմանալի է: *It is a amazing.*
Ապշեցուցիչ է: *It is astonishing.*
Կատարեալ անակնկալ է: *It is a complete surprise.*
Տէ՛ր Աստուած: *Oh, God! Oh, my goodness!*
Աստուած սիրես: Աստծոյ սիրոյն: Աստու սիրուն: *For God's sake. For Chrissake*
Որու՞ն / ու՞մ մտքով կ'անցնէր: *Who would ever guess it?*
Չլսուած բան է: *It is unheard of, it is impossible*
Ամօթ է: *It is a shame.*
Երթանք, հոգիս WA *Let's go, sweetheart.*
Մտիկ ըրէ՛ (ք) WA *Look, I say (invitation to concentrate attention)*
Ուղեղս կեցաւ WA **Ցնդայ** EA *It is shocking.* Informal
Շատ կարելի է որ WA *It is very likely that*
Չեղաւ: Չ'ըլլար WA: **Չի լինի** EA *It won't do.*
Գժուելու բան է EA **Խենթենալիք է** WA *It's impossible, shocking.* Informal
Բան չկայ EA *Never mind*
Բաւական է EA **Բաւ է** WA *That's enough.* Formal, semiformal
Գիժ է EA **Խենդ է** WA *S/he is crazy* Informal
Նազ է ծախում EA **Նազ կ'ընէ** WA *S/he is playing, pretending, toying with to get more attention.* Informal, critical.
Վերջ տու՛ր, վազն արի / անցիր EA. **Վազ անցի՛ր** WA *Stop it. Let go.* informal
Չլինելու բան է EA **Չըլլալիք է** WA *That cannot be.*
Անկարելի բան է *That is impossible (incredible).*
Գիտեմ: *I know.*
Կրնամ: Կարող եմ *I can.*
Համաձայն եմ: Յօժար եմ: *I am willing.*
Համամիտ եմ: *I agree.*
Զբաղուած եմ: *I am busy.*
Զայրացած եմ: Բարկացած եմ *I am angry.*
Անտրամադիր եմ *I am upset.* **Նեղուած եմ** EA *I am upset.*
Մտահոգ եմ. Անհանգիստ եմ EA *I am worried*
Լաւ չեմ զգում EA **Անհանգիստ եմ** WA *I am a little sick, not feeling alright..*
Սիրտ չունիմ/չունեմ *I am sad-uninterested.* Lit. *have no heart.*
Հաւէս չունեմ EA *I don't feel like*
Խօշիս եկաւ WA. **հաւէս էր, հաւէսս եկաւ** EA *I enjoyed it.* Informal
Անօթի եմ WA **Քաղցած / Սոված եմ** EA *I am hungry.*
Ծարաւ եմ: *I am thirsty.*
Գինով(ցած) խմած եմ: *I am tipsy, drunk.*
Կուշտ եմ: *I am full.*
Յոգնած եմ: *I am tired*
Ուժասպառ եմ EA *I am exhausted.*
Մեռած եմ ու թաղած չեմ *I am extremely exhausted, emotionally drained.* Lit. I am dead and not buried. Informal
Քունս կը տանի: WA **Քունս տանում է, աչքրես փակւում եմ:** EA *I am sleepy; I want to sleep* (before going to bed)
Քունս գլուխս է *I am still sleepy* (after waking up). **Քնագլուխ եմ** Parskahayk. Cf. English sleepyhead.
Անքուն եմ: Քուն ունիմ WA *I have sleep.*
Մսած եմ WA. **Մրսած եմ** EA *I have cold.*
Ցուրտ է Պաղ է WA *It is cold.*
Շոգ է EA **Տաք է** WA *It is hot.*
Տխուր է *It is sad.*
Սոսկալի է *It is awful.*
Անհեղի վիշտ է *It is an overwhelming sorrow.*
Կը ցաւիմ/ ցաւում/ցաւակցում եմ Ձեր կորուստի համար *I am sorry for your loss*
Ընդունեցէ՛ք անկեղծ ցաւակցութիւններս *Accept my sincere sympathies.*

Common Questions and Replies

Ի՞նչ է Ձեր անունը: Formal **Անունդ ի՞նչ է:** Informal *What is your name?*
Արամ: Անունս Արամ է: Ես Արամն եմ: *Aram. My name is Aram. I am Aram.*
Ձեր մականունը WA **ազգանունը** EA **ի՞նչ է:** *What is your last name?* Formal
Քանի՞ տարեկան ես (էք): *How old are you?*
Քսան: (Ես) քսան տարեկան եմ: *I am twenty years old.*
Ու՞ր կ'ապրիս (կ'ապրիք): WA **Որտե՞ղ էք (ես) ապրում:** EA *Where do you live?*

Լօս Անճելէս կ'ապրիմ WA. Երևանում եմ ապրում EA. *I live in Los Angeles/Yerevan.*
Ծնողներիդ հե՞տ *With your parents?*
Ո՛չ, անոնք առանձին կ'ապրին: WA Նրանք մենակ են ապրում: EA *No, they live by alone.*
Ամուսնացա՞ծ ես: *Are you married?*
Ամուրի եմ (բաժնուած / բաժանուած եմ): *I am single (divorced).*
Ի՞նչ կ'ընես WA. Ի՞նչ ես անում: EA *What do you do/what are you doing?*
Շուկայ կ'երթամ: WA Խանութ (գնումների) եմ գնում: EA *I am going for shopping.*
Կը սորվիմ/կ'ուսանիմ, համալսարանի աշակերտ եմ: WA. *I study, I am a university student.* Ուսանող եմ, համալսարանում եմ սովորում EA: I am a student. I study at the university.
Դուք ի՞նչ էք: *What are you?*
Դերձակ եմ, իմ անձնական գործս ունիմ WA. Դերձակ եմ, իմ սեփական գործը /բիզնես ունեմ: EA *I am a tailor; I have own my business.*
Բժիշկ եմ, կ'աշխատիմ / աշխատում եմ: *I am a doctor, I work.*
Խանութ ունիմ/ունեմ, առևտուր կ'ընեմ /եմ անում: *I have a store, I trade/do business.*
Թօշակի եմ անցել/գնացել, թոշակառու եմ EA *I am retired.*
Գործազուրկ եմ: Գործ եմ փնտրում: EA *I am unemployed. I am looking for a job.*
Ինչո՞վ կրնամ օգտակար ըլլալ: WA Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել: EA *How can I help you?*
Ի՞նչ կրնամ ընել քեզ(ի) (Ձեզ) համար WA Ի՞նչ կարող եմ անել քեզ (Ձեզ) համար EA *What can I do for you?*
Քանի մը պէտք ունի՞ք: WA (Ինչ-որ) բա՞ն է պէտք EA *Do you need something?*
Հրամմեցէ՛ք, նստէ՛ք: WA Համեցէ՛ք, նստէ՛ք: EA *Have a seat, please.*
Ի՞նչ էիք ցանկանում: EA *What would you like?*
Ի՞նչ կը նախընտրէիք: *What would you prefer?*
Կ'ուզեմ (երթալ, առնել): WA *I want to (go, get)*
Կ'ուզենայի/ ուզում եմ (տեսնել, անել): EA *I would like to (see, do).*
Երանի կարենայի (գիտնայի) WA Երանի (երնեկ) կարողանայի (գիտենայի, իմանայի) EA *I wish I could (I knew).*
Սրտանց պիտի ուզէի WA կ'ուզենայի EA *I would really (cordially) like to*
Խնդրանք (մը) ունիմ /ունեմ *I have a favor to ask*
Եղաւ: *OK All right.*
Ուրախ եմ օգտակար ըլլալուս համար: WA *I am happy to be helpful.*
Նայիր (լսի՛ր), հետաքրքիր է: EA Մտիկ ըրէ (նայէ՛, նայի՛ր), հետաքրքրական է: WA *Listen (look), it's interesting.*
Կ'ընէի, եթէ կարենայի: WA Կ'անէի, եթէ կարողանայի EA *I would (do) if I could.*
Չհասկցայ: Չեմ հասկնար WA
Չհասկացայ: Չեմ հասկանում EA *I did not understand. I do not understand.*
Հայերէն կը խօսի՞ք / խօսու՞մ էք: *Do you speak Armenian?*
Անգլերէն գիտէ՞ք/ խօսու՞մ էք: EA *Do you speak English?*
Արևմտահայերէնից /գրաբարից լաւ չեմ: EA *I am not strong in* WA/*Grabar.* Informal
Արևելահայերէն/գրաբար չեմ հասկնար/գիտեր WA. *I don't understand/know* EA/*Grabar.*
Չեմ խօսիր, բայց կը հասկնամ: WA Խօսել չեմ կարող, բայց հասկանում եմ: EA *I don't speak, but I understand.*
Ի՞նչ ընել կ'ուզէ: WA Ի՞նչ է նշանակում: EA *What does (could) it mean?*
Ան ի՞նչ ընել է: WA Սա ին՞չ բան է: EA *What does this mean?*
Սրա իմաստն ի՞նչ է: EA *What 's the use? Why it that?*
Ատ ի՞նչ բանի կը ծառայէ: WA *What does it serve for? What 's the use?*
Քարի եղէք, խնդրեմ, ցույց տուէ՛ք կանգառը: EA *Would you be kind to show me the bus stop?* Formal
Ինչպէ՞ս գնամ Մատենադարան: EA *How can I go to Matenadaran?*
Կրնամ շնորհ մը խնդրել Ձեզմէ (քեզմէ): WA Կը ցանկանայի (կ'ուզենայի) մի շնորհ խնդրել: EA *Can I ask for a favor from you?* Formal
Կը ցաւիմ, որ զՁեզ (քեզի) անհանգիստ կ'ընեմ: Ցաւում եմ, որ անհանգստացնում եմ Ձեզ EA. *I am sorry to disturb you.* Formal
Հո չխանգարեցի EA. *Did I disturb you? I hope I didn't disturb you.* Semiformal
Ձեռքէս եկածը պիտի ընեմ: WA. Ձեռքիցս եկածը անելու եմ/կ'անեմ: EA *I'll do my best. I'll do the possible.*
Ձեր տրամադրութեան տակ եմ: *I am at you disposal.* Formal
Ապահով եղէ՛ք, վստահեցէ՛ք ինձ /ինծի: *Be sure, trust me.* Formal

IDIOMS

ԱՉՔ

իմ աչքիս լոյս my dear, darling, cf. *the apple of my eye*
աչքիս վրայ for sure, I promise
աչքը մէջն է longing for goods which are just about to end
աչքէս ինկաւ WA աչքիցս ընկաւ EA s/he disappointed me
աչքէ անցուցի WA աչքի անցկացրի EA I perused it
աչք տնկել to set eyes upon
աչքս խմեց I got attracted
ծակաչք, աչքը ծակ է greedy
աչքը բաց մեռաւ s/he died waiting for a loved one to arrive, usually, a grown up son or daughter.
աչքի բժիշկ good guess, EA *slang, lit.* eye-doctor

ՔԻԹ

քիթին-բերնին փակցուցի WA քթին-բերնին հասցրի EA I hit, slapped, struck without looking
քթի մազ meticulous, *lit.* nose hair
քիթը խոթել nose around
քիթը կախել to sulk, be in a funk
քիթը երկար է nosy, busybody
քիթէն բռնած տանիլ WA քթից բռնած մաճ ածել EA lead by nose, control
հօր քիթէն ինկած WA (հօր) քթից ընկած EA strong resemblance (with the father)
հոտէն քիթս փրթաւ WA հոտից քիթս թափաւ EA choking stench
քիթը տնկել arrogant, condescending, pretentious
քթի ծակ ունենալ figure out

ԲԵՐԱՆ Լեզու

լեզու-բերան չունի cannot talk
բերնէ-բերան by the word of mouth
խօսելէն բերանս մազ բուսաւ WA talk too much and achieve nothing
բերնին ջուրերը կը վազեն WA լոզերը գնացին EA mouth watered, tempted, eager, and unable
բերանը բաց մնաց surprised, astonished
բուլբերան, բացբերան, բերանբաց unable to hold a secret
մարդոց բերանը իյնալ WA մարդկանց բերանն ընկնել EA become a subject of negative discussion
բերանը ջուր առաւ shut up, kept silent
լեզուն երկար է talk without consideration, break social norms of conversation
լեզուդ քաշէ / քաշիր hold your tongue, shut up

ԽԵԼՔ

խելքը կերաւ manipulate, talk into
խելքի մօտիկ possible, makes sense
խելքը բոցնել go crazy, lose the mind
խելքը գլուխը մարդ a smart and reliable person
խելքդ սիրեմ you're stupid *ironic euphemism*
խելքի ծով bright, smart, *lit.* sea of brains, *often good humored teasing*
խելքդ գլուխդ ժողվէ /հաւաքիր get focused, come to your senses. *rude*
խելքիդ ձուն գայ your thoughts are worth nothing, *lit.* may it snow on your brains
ուղեղը ժագռուել է rusty brains, cannot figure out; *playful*

ԳԼՈՒԽ

գլխուն խաղ խաղցաւ WA գլխին խաղ խաղացին EA tricked, played a game on him
գլուխը կերաւ destroyed/killed him
գլխի ընկնել EA figure out
գլխէ հանեցին WA գլխահան արին EA manipulate, tempt into wrongdoing
գլուխն առաւ քալեց WA /գնաց EA went for good, leaving everything and everyone behind
գլուխս տարիր WA գլուխս տարար EA you got me fed up/annoyed with your chat
գլուխ ուտեցնել/արդուկել chatterbox
գլխուս վրայ տեղ ունիս WA գլխիս վրայ տեղ ունես EA you are welcome (for guests, *honorific*)

ՍԻՐՏ

սիրտս քաշեց I felt like
սիրտը կոտրած heartbroken, depressed
սիրտը առաւ s/he treated someone very special and make up after having hurt them
սիրտս կը մղկտայ մղկտում է EA dire and sharp emotional pain
սիրտ առաւ became brave, risked

ՈՒՏԵԼ

իրար միս կ՛ուտեն in endless scuffle, brawl
դրամը կերան WA փողերը կերան clandestine acquisition of designated funds
մատները միասին կերաւ WA մատները հետը կերաւ eat up the last crumb

ՁԱՆԱՁԱՆ

մէջքին կանգնել to support
վրաս գրէ WA yeah, right!
պոչ խաղ(ա)ցնել to toy with, flirt
պոզ ու պոչդ բուսաւ /բուսնեց EA you have achieved nothing special, *ironic*
ոտքը կտրել make someone to stop visiting them at their place, *lit.* to cut the leg
մուխդ պիտի մարեմ WA I'll get to you; *good humored threat*
տեղը տաք գտած է WA տաք տեղ է գտել EA settle down well and use it; *critical*
չեմ ուզեր /ուզում գրպանս դիր tricks to solicit persuasion to get what they want; *critical*
շինողին միջից հանեց s/he ate up the last crumb
երկինքէն ինկաւ WA երկնքից է ընկել EA innocent and unaware, *critical*
կեանքում չհաւատաս EA not in your life—never, absolutely no.

NOMINAL DECLENSION: THE GRAMMATICAL CATEGORIES OF NOUNS IN EA & WA

Details in Lessons 3, 4, 9, 11, 12, 15

1. Number: *singular* աստղ, կրակ, *plural* աստղեր, կրակներ. EA & WA diverge in plural genitive.

Number in WA and EA				
Singular	Plural	Singular	Plural	Plural Genitive
Monosyllabic -եր		Polysyllabic -ներ		
հայ	հայեր	ծաղիկ	ծաղիկներ	EA ն/երի
աստղ	աստղեր	բարեկամ	բարեկամներ	WA ն/երու
ծով	ծովեր	երեկոյ	երեկոներ	
Exception: monosyllabic nouns assuming -ներ—բեռ դուռ եզ բոռ լեռ հարս մատ մուկ ծուկ ձեռ ոտ ոռւս.				

2. Definiteness: *Definite* աստղ-ը/ն, ձին. *Indefinite* աստղ and WA աստղ մը, EA մի աստղ.

In EA, definiteness is expressed in nominative, dative and accusative.

In WA, in all cases but the instrumental.

All cases in both versions can take the possessive articles u and դ. which imply definiteness and exclude the definite and indefinite areticles. Parenthesis mark the optional use of definite/indefinite forms.

The Definiteness in Case Forms				
Case	Definite	Indefinite	Definite	Indefinite
	WA		EA	
Nom	Հայկը գիրքը	գիրք (մը)	Հայկը գիրքը	(մի) գիրք
Gen	Հայկին գ(ի)րքին	գ(ի)րքի (մը)	-	Հայկի (մի) գրքի
թէ չես աւտալ (հաւատալ) if you don't believe, *neg. simple present/conditional*
այս գերոյս me, this humble one
կապայ overcoat, a finishing part of national folk dress
սիրոյ տէր լինիս (you) fall in love
Լուս պակաս տաս light the world less
ի մարմնոյս from my body, *abl.*
խիկար wise
կու գիտ'ի I thought, *abbreviated from* կու գիտէի
ի քակել առնու becomes destroyed (առնուլ *to get, take*)
Տէրն ներսն այլ ի՞նչ բան ունի what's got the owner to do inside

[2] A particular poetic genre popular in Middle Ages in Armenia. The majority of hayrens are folkloric creations, some are ascribed to Nahapet Kuchak, a 16th c. poet whose life and poetry are still a philological mystery.

ՆՈՐ ՀԱՅԵՐԷՆ 17-21 դարեր

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ 1819 -1876
Nahabed Rusinean

♫♪ ԿԻԼԻԿԻԱ

Երբ որ բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերեւ,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Սիւրիոյ,
Լեառն Լիբանան եւ իւր մայրեր.
Տեսի երկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտօլներ.
Կղզի նման չիք մեր Կիպրայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ,
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը, ուր հոգիս ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի:
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյ տալով վերջին բարեւս,
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արեւ:

Note on Obsolete Forms

երբ որ - when, whenever; emphatic usage of որ
փախ տայ – run away, escape, *subjunctive*
Արմենիոյ - of Armenia *obs. gen.*
իւր - his/hers/its, *obs. gen.* իր
ի բոյն - to its nest, *obs. acc. with preposition* ի
ցանկամ - I wish, *obs., subjunctive 1st p. sing.*
զիմ - my, զ-իմ, *with obs. definite article զ*
տեսի – obs. for տեսայ
լեառն Լիբանան եւ իւր մայրեր - the mount Lebaanon and its cedars.
չիք - there is not
կենաց մէջ - in life, *obs. gen. pl. of* կեանք
յիշատակաց - memories, *obs.dat. pl. of* յիշատակ
յորժամ - when, յ-որ-ժամ *literally*: at the hour of
ի տենչ - with desire, *obs. acc. with preposition* ի
ցրտանայ – turn cold, ց(ու)րտանալ *in subjunctive 3rd p sing.*

ՄԻՔԱԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ 1829-18766
Mikael Nalbandian

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ կամեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել,
Ես, անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերն
Արձակուեցան, բացուեցան
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն որ ասացի,
Չէր հայր կամ մայր կամ այլ ինչ.
Ազատութի՜ւն, դուրս թռաւ
Իմ մանկական բերանից:

«Ազատութի՞ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրն վերեւից.
«Ազատութե՞ն դու զինուոր
Կամիս գրուել այս օրից:
Ո՜հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ.
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»:

- Ազատութի՜ւն,- գոչեցի,-
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատութի՜ւն:

♪♪ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ
Ի Հայաստանի Հանրապետութեան Հիմնը

Մեր Հայրենիք՝ ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար.
Իւր որդիքը արդ կանչում է՝
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա եղբայր, քեզ մի դրօշ
Ձոր իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ՝
Արտասուքով լուացի:

Նայիր նրան՝ երեք գոյնով
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող միշտ պանծայ Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մէկ անգամ պիտ՝ մեռնի.
Բայց երանի ով իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

ꕥ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ 1852-1872
Bedros Turian

ԼՃԱԿ

Ինչու՞ ապշած են, լճակ,
Ու չե՛ն խայտար քու ալեակք,
Միթէ հայլւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ:

Եւ կամ միթէ կը զմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ,
Որք նմանին փրփուրիդ:

Մելամաղձոտ լճակդ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ.
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լռել ու խոկալ:

Որքան ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բիւր:

Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկնքին,
Նմանիլ չե՛ս կրնար դուն
Հոգւոյս՝ որ է բո՜ց անհուն:

Հոդ աստղերը չե՛ն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չեն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ էք դու և օդ:

Լճակ, դու՛ ես թագուհիս,
Չի թ'հովէ մ'ալ[3] խորշոմիս,
Դարձեալ խորքիդ մէջ խռով
Չ'իս կը պահես դողդղալով:

---

[3] թէ հովէ մըն ալ even if from a wind

Շատերը զիս մերժեցին,
«Քնար մ'ունի սոսկ», ըսին,
Միմ՝ «Դողդոջ է, գոյն չունի», -
Միւսն ալ ըսաւ. «Կը մեռնի»:

Ոչ ոք ըսաւ՝ «Հէ՜ք տղայ,
Արդեօք ինչու՞ կը մխայ,
Թերեւս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չմեռնի»:

Ոչ ոք ըսաւ. «Սա տղին
Պատռենք սիրտը տրտմագին.
Նայինք ինչե՜ր գրուած կան...»
- Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան:

Հոն կայ մոխի՜ր.. յիշատա՜կ...
Ալեակդ յուզին քող, լճա՛կ,
Ձի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ...

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜հ, մնաք բարով, Աստուած և արեւ,
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերեւ...
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՛նչ են որ, եթէ ո՛չ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին,
Որք թռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստծոյն՝ շանթերու արմատ՝
Յաւելուն զէնքերն ու զարդերն հրատ...
Այլ, ո՜հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ զիս,
Աստուա՛ծ, խոկն հսկայ, փշրէ հիւլէիս,
Որ ժպրիի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուղքն ահալի....
Ողջո՛յն քեզ, Աստուած դողդոջ էակին,
Շողին, փթիթին, ալւոյն ու վանկին,
Դու, որ ճակտիս վարդն եւ բոցն աչերուս
Խլեցիր թրթռումս շրթանց, թռիչն հոգւոյս,
Ամպ տուիր աչացս, հեւք տուիր սրտիս,
Ըսիր՝ մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքի,
Կեանք մ'անհուն շողի, բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր, անշշունջ,
Այժմէն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պլլուիմ անուանդ, մռնչեմ անդադար,
Թող անէծք մ'ըլլամ քու կողդ խրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»:

Ո՜հ, կը դողդոջիմ, տժգոյն եմ, տժգո՛յն,
Փրփրի ներսս դժոխքի մ'հանգոյն...
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...
Ո՜հ, կայծ տուէ՛ք ինձ, կայծ տուէ՛ք,
ապրի՜մ...
Ի՜նչ, երազէ վերջ գրկել ցուրտ շիրի՞մ...
Այս ճակատագիրն ինչ սեւ է, Աստուա՛ծ,
Արդեոք դամբանի մրուրո՞վ է գծուած...
Ո՜հ, տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրել կ'ուզեմ դեռ, ւ'ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կայծ տուէ՛ք, կեա՛նք ձեր սիրահարին հէք:
Գարունն ոչ մէկ վարդ ճակտիս դալկահար՝
Ո՛չ երկնի շողերն ժպիտ մ'ինձ չեն տար:
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն յար կու լայ, խուզարկէ վիհեր:
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար Նա դրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,
Նախ՝ կեա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վրան:
Ի զուր գրեցին աստղերն ինծի «սէ՛ր»,
Եւ ի զուր ուսուց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զուր սիւքեր «սէ՛ր» ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զուր թաւուտքներ լռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերեւք չառին երբէք շունչ,
Որ չխռովին երազքս վսեմ,
Թոյլ տուին, որ միշտ զնէ երազեմ,
Եւ ի զուր ծաղկունք, փթիթներ գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցս խորան...
Ո՜հ, նոքա ամէնքը զիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրն է Աշխարհն ալ արդէն...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ 1869-1923

Hovhannes Toumanian

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Լինէր հեռու մի անկիւն,
Լինէր մանկան արդար քուն,
Երազի մէջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկութիւն:

Աշնան ամպին ու գամպին,
Մոլոր նստած իր ճըմբին,
Լոռու հանդում մի արտոյտ
Նայում է միշտ իմ ճամփին:

Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում,
Յոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում:

Հին աշխարհը ամէն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարուան փորձն ու գործ
Սկսվում է ամէն օր:

Երազումս մի մաքի
Մօտս եկաւ հարցմունքի.
- Աստուած պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի:

There are no suffixes with ը save the definite article. Derivatives of ընդ and ըստ, which function as prepositions and also prefixes, are presented in the general list below.

Remember the Following Words Beginning with /Ը ը/		
ըլլալ WA < լինել	ընդօրինակել	ընկողմած-իլ WA -ել EA
ըղեղ WA < ուղեղ	ընդեղէն (> հունդ)	ընկոյզ
ըղձալ	ընել WA (> առնել < անել EA)	ընկրկ-իլ WA -ել EA
ըմպան < ումպ	ընթացք, ընթանալ	ընձառիւծ (> ինձ, leopard)
ըմբերանալ	ընթեռնուլ, ընթերցել	ընձուղտ ընձեռնի
ըմբիշ	ընթերցարան ընթեռնելի	ընձիւղ
ըմբոշխնել	ընթրիք	ընչասէր (> ինչ-ը)
ըմբռնել	ընծայ	ընչազուրկ ընչաքաղց
ըմպել	ընկալել	ընչացք
ընդ ընդհանուր	ընկեր	ընտանի(ք)
ընդառաջ ընդարձակ	ընկեցիկ	ընտիր ընտրել
ընդգրկել ընդդէմ	ընկոմիլ	ըսել < ասել
ընդել, ընտել ընդհատ	ընկճել	ըստ ըստ իս
ընդունելութիւն	ընկնել EA	ինքնստինքեան

The weak vowel [ը] as a schwa [ə] creates hidden (not written) syllables. The schwa is shorter compared to the vowel [ը], which is both spelled and pronounced; therefore is the difference in symbolic presentation—[ĕ]. Poets sometimes spell it out to indicate the rhyme.[6] In EA, the schwa is shorter than in WA; it becomes almost fugacious in the normal speed of speech.

13. 2 The schwa is pronounced but not spelled:

1. Before the preposition զ, attached to words beginning with a consonant: əզհաց մեր հանապազորդ...
2. In initial positions before root consonant clusters consisting of a sibilant (ս, ց) and a stop (բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ), as: əսգալ, əսգոյշ, əսբաղուած, əստանալ, əստիպել, əսքանչելի, əՍփիւռք, əշտապել, etc.
3. Between the same consonants, if they result from shifts, as: շուք - շəքեղ, սուգ - սəգալ, զուտ -զəտել.
4. Between sibilants (ս, ժ, ս, ց) and sonorants (լ, ր, ն, մ, ն, յ), as: զəլանալ, ժəլատ, զəրահ, սəրահ.
5. Between any two consonants beginning a word: վəտանգ, բəմբուկ, կəնուք, կəրակ.
6. In more than three consonant clusters it is usually pronounced after the first and third: ծəննդեան, մəրմնջալ, մəկəրտուած, but կərկəնութիւն.
7. Between a final ր, ղ and preceding consonants, as: կայսեր, ծուներ, մաներ, արկեղ, աստեղ. but not if the sonorant precedes it: կարգ, վարդ, պարզ, դուրս unless the final consonant is an article: դուռս *my door.*
8. Between consonant articles and the preceding stem consonant, as: գիրքս, տուներ, անուներ.

2. THE ORTHOGRAPY OF DIPHTHONGS

2.1 Diphthong /ոյ/

1. The diphthong /ոյ/ is pronounced [uy] if followed by a root consonant, as կոյր, լոյս, բոյր, համբոյր. **RO:** this diphthong is spelled and pronounced /ոյ/: կույր, լույս, etc.
2. It regularly shifts into /ու/ in derivatives, կուրանալ[7], յուսական, լուսաբաց, համբուրել.
3. A sporadic shift into schwa is characteristic to some words accepted in the standard from dialects: բոյն - բներ, բնաւորուիլ.
4. The final /ոյ/ is sounds as simple [o], as: յետոյ, Կարոյ. Except: խոյ, Նոյ (see rule 42.333). **RO:** the final /ոյ/ is simplified to match the sound /ո/: հետո, Կարո, unless it sounds [oy]: Նոյ [Noy].

[6] In the same poem, the same word in different positions may appear with or without a written /ը/ in its hidden syllable depending on rhyme and rhythm of the poem. Students of orthography should ignore this /ը/.
[7] Conversation WA accepts also կոյրնալ, լոյսնալ, etc.

ԹԷ ՅՈԳՆԵԼ ԵՍ յաղթահարուած

Կեանքի անվերջ հոգսերով,
Թէ տանջւում ես արհամարհուած
Բոցավառուող քո սիրով.

Թէ կեանքի մէջ մի չար դիպուած,
Մի ամօթ է քեզ ճնշում,
Թէ չարաչար հիասթափուած
Կեանքն ատում ես եւ գարշում.

Լաւ իմացիր, ողջ անօգուտ
Պիտի յուզեն միմիայն քեզ,
Մի սպառիր ուժը հոգուդ
Մտածմունքով կարճատես.

Հանգիստ եղի՛ր, աղօթք արա՛,
Անյիշաչար եղի՛ր միշտ,
Որ քո լացով չուրախանայ
Քո թշնամին ամբարիշտ:

Կեանքի ցաւը, բախտի խաղը,
Ատելութիւնն անմտի,
Հաւատացի՛ր, երբէք չարժեն
Վրդովմունքին քո սրտի:

Եւ այդ սիրտը քեզ չի տուած,
Որ դու մաշես ամէն օր,
Այստեղ պիտի ապրի Աստուած,
Ոչ թէ ցաւեր նորանոր:

ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Ձմեռուայ բուքին,
Սառնամանիքին
Դպրոցի ճամբան
Դժուար է, երկար
Շատերի համար:

Ձուարթ գարունքին,
Երգին ու ծաղկին
Դպրոցի ճամբան
Կարճ է, դուրալի
Կարծես աւելի:

Իսկ ով սէր ունի
ինձ պէս ուսումի
Դպրոցի ճամբան
Կանաչ է, սիրուն
Ձմեռ թէ գարուն:

ꕥ

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ 1875-1957
Avetik Isahakian

ՌԱՒԵՆՆԱՅՈՒՄ

Արարատի ծեր կատարին
Դար է եկել վայրկեանի պէս,
Ու անցել:

Անհուն թւով կայծակների
Սուրն է բեկուել ադամանդին
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լոյս գագաթին
Ու անցել:

Հերթը հիմա քոննն է մի պահ.
Դու էլ նայի՛ր սէգ ճակատին
Ու անցիր...

♪ ♬ ՕՏԱՐ, ԱՄԱՅԻ ՃԱՄՓԷՔԻ ՎՐԱՅ

Իմ քարաւանս մեղմ կը ղօղանջէ.
Կանգնի՛ր, քարաւանս, ինձի կը թուայ,
Թէ հայրենիքէս ինձ մարդ կը կանչէ:

Բայց լուռ է շուրջս ու շշուկ չկայ
Արեւվառ, անդորր այս անապատում,
Ա՜խ, հայրենիքս ինձ խորթ է հիմա,
Ու քնքուշ սէրս ուրիշի գրկում:

Կնոջ համբոյրին էլ չեմ հաւատայ,
Շուտ կը մոռանայ նա վառ արցունքներ,
Շարժուի՛ր, քարաւանս, ինձ ով ձայն կը տայ,
Գիտցի՛ր, լուսնի տակ չկայ ուխտ ու սէր:

Գնա՛, քարաւանս, ինձ հետդ քա՛շ տուր,
Օտար, ամայի ճամփէքի վրայ.
Ուրտեղ կը յոգնիս՝ գլուխս վար դիր
Ժէռ քարերի մէջ, փշերի վրայ...

ԵՍ ՁԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ՝ կգայ Ոգու սով,

Եւ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ,
Կ'ընկնէք մուրալու յափրած որկորով
Հրեղէն խօսքի, սուրբ խօսքի կարօտ:

Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ զեղմունք—միտք ու երազանք,
Նիւթի տաճարում արբած պարեցիք՝
Մոռացած անմահ անհունի տենչանք:

Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝
Ձեր նիւթի հանդէպ կը գայ Ոգու սով,
Եւ մուրացկի պէս փշրանքի համար
Ծարաւ ու նօթի կ'անցնէք ծովէ ծով... ꕥ

ՍԻԱՄԱՆԹՕ 1878-1915
Siamanto

ՊԱՐԸ

Եւ արցունքներն իրեն կապոյտ աչքերուն մէջ
խեղդելով,
Մոխրադաշտի մը վրայ, ուր հայ կեանքը դեռ
կը մեռնէր,
Այսպէս պատմեց մեր սարսափին
ականատես գերմանուհին.

Այս անպատմելի պատմութիւնը որ ձեզ
կ՚ընեմ,
Ես իմ անգութ աչքերովս այս մարդկային,
Իմ անվտանգ տնակիս գեհէնադիր
լուսամուտէն,
Ակռաներս կոճտելով ու զայրոյթէս
զարհուրելի...
Այս աչքերովս անգթօրէն մարդկային, ես
տեսայ:
Մոխրակոյտի վերածուած Պարտէզ
քաղաքին մէջն էր:
Դիակները դիզուած էին մինչեւ կատարները
ծառերուն,
Եւ ջուրերէն, աղբիւրներէն, առուներէն,
ճամբաներէն,
Չեր արիւնին կարկաչիւնն ըմբոստաձայն...
Դեռ ականջիս իր վրէժն ահաւասիկ որ
կը խօսի...

Օ՜հ չի սոսկաք երբ անպատմելի
պատմութիւնս ձեզի պատմեմ...
Թող մարդերը հասկնան մարդուն ոճիրը
մարդուն դէմ,
Երկու օրուան արեւին տակ, գերեզմանին
ճամբուն վրայ
Մարդուն չարիքը մարդու դէմ,
Թո՛ղ աշխարհիս բոլոր սրտերն իմանան...
Այդ մահաշուք առաւօտը կիրակի էր,
Դիակներու վրայ ծագող առաջին և անօգուտ
կիրակին,
Երբ սենեակիս մէջը, իրիկունէն մինչեւ
արշալոյս,
Դաշունահար աղջկան մը հոգեվարքին վրայ
ծռած՝
Արցունքներով անոր մահը կը թրջէի...
Յանկարծ հեռուէն սեւ խուժան մը
անասնական
Քսան հարսներ իրենց հետ՝ մոլեգնօրէն
մտրակելով,
Շուայտութեան երգերով, այգիի մը մէջ
կանգնեցան:

Ես կիսամեռ խեղճ աղջիկն իր
խշտեակին վրայ լքած՝
Դժոխահայեաց պատուհանիս պատշգամբին
մօտեցայ...

Այգիին մէջ սեւ խուժանն անտառուեցաւ:
Վայրենի մը՝ հարսներուն - «Պէտք է պարէ՛ք, -
որոտաց,
Պէտք է պարէք, երբ մեր թմբուկը հնչէ»:
Եւ մտրակներն սկսան մահակարօտ հայ
կիներուն
Մարմիններուն վրայ կատաղութեամբ մը
շառաչել...
Քսան հարսներն ձեռք-ձեռքի, իրենց շուրջպարն
սկսան...
Աչուըներէն իրենց արցունքը վէրքերու պէս
կը հոսէր,
Ա՜հ, ես որչափ նախանձեցայ իմ դրացի
վիրաւորիս,
Որովհետեւ լսեցի, որ հոնդիւնով մը հանդարտ,
Տիեզերքն անիծելէն, խեղճ հայուհին գեղադէմ,
Իր տատրակի շուշան հոգին դէպի աստղերը
թեւ տուաւ...
Ունայնօրէն կռուփներս ամբոխին դէմ շարժեցի:
«Պէտք է պարէ՛ք, կ՚ոռնար խուժանը մոլեգին,
Մինչեւ ձեր մահը պէ՛տք է պարէք, դուք
անհաւատ գեղեցիկներ,
Կուրծքերնիդ բաց պէ՛տք է պարէք, մեզ ժպտելով
և անտրտունջ...
Յոգնութիւնը ձեզ համար չէ, ոչ ալ ամօթը ձեզ
համար,
Ստրուկներ էք, պէտք է պարէք, և մերկանդամ և
հոլանի,
Մինչեւ ձեր մահը պէտք է պարէք պագշոտօրէն
և ցոփութեամբ,
Մեր աչքերը ծարաւի են ձեր ձեւերուն և ձեր
մահուան...»:

Քսան հարսներն գեղադէմ գետին ինկան
պարտասած...
«Ոտքի ելէ՛ք» գոռացին, մերկ սուրերնին օձերու
պէս շարժելով...
Յետոյ մէկը սափորով մը քարիւղ բերաւ
խուժանին...
Ո՛վ մարդկային արդարութիւն, բող ես քքնեմ քու
ճակտիդ...
Քսան հարսներն շտապով այդ հեղուկովն
օծեցին...

«Պէտք է պարէ՛ք, որոտաց,
ահաւասիկ ձեզի բուրմունք մը, որ
Արաբիան իսկ չունի...»,
Յետոյ ջահով մը բռնկցուցին մերկ մարմինները
հարսներուն:
Եւ ածխացած դիակները պարին մէջէն դէպի
մահը գլորեցան...
Զարհուրանքէս՝ պատուհանիս փեղկերը
փոթորկի մը պէս փակելով՝
Իմ մենաւոր մեռելիս մօտենալով հարցուցի.
Ինչպէս փորել այս աչքերս, ինչպէս փորել, ըսէ՛
ինձ...

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ 1878-1945
Vahan Tekeyan

ԼԵՋՈՒՆ, ՈՐՈՎ ԳՐԵՑԻ

երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդէն ու պակսեցա՜ն
անոնք ալ...
Հարիւր տարի վերջ միայն իր այս ձեւով,
այս սխալ
Կամ ճիշտ ձեւով ու հնչմամբ՝ լեզուն անուշ
զոր խօսէր

Էին անուն տղաքներ՝ գուցէ խօսող
չուենեայ,
Եւ քերթուածները, որոնց մեն մի բառին ու
յանգին
Վրայ ես սիրտ հատցուցի՝ գուցէ անկիւն մը
պառկին,
Առանց որ մէկը դնէ իրենց բուն շեշտն
անոնց վրայ...

Տէ՜ր, ցաւ մ'ալ այս է հիմա, ցաւերէն ետք
անհամար,
Որոնց մէջէն անցնելով, որոնցմէ շիթ
մ'առնելով
Ես կազմեցի այս տաղերն ու հոս դրի
քովէ քով...

Չի եթէ միշտ եւ միայն երգած եմ ես
ինձ համար,
Չիս սփոփած եմ նաեւ՝ մտածելով
թէ խոցուած
Հոգիս կրնայ իր երգով սփոփե՛լ
սիրտը ոմանց...

Կ'ԱՆՁՐԵԻԷ, ՏՂԱՍ

Կ'անձրեւէ, տղաս... Աշունը թաց է,
Թա՜ց աչքերուն պէս խեղճ, խաբուած
սիրուն...
Պատուհանն ու դուռը գնա՛ գոցէ՛
Եւ դէմս եկուր նստիլ. վեհագոյն

Լռութեան մը մէջ... Կ'անձրեւէ, տղաս...
Կ'անձրեւէ՞ երբեմն հոգիիդ մէջ ալ,
Կը մսի՞ սիրտդ, եւ կը դողդղա՞ս՝
Խորհելով պայծառ արեւին անցեալ,

Դռան մը ներքեւ գո՛ց ճակատագրին...
Բայց կու լաս, տղաս... Մութին մէջ յանկարծ
Ծանր արցունքներ աչքէդ կը գլորին...

Լա՛ց անմեղութեան արցունքը անդարձ,
Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգէտ տղա՛ս,
Խե՛ղճ որսը կեանքին, ա՛հ, լա՛ց,
որ մեծնաս...

ԵՍ ՍԻՐԵՑԻ, բայց ոչ ոք

Սիրածներէս գիտցաւ թէ՝
Չինքը ո՜րքան սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտէ:

Ամէնէն մեծ հրճուանքիս,
Ամէնէն սուր վիշտերուս
Ներշնչողները, աւա՜ղ,
Չիս չեն ճանչնար այս պահուս:

Սէրս կարծես այն գետն էր
Որ իր հոսանքը անբաւ
Առաւ լերան ձիւներէն
Ու լեռը զայն չտեսաւ:

Սէրըս այն դուռն էր կարծես
Ուրկէ ոչ ոք մըտաւ ներս.
Ծաղիկներով ծածկուած՝
Գաղտնի պարտէզ մըն էր սէրս:

Ու եթէ սէրս ոմանք
Երկինքին վրայ՝ անսահմա՜ն
Տեսան ծուխի մը նըման,
Կրակն անոր չտեսան...:

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներէս գիտցաւ թէ
Չինքը ո՜րքան սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտէ...

ՓԱՓԱՔ

Անուշ հոգի մը ըլլար,
Ես այն հոգւոյն սիրահար,
Ան իմ երկինքս ըլլար...

Ես այդ հոգին պաշտէի՜
Ինչպէս երկինքը ծաւի,
Զայն հեռուէ՜ն պաշտէի...

Ան ցոլանար սրտիս մէջ
Իր լոյսերովը անշէջ,
Ես սուգուէի՜ անոր մէջ...

Անուշ հոգի՜ մը միայն,
Ու գրկէի՜ ես անծայն
Զայն հոգիիս մէջ միայն...

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ 1884-1915
Taniel Varuzhan

ԲԱՐՏԻՆԵՐԸ

Տանս առջեւ ջրհորին քով
Պապս է տնկեր զոյգ մը բարտի,
Լոյսն Աստղիկին, դողդոջելով,
Անոնց վրայ նախ կը կաթի:

Այնքան մօտիկ են իրարու,
Որ նոյն սիւքով կը թրթռան,
Մէկն իր երգը երբ որ թողու,
Միւսն իր շունչով կ'աւարտէ զայն:

Մրրիկներուն մէջ հերարձակ,
Գրկուած, խոր, կը հեծեծեն:
Եւ կը բզգան լուսնակին տակ
Փեթակներու պէս լուսեղէն:

Հարսս ու ես անոնց կրթնած,
Կը նստինք հոն ամեն գիշեր:
Տերեւներն հար կ'երգեն յուզուած
Այն, որ կը զգանք ու չենք յիշեր:

Մազերն անոր երբ մազերուս
Խառնել կու գայ յանկարծ քամին,
Ջոյգ բարտիները, սիրասոյզ,
Աստղերուն մէջ կը համբուրուին...

ԱՌԿԱՅԾ ՃՐԱԳ

Յաղթանակի գիշերն է այս տօնական. -
Հարս, եղ լեցուր ճրագին:
Պիտի դառնայ կռիւէն տղաս յաղթական.-
Հա՛րս, քիթը ա՛ռ պատրոյգին:

Սայլ մը կեցաւ դռան առջեւ, հորին քով. -
Հա՛րս, վառէ՛ լոյսը ճրագին:
Տղաս կու գայ ճակատն հպարտ դափնիով.
- Հա՛րս, բեր ճրագը շեմին:

Բայց...սայլին վրայ արիւ՞ն և
սու՞գ բեռցեր են.
Հա՛րս, ճրագդ ասդին երկարէ՛:
Հերոս տղաս հոն զարնուած է սրտէն. -
Ա՛խ, հարս, ճրագդ մարէ՛...

ԴԱՐՁ

Ես հեռաւոր տնակ մ'ունիմ
Շինուած լիճին ափն ամայի:
Դուռս բաց է - հոն մտերիմ
Ճրագս է վառ ու կը նայի:

Անկէ մեռել մ'հանեցին դուրս. -
Աքսորեցին հոգիս անկէ:
Այժմ շեմին վրայ կատուս
Աղիողորմ կը մլաւէ:

Օր մը նորէն դառնամ գուցէ,
Մարա՛ծ գտնեմ ճրագս յաւէտ.
Դողդոջ ձեռքս դուռը գոցէ,
Ու լամ լացող կատուիս հետ:

Ռուբէն Սեւակ 1885-1915
Rupen Sevag

ԻՆՉՈՒ՞

Ինչու՞, ինչու՞ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մեղք էր,
Փոքրիկ ծոցիդ թիթեռ պէտք էր,
Դուն ծեր արծիւ մը բանտեցիր...

Կապոյտ աչուիդ երբ որ բացիր,
Կապո՛յտ աղջիկ՝ պլպուլն երգ էր,
Քեզ ալ սիրոյ մրմունջ պէտք էր
Դուն գուժկան մռունչս ընտրեցիր...

Ես կ'երթամ միշտ, անծայրածիր
Դամբաններ եմ ոտքիս հետքեր,
Քեզ սիրոյ մեղմ սիւք մը պէտք էր,
Դուն փոթորկին կուրծքդ բացիր...

Կ'այրին աչերդ սեւածիր,
Պիտի մեռնիս, այդպէս մ'երգե՛ր.
Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,
Դուն սէր Աստուածը ընտրեցիր...

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ 1885-1920
Vahan Terian

♪ ♬ ԷՍՏՈՆԱԿԱՆ ԵՐԳ

Երբ կը յոգնես, կը գազազես աշխարհիից,
Դարձիր ինձ մօտ, վերադարձիր դու նորից,
Ցաւած սիրտս միայն քեզնով է շնչել,
Չի կամենալ նա վերստին քեզ տանջել:

Եթէ բախտն ու վայելքները քեզ ժպտան,
Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջոյն տան,
Գուցէ ես լամ բախտիդ համար իմ անգին,
Սակայն դարձիր, վերադարձիր դու կրկին:

Եթէ հեռուում ճակատագիրն անհոգի
Սիրտդ մատնէ անկարեկից տանջանքի,
Օ, գիտեցի՛ր, իմ հոգին էլ կը ցաւի
Անմխիթար մորմոքումից քո ցաւի...

ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ

Աշուն է, անձրեւ... Ստվերներն անձեւ
Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
Անձրե՜ւ ու անձրե՜ւ...
Սիրտս տանջում է ինչ-որ անուրախ
Անհանգստութիւն...
Սպասի՛ր, լսի՛ր, ես չեմ կամենում
Անցած լոյսերից, անցած յոյզերից
Տառապել կրկին.
Նայի՛ր, ախ, նայի՛ր՝ ցաւում է նորից
Իմ հիւանդ հոգին...
Անձրեւ է, աշուն... Ինչո՞ւ ես յիշում,
Հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
Ինչո՞ւ ես յիշում.
Դու այնտեղ էիր, այն աղմկաներ
Կեանքի մշուշում...
Դու կեա՛նքն ես տեսել, դու կեա՛նքն ես
յիշում՝
Ոսկե տեսիլնե՜ր, անուրջների լո՜յս...
Ես ցուրտ մշուշում.
Իմ հոգու համար չկա արշալոյս.
Անձրե՜ւ է, աշո՜ւն...

ՔՈ ԱՉՔԵՐԻ ԴԷՄ իմ աչքերը՝ կոյր

Կայ քո հոգու մէջ անթափանց մի մութ,
Քո մութ հայացքում կայ մի քնքուշ սուտ՝
Քեզ միշտ թաքցնող մի նուրբ վարագոյր...

Փակ են քո սրտի հեռուներն իմ դէմ,
Յաւէտ քեզ կապուած՝ քեզ օտար եմ ես.
Երբ խենթ խնդութեամբ փայփայում եմ քեզ՝
Եւ սիրում եմ քեզ եւ քեզ չգիտեմ:

Փակ են քո սրտի հեռուներն իմ դէմ,
Քո աչքերի դէմ իմ աչքերը՝ կոյր.
Քո հոգու վրայ կայ մի վարագոյր,-
Ո՞վ ես դու, ո՞վ ես, - բնաւ չգիտեմ...

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԻՄ ԱՐՆԱՆԵՐԿ

Գիշերն իջավ անլոյս ու լուռ.
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եւ վարդի բույր, եւ սրտի հուր:
Ամէն մի միտք հիմա մի վէրք,
Ամէն հայացք հատու մի սուր,
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզօր ու զուր:
Մի օր ինչ վառ ծաղկեց մոգուած
Մեր նահրեան սիրտը բեկուած,
Հրով որքա՜ն խորհրդաւոր,
Ահա որպէս ծաղիկ թեքուած
Մեր հին հոգին համր ու մոլոր,
Ա՜խ, եւ անզօ՛ր, եւ անարգուա՛ծ...

ՄԻ՞ԹԷ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԷՍՆ ԵՄ ԵՍ,

Վերջին երգիչն իմ երկրի,
Մա՞հն է արդեօք, թէ նի՞նջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի:

Վտարանդի, երկրում աղօտ,
Լուսէ՛ղ, քեզ եմ երազում,
Եւ հնչում է որպէս աղօթք
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եւ խոցում է, եւ այրում.
Արդեօ՞ք բոցէ վարդե՞րդ են վառ,
Թէ՞ վէրքերն իմ հրահրուն:

Ահով ահա կանչում եմ քեզ՝
Ցոլա՛, ցնորք Նաիրի.--
Մի՞թէ վերջին պոէտն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ 1886-1908

Missag Medzarents

♪♪ ԳԻՇԵՐԵՐԳ

Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով,
Լուսեղէն ճամբան ես կ'անցնիմ գինով,
Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին:

Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն,
Համբոյր լոյսէն, որ չորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր տօն է, հոգւոյս կիրակի,
Համբոյրներ կու գան հովէն ու ծովէն:

Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի:
Շրթունքս են ծարաւ միակ համբոյրին,
Լուսեղէն գիշերն է լոյս ու լուսին,
Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի:

ՋՈՒՐԷՆ ԴԱՐՁԻՆ

Երբ բլուրն ի վար
աղբիւրէն դարձին,
իր վարսքի խուրձին
մէջը սողոսկի
նուրբ մատիկն ոսկի
արեւի լոյսին.
հիր սափորն ուսին
երբ բլուրն ի վար
աղբիւրէն դարձին,
մեղմով ծածանի
լաչակն հողմավար՝
թեւով թռչունի.
ու ծիածանի

թոյրով պսպղայ
աչքն իր գեղանի.
եւ երբոր ցնծայ
հնչիւնը՝ ծնծղայ
զարդոսկիներուն.
տենչանքով անհուն
հոգիս պիտ' ըղձայ
գանձեր՝ զոր չունի:
Ծարաւ շիւղին պէս
պիտ' ըղձայ անի,
երկու կաթիլ ջուր
շուրթերուն իր կէզ:
Եւ իր ճակատին՝
զովացքը ցրտին,
ճակատին կրակ՝
զովացքը ցրտին,
կարմիր սափորի
ջուրին սառնորակ
ցօղովը բերրի՝
կակաչ ձեռքերու...:
Ա՜հ, այս իրիկուն
սափորն իր ուսին
աղբիւրէն դարձին՝
սիրոյս անանուն
ջերմ սարսուռներով
կը դողայ սօսին... ☙❧

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ 1894-1924
Madteos Zarifian

ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ

Պզտիկ աղջիկ մ՚ինծի կ՚ըսէ,
Թէ զիս խենդի պէս կը սիրէ.
Պզտիկ աղջիկ մը զիս սիրէ՞...

Գիշերն անհուն իմ աչքերուն
Երեւի նա դեռ չէ տեսեր.
Պզտիկ աղջիկ մ՚ինծի տայ սե՞ր...

Երեւի դեռ նա չէ նայեր
Հոգւոյս խաւար անդունդն ի վար.
Պզտիկ աղջիկ մ՚ինծ սիրահա՞ր...

Եթէ լսեր, թէ ոչ մէկ սէր
Այդ անդունդին մէջ կը շնչէր՝
Հեգ պզտիկը չէ՞ր հառաչեր...

Ուստի եղբօր մը պէս ըսի,
Թէ լուսնին տակ մարդ կը մսի.
«Գնա՛, գնա ննջէ՛», ըսի.

Յետոյ գացի հեռուն լացի...

☙❧

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ 1897-1937
Eghisheh Charentc

♪♪ ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ

արեւահամ բարն եմ սիրում,
Մեր հին սազի ողբաձուագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնաճման ծաղիկների ու վարդերի բո՛յրը վառման
Եւ ճախրեան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսէ,
Արեւն ամռան ու ձմեռուայ վիշապաձայն բուքը վսեմ,
Մթնում կորած խրճիթների անհիւրընկալ պատերը սեւ
Ու հնամեայ քաղաքների հազարամեայ քա՛րն եմ սիրում:

Ուր է՛լ լինեմ - չե՛մ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մօռանայ աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սու՜ր սիրտս խոցեն արիւնաքամ վէրքերը մեր -
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկայ.
Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկայ.
Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս
սա՛րն եմ սիրում:

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինուած
աննուաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եւ Կարինէ Քոթանճեանին անգամ չասած մնաս բարով-
Անց եմ կեանում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Անց եմ կեանում. շուրջս -- մարդիկ, շուրջս դէմքեր
հազա՜ր-հազա՜ր.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կեանքն
անհաւասար.
Եւ ո՞վ կ'ասի՝ ինչո՞ւ ես դու, եւ ո՞վ կ'ասի, թէ ո՞ւր հասար,-
Դէմքերը, ախ, բութ են այնպէս՝ կարծես շինուած են
տապարով:

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս
կեանքը մի.
Ինչ-որ մէկի սրտում բացուած վէրք է կարծես այս
կեանքը մի.
Եւ ո՞ւմ համար - էլ ո՞ւմ համար կարօտակէզ երգէ հիմի
Սիրտս՝ լցուած տարիների սեղմ արճճով ու կապարով:

Բայց շուրջս քող ողքաճ կ'ուզէ աշխարհը այս խնդայ, ցնդի
Ես -- հաշմանդամ ու խելագար ու յաւիտեան վտարանդի՝
Դէպի երկի՜նք պիտի գնամ, դէպի եզերքը Ամենտի --
Իմ բա՜րձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Ու էլ ամէ՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛յքս է հեռուն.

Թէ Կարինէ Քոթանճեանին տեսնէք Կարսի
փողոցներում --
Ասէ՛ք նրան Չարենցն ասաւ - մնաս բարո՞վ,
մնաս բարո՞վ...

♪♪ ԼՈՒՍԱՄՓՈՓԻ ՊԷՍ ԱՂՋԻԿ՝

աստուածամօր աչքերով,
Թոքախտաւոր, թափանցիկ,
մարմինի՞ պէս երազի.
Կապո՞յտ աղջիկ, ակաթի ու կաթի՞ պէս
հոգեթով,
Լուսամփոփի պէս աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի
իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթէ աչքերում.
Ես ինչ անեմ, որ մնայ ծիածանը երեքգոյն,
Որ չցնդի, չմարի՞ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՞ պէս աղջիկ՝
աստուածամօր աչքերով,
Թոքախտաւոր, թափանցիկ,
մարմինի՞ պէս երազի.
Կապո՞յտ աղջիկ, ակաթի ու կաթի՞ պէս
հոգեթով,
Լուսամփոփի պէս աղջիկ... ☙❧

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ 1914-1993
Hamo Sahian

ՕՐԸ ՄԹՆԵՑ

Օրը մթնեց, ժամն է արդէն
Իրիկնահացի,
Տխրութիւնս կամաց-կամաց
Փոխւում է լացի:
Իջնում էին խոհուն, խոնարհ
Դէզերի ուսին
Մի կաթնահունց երկնակամար,
Մի ծերատ լուսին...
Մէկը մէկից ամաչելով,
Ե՛ւ զուսպ, ե՛ւ հաւաք,
Նստում էին մերոնք կարգով՝
Կրտսեր ու աւագ:
Նստում էին եւ սպասում
Մինչեւ պապը գար,
Մինչեւ բակում Ծաղիկ եզան
Ջանգը ծլնգար:
Պապը գալիս, սուփրի գլխին,
Նստում էր շուքով,
Եւ լցւում էր տունը դաշտի
Բոյր ու շշուկով...
Ու երբ տատս ձեռքն էր առնում
Շերեփը իր հին,
Գդալները բնազդաբար
Աղմկում էին:
Թանապուրի տաք գոլորշին
Գերանին առնում
Եւ սիւնն ի վար գլոր-գլոր
Ուլունք էր դառնում:
Վայելում էր տաք թանապուր,
Լաւաշ ու սամիթ
Աշխատաւոր մի գերդաստան՝
Պարզ ու միամիտ...
Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մէկը չկայ...
Ես եմ մնում լոկ իբրեւ յուշ
Եւ իբրեւ վկայ:
Օրը մթնեց, ժամն է արդէն
Իրիկնահացի,
Տխրութիւնս կամաց-կամաց
Փոխւում է լացի:
☙❧

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ 1915-1984
Hovanes Shiraz

- Ո՞ՐՆ Է, ԲԱԲՕ, ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

- Է՛ն, որ ունի բանձր երկինք:
Է՛ն, որ ունի կարմիր արեւ՝
Իր կապուտակ գլխի վերեւ.
Է՛ն, որ ունի լեռն Ալագյազ՝
Հաւքերն՝ աշուղ, ջրերը՝ սազ:
Է՛ն, որ տեսքով իր Սեւանի,
Մազերն արձակ ու գեղանի՝
Նստած հարսի կը նմանի:
Է՛ն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագաւոր՝ Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը մրմուռ,
Գլուխը վեր՝ դրախտի դուռ:
Է՛ն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթար,
Որ աւերակ, բայց դեռ դարեր
Լուռ կ՛աղօթեն երկինքն ի վեր:
Է՛ն, որ ունի Արագ, Տղմուտ,
Եւ ափերը մամռոտ ու մութ
Գերեզմաններն են պապերուդ...
Է՛ն, որ Ղազբեկն ու Արագած՝
արտերու մէջ ախպեր կանգնած՝
Ձեռ կը զարնեն գինով թասին
Ու կը ձենեն մեր Մասիսին,
Թէ՝ «Հե՛յ, բաբօ, բաւ չէ՞ մենակ
Պանդուխտ մնաս ամպերու տակ...»:

ԷՔՍՊՐՈՄՊՏ

Մենք խաղաղ էինք մեր լեռների պէս,
Դուք հողմերի պէս խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դէմ ելանք մեր լեռների պէս,
Դուք հողմերի պէս ոռնացիք վայրագ:
Բայց մենք յաւերժ ենք մեր լեռների պէս,
Դուք հողմերի պէս կը կորչէք վայրագ:

ՀԻՆ ՄԱՆԿՈՒԹԻՆ

Մէկից մի սոխ, մէկից մի հաց գողանում,
Գնում էինք Արփաչայը լողանում:
Սոված, ծարաւ, բոկոտն ընկնում սար ու ձոր՝
Շրջում էինք՝ անգիտութեամբ բախտաւոր:

Աշխարհն, ասես, սարի հետեւ, վերջանում...
Իջնող արեւն իրեն հետ էր մեզ տանում...
Չգիտէինք՝ ո՞վ էր ժպտում, ո՞վ լալիս,
Ո՞վ էր մեզ հաց, ո՞վ մեր աչքին լաց տալիս...

Չգիտէինք, թե ո՞ւմ կուրծքն էր զարդարում
Ջնծաղիկը, որ մենք էինք միշտ բերում...
Չգիտէինք՝ աշխարհն ի՞նչ էր, մարդն ի՞նչ էր,
Մենք՝ դարդի մեջ, չգիտէինք՝ դարդն ինչ էր...

Ա՜խ, դեռ մանուկ մենք ծերացած, գլխիկոր
Շրջում էինք՝ անգիտութե՜ամբ բախտավոր...

ԵՐԱՋԻՍ ՄԵՋ ԴՈՒՌՍ ՋԱՐԿԻՆ

«Ո՞վ է», ասի ներսից ես,
Դրսից ինչ-որ պառաւ մի կին
Ասաց. «Մատաղ լինեմ քեզ

Մի կտոր հաց ողորմացի՛ր,
Աղքատ կին եմ, որբ, անտէր...»
Ու ես իսկոյն դուռը բացի,
Հրաշք... մեռած մայրիկս էր:

Սարսափեցի, բայց գիրկն ընկայ,
Մայրս ասաց, «Ես եմ, ես,
Քեզ փորձելու համար եկայ,
Հո չի փոխել կեանքը քեզ:

Մուրացկանի տեսքով եկայ
Որ աշխարհն էլ իմանայ,
Տե՞ղն է խիղճդ, խի՛ղճդ, որդիս
Թէ մեռել է ինձ հետ նա...»

ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄԱՅՐԻԿԻՍ

Ջիւն է իջնում՝ կուտակւում
Մօրս վրայ վերեւից,
Ասես փետուր է թափւում
Հրեշտակի թեւերից:

Գերնեզմանի այս հեռւում
Մեղմ դիզւում է թախծալից,
Մօրս վրայ մարմարւում՝
Յուշարձան է թւում ինձ:

Այնպէս մեղմիւ է դնում
Աստուած փաթիլ փաթիլին,
Որ չցաւի ողջ կեանքում
Մօրս ցաւած սիրտը հին:

Փաթիլւում է մեղմածիւն,
Մարմարւում է մեղմաբար,
Աստուած ինքն է ստեղծում
Մօրս վրայ շիրմաքար:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ 1919
Silva Kaputikian

ԽՕՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Այս գարնան հետ, այս ծաղկունքի,
Այս թռչնակի, այս առուակի,
Հետն այս երգի ու զարթօնքի
Բացուեց լեզո՜ւն իմ մանկիկի:
Ու թոթովեց բառ մի անգին
Հայկեան լեզուից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդութեան
Դիպաւ մանկանս շրթունքին...
- Լսի՛ր, որդիս, պատգամ որպէս
Սիրող քո մօր խօ՜սքը սրտանց,
Այսօրուանից յանձնում եմ քեզ
Հայոց լեզո՜ւն հազարագանձ:
Կտրել է նա, հանց աստղալոյս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովայոյզ
Սլացքի հետ հայկեան նետի,
Եւ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է յո՜յս, դարձել դրօ՜շ,
Պահել երթը մեր անաղարտ...
Նրանո՛վ է մրմնջացել
Հայ պանդուխտը վէրքն իր սրտի,
Նրանո՛վ է որոտացել
Կռուի երգն իմ ժողովրդի,
Նրանո՛վ է մայրս ջահէլ
Ինձ օրօրոց դրել մի օր,
Հիմա եկել, քե՜զ է հասել
Նրա կարկաչը դարաւոր...
Բա՛ց շուրթերըդ, խօսի՜ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՜ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛յ քո շուրթերին
Մեր ալեհե՜ր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ձիւնի պէս,
Պահի՛ր նրան սրտիդ մօտիկ,
Քո պապերի աճիւնի պէս,
Ու ոսոխի գարկիցը սեւ
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
Ինչպէս մօ՜րդ կը պաշտպանես,
Թէ սո՛ւր քաշեն մօրդ վրան.
Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՜ւր էլ գնաս,
Թէ մօ՛րդ անգամ մտքից հանես,
Քո մա՜յր լեզուն չմոռանա՛ս:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ 1924 - 1971
Paruyr Sevak

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԵՐԹԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ամէն սերունդ
Նախ և առաջ մտածում է լռութեան մէջ,
Իսկ երբ խօսել է սկսում՝
Բարկացնում է աւագներին
Եւ բարկացնում անկեղծօրէ՛ն,
Որովհետեւ... կրտսերը՝ մի՞շտ
անհասկացող,
Իսկ աւագը... հասկացող է:

Աւագ Աստուած,
Մի՞թէ իրօք համանիշ են ու համազօր
Հասկացողն ու կասկածողը...

Ամէն սերունդ
Նախ և առաջ մահանում է կասկածելով:

ԲԵՌԱՆ ՆԵՐՔՈՅ

Անցնում էիր,
Ողջ երեկոն քոնն էր կարծես,
Ողջ երեկոն՝ իր բոյրերով ու ջերմութեամբ:
Երկարափէշ եթէ լիներ հագուստը քո՝
Ես կ'ասէի,
Որ երեկոն քարշ էր գալիս քո ետեւից՝
Քո հագուստի փէշի նման:
Սակայն կարճ էր հագուստը քո:
Եւ երեկոն
Ամփոփւում էր քո ծնկների ծալքերի մէջ՝
Կարճ հագուստիդ կարճ փէշերի
կարի ներքոյ...

Վերջալոյսի արեւը շեղ գտել էր քեզ
Ու շուլալուել քո հագուստի կոճակներին:
Վերջալոյսի շեղ շողերի միջնորդութեամբ
Երկարում էր քո ստուերը՝ հմայքիդ պէս,
Ու քայլում էր քեզնից առաջ՝ հմայքիդ պէս...

Եւ արթնացաւ մէջս յանկարծ
Ինքնածաղկման եւ ամօթի
Տարօրինակ մի ցանկութիւն.
Եթէ կեանքում կայ քեզ նման մի
թանկութիւն՝
Ես ինչպէ՞ս եմ կեանքին նայել էժան աչքով,
Ոչ թէ անոյշ մի հիացքով,
Այլ մի տտիպ,
Յաճախ դառն,
Նաեւ կծու մի հայեացքով:
Եւ ինչպէս եմ յաճախ իջել-ստորացել՝
Բարկանալու եւ դատելու աստիճանի,
Չարանալու եւ ատելու աստիճանի,
Ու թոյլ տուել որ նողկանքը տեղից հանի
Հիացմունքին:

Հոգով-սրտով ներողութիւն...

Այսուհետեւ, ինձ հաւատա՛,
Էլ չպիտի ես խառնուեմ ոչ իմ գործին.
Էլ չպիտի այսուհետեւ
Հակուեմ կեանքի աղտ-աղարտի
ծանրութեան տակ:
Առանց այն էլ ես հակուած եմ բեռան ներքոյ
Այն վիթխարի երգեհոնի, որ ի ծնէ
Սապատուել է իմ շալակին:
Թող հնչի նա:
Եւ անցի՛ր դու:

Միայն թէ դու... "մէ՛ քիչ կա՛մաց գնա, գոզալ"
Որ քո կամաց եւ անշտապ քէլքի չափին
համաչափուի
Մեր խեղճ սրտի տրոփիւնը յաճախակուած,
Որ քո տեսքից հանգստանան աչքերը մեր,
Եւ քեզ թաքուն ունենալուց
Ջղերը մեր քիչ խաղաղուեն,
Ու երկարի այս անդորրը՝ շուքիդ նման,
Ու կարճանայ յոգնութիւնը՝ փէշերիդ պէս...

Դու

Երկու տառ
Դու՛,
Հասարակ մի դերանուն
Եւ ընդամէնն այդ քո երկու հատիկ տառով
Այս բովանդակ աշխարհին ես ինձ տէր անում:

Դու՛,
Երկու տառ
Ու ես գարնան հողի նման
Քո կենսատու ջերմութեանն եմ ընտելանում...

Դու՛,
Երկու տառ
Եւ ես ահա
Երջանկութեան համն եմ զգում իմ բերանում,
Անջատումին ընբերանում
Եւ թերանում եմ կատարել հրամանը
տառապանքի...

Դու՝
երկու տառ,
Ու ես, անգի՛ն,
Ինձանից ինքս վերանում՝
Փոշիացած հերոսների
Ու ծնուելիք հանճարների
Դասակին եմ ընկերանում...

Դու՝
երկու տառ,
Ու երբ յանկարծ
Թողնում ես ինձ ու հեռանում՝
Լքուած տան պէս ճեղք եմ տալիս,
Ծեփը թափում, անտէրանում,

Եւ կսկիծը, ցեցի նման,
Բոյն է դնում իմ սիւնի մէջ,
Չեղունի մէջ ու գերանում...

Դու՝
երկու տառ,
Դու՝
հասարակ մի դերանուն...

ՀՊԱՆՑԻԿՈՒԹԻՒՆ

Երբ վերջալոյսն է մխրճուում ամպերի մէջ՝
սաղրի նման,
Ու հոտոտող բարակ քամին, շնիկի պէս, կանգ է առնում
Ամէն թփի, ծառի, գուղձի եւ ամէն մի մարդու առաջ.
Ու երբ ցուրտը երիտասարդ ցոյց է տալիս իր ուժն արդէն՝
Ստիպելով շապիկ կօճկել ու մրմնջալ խօսքեր դժգոհ.
Ու երբ մթան թաւշի վրա օրուայ հաչոցն է խլանում,
Իսկ հատ ու կենտ լոյսերն ասես դառնում են հին զարդանկար, -
Միամի՞տ եմ դառնում նորից,
Հաւատում եմ արդարութե՛ան,
Եւ թւում է, թէ ես պիտի իմ... բնական մահով մեռնեմ...

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ 1913-1991
Moushegh Ishkhan

ՍԻՐՏՍ Կ'ԱՐԻՒՆԻ

աշխարհի ցաւով
Որքան տառապանք, Աստուած իմ, չորս դիս
Կեանքի դաշտերէն փչող ամէն հով
Հառաչ ու կսկիծ կը զարնէ դէմքիս...

Անմեղ զոհերի արիւնով եռուն
Հողը ոտքիս տակ կը մնայ միշտ թաց
Եւ նոր ոճիրներ, իմ շուրջն ու հեռուն.
Կը ծնին մարդիկ արիւնով յարբած...

Գլուխս ինչպէս ես դնեմ բարձիս
Եւ ննջեմ խաղաղ, աներազ քունով,
Երբ անդին անքուն մօտիկ դրացիս
Կը հսկէ զաւկին հոգեվարքին քով:

Սուրի ու սովի կը դառնան աւար
Լոյսի պէս պայծառ մանուկներ սիրուն,
Եւ ոտքի կոխան հասկեր անյամար՝
Աշխատաւորի քրտինքով օծուն:

Ես ինչպէս նստիմ խնջոյքի սեղան
Եւ ըմպեմ ուրախ վայելքի գինին,
Երբ որ կը խլեն մարդիկ անվարան
Որբի մը բերնէն պատառը հացին:

Աստուած իմ, որքան անարդար վճիռ.
Ես ինչպէս կրնամ քար դնել խղճիս...
Կեանքեր թեւաբեկ ու շղթայակիր,
Աշխարհի ցաւով հիւանդ է հոգիս...

ԱՄԷՆ ԲՈՊԷ

Կրկէսի պիրկ լար է կեանքը,
Ոտքդ վրան ամուր բռնէ.
Երբ որ կ'անցնիս ուղելարը
Ձողը ձեռքիդ ամուր բռնէ:

Մահուան տանող վիհ է վարը,
Գլուխդ միշտ բարձր բռնէ.
Մինչեւ շահիս այս պայքարը
Աչքդ դէմի կայքին բռնէ:

Սայթաքուն է ճամբու երթը,
Եղիր արթուն ամէն րոպէ.
Յանկարծ կու գայ մեծ վտանգը
Եթէ հոգիդ մահը հեգնէ:

Կեանքին պրկած այս պարանը
Մեր ոտքին տակ յաճախ նենգ է,
Քու վարպետի յոխորտանքը
Օր մը դաւով քեզ կը գգետնէ:

ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհի չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր հարազատ,
Կը ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն
Եւ բորեաձէն ու բուքէն հոն կը մընայ միշտ ազատ:
Քանի՞ դարեր եւ քանի՞ ճարտարապետ հանճարնկր
Աշխատեցան անոր տալ վեհութիւն, գեղ ու պերճանք.
Քանի՞ գեղջուկ բանուորներ տքնեցան տիւ եւ գիշեր,
Որոնք թաղուած են հիմա մոռացութեան մութին տակ:
Մշտանորոգ ու միշտ հին՝ ան կը տեւէ դարէ դար,
Իր ճրագները՝ միշտ լոյս, իր օճախին հուրը՝ վա՛ռ,
Բարիքներով անըսպառ լեցուն՝ ամբարն ու մառան:
Հո՛ն է միայն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին
Խաժամուժին մէջ օտար կորսնցուցած իր հոգին,
Անցեալն անհուն եւ ներկան, նոյնիսկ մըթի՛ն ապագան..

ՋԱՀՐԱՏ Zahrad

ՄԵԾ ՔԱՂԱՔԸ

Ամէն ինչ մեծ է մեծ քաղաքին մէջ
հաճոյքը մեծ
Ցաւը մեծ
պողոտաներուն ու շէնքերուն նման

Ու անոնք որոնք պզտիկ մարդիկ են
երբէք հանդարտ պիտի չըլլան մեծ
քաղաքին մէջ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Դուռը բացի որ Կիկօն էր - հրամմէ ըսի -
նստեցանք
Կիկօ ըսաւ թէ շատ կարօտցեր է զիս
Ես ըսի թէ շատ կարօտցեր էի զինք
Յետոյ խորհեցայ թէ զինք որքան շուտ
մոռցեր էի
Յետոյ խորհեցայ թէ զիս որքան շուտ
մոռցեր էր ինք
Ըսի որ աւելի յաճախ կ'ուզեմ տեսնել զինք
Ըսաւ որ աւելի յաճախ կ'ուզէ տեսնել զիս
Որոշեցինք աւելի յաճախ տեսնել զիրար
Գնաց - դռան մէկ կողմն ես -
դռան միւս կողմն ինք -
Արդէն իսկ զիրար մոռցեր էինք

ՈՒԽ

Միտքը դրեր է Կիկօ
Պիտի չմեռնի

Դուք բոլորդ պիտի մեռնիք
Աշխարհ Կիկոյի պիտի մնայ

Ու Կիկօ աշխարհիս վրայ միսմինակ
Բոլոր հայելիները պիտի կոտորէ

ՍԳՐԻՓԳԻՋ

Նախ հագուիլ պէտք է
ՅԵՏՈՅ արուեստով հանուելու համար

Կիկօ արուեստը սորուեր է ՇԱՏՈՆՑ
ՀԻՄԱ հագուստին կը սպասէ

ՕՏԱՐ

Քաղաքին այդ կողմերը օտար էին Կիկօյին
Բարձր բարձր շէնքերը օտար
Մարդիկը - գեղեցիկ կիները օտար

Գոգնոց հագած աղջիկ մը եկաւ
Հինգ ղրուշ դրաւ ափին -
Օտար էին մարդիկը - օտար -
Կիկօ մուրալու չէր ելած

ԿԻԿՕ ՄԵՌԱՒ

Բացօդեայ շատ պառկեցաւ
Թող քիչ մըն ալ հողին տակ քնանայ

Հանգիստ իր կօշիկներուն

ԱՆՊՏՈՒՂ ՍԱԼՈՐԵՆԻՆ

Սալորենին որ գարնան պտուղ չտուաւ
Ամչցաւ –
Տխուր նայեցաւ իր տերեւներուն
Իր լերկ ճիւղերուն
Ու լացաւ

Ու լաճերը թաղին – պտուղի գող –
Ոչ մէկ քար նետեցին
Արհամարհանքով ծառին նայեցան
Ու գացին

Ու այդպէս լքուած ու այդպէս առանձին
Սալորենին
Անոնց ետեւէն նայեցաւ կարօտով
ու լացաւ

Եւ պարոնները-տիկիններն թաղին
Չնչմարեցին
Հէք սալորենին
Որ այդպէս անպէտ, այդպէս յանցաւոր
Լացաւ

Միայն կատու մը սեւ—շուքի բարեկամ
Արեւի նման դեղին աչքերով
Երկար նայեցաւ սալորենիին
Ու տուն տեղ եղաւ
Չորս հատ ձագ բերաւ ծառին ստուերին

Հիմա սալորենին
Խանդով կ'երկարէ իր զով հովանին
Որ ձագուկներն ամրան կիզիչ արեւէն
Չըլլայ թէ այրին

ԵՐԱՋ

Արու եւ էգ նախ մարդիկը
երկու մասի կը բաժնես
Արուները կը նետես
Լոկ էգերը կը մնան

Երիտասարդ կամ ծեր- զանոնք ալ
խումբերու կը բաժնես
ու ծերերը կը նետես

Մնացածներն ալ գեղեցիկ թէ տգեղ
կ'ընտրես- անոնք որ տգեղ չեն
կը պահես

Գեղեցիկին ալ գեղեցիկը կը զատես
- Ի՞նչ տեսնես
այնքան տարուան կինդ չելլէ՞ քու դէմդ

2. THE GREAT IN A FEW LINES

Often it seems everything important and wise has already been said but the creative genius of human language allows endless variations of meaningful ideas. Try to note universal human features in sayings separated in time, space, and culture; for example: **Generosity is giving more than you can, and pride is taking less than you need.** (Kahlil Gibran). Տուր, մի՛ ափսոսա, ա՛ռ, մի՛ ամաչիր: (*Armenian proverb*). Take note of opposite mentality, for example: **Sticks and stones will back break my bones, but words can never harm me.** Թրի կտրածը կը լաւնայ, լեզուի կտրածը՝ չլաւնայ:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ
FROM THE ARMENIAN LITERUTRE

Չէրն չէին վասն չէին հաշտ մատուցէր:
ԵՂՆԻԿ, 5-ՐԴ ԴԱՐ

Որ չափով չափեաց, չափեալ եղեւ:

Սահմանք քաջաց զէնն իւրեանց:
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, 5-ՐԴ Դ.

Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ...

Մի տացէ զիս երկնել եւ ոչ ծնանել, ամպել եւ ոչ անձրեւել...
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, 11-ՐԴ Դ.

Դուն կրակ, հագածդ կրակ, վուր մէ կրակին դիմանամ...

Թէ կու պակսիմ՝ քիզ կու պակսիմ, աշխարհէս մէ մազ չի պակսիլ...

Մէ նոքարը երկու աղին ի՞նչ անէ...

Ամէն մարդ չի կանայ խմի՝ իմ ջուրը ուրիշ ջրէն է...
ՍԱՅԱԹ ՆՈՎԱ 18-ՐԴ Դ.

Աստծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...
ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ 19-ՐԴ Դ.

Ամէն անձրեւ արեւ՛մ ունի իրմէ ետք...
ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ 20-ՐԴ Դ.

Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէ՛ք...

Մահը մերն է, մենք՝ մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ 19-20-ՐԴ Դ.

Ո՛վ մարդկային արդարութիւն, թող որ քքնեմ քու ճակտիդ...
ՍԻՄՄԱՆԹՕ 19-20-ՐԴ Դ.

Կեանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ,
ազգեր, սերունդներ - անցնող քարաւան,
Որ հեքիաթի մէջ, վառ երազի հետ,
չուում է անտես դէպի գերեզման:

Ծանօթ շները չեն հաչում վրադ, ծանօթ մարդիկ են հաչում քո վրայ...

Վայ նրան ով որ տուն ու տեղ ունի,
կապուած է շան պէս իրեն տան շեմին:
ԻՍԱՀԱԿԵԱՆ 19-20-ՐԴ Դ.

Չախորդ օրեր ձմռան նման կու գան ու կ'երթան... **ՉԻԱՆԻ 19-20-ՐԴ Դ.**

Մեր կեանքի հիմերն անդունդներն ընկան
Ու արնոտ միգում ճարճատում են դեռ...
ԵՂԻՃԷ ՉԱՐԵՆՑ 20-ՐԴ Դ.

Ահաւոր բան մը այնտեղ կը կատարուի
մութին մէջ...

Սիրածներէս ոչ մէկ գիտցաւ թէ զինք որքան սիրեցի...
ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ 20-ՐԴ Դ.

Մարդ կայ, ելել է շալակն աշխարհի, մարդ կայ՝ աշխարհն է շալակած տանում:

Ամէնքը իրենց բախտից են դժգոհ, և ոչ թէ խելքից:

Ուզեցին մի հայ թողնել, և այն էլ՝ թանգարանում:

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:
Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ 20-ՐԴ Դ.

Վայրկեան մը շողը մութ յաւիտեանը կ'արժէ:
ՌՈՒԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ 20-ՐԴ Դ.

Ցաւը տուեց սարերին, սարերը չտարան,
Ցաւը տուեց մարդուն, մարդը տարաւ...
Այնինչ նիրհում է Աստուած իր հոգում:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ 20-ՐԴ Դ.

Մեր լեզուն ծուխն է մեր տան...
ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ 20-ՐԴ Դ.

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհի չորս ծագերուն... **ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ 20-ՐԴ Դ.**

ՅԱԽԾՐԺԻ ԿԱՆՉԸ
FROM THE OLD LORE

Իմաստնագոյն մարդու խելքի մէջ յիմարագոյն մի անկիւն կայ:
ԱՐԻՍՏՈՏԵԼ

Լաւ ամուսնութիւնը երջանկացնում է մարդուն, վատը՝ դարձնում փիլիսոփայ:
ՍՈԿՐԱՏ

Տուէ՛ք ինձ յեղարաւն, և ես շուռ կը տամ աշխարհը: ԱՐՔԻՄԷԴ

Ով նոր ճար չի գործադրում, պէտք է նոր չարիք սպասի: ՖՐԱՆՍԻՍ ԲԷԿՈՆ

Ինչ անուն էլ տաս, վարդը անուշ հոտ ունի:

Ոչինչ ինքնին լաւ կամ վատ չէ, մեր միտքն է այդպէս դարձնում:

Մտքերդ քո բանտը մի՛ դարձրու: ՋԵՔՍՊԻՐ

SAYINGS FROM THE ANCEINT ORIENT
ՀԻՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր մեծ մարդու թիկունքին մի մեծ կին է կանգնած:

Շատ դժուար է գտնել սեւ կատուին մութ սենեակում, մանաւանդ երբ չկայ:

Եթէ քառասունն անց ես, առաւօտ արթնանում ես ու ոչ մի տեղ չի ցաւում, ուրեմն մեռել ես:

MODERN ANONYMOUS WISDOM
ԱՐԴԻ ԱՆԱՆՈՒՆ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐ

Մի՛ վախեցիր, եթէ զաւակներդ քեզ չեն լսում, վախեցի՛ր, որ տեսնում են քեզ:

Նկարը հազար բառ արժէ և հազար անգամ աւելի յիշողութիւն է պահանջում:

Մարդ ինչքան ճամփայ պիտի կտրի, մինչեւ ընդունի, որ կորել է:

Եթէ վատ բան պիտի անես, գէթ հաճոյքով արա:

Յիմարութիւնն էլ է Աստծոյ պարգեւը, բայց չի կարելի այն չարաշահել:

Կեանքում երկու ընտրութիւն կայ՝ կամ մենակ մնալ ու ողորմելի լինել, կամ ամուսնանալ ու երանի տալ մեռնելուն:

Սիրի՛ր ինձ երբ նուազագոյնս եմ արժանի սիրոյ, որովհետեւ այդ ժամանակ ինձ առավելագոյնս պէտք է սիրուած զգալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՇԱՆԻ
ARMENIAN PROVERBS

Աչքի տեսած, սրտի ուզած:

Ոչ խելք ունի, ոչ մեղք:

Էն ձեռքը, որ չես կարող կտրել, համբուրի՛ր, դի՛ր գլխիդ:

Առիւծն առիւծ է, էգ թէ որձ:

Արեւ լինի, մի թաշկինակ չի չորացնի:

Ամէն ինչ չափի մէջ է գեղեցիկ:

Ամէն մարդ իր տան մէջ թագաւոր է:

Ջուրը պզտիկին, խօսքը մեծին:

Ուշ լինի, նուշ լինի:

Սէրը տարիք չի հարցնում:

Լացը լաց կը բերէ, ծիծաղը՝ ծիծաղ:

Ռիսկը գործի կէսն է:

Վէրքը տիրոջը ցաւ կու տայ:

Մէկ էլ որ ձի նստայ, շիտակ կը հեծնեմ:

Քէֆ անողին քէֆ չի պակսի:

Փորձը փորձանք չէ:

Մի քոռ մարդը լաւ է, քան եօքը եղբայրը:

Փռած սուփրին եկողը շատ է:

Երէկ լաւ էր, քանց որ էսօր:

Երեսին թքեն՝ կ'ըսէ անձրեւ կու գայ:

Շատ խնդալու վերջը լաց է:

Շան հաչոցն էլ փեշակ է:

Չեռս բան, ոտս գերեզման:

Աղքատը ինչքան էլ հարստանայ, քառսուն տարի աղքատահոտը վրայէն կուգայ:

Մէկ ձեռքով երկու ձմերուկ կը բռնէ:

Չրի լինի, դագաղ լինի:

Յանկարծ չասես՝ աչքիդ վերեւը յօնք կայ:

Թանկից էժանը չկայ:

Փողը մութ տեղը լոյս կու տայ:

Փողը որ կայ, ձեռքի կեղտ է, այսօր կայ, վաղը չկայ:

էշը կերաւ, պոչէն խռովաւ:

Հաւը երազին կուտ կը տեսնի:

Տասը չափէ՛, մէկ կտրէ՛:

Լաւութիւն արա, ջուրը քից:

Գայլը սովածութիւնից չի կարող դարը ելնել, ասում են՝ շատ է կերել:

Աստուած սարը տեսնի, ձիւնը կը դնի:

Քաչալը ճար ունենայ իր գլխուն կ'ընէ:

Հագուստով կ'ընդունենք, լեզվով ճամփու կը դնենք:

Ամեն ինչին կարմիր ներկը չի սազի:

Սէրը աթարին էլ կը կպնի:

Սիրուն խնճորին քար գցողը շատ է:

Լաւ է մէկ տեսնես, քան հազար լսես:

Չին նստաւ, Աստուած մոռցաւ, ձիէն իջաւ, ձին մոռցաւ:

ԱՐԴԻ ԱՐԵՒՄՈՒՏՔԻՑ
QUOTING THE MODERN WESTERN WORLD

Առանց սիրոյ մարդ արձակուրդում գտնուող դիակ է: Էրիխ Մարիա Ռեմարկ

Որքան էլ ասֆալտը ջրես, վարդ չի բուսնի: Անտուան դը Սենթ Էկզիւպերի

Որ ասում են՝ թէ գիտելիքն ուժ է, այնքան էլ ճիշտ չէ: Օգտագործուած գիտելիքն է ուժ:[4]

Խելագարութիւն է շարունակ նոյնն անել և այլ արդիւնք սպասել:

Հանճարեղութեան ու ապուշութեան տարբերութիւնն այն է, որ հանճարեղութիւնը սահման ունի:

Ոչ ոք չի կարող ստորացնել քեզ առանց քո թողտուութեան:

Ով կարող է կառաւարել իրեն, կառավարում է այլոց:

Խելագարութիւնը երեւակայութիւնն է, որ չի գտել իրականութիւն ետ դառնալու ուղին:

Լաւատեսութիւնը մտաւոր ընտրութիւն է:

Սիրում եմ երկար զբօսանքները, յատկապէս եթէ զբօսնողը ազդում է ներւերիս վրայ:

Տարիքը պատճէշ չէ, այլ մտքի սահմանափակում:

Մեծահոգութիւն է տալ աւելին քան կարող ես, և հպարտութիւն է վերցնել աւելի քիչ քան պէտք է:

Մեր իմաստութիւնը գալիս է մեր փորձից, իսկ մեր փորձը՝ մեր յիմարութիւնից:

Մասնագէտը այն մարդն է, որն այլեւս չի մտածում՝ նա գիտէ:

Մարդ թագաւոր է, եթէ կարող է:

Եթէ չես կարող լաւ օրինակ լինել, կը լինես մի ահաւոր նախազգուշացում:

Եթէ չես կարող համոզել, շփոթեցրու՛:

Եթէ յիմար բաներ պիտի անես, արա խանդավառութեամբ:

Երբ ես կտրում եմ մատս, ողբերգութիւն է: Երբ դու քակարդ ես ընկնում ու մեռնում, կատակերգութիւն է:

Երբ մի դուռ փակւում է, միւսն է բացւում. բայց մենք այնքան երկար ափսոսանքով ենք նայում փակ դռանը, որ բացուածները չենք տեսնում:

Երբէք ուշ չէ լինել այն, ինչ կարող էիր լինել:

Գործի հարց է: Խոտն աճում է, թռչունը թռչում , ալիքը ափն է ծեծում: Ես մարդ եմ ծեծում:

Երջանկութիւնը լաւ առողջութիւնն է ու վատ յիշողութիւնը:

Եթէ էվոլուցիան իսկապէս գործում է, ոնց որ մայրերը դեռ երկու ձեռք ունեն:

Շները գալիս են, երբ նրանց կանչում են: Կատուներն լսում են պատգամը ու յետոյ ետ կը գանգեն:

Աստուած տղամարդուն կնոջից առաջ ստեղծեց, որովհետեւ Աստուած միշտ նախ սեւագրում է կատարելութիւնը:

Կանայք և կատուները կ'անեն այն, ինչ ուզում են, իսկ տղամարդիկ և շները պէտք է հաշտուեն ու վարժուեն այդ գաղափարին:

Ուրախանալու լաւագոյն միջոցը ուրիշին ուրախացնելն է:

Մարդկութիւնը իսկապէս արդիւնաւէտ մի զէնք ունի՝ ծիծաղը:

Զգուշացէ՛ք առողջապահական գրքեր կարդալուց. կարող էք մահանալ վրիպակից:

[4] See the English originals in the Keys, p.

APPENDIX 10
2. FABLES, SAYINGS, AND MORE

Fables Առակներ

Fables are short allegoric stories featuring animals and plants, sometimes also people and concluding with a moral—an interpretation or instruction. Below are proverbs of Aesop, Mkhitar Gosh and Vardan Aygektsi, selected from different sources and rendered in WA and EA. Fables are excellent material for language learners; brief and meaningful, they promote the development of critical thinking in target language.

Recommendation for Teachers: read a fable for the class, without the title (which contains a suggestion on the fable moral), explain the words, and read it again. Assign the students to write it down in their own words and end it with a moral—what does this fable mean? Առակս ի՞նչ կը ցուցանէ. Then discuss the fable in class, ask students to read or retell their writing and argue their point about the moral. Instead of writing the fable, you can also use role play, and conclude it with classroom discussion.

Եզովպոս[5]

ՉԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Չկնորսի մէկը լաւ շուի նուագող էր: Մի օր որոշեց նուագով հմայել ձկներին. կանգնեց ծովափնեայ մի ժայռի ելուստին ու սկսեց նուագել: Բայց ապարդիւն: Ջայրացած ձկնորսը մի կողմ դրեց շուին, ծովը նետեց ուռկանը և բազմաթիւ ու բազմազան ձկներ հանեց: Երբ ուռկանը դատարկեց, ձկներն սկսեցին թփրտալ:

- Ապիկար արարածներ, - դիմեց ձկնորսը շնչակտուր թփրտացող ձկներին, - երբ նուագում էի, չէիք պարում, իսկ հիմա ա՞ննուա՞գ էք պարում:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Աղուէսը կեանքում առիւծ տեսած չկար: Առաջին անգամ դէմառդէմ ելնելով, այնպէս վախեցաւ, որ լեղաճաք փախաւ: Երկրորդ հանդիպմանը նոյնպէս շատ վախեցաւ, բայց համարձակուեց ծիկրակել թաքստոցից: Իսկ երրորդ հանդիպմանը այնքան սիրտ առաւ, որ մօտեցաւ արքային յարգանաց հաւատիք մատուցելու:

ՏԵՍՔ ԵՒ ԷՈՒԹԻՒՆ

Կատուն իմացաւ, որ հաւերն հիւանդացել են, իսկոյն բժշկի խալաթ հագաւ, բժշկական պիտոյքներ դասաւորեց պայուսակի մէջ ու գնաց տեսութեան:

- Ինչպէս էք զգում, սիրելիներս, - մոմոաց կատուն հաւանոցի դռանը:
- Շատ լաւ կլինենք, - ասացին հաւերը, - յատկապէս եթէ դու մեզնից հեռու մնաս:

ԱՉՔՍ ԿՈՒՐԱՆԱՐ՝ ՉՏԵՍՆԷԻ

Մի խեղճ պառաւի տեսողութիւնը վատանում էր: Նա բժիշկ կանչեց ու լաւ վճար խոստացաւ բուժման համար: Բժիշկն սկսեց ամէն օր այցելել պառաւին՝ աչքերին դեղ քսելու համար: Ու ամէն անգամ, մինչ պառաւը նստած էր փակ աչքերով՝ դեղն աչքերին, բժիշկը մի բան էր թռցնում նրա տնից: Երբ էլ տաճելիք չմնաց խեղճի տանը, բժիշկը յայտարարեց, թէ բուժումն աւարտուած է ու պահանջեց խոստացուած վարձը: Հիւանդը հրաժարուեց վճարելուց ու բժիշկը նրան դատի տուեց: Դատարանում պառաւը բացատրեց, թէ ինչու է հրաժարւում վարձատրելուց: «Բուժումից առաջ ես տեսնում էի տանս բոլոր իրերը, իսկ հիմա էլ ոչինչ չեմ տեսնում»:

---

[5] Aesop, a Greek fable-writer, who lived in 6th c. BC has inspired and taught ages of mankind with his aphoristic wisdom and humane and practical ethics. Some fables, ascribed to Aesop are found written down also by Armenian medieval writers Mkhitar Gosh and Vardan Aygektsi (see below) which shows that these are folkloric creations wandering by the word of mouth in time and space. See Aesop in English in traditional and modern rendering at: http://www.umass.edu/aesop/contents.html, and for educational purposes, at: http://www.pacificnet.net/~johnr/aesop/

ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՏՈՒՀԱՍ

Արծիւն ու աղուէսը բարեկամացան ու պայման կնքեցին հաշտ ու համերաշխ հարեւանութիւն անել: Արծիւը բոյն դրեց ծառի կատարին, իսկ աղուէսը՝ նոյն ծառի տակ: Չագ հանեցին, տուննոտեղ եղան, քաւոր-սանահէր դառան: Բայց մի օր, երբ աղուէսը որսի էր, սոված արծիւը քոցրեց աղուէսի անկարող ձագերին և իր ճուտերի հետ խժռեց նրանց:

Խոցուած աղուէսը մղկտում էր ձագերի կորստից ու բարեկամի դաւից. գէթ վրէժ լուծել կարողանար, բայց չորքոտանին ինչպէս հասնէր թռչունին: Մի օր արծիւը կիսախանձ գառան փորոտիք ճանկեց զոհասեղանից ու հասցրեց իր բոյնը: Մինչ ընտանիքը վայելում էր իր ճաշը, քամի ելաւ, սփռեց կայծերը, ու ծառի բարակ ու չոր ճիւղերը բռնկուեցին: Խանձուած ճտերը բնով հանդերձ վար ընկան, վրայ հասաւ աղուէսն ու հանգիստ խղճով լափեց նրանց՝ արծուի աչքերի առաջ:

ՄՐՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐԳԵՒ

Արծիւը շեշտակի իջաւ ոչխարի հօտի վրայ ու մագիլների մէջ մի գառ առած՝ սլացաւ երկինք: Ճայը տեսաւ, հիացաւ ու որոշեց նոյնն անել: Ցած նետուեց, բայց ճանկերը խրուեցին ու խճճուեցին ոչխարի բրդի մէջ: Անզօր թափահարում էր թեւերը՝ ասես թակարդ ընկած, երբ հովիւը տեսաւ, հասկացաւ ինչն-ինչոց էր և բռնեց ճային: Թեւերը խուզելով՝ ասաց, «Լաւ խաղալիք կլինես երեխաներիս համար»...

Երեկոյեան երեխաները հարցրին, թէ ինչ թռչուն է: «Ես հաստատ գիտեմ՝ ճայ է, - բացատրեց հովիւը, - բայց ինքն իրեն արծիւ է երեւակայում»...

ԽՈՏՈՐՆԱԿԻՆ՝ ԽՈՏՈՐՆԱԿ

Ալեխառն մազերով մի մարդ երկու սիրուհի ուներ՝ մէկն ահել, միւսը՝ ջահել: Ամէն անգամ, երբ այցելում էր ջահելին, վերջինս պոկում էր նրա ճերմակ մազերը՝ սիրածի տարիքից նեղուելով: Իսկ տարեց սիրուհին, ճիշտ նոյն պատճառով, մարդու սեւ մազերն էր պոկում: Այսպէս ակամայ գործակցելով, զոյգ սիրուհիները աստիճանար փետրեցին մարդուն, որ շուտով բոլորովին ճաղատացաւ:

ԿԵԱՆՔԻ ԾԱՐԱՒԸ

Մի ծերունի ցախ հաւաքեց անտառում ու շալակած ճամփայ ընկաւ տուն: Բայց ճանապարհին այնպէս յոգնեց, որ ցախը վար նետեց ու մահ խնդրեց: Մահն իսկոյն յայտնուեց ու հարցրեց, թէ ինչու է կանչել: «Որ այս ցախը շալակս տաս», պատասխանեց ծերունին:

ՍՏԻՊԵԼ ԹԷ ՀԱՄՈԶԵԼ

Արեւն ու քամին վիճեցին, թէ ով է աւելի զօրաւոր ու որոշեցին իրենց ուժը փորձել մի ճամփորդի վրայ: Ով նրան ստիպի մերկանալ, նա էլ կը յաղթի:

Քամին ուռեցրեց շրթունքները ու կատաղի փչեց: Բայց մարդը աւելի պինդ փաթաթուեց իր թիկնոցի մէջ: Ապա արեւն անցաւ գործի՝ ջերմ շողեր սփռեց մարդու վրայ: Սա թիկնոցը հանեց ու շարունակեց ճանապարհը: Արեւն աւելի ուժգին տաքացրեց, ու մարդը ճամփից շեղուեց դէպի մօտակա լճակը, հագուստն հանեց ու մտաւ լողալու:

ՄՆԱՅ ՅԵՏՈՅ

Երկու դրացի գորտեր ապրում էին մէկը՝ ճամփեզրից բիչ այն կողմ, փափուկ ճահճուտում, իսկ միւսը՝ ճիշտ ճամփի վրայ: Ճահճուտի գորտը միշտ համոզում էր հարեւանին, որ տեղափոխուի իր մօտ՝ կեանքը հեշտ, ապրուստն էժան, համ էլ երկուսով աւելի ուրախ կլինի:

Իսկ ճամփի գորտը ասում էր.

- Մնայ յետոյ, ախր վարժուել եմ իմ տունուտեղին: Քո ուտելիքը առատ է, կեանքդ ապահով, բայց ես ախր ոնց բաժանուեմ իմ տնից. մնայ յետոյ, - մինչեւ որ մի օր էլ պատահաբար անցնող մի սայլի անիւների տակ կնքեց իր մահկանացուն:

ՈՒՂՏԱՊԱՐ

Առիւծի տանը կերուխում էր, հրաւիրուած էին բոլոր կենդանիները: Ամէն մէկն իր շնորհքն էր ցոյց տալիս. կապիկը պարեց, բոլորը շատ հաւանեցին ու գովեցին: Ուղտին այնքան դուր եկաւ կապիկի պարը, որ ինքն էլ փորձեց ու ուղտապարի տուեց: Հիւրերը խորշեցին նրա պարից ու բրածեծ անելով դուրս շպրտեցին հանդէսից:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երկու տղաք ճամբայ կ'երթան և յանկարծ արջ մը կ'ելլէ դէմ-հանդիման: Տղաներէն մէկ կը վազէ ծառ մը կը մագրլցէ, միւսը չի կրնար և ճամբուն մէջտեղը կը պառկի, շունչը կը պահէ և մեռած կը ձեւանայ: Արջը կու գայ, կը հոտուրտայ, և կը ձգէ, կ'երթայ, զի մեռել չի ուտեր: Ընկերը ծառէն վար կու գայ ու կը հարցնէ.

- Արջը ի՞նչ ըսաւ քու ականջէդ:
- Ըսաւ՝ միւս անգամ այդ տեսակի ընկերոջ մը հետ ճամբայ չերթաս:

ԼԱՒԻ ԵՒ ՎԱՏԻ ՍԱՀՄԱՆԸ

Այրի կին մը հաւ մը ունէր, որ ամէն օր հաւկիթ մը կ'ածէր: Այրին խորհեցաւ, թէ հաւը թերեւս կրնար օրական երկու հաւկիթ տալ, եթէ աւելի շատ սնունդ ստանար: Ուստի և սկսաւ աւելի շատ կուտ տալ անոր: Հաւը ճարպակալեցաւ և այլեւս բնաւ հաւկիթ չածեց:

ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ

Մարդուն մէկը խխունջ կը տապկէր: Երբ որ խխունջները սկսան թշշալ տապակին մէջ, խոհարարը զարմացաւ. «Սա ապուշներուն նայէցէ՛ք, - ըսաւ, - իրենց տունը կ'այրի, և իրենք կ'երգեն»:

ՋՕՐՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կաղնին պարծեցաւ-ըսաւ՝ «Ես եմ ամենա զօրեղը», վերէն նայելով թեթեւ եղեգներուն: Սաստիկ հողմ ելաւ. եղեգնը դողդղաց ու ճկուեցաւ և անվնաս մնաց: Մինչ կաղնին ըմբոստ կուրծքը ցցեց հողմին դէմ, յամառօրէն պայքարեցաւ և արմատախիլ տապալեցաւ:

ԱՆՄԱՏՉԵԼԻՆ

Աղուէսուն դունչը խաղողին չհասաւ, ըսաւ՝ խակ է տակաւին:

ԴԻՐՔ

Գառը մակաղած էր տանտիրոջ տանիքին վրայ, երբ տեսաւ վարէն գացող գայլը և սկսաւ հայհոյանքներ տեղալ անոր գլխուն:

- Է, պարոն գառ, - ըսաւ գայլը, - այդ դուն չես զիս հայհոյողը, այլ քու դիրքդ:

ՃՇՄԱՐԻՏ ԱՐԺԷՔ

Ծարաւ եղջերուն կռացաւ ջուր խմելու և վճիտ ջուրին մէջ ցօլացած տեսաւ իր պատկերը: Հիացմունքով դիտեց իր եղջիւրները՝ առատ և խիտ, ապա նայեցաւ իր ոտքերուն և անդրադարձաւ, որ ծուռ էին և բարակ. բնաւ չախորժեցաւ անոնցմէ: Նոյն պահուն անօթի առիւծին մռնչիւնը լսեց և սկսաւ փախիլ: Քանի դեռ բաց դաշտէն կը սլանար, առիւծը ետ մնացած էր. այն բարակ ոտքերը թոչունին թեւի նման արագ էին: Բայց երբ հասաւ ծիքենիներուն պուրակին, ճոխ եղջիւրները խճճեցան ծառերուն ճիւղերուն մէջ, և առիւծը հասաւ և զգետնեց անոր: Վերահաս մահուան ճիրաններուն մէջ, եղջերուն դարձեալ մտովի բաղդատեց իր բարակ ոտքերը և ճոխ եղջիւրները:

Մխիթար Գոշ[6]

ՀԱՅՐԵՆԻՔ

Հնդկաստանի թագաւորը թռչուն մը ունէր, որ մարգարիտ և ակնեղէն կ'ածէր: Լսեց Յունաստանի թագաւորը և պատուիրակ դրկեց թռչունը խնդրելու: Եւ Հնդկաստանի թագաւորը թռչունի տեղը անոր ձին փափաքեց, որ թռչունի պէս արագ կ'արշաւէր: Երկուքին ցանկութիւնն ալ ծանր էր, բայց համաձայնեցան և տուին մէկ մէկու ուզածները: Սակայն Յունաստան ժամանելէն վերջ, Հինդու թռչունը տեղի հաւերուն պէս սկսաւ հաւկիթ ածել, իսկ Յունաստանի ձին Հնդկաստան սկսաւ փղերու նման դանդաղ երթալ և ապա միչեւիսկ կաղալ: Ետ դարձուց ձին թագաւորը՝ սաստիկ այպանելով: Նմանապէս, ետ դարձուց թռչունը յոյժ ամբաստանելով: Եւ տուն դառնալով, թռչունը կրկին մարգարիտ ու ադամանդ ածեց, իսկ ձին սուրաց հողմերէն արագ:

ՎԱԽՑԻ՛Ր ՊՋՏԻԿՆԵՐԷՆ

Արջը կը փորէր մրջիւնին բոյնը, լեզուով կը ժողվէր զանոնք և կ'ուտէր:

Եւ մրջիւնները ճար մը կը խորհին զայն սպանելու և իրենց տունը փրկելու: Կ'երթան, օգնութեան կը կանչեն պիծակ, բոռ, ճանճ, մժեղ, մոծակ, բրէտ և այլ ազգականք: Ասոնք ամէնքը կու գան և կը մտնեն արջին աչքերն ու ականջները և կը խածատեն գազանը: Ռազում խայթոցներէն կատղած՝ արջը կը բանայ բերանն ու կը պոռայ: Եւ անոր բերանէն ալ ներս կը սողոսկին պզտիկ թշնամիները, կը խածկտեն աղիներն ու փորոտիքը: Արջը ցաւէն ազատելու համար կ'երթայ ջուրը կ'իյնայ և այլ ելլել չի կրնար, հոսանքը կը քշէ, կը խեղդի:

ՍԿՉԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Ումն քահանայ մի աւազակի բռնեց և ուզում էր սպանել: Ծեր էր քահանան, բայց երկնային զօրութիւն իջաւ վրան ու գետնեց աւազակին:

Աւազակը տեսաւ բանը բուրդ է ու աղաչեց քահանային՝ ասելով.

- Քահանայ ես ու միշտ ասում ես՝ խաղաղութիւն ամենեցուն և այլ նման բաներ, հիմա ինչու՞ ես ինձ սպանում:

- Ո՛վ չարագործ, խաղաղութիւնն անխաթար պահելու համար է, որ պիտի ոչնչացնեմ քեզ, քանզի դու չես սիրում խաղաղութիւն:

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Ճայի մօտ եկաւ ագռաւը՝ թէ.

- Դու ճերմակ ես ու սիրուն, սովորեցրո՛ւ, ի՞նչ անեմ, որ քեզ պէս սպիտակեմ:

Ու ճայն ասաց.

- Յաճախ լողացիր ինձ պէս:

Ագռաւը սկսեց շուտ-շուտ լողանալ, բայց տակից աճող նոր փետուրները նորից սեւ էին: Նորից եկաւ՝ թէ ինչ անեմ: Ճայը թէ՝ իմ լեզուն սովորիր: Ագռաւն իր լեզուն մոռացաւ, ճայի լեզուով խօսեց, բայց դարձեալ նոյն ագռաւը մնաց:

ԹԱԽՏԻՑ ՓԱԽՆԵՍ, ԲԱԽՏԻՑ ՉԵՍ ՓԱԽՆԻ

Եզը գութանի լծից փախաւ, ընկաւ սայլի լծի տակ, այնտեղից էլ փախաւ, ընկաւ կալի տակ, էլի խոյս տուեց մինչեւ տեսաւ անօգուտ է, լծից չի ազատուի, ու գլուխը կախ գործի անցաւ:

---

[6] Mkhitar Gosh (1130-1213), priest-scholar and writer. Gosh became famous in his lifetime for Գիրք Դատաստանի, later referred to as Դատաստանագիրք, the compilation of the Code of laws, civic and canonic, which was used both in Greater Armenia and Cilicia. (see details at: http://www.matenadaran.am/en/heritage/law/lawindetails.html). Gosh also founded the monastery of Nor-Getik, one of the jewels of the medieval Armenian architecture known nowadays as Goshavank. His timeless fables are translated into many languages, see in English at: http://rbedrosian.com/gosh1.htm.

ԴԻՐՔ ԵՒ ՎԱՐՔ

Բուն խնամախօս ուղարկեց արծուի մօտ՝ նրա դստեր ձեռքը խնդրելու: «Դու ցերեկուայ տիրակալն ես, ես՝ գիշերուայ. պատշաճ է, որ խնամիանանք»: Բազում թախանձանքներից յետոյ արծիւը համաձայնեց: Հարսանիքն սկսուեց ցերեկով, և փեսան ոչինչ չէր տեսնում, ու ծաղրում էին նրան հարսնաւորները: Ահա իջաւ գիշերը, ու ոչինչ չէր տեսնում հարսը: Փոխադարձ նախատինքներ նետուեցին և շուտով լուծուեց ամուսնութիւնը:

ԿԱՐԳ

Աստղերը ժողով արեցին ու նրանցից ծերագոյներն ասացին. «Մենք շատ ենք, ինչու՞ գիշեր-ցերեկ չլուսաւորենք ու փառաբանուենք արեւի ու լուսնի փոխարէն»:

- Որովհետեւ միաբան չենք, - ասաց մէկը:

Որոշեցին միաբանել և հերքել արեւին: Բայց լուսինը ծագեց թէ չէ, աղօտացաւ: «Եթէ անգամ լուսնից պարտուեցինք, արեգակի դէմ ի՛նչ ենք անելու», - ասացին և գլխիկոր ընդունեցին իրենց վիճակը:

ՃԱՆԱՉԻՐ ԻՆՔԴ ՔԵԶ

Լուսինը լրեց ու որոշեց ցերեկն էլ արեւի տեղ լուսաւորել: Բայց սկսեց բարակել ու նօրել և նոյնիսկ գիշերը լուսաւորել չկարողացաւ:

ՆԱԽԱՆՁԸ՝ ԲԱՄԲԱՍԱՆՔԻ ԱՂԲԻՒՐ

Ոչխարի հօտը գնում էր շորորուն դմակներով: Այծերը նայում էին նրանց հետեւից ու ասում՝ «Ինչու՞ մեզ պէս պարկեշտօրէն չէք քայլում»:

ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆ ՉՈՒՆԻ

Անփորձ մէկը շուկայում շամամ տեսաւ, հարցրեց՝ ի՞նչ է: Տեսաւ տգէտ է, ասին՝ սիրամարգի ձու է: Ասաց՝ հա, շատ նման է, ու առաւ, ուրախ-ուրախ տուն եկաւ, դրեց իր թխսկան հաւի տակ: Մի երկու օրից եկաւ ստուգելու, այնպէս պատահեց, որ այդ պահին մի ոսկերիզ երազահաւ թռաւ-անցաւ այդ կողմերից: «Ախ, ափսոս, -ասաց, - ուշացայ, սիրամարգիս ձագը թռաւ-գնաց»:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Թռչուններն եկան արծիւ արքայի մօտ, թէ.

- Միեւնոյնն է, քո հպատակն ու հարկատուն ենք: Ինչ կլինի, խնայես մեզ, չորսաս, չուտես, չկործանես:

Արծիւը համաձայնեց, և հաշտութեան ու խաղաղութեան պայման կապեցին:

Ու թռչունները գոհացան ու ցնծացին, բայց կամաց-կամաց սկսեցին ծաղրել արծուին, սպառնալ ու հայհոյել: Նոյնիսկ ճնճղուկն ասում էր, թէ նրա աչքերը պիտի կտցելով հանի: Եւ իւրաքանչիւրն սկսեց իր ուժով պարծենալ ու կռուել իրար դէմ: Արծիւը այլեւս չյանդուրժեց և յարձակուելով սատկեցրեց շատերին:

ԱՇԽԱՐՀԻ ԿԱՐԳԸ[7]

Մի կին շատ էր Աստծու գահլէն տանում, թէ՝ «Զաւակս հա զաւակս, մենակ մէկուճարս լաւ լինի, ինձ էլ բան պէտք չէ»: Աստծոյ սրտին ծանր եկաւ էս կոյր սէրը, առաւ երեխին իր մօտ տարաւ, տունն էլ պարպեց-սրբեց, թողեց մէկ դագաղը, մէկ էլ մի կտոր հաց վերի թարէքին:

Մայրը մորմոքաց որդու անկեանք մարմնին հակուած մի օր, ողբ ու շիւան արեց երկու օր, երրորդ օրը ոտը դրեց դագաղին, որ ձգուի-հասնի հացի կտորին:

[7] This fable is true folklore; I have heard it only from my grandmother, Araksi Goroyan.

Վարդան Այգեկցի[8]

ԸՆԴՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

Երկու հոգի կռուեցին ինչ-ինչ պատճառներով: Սրանցից մէկը սպառնաց թէ՝ «Հիմա երեսներկու ատամներդ էլ կը փշրեմ՝ բերանդ լցնեմ»:

Մարդը տուն վազեց, ու կնոջը թէ՝ «Ա՛յ կնիկ, մի մոմ վառի՛ր, արի տե՛ս, թէ բերանս քանի ատամ կայ»: Կինը հաշուեց ու ասաց՝ «Ուղիղ երեսուներկու ատամ ունես»:

Մարդը վերադարձաւ իր հակառակորդի մօտ ու հարցրեց.

- Ի՞նչ իմացար ատամներիս քանակը կամ թէ քեզ ո՞վ իմաց տուեց:
- Իմ ատամների Տէրը, - ստացաւ պատասխան:

Եւ այնուհետ հաշտուեցին ու բարեկամացան:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԹԷ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Մի այրի կին մի կով ունէր, ու մի խորթ տղա: Այս տղան միշտ գողանում էր կովի խոտը՝ իր էշին կերակրելու համար: Այրին աղօթեց Աստծուն, որ խորթ որդու էշը սատկի, բայց փոխարենն իր կովը սատկեց: Ապշած այրին դիմեց Աստծուն թէ. «Մի՞թէ, Տէ՛ր, չես կարող էշին կովից տարբերել»:

ԽԵԼՔԻ ԾՈՎ

Մի այծ ցատկել էր մի բարձր պատ ու աշխարհիս տէրն էր իրեն զգում: Քաղցած գայլը եկաւ-նստեց պատի տակ: Այծը վար նայեց գայլին ու ասաց.

- Սիրտս ուզում է՝ վար իջնեմ ու գայլի փորոտիքը քափեմ եղջիւրներովս:

Գայլը, թէ՝

- Երանի իմ աչքերին, որ տեսնեն թէ այծն ինչպէս է իր եղջիւրներով փորս պատռելու:

ԻՆՔՆԱՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Նապաստակները ազգովին որոշեցին, որ գնան իրենց ջուրը գցեն, քանի որ շատ թոյլ են ու հալածուած բոլոր արարածներից: Հասան ջրին, ու գորտերը, նրանց տեսնելով, սարսափահար ջուրը թռան ու փախան: Եւ նապաստակները մխիթարուեցին, որ իրենցից առաւել տկարները կան ու գոհ սրտով տուն դարձան:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Գայլը, աղուէսը և ջորին եղբայրացան ու գնացին: Երբ սովածացան ու որս չհանդիպեց, ասացին. «Եկէք ուտենք մեզնից ամենաերիտասարդին»: Գայլն ասաց.

- Ես այն գայլն եմ, որին Նոյն իր տապանն առաւ:
- Իսկ ես այն աղուէսն եմ, որին Աստուած ստեղծեց:
- Իմ տարիքը սմբակիս վրայ է գրուած, - համեստօրէն ասաց ջորին ու տնկեց հետեւի ոտքը, - եկէք կարդացէ՛ք:
- Դու դպրոց ես գնացել, - դիմեց աղուէսը գայլին, - կարդա՛, տեսնենք:

Գայլը մօտեցաւ կարդալու ու ջորին ասաց.

- Մաճր է գրած, լաւ մօտեցիր, որ տեսնես:

Գայլը կիպ մօտեցաւ ու մի լաւ աքացի ստացաւ գլխին: Կաղկանձելով փախչում էր, մինչ ջորին թէ՝

- Աւելի մաճր գրած մի տող էլ կար, այն էլ կարդա՛:
- Ես գրի հետ ինչ գործ ունեմ, - մղկտաց գայլը, - ախր մենք ազգուտակով մսագործ ենք ու մսագործի որդի:

---

[8] Very little is know about the life of Vardan Aygektsi; he died in old age in 1229. Nonetheless, Aygektsi is one of the most eminent representatives of Medieval Armenian literature; his fables depict his contemporary life, his morals support to the practical worldly experiences (whereas Gosh's fable-morals as a rule maintain ecclesiastical-religious nature), he writes in the spoken language of his time, Middle Armenian (whereas Gosh sticks to Grabar); his fables are pithy, juicy, and witty and they bear the mark of folkloric mentality.

ՀԱԾԻՒ

Էշը գարի էր կրում կալից տուն տիրոջ համար, քուռակն էլ վազում էր մօր կողքից: Մի օր քուռակը նկատեց, որ տանտիրոջ բառւ խոզը ամբողջ օրը կողքին պառկած գարի էր ուտում: Դարձաւ մօրը հարցրեց.

- Ինչի՞ց է, մա՛, որ խոզը չի աշխատում, բայց ամբողջ օրը նրան լիուլի գարի են տալիս, իսկ մեզ՝ բանողներիս, օրը մէկ անգամ միայն:

- Մի շաբաթ սպասիր, տղաս, - մայրն ասաց, - հարցիդ պատասխանը կը տամ:

Շաբաթը հազիւ էր բոլորել, որ տունդարձին քուռակը սոսկալի ճղաւոց ու վայնասուն լսեց ու վազեց տեսաւ, որ խոզին մորթում էին: Սարսափահար գնաց մօր մօտ, որ իմանայ թէ ինչ է կատարւում:

- Մի՛ անհանգստացիր, զաւա՛կս, - սիրտ տուեց մայրը, - խոզն իր կերած գարու հաշիւն է փակում:

Յաջորդ օրը գործից սովորականի պէս տուն դառնալուն, իշուկը սմբակը տնկեց ու խնդրեց մօրը, որ ստուգի, թէ հո գարու հատիկ չկար կպած:

- Որ յանկարծ ինձնից էլ գարու հաշիւը չպահանջեն:

ՄԻՆՉԵՒ ՉԳԱՅ ՎԵՐՋԻՆԸ

Մի չար ու դաժան իշխան էր իշխում մի քաղաքում: Նոյն քաղաքում ապրում էր մի խեղճ այրի, որ շատ էր նեղւում իշխանական հարկ ու տուրքից, բայց և օրաւուր աղօթում էր իշխանի համար: Գնացին, իմաց տուին իշխանին, սա եկաւ այրու մօտ, թէ՝

- Ես քեզ լաւութիւն չեմ արել, ինչու՞ ես ինձ համար աղօթում:

Ու այսպէս պատասխանեց այրին.

- Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի նրան, նա մեռաւ ու դու եկար մեր գլխին իշխան՝ առաւել չար ու անխիղճ. վախենամ թէ մեռնես, ու քո որդին քեզնից էլ վատը դուրս գայ:

ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱՓՈԽ

Էշին աւետիս տուին՝ թէ.

- Աչքդ լոյս, քոռ ծնաւ քեզի, ցնծա՛ և ուրախ լե՛ր և աչքալուսանք մատուցի՛ր մեզի:

Եւ էշն ըսաւ.

- Վա՛յ ինձի, բարեկամներս, մի շալակիս բեռը պիտի չառնի, այլ գարիիս տոպրակը:

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Աղուէսը գայլուն թուղթ մը տուաւ՝ թէ.

- Տա՛ր գիւղին տանուտիրոջը, քեզի կերակուր կու տայ:

Գայլը թուղթը բերանը մօտեցաւ գիւղին թէ ոչ, շուները յարձակեցան վրան, բուրդը գզեցին: Ոռնալով ու կաղկանձելով փախաւ: Աղուէսն հարցուց.

- Ինչու՞ թուղթը չցուցուցիր:

- Ինչպէ՛ս չէ, ցուցուցի, բայց հոն հազար ու մէկ շուն կար, որ կարդալ չէր գիտեր, - ըսաւ:

ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Աղուէսը տեսաւ, որ վարազը ժանիք կը սրէր, հարցուց.

- Մօտալուտ պատերազմի նշոյլ իսկ չկայ, ինչու՞ ժանիքդ կը սրես:

- Ձայնդ կտրէ՛, տականք աղուեսուկ, - բարկացաւ վարազը: - Ի՞նչ գիտես դուն պատերազմի մասին: Ո՛վ կրնայ պատերազմի ատեն մարզուիլ կամ զէնք սրել: Զէնքը նախօրօք սրելու է:

ՇՈՒՆԸ ՀԱՋԱՅ, ՔԱՄԻՆ ՓՉԷ

Մոծակը տեղաւորուեցաւ եզան եղջիւրին վրայ և անուշ մրափեց: Արթնցաւ, խաղցաւ, կերաւ, վերջը դառաւ եզանը՝ թէ.

- Կ՛ուզես որ դեռ հիւր մնամ թէ՞ երթամ:

- Հոգի՛ս, ո՛չ գալդ գիտցայ, - ըսաւ եզը, - ո՛չ ալ երթալդ պիտի գիտնամ:

ՀՆԱՐԱՄՏՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ

Կին մը կ'ելլէ պարտէզ պտուղ հաւաքելու և մանչուն կ'ապսպրէ հաւուն ու աճոր ճուտիկներուն ճայիլ: Մանչը ամէնուն ոտները իրարու կը կապէ, որ չփախին ու խաղով կ'իյնայ: Աճօթի աճգղ մը վար կու գայ ճուտերէն մէկուն վրայ և իրարու կապկապած հաւուն ողջ ընտանիքը կը տանի:

ՔԱՆԱԿ ԵՒ ՈՐԱԿ

Առիւծը զաւակ ծնաւ և եկան անտառին գազանները աճոր շնորհաւորելու: Եկաւ աղուէսը և բարձրաձայն ճախատեց առիւծը հանդիսականներուն աչքին առջեւ.

- Ա՞յդ է քու կարողութիւնդ, լոկ մէկ հատիկ կորիւն ծնած ես և ոչ բազում:
- Այո, մէկը ծնած եմ, բայց այն կորիւն է, առիւծ՝ իմ ծնած և ոչ քեզի պէս աղուէս:

ՀՈԳԻԻ ՋՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐՄԻՆԻ ՋՕՐՈՒԹԻՒՆ

Զօրական մը պատերազմ կ'երթայ: Ան երկու ոտքէն կաղ էր, ու մարդիկ ըսին.

- Ո՛վ ողորմելի, ու՞ր կ'երթաս, զքեզ շուտ մը կը սպաննեն, զի փախիլ չես կրնար:
- Ո՛վ եղբայր, պատերազմ գացողը չպարտի փախչիլ. ես դէմ յանդիմման կռուելու և յաղթելու կ'երթամ, - ըսաւ զօրականը:

ԿԱԹ ՄԸ ՄԵՂՐ

Մարդ մը խանութ ուներ և մեղր կը ծախէր: Կաթ մը մեղր կաթեց գետինը. պիծակը նստաւ վրան, խանութպանին կատուն չանչը զարկաւ, պիծակը առաւ: Շուն մըն էլ յարձակեցաւ կատուին վրայ եւ խեղդեց զայն: Շան տէրը կողքի գիւղէն էր, երբ լուրն առաւ, եկաւ սպաննեց խանութպանը: Երկու դրացի գիւղեր պատերազմ սկսան, ջարդեցին, կոտորեցին իրարու: Մէկ մարդ միայն ողջ մնաց՝ ան էլ կաթ մը մեղրին վրայ մտորելու համար:

ՄԵՇԱՐԱՆՔ

Էշը մեծարեցին և թագաւորին տղուն հարսնիքին հրաւիրեցին: «Ո՛չ նուագածու եմ, ո՛չ ալ պարող, վա՜յ իմ՝ զի գիտեմ, որ կամ ծանր բեռ ունին բարձելու և կամ հարսանեաց ջուր կրելու կը կանչեն»:

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՑՈՅ

Աղուէսը կաքաւ մը բռնեց և այն է, պիտի ուտէր, երբ կաքաւն ըսաւ.

- Ջիս բռնած ես, ալ կրնաս ուտել երբ ուզես, բայց նախ գոհութիւն ու աղօթք Աստծուն պիտի յղես:
- Իրաւ է, - ըսաւ աղուէսը, բերանը բացաւ, որ աղօթք ընէ, և կաքաւը բռաւ-գնաց անոր ակռաներուն աքցանէն:

ԱՐԴԱՐ ԲԱԺԻՆ

Առիւծը, գայլը եւ աղուէսը ընկերացան եւ միասին որսի ելան: Բռնեցին մէկ խոյ, մէկ մաքի և մէկ գառ: Առիւծը, փորձի համար, գայլին առաջարկեց, որ իւրաքանչիւրին արդար բաժին հանէ:

- Ո՛վ թագաւոր, - ըսաւ գայլը, - Աստուած արդէն բաժնած է՝ խոյը քեզի, մաքին՝ զիս, և գառն ալ՝ աղուէսուն:

Առիծը սաստիկ զայրացաւ և այնպէս ապտակեց գայլին, որ ասոր աչքերը դուրս թռան: Ապա դարձաւ աղուէսուն և ըսաւ.

- Հիմա դուն բաժնէ՛:

Եւ աղուէսն ըսաւ.

- Ո՛վ թագաւոր, Աստուած արդէն բաժնած է՝ խոյը քեզի նախաճաշ, մաքին՝ ճաշ, գառն ալ՝ ընթրիք:

- Ո՛վ աղուէսուկ, ու՞րկէ սորվեցար այդպէս արդար բաժին հանել:
- Գայլին դուրս թռած աչքերէն, ո՛վ արքայ, - պատասխանեց աղուէսը:

a	adjective	*modal*	modal words
abbr	abbreviated	*n*	noun
abl	ablative case	*neg*	negative
acc	accusative case	*nom*	nominative case
adv	adverb	*obs*	obsolete
arch	archaic	*onom*	onomatopoeic
card	cardinal numeral	*ord*	ordinal numeral
CO	classical orthography	*pej*	pejorative
coll	colloquial	*poss-prn*	possessive pronoun
conj	conjunction	*post*	postposition
conv	conversational	*pp*	past participle
dat	dative case	*prep*	preposition
def-prn	definite pronoun	*pres-p*	present participle
dem	demonstrative pronoun	*prn*	pronoun
dim	diminutive, as a rule also endearing form	*prs*	personal
EA	Eastern Armenian	*prs-prn*	personal pronoun
emph	emphatic	*recp*	reciprocal, verbs and pronouns
esp	especially	*ref*	reflexive, verbs and pronouns
fam	familiar	*relg*	religion, religious
fem	feminine, female	*rel-intr*	relative interrogative pronoun
frzn	frozen oblique form[1]	*rept*	repetitive verb
fut-p	future participle	*RO*	reformed orthography
gen	genitive case	*smb*	somebody
imp	imperative	*smth*	something
imprs	impersonal word or phrase	*sn*	singular
inst	instrumental case	*sp*	simple past
intj	interjection	*subs*	substantive
intro	introductory word	*v*	verb
ir	irregular	*vc*	verb, causative
ling	linguistic term, grammar	*vi*	verb, intransitive
lit	literally, literal meaning	*vp*	verb, passive voice
loc	locative case	*vt*	verb, transitive
med	medical	*WA*	Western Armenian

[1] Frozen words are oblique (declined or conjugated) forms, which have departed from the source word, blended with grammatical endings and frozen as a new word, for example, huuguէ in Grabar is a subjunctive 3rd p. sn. meaning *let it get (to)*; in modern Armenian it is a noun meaning *address*. Some frozen words are easily identified with their sources, e.g., qhնuկ as a frozen adjective and noun means *tipsy, drunk*, though one can readily recognize the inst. sn. of qhնի and use it in this sense too, e.g., *it can be eaten with wine.*

CO—classical orthography, դասական (հին) ուղղագրութիւն

Used since the beginning of the Mesropian writing system circa AD 405 until nowadays with minor reforms (the addition of the letters օ and Ֆ, change of աւ the into ո, e.g., աղաւիւղ>ադոիւղ etc.).

RO—reformed orthography, բարեփոխուած (սովետական) ուղղագրութիւն

Used since 1922 in Soviet Armenia, reformed again in 40s; RO is accepted in a few Armenian schools in Iran and in the many post-Soviet EA communities throughout the world.

Armenian English Glossary

This bilingual glossary presents Armenian words in four layers—WA and EA words in CO and RO. The main entry is presented in CO, in its word building components, e.g., *ազն-իւ. The word is provided with an asterisk (*) if its spelling differs in RO, but the RO spelling is not present if the spelling difference is clearly deducted from the **Regular Correspondences Between CO and RO** (see on the last page)[1]. The RO spelling follows the word if its spelling cannot be clearly defined by these regular correspondences, e.g., կէտ, *RO* կետ. Then the word is presented in its meaning differences, if any, between EA and WA. Try not to confuse the spelling with the language, e.g., սիրուել EA, սիրուիլ WA; in RO both are spelled with /վ/, սիրվել EA, սիրվիլ WA[2].

Main differences between CO and RO concern vowel and diphthong orthography; the systematic correspondences are presented in the last page. The rules and exceptions are detailed in Appendix 13, Orthographic Glossary. The consonant spelling is quite uniform in EA and WA as well as in CO and RO. There are some minor differences which are documented in the main entry of the glossary, if possible, or in alphabetical order with a reference to the other version, e.g., վոհմակ *WA, see EA* ոհմակ .

The minor differences in consonant spelling concern:

1. Double standards in spelling originating in Grabar (perhaps an echo of ancient Armenian dialects), as CO ագաթ/ակատ, գնդակ/գնտակ. RO tends to eliminate the doubles—ագաթ, գնդակ.
2. EA and WA differences, e.g., EA ճամփայ փնտրել WA ճամբայ փնտոել (the only difference in RO in this case is the lack of the final silent /յ/.) These differences often tend to maintain the same pronunciation of the sound in question, cf. WA: բարտի, ինձի, բոպիկ; EA: բարդի, ինձ, բոբիկ.

A note for students used to RO

1. Note the difference in alphabetic order: ու follows the letter ո as its derivative digraph.
2. The letter ւ takes its original spot in the alphabet, between գ and փ, which in RO is occupied with ու.
3. There is no letter և in the alphabetic order; if you are looking for a word containing և in RO, look for the letter combination եւ, e.g., the word սև < սեւ appears between the words սերունդ and սեփական, and not at the end of words beginning with ս.
4. When looking up a word, note the regular correspondences between RO and CO and search it according to its original spelling, e.g., միւս (< RO մյուս) is after միրգ and not before մնալ.
5. If you cannot find a word beginning with the sound [h], spelled with the letter հ h in RO, please look up under the letter Յ յ.
6. As you know, few words begin with Յ յ in RO—these words are spelled with the diphthongs եա or իւ in CO because the initial Յ յ is pronounced [h]. Example: RO յար > CO եար, RO յուղ > CO իւղ.

[1] I would recommend to copy this page and use as a bookmark.

[2] People believe that RO is the spelling pertinent to EA and CO, to WA because of current writing traditions. However, lets remember that everything in EA was written in CO before the 20s of the 20th c.. On the other hand, everything published in Soviet Armenia, including the classics of WA literature, is in RO. See detailes in the Introduction.

Ա ա

ա՜ *intj* ah

***աբեղայ** *n* monk, lay brother

***ագաթ** *see* also ակաւն *n* agate

ագահ *a* greedy, avaricious

ագահ-աբար *adv* greedily, avidly, voraciously

***ագահ-ութիւն** *n* avarice, greed

ագարակ *n* farm

***ագարակ-ա-տէր** *RO* տեր *n* farmer

ագե-վագ *n* kangaroo

ագի *n* tail

***ագռաւ** *RO* ագռավ *n* raven

աղամ-ա-թուզ *n* banana

աղամանդ *n* diamond

***աղամանդ-եայ** *a* diamond

***աղամանդ-եղէն** *n a* 1.made of diamond; 2.diamond jewelry

***աղամանդ-է** *a* diamond

ազատ *a* 1. free, liberated 2. fluent, articulate 3.*obs* noble 4. male proper name

ազատ-ա-գր-ել *vt* liberate, emancipate

ազատ-ա-գր-ում *n* liberation, emancipation

ազատ-ա-միտ *a n* liberal, progressive thinker, open-minded

ազատ-ել *vt* to set free, save, rescue, liberate

***ազատ-ու-ել** *EA.* **-(ու)-իլ** *WA vp, vr* 1.to be freed, liberated, to get free 2.deliver (child)

***ազատ-ութիւն** *n* liberty, freedom

ազատքեղ *n* parsley *see EA* մաղադանոս

ազգ *n* 1. nation, people, race 2. clan, tribe, family 3. *obs.* type, kind

***ազգ-ա-գր-ութիւն** *n* ethnography

ազգ-ա-կան *n a* relative, relation, kin

ազգ-ա-կից *n* relative, relation, kin

ազգ-ային *a* national

ազգ-այն-ա-կան *a n* nationalist, nationalistic

ազգանուն *EA n* surname, last name; *see WA* մականուն

ազգ-ա-պետ *n* patriarch, clan leader

ազգ-ա-պիղծ *a* renegade, incestuous

***ազգ-ա-սէր** *RO* ազգա-սեր *a* patriot

ազգ-ա-տոհմ *n* clan, relatives, extended family

***ազգ-ութիւն** *n* 1. nationality 2. nation 3. clan

ազգ-ու-տակ *n* kith and kin

ազդ *n* advertisement, announcement

ազդ-ա-գիր *n* ad, notice

ազդ-ակ *n* factor

ազդ-արար *n* 1. monitor 2.advertiser

ազդ-արար-ել *vt* announce, advertise

ազդ-ել *vi* to influence, affect

ազդ-եց-իկ *a* influential, imposing

***ազդ-եց-ութիւն** *n* influence, effect, impact

ազդ-ու *a* influential, powerful, effectual

ազդր *n* thigh, leg

***ազնի** *a* 1.*EA* honest, 2.*WA* kind, nice 3. *arch* noble, gentle, 4.excellent, exquisite

***ազնու-ա-բար** *adv* 1. nobly, bravely 2.honestly truthfully, sincerely, fairly

***ազնու-ա-գոյն** *a* noblest, best

***ազնու-ա-գարմ** *a n* 1. excellent, noble, 2. gentleman, aristocrat, nobleman

***ազնու-ազգի** *a n* 1. excellent, noble, 2. gentleman, aristocrat, nobleman

***ազնու-ա-կան** *n* nobleman , aristocrat

***ազնու-ա-կան-ութիւն** *n* aristocracy, nobility, upper classes

***ազնու-ա-պէս** *RO* ազնվապես *adv* 1. nobly, bravely 2.honestly, sincerely, fairly

***ազնու-ա-տոհմ** *a n* 1. excellent, noble, 2. gentleman, aristocrat, nobleman

***ազնու-ութիւն** *n EA* honesty, fairness, *WA* kindness, goodness

***ազնու-օրէն** *adv* 1. nobly, bravely 2.honestly, sincerely, fairly

աթոռ *n* chair

աթոռ-ա-կալ *n* 1.*arch* president 2. vicar

աթոռ-ա-նիստ *n* chief residence, court (king's, catolicos's)

աժան *WA. a see EA* էժան 1. cheap, inexpensive 2.petty, worthless (tricks)

***աժան-ութիւն** *WA n* 1 affordability, abundance 2.cheapness. *see EA* էժանութիւն

ալ 1 *WA particle* also, too, and, *see EA* էլ

ալ 2 *a* scarlet, crimson,. ~ կարմիր blazing red

ալ-ե-կոծ *a* stormy, tempestuous

***ալե-ւոր** *a n* gray-haired, hoary, venerable, usually male wise with age.

***ալիւր** *also* ալեւր, *RO* ալյուր *n* flour

ալի-ք *n* wave

ալոճ *n* a kind of berry, *see also* փշարմաւ

ալքոհոլ *n* alcohol, *see EA* ալկոհոլ

***ախոյեան** *RO* ախոյան *n* 1. *WA* champion. 2. *EA* adversary, rival, opponent

ախոռ *n* stable, stall

ախորժ *a* pleasant, agreeable, savory

ախորժ-ելի *a* pleasant, agreeable, savory

ախորժ-ակ *n* appetite

ախորժ-իլ WA *vt* to like, love, enjoy, be pleased

ախպեր *EA coll brother, bro* (եղբայր) *see WA* աղպար

ախտ *n* disease, malady, sickness

ախտ-ա-բան *n* pathologist

ախտ-ա-նիշ *n* symptom

ախտ-ա-նշ-ան *n* symptom

ախտաբ-ք *n* astrology

ախտ-որոշ-ում *n* diagnosis

ած-ա-կան *n* adjective

ած-ան-ց *n* affix

***ած-անց-եալ** *a* derivative, affixed

ած-անց-ել *vt* to derive, add an affix

ած-անց-ում *n* affixation. 2. derivation

ած-ել *vt* 1.hatch, lay eggs. 2.*esp. WA* pour, fill, fetch. 3. play (a musical instrument)

ած-ել-ի *n* razor

ած-իլ-ել *vt* to shave

***ածիլ-ուել** *EA.* -ուիլ *WA vp vr* to be shaved or shave oneself

ածխ-ա-հանք *n* coal mine

ածխ-ան-ալ *vi* to petrify, turn into coal, be carbonized

ածու *n* flower (plant) bed

ածուխ *n* coal, charcoal

ակադեմիա *n* academy

***ա-կամ-այ** *a adv frzn* involuntary, unintentional(ly), unwilling(ly)

ական 1 *n* mine, bomb

ական- 2 *obs gen of* ակն *component in derivatives* 1. eye 2. jewel 3. spring, source

ական-ա-կիտ *a* lucid, limpid

ական-ա-կուռ *a* mounted with gems

ական-ա-պատ *a* mined with bombs

ական-ա-տես *a* eye witness

***ական-ա-ւոր** *a* renowned, prominent

ականջ *n* ear ~ դնել listen, obey, eavesdrop

ականջ-օղ *n* earring

ակատ *see* ագաթ agate

ակ(ն) *n obs* 1. eye 2. jewel 3. spring, source

***ակն-ա-բոյժ** *n* oculist

ակն-ա-գործ *n* jeweler

ակն-ա-ծանք *n* deference, veneration, reverence, respect

ակն-ած-ել *EA.* **-իլ** *WA vt* to revere, look up, venerate

ակն-ա-կապիճ *n* eyelid

***ակն-ա-հաճոյ** *a* agreeable, pleasant, pleasing the eye, good looking

ակն-ա-պար-ար *a* attractive

ակն-առ-ու *a* illustrious, eminent, grand, salient

ակն-արկ *n* 1. hint, clue, allusion 2. glance, glimpse 3. essay

ակն-արկ-ել *vt* to hint, indicate, allude to

ակն-կալ-ել *vt* to expect, anticipate

ակն-կալ-ի-ք *n* expectation, anticipation

***ակն-յայտ** *RO* ակնհայտ *a* evident, apparent, conspicuous

***ակն-յայտ-օրէն** *RO* ակնհայտորեն *adv* evidently, apparently, conspicuously

***ակն-երեւ** *a* evident, obvious

ակն-ոց *n* eye-glasses *(plural refers to more than one pair of eye-glasses)*

ակումբ *n* club

***ակռայ** *WA n* tooth, *see* ատամն *EA*

***ակօս** *RO* ակոս *n* furrow, rut, groove, *fig.* deep wrinkle

***ակօս-ել** *RO* ակոսել *vt* furrow, plough

ահ *n* horror, terror, fright, dread

ա՛հ *int* ah, oh

ահա *adv* here it is, voila! *coll.* there you go

ահա-բեկ-ել *vt* to terrorize, dismay

ահա-բեկ-իչ *n* terrorist

ահ-ա-գին *a* 1. tremendous immense, *coll.* a lot

ահ-ա-գնա-ցու-ալ *vi* intensify, escalate

ահ-ա-զանգ *n* alarm, alarm toll, apprehension

ահ-արկ-ու *a* formidable, overpowering, dreadful

***ահա-ւա-ս-իկ** *RO* ահավասիկ *adv modal* here you are! there it is!

***ահ-ա-ւոր** *a* awful, hideous, horrid

***ահ-եակ** *a obs* left

ահ-եղ *a* horrible, awesome, grisly

աղ *n* salt

աղ-ալ *vt* to grind, mill

աղախին *n* maid, servant

աղաղակ *n* clamor, scream, shriek

աղաղակ-ել *vi* to shout, scream, shriek

աղ-աման *n* salt shaker

աղ-ային *a* saline

աղանդ *n* sect

աղանդեր *n* dessert

աղանձ *n* roasted wheat and/or other grains

աղա-չ-անք *n* plea, appeal

աղա-չ-ել *vt* to plead, beseech, beg

աղ-ա-ջուր *n* brine

աղ-արտ-ել *vt* to soil, ruin, pollute, blemish, stain, tarnish

***աղաւաղ-ել** *RO* աղ-ավաղ-ել *vt* to distort, misconstrue, twist

***աղաւաղ-ում** *RO* աղավաղ-ում *n* distortion

***աղաւն-ա-տուն** *RO* աղավն-ա-տուն *n* dovecote

***աղաւնի** *RO* աղավնի *n* dove, pigeon

աղբ *n* garbage, trash

***աղբ-ա-կոյտ** *n* dump, trash pile, dunghill

աղբ-անոց *n* garbage dump, waste disposal site

աղբար *WA, coll brother, bro, see* եղբայր, ախպեր *EA*

աղբար-իկ *WA dim coll see* եղբայր

***աղբիւր** *n* spring, fountain

աղ-ել *vt* to sift salt, pickle

աղ-ե-կոտոր, -կտուր *a* heart-wrenching

աղեղ *n* bow, arch

***աղեղն-ա-ւոր** *n* archer, Sagittarius

աղէկ *WA adv a* well, good, fine

աղի *a* salty

աղի-ողորմ *a* gut-wrenching, heart-wrenching

***աղիւս** *n* brick

***աղիւսակ** *n* chart, table, graph

աղի-ք *n* intestine, gut

***աղէտ** *RO* աղետ *n* disaster, calamity, cataclysm

աղետ-ա-բեր *n* disastrous, devastating, catastrophic

աղետ-ա-լի-ց *a* disastrous, calamitous

աղերս *n* 1. plea 2. connection, correlation

աղերս-ել *vt* to plead, beg

աղճատ-ել *vt* to distort, twist

աղմկ-ել *vi* to make noise

աղմուկ *n* noise, ~ աղաղակ commotion

աղջ-ա-մուղջ *n* twilight, dusk

աղջիկ *n* 1.girl, maiden 2.daughter 3.girlfriend, beloved 4. *obs* maid, servant

աղտ *n* filth, smut, stain, dirt

***աղտ-եղ-ութիւն** n filthiness

աղտ-ոտ *a* filthy, dirty

աղտ-ոտ-ել *v* to soil, stain, pollute

աղ-ցան *n* salad

***աղու-ա-մազ** *n* down, fluff, fuzz

***աղուէս** *RO* աղվես *n* fox

աղ-ու-հաց *n* bread and salt. ~ ուտել spend time together, be friends

***աղուոր** *WA a* good; pretty, beautiful

***աղուոր-ց-ալ** *WA vi* to become prettier, better, nicer

աղքատ *n a* poor, broke, not wealthy

աղքատ-ան-ալ *vi* to become poor

***աղքատ-ութիւն** *n* poverty

աղքատ-իկ *a* 1. scanty, scarce, insignificant 2. humble, modest

***աղօթ-ա-տուն** *RO* աղոթատուն *n* chapel, prayer room/house

***աղօթ-ել** *RO* աղոթել *vt* to pray

***աղօթ-ք** *RO* աղոթք *n* prayer

***աղօտ** *RO* աղոտ *a* dim, obscure

աճ *n* growth

աճապար-անք *n* haste

աճապար-ել *WA vi* to hurry, rush, *see EA* չտապել

աճ-ել *EA.* -իլ *WA vt vi* to grow

ամայի *a* deserted, empty

աման 1 *n* pot, plate, open container for food

ամա՛ն 2 *intj* 1.wow 2.alas

ամա-չ-ել *EA vi* to be ashamed

ամա-չ-կոտ *a* shy

ամառ *n* summer

ամառ-ան-ոց *n* resort, summer house

ամբաստ-ան-ել *vi* to accuse, charge, incriminate, indict

ամբոխ *n* crowd, mob

ամբ-ողջ *def-prn* all, whole, entire

ամբ-ողջ-ովին *adv* entirely, completely

ամեն-ա *a* most *in comparative degrees of adjectives and adverbs*

*__ամեն-եւին__ *adv* not at all

ամերիկ-ացի *n* American *(ethnonym)*

ամերիկ-ուհի *n* American *(fem. ethnonym)*

*__ամէն 1__ *RO* ամեն *def-prn* every, all

*__ամէ՛ն 2__ *RO* ամեն *intj* amen!

*__ամէն-էն__ *RO* ամենեն *WA,* **ամեն-ից** *EA a* most *(comparative degrees of adjectives and adverbs, see also* ամենա-)

*__ամէնք-ը__ *RO* ամենքը *def-prn* all, everybody

ամիս *n* month

ամչն-ալ *WA vi* to be ashamed, *see EA* ամաչել

ամպ *n* cloud

ամպ-ա-մած *a* cloudy, overcast

ամս-ա-կան *a n* 1. monthly; 2. months old 3. menstruation

ամս-ա-գիր *n* monthly magazine, journal

ամ-ուս-ին *n* husband, spouse

ամուսն-ա-կան *a* marital

ամուսն-ան-ալ *vi* marry

ամուսն-ա-ցած *past-p* married

*__ամուսն-ութիւն__ *n* marriage

ամուր *a* solid, sturdy, firm

ամուրի *a n* bachelor

ամր-ան-ալ *vi* to harden, get sturdy, solidify

ամր-ոց *n* fortress, castle

*__ամօթ__ *RO* ամոթ *n* shame

այբ-ու-բեն *n* alphabet

այգ *n* dawn, sunrise, aurora, daybreak

այգի *EA n* garden, orchard, vineyard, park

այդ *dem* that

*__այդ-պէս__ *RO* այդպես *dem* that way, like that

*__ազգ-այն-ութիւն__ *n* nationalism

այ-ժմ *adv* now

այլ *a* other, diverse

այլ-ոց *pr obs* gen pl of աօռ(ք)

*__այլ-եւս__ *adv* henceforth, no more, no longer

այն *dem* it, that, the further one

*__այն-պէս__ *RO* այնպես *dem* that way

այն-չափ *dem* that much

այն-տեղ *dem* there

այն-քան *dem* that much

այո *particle* yes

այպան-ել *vt* to blame, scold

այս *dem* this, it

այս-չափ *dem* this much

*__այս-պէս__ *RO* այսպես *dem* this way

այս-պիս-ի *dem* such like this

այս-տեղ *dem* here

*__այս-ու-հետ-եւ__ *adv* hereinafter

այս-քան *dem* this much

այս-օր *adv* today

այտ *n* cheek

այտ-ուց *n* swelling, ~ուած tumid *med.*

այր *obs* man, gentleman

այր-ել *vt* to burn, ignite

այր-իլ *WA.* *__-ուել__ *EA vi* to burn

ան *WA dem/prs-prn* he, she, it, that, *see EA* նա

ան-ամ-ոք *a* inconsolable

ան-անկ *WA dem conv* that way, like that, *see* այնպէս

անապատ *n* desert

ան-աս-ուն *n* animal, beast

ան-բան *a* 1. lazy, dumb 2. unable to speak

անգամ *adv* even, just

աճգամ մը *WA.* **մի աճգամ** *EA* *adv* once. *with numeral attributes,* times, e.g., հինգ աճգամ five times

աճ-գեր-ա-զ-աճց-ել-ի *a* insurmountable, insuperable

***աճ-գէտ** *RO* աճգետ *a* unaware, ignoramus, nitwit

***աճգլ-երէն** *n* English language

աճգլի-ացի *n* English *(ethnonym)*

աճգլ-ուհի *n* English *(fem. ethnonym)*

աճգղ *n* buzzard, vulture

աճ-գութ *a* ruthless

աճ-դադար *a adv* incessant(ly), continual(ly)

աճ-դարձ *a* gone, irreversible, irretrievable

աճդր-ա-դառճ-ալ *vt WA* to understand, comprehend. *EA* to reflect, refer

աճ-դրամ *a* without money

աճել *EA vt ir* to do, *see WA* ընել

աճ-եղծ *a* clear, undistorted, authentic

***աճ-երկ-բայ-օրէն** *adv* indubitably

աճէծ-ք *RO* աճեծք *n* curse

աճ-ընճ-տաճ-ի-ք *a* without family

աճիծ-ել *v* curse

աճ-իկ-ա *WA dem prs-prn* he, she, it, *see EA* նա, այն

աճի *WA conv dem* he she it, *see* աճիկա, *EA* էն, էնի

***աճիւ** *RO* աճիվ *n* wheel

աճ-խռով *a* calm, undisturbed, serene

***աճ-ծաճ-օք** *RO* աճծաճօք *a* unfamiliar, unknown, unacquainted

աճ-ծայր-ա-ծիր *a* endless, infinite, boundless

աճ-կախ *a* independent

***աճ-կախ-ութիւճ** *n* independence

աճ-կամ-որք *a* stingy, tightfisted, parsimonious

աճ-կաշկաճդ *a* uninhibited, spontaneous, unconstrained, ingenuous

աճ-կաս-կած *a* undoubted, certain, undisputed

աճ-կար-ել-ի *a* 1.impossible, incredible, 2.forbidden

աճ-կեճդ-աճ *a* lifeless

աճ-կեղծ *a* sincere, true, frank

***աճ-կեղծ-օրէն** *adv* sincerely, frankly

***աճ-կ-է** *WA RO* աճկե *prs-prn* from him/her/there/it, abl of աճ

աճ-համար *a* countless

աճ-համ *a* 1.tasteless, flavorless 2. boring, dull 3. rude

աճ-համա-պատասխան *a* incompatible, inconsistent

***աճ-համա-պատասխան-ութիւճ** *n* incongruity, inconsistency

աճ-հաս *a* inaccessible, unattainable

աճ-հասկ-աց-ող *a* one who does not understand

աճ-հաստ-ատ *a* shaky, unstable, unsteady

աճ-հետ *a* without a trace

***աճ-հիւր-ընճ-կալ** *a* inhospitable

աճ-հոգ *a* carefree, relaxed, calm

աճ-հողդ-ողդ *a* intransigent, unyielding

աճ-հուճ *a* endless

աճձ *n* person, somebody

աճ-ձայճ *a* soundless

***աճձկ-ատ** *adv* longingly

աճձուկ *a esp. WA* 1. tight, narrow 2.*fig.* sadness, loneliness, trouble, longing

***աճձրեւ** *n* rain

***աճձրեւ-ել** *vi* to rain

աճ-մատ-չ-ել-ի *a* unreachable, inaccessible, unavailable

աճ-մարդ-կ-այճ *a* inhuman, inhumane

աճ-մեղ *a* innocent

***աճ-մեղ-ութիւճ** *n* innocence

***աճ-յագ** *a* insatiable

***աճ-յաղորդ** *RO* աճհաղորդ *a* unresponsive, indifferent

***աճ-յարմար** *RO* աճ-հարմար *a* 1. inconvenient, uncomfortable 2.improper, shameful

***աճ-յարմար-ութիւճ** *RO* աճհարմարություճ *n* inconvenience, discomfort

աճ-ճչաճ *a* minor, trivial, insignificant

աճ-ճչմար *a* inconspicuous, unnoticed

***աճ-շէջ** *RO* աճշեջ *a* unquenchable

աճ-ոճ-ք *WA dem /prs-prn* they, *see EA* նրաճք

աճ-ողճ-ա-շար *a* 1.invertebrate 2. *fig.* spineless, fearful

աճ-որ *WA dem /prs-prn* his her its, *see EA* նրա

աճ-որոշ *a* 1.indefinite, infinite 2.infinitive

աճ-ող *WA dem/prs-prn* gen-dat of աճողք, *see EA* ըրաճց

***աճ-ող-ց-մ-է** *WA dem /prs-prn* abl of աճողք, *see EA* ըրաճցից

աճ-ող-ց-մ-ով *WA dem /prs-prn* ins of աճողք, *see EA* ըրաճցով

աճ-ող-ք *WA dem /prs-prn* they, nom pl of աճիկա, *see EA* ըրաճք

***աճու-ակ** *n dim* small wheel, roller

***աճուաճ-ել** *vt* to name, call

աճ-ուղղ-ել-ի *a* irreversible, irretrievable

աճուճ *n* name

աճուշ, աճոյշ *a n* sweet; sweets, confectionery

աճուշ-ա-հոտ *a* 1.fragrant, scented 2. *WA* perfume

աճուշ-եղէն *n* sweets, dessert

աճուշ-իկ *a dim* sweet, sweetie

աճուրջ *n* dream, illusion

անշուշտ *modal* of course, sure

աճ-չափ *a* measureless, extreme

աճ-պատեհ *a* 1. improper 2.untimely

աճջատ-ում *n* separation, parting, disconnection

աճ-սփոփ *a* inconsolable, disheartened, hopeless

***աճ-վերջ-աճ-ալ-ի** *a* endless

***աճ-վերջ-աճ-ալ-ի-օրէն** *adv* endlessly

աճ-վստահ *a* unsure, insecure, not confident

***աճ-վստահ-ութիւն** *n* lack of confidence, distrust, mistrust, disbelief

աճ-վտանգ *a* safe, not dangerous

աճ-տար-բեր *a* indifferent, immune

աճ-տես *a* invisible

աճ-տրամ-ա-դիր *a* sad, undisposed

աճ-տրտ-ունջ *a* without complaint

***աճց-եալ** *a past-p* past, last

աճց-ը-ն-ել *WA vc* spend (time), carry over transfer, *see EA* աճց կացնել, աճցնել

աճց-ն-ել *EA.* **-նիլ** *WA. vi in* pass, cross, traverse

***աճ-ցաւ 1** *RO* աճցավ *a* painless

***աճց-աւ 2** *RO* աճցավ *vt in* 3rd p. *sn* աճցնիլ/աճցնել passed

***աճփոյթ** *a* careless

աճ-օգուտ *a* useless

***աճօթի** աճոթի *WA a* hungry

աշակերտ *n* student, pupil

աշխատ-աճ-ք *n* job, work, business

աշխատ-իլ *WA.* **-ել** *EA vi* to work

աշխատ-ե-ցն-ել *EA* **-ցնել** *WA vc* to make one work

աշխարհ *n* 1.world 2.obs. country, nation

***աշխոյժ** *a* lively, energetic, animated

աշուն *n* fall, autumn

***աչ-ուի** *obs pl* of աչ-ք, regular: աչք-եր

աչ-ուկ *n dim* eye

աչ-ք *n* 1.eye; 2.drawer; 3 envy

ապա *adv* 1. later, then 2. *modal* well!

***ապա-գայ** *n* future

ապա-թարց *n* apostrophe

***ապակ-եղէն** *a n* 1.made of glass 2.glass containers, cups, plates, mugs etc.

ապ-երջանիկ *a* unhappy, miserable, broke

ապակի *n attr* glass

ապաստ-արան *n* asylum, refuge, shelter, sanctuary

***ապա-ցոյց** *n* proof

ապա-ցուց-ել *vt* to prove

ապեր-իկ *EA n coll* brother, bro, *see* եղբայր

ապշ-ել *EA.* **-իլ** *WA vi* to be surprised, fascinated, shocked, astonished

ապուր *n* soup

ապսպր-ել *vt* to order

ապր-ան-ք *n* goods

ապր-ե-ցն-ել *vc* to make live

ապր-իլ *WA.* **-ել** *EA* 1 *vi* to live

ապրիլ 2 *n* April

ապր-ուստ *n* sustenance, living

աջ *a adv* right (side); *fig* successful

առագաստ *n* sail canvas

առ-ած *n* 1. proverb 2. *past-p* of առնել

առ-աճց *prep* without

առ-աճձ-իճ *a* alone, single, separated

առ-անձ-ն-աբ-ալ *vi* to withdraw, isolate; be, stay, keep alone

առ-աջ *post adv* 1.in front of, ahead, before 2.earlier, formerly

առ-աջ-ին *ord* first

առ-աջ-ն-եկ *n* first-born, first child

առ-աջ-ն-որդ *n* leader

առ-աջ-ն-որդ-ել *vt* to lead, guide

առ-աջ-ուց *WA adv* first, first of all, previously

առասպել *n* myth, legend

առատ *a* abundant, bountiful

***առ-արկայ** *n* object, issue

առ-արկայ-ա-կան *a* material, actual

***առ-արկայ-օրէն** *adv* objectively, really, actually

***առ-աւել** *RO* առավել *a* more

***առ-աւել-ա-գոյն** *a* most

***առաւօտ** *RO* առավոտ *n* morning

***առաւօտ-եան** *RO* առավոտյան *adv* in the morning

առաք-ել *vt* to send, transmit, ship

***առաք-ու-ել** *EA.* -ուիլ *WA vp* to be sent, shipped, transported

***առ-եւ-տուր** *n* trade, business, shopping

առիթ *n* chance, excuse, occasion, opportunity

***առիւծ** *n* lion

***առթ-ի** *RO* առթիվ *post* for the occasion of

***առ-կայ** *a* extant

առ-ն-ել *vt ir* to take, get, buy

***առ-ջ-եւ** *post* in front of

առ-ջ-ի *WA coll obs* first, *see* առաջին

առ-ողջ *a* healthy

***առոյգ** *a* lively, vivacious

առու *n* small stream, flow

առտու *WA adv* morning, in the morning, *see EA* առաւօտ

***առ-օր-եայ** *RO* առօրյա *a* everyday, quotidian

աս *WA dem* this, it, *see EA* սա

աս-անկ *WA dem* such, this way, like this, *see EA* այսպէս

ասել *EA vt* to say, *see WA* ըսել

ասդին-անդին *WA adv* here and there, to and fro, *see EA* այս կողմ այն կողմ

աս-ի *WA dem-prn* this, conv. from ասիկա

աս-իկ-ա *WA dem-prn* this, *see EA* այս, սա

***աս-կ-է** *WA dem-prn* abl of աս-իկա, *see EA* սրանից

աս-ոնք *WA dem-prn* these pl of աս-իկա,*see EA* սրանք

աս-որ *WA dem-prn* gen-dat of աս-իկա, *see EA* սրա

***Աստուած** *n* God

աստղ *n* star

աստղ-իկ *n dim* 1. little star 2. *fem* proper name 3.Venus

աս-ք *n* legend, story, tale

ատ *WA dem-prn* that, *from* ատիկա, այդ, *see EA* դա, այդ

ատամ *EA n* tooth, *WA* ակռայ

***ատամն-ա-բոյժ** *n* dentist

ատ-ի *WA dem* he she it, *conv* from ատիկա, *EA* էդ

ատ-անկ *WA dem conv* like that; that way, *see* այդպէս

ատ-ել *vt* hate

***ատ-ել-ութիւն** *n* hatred

ատեն *WA n* time, span

***ատեն-օք** *WA adv* formerly, once, long ago, once upon a time

ատ-իկ-ա *pr* that

ատ-որ *WA dem* gen-dat of ատ

արաբ *n* Arab, Arabic *(ethnonym)*

արաբ-ա-կան *a* Arabic

***արաբ-երէն** *n* Arabic *language*

արագ *adv a* quick, fast, speedy, rapid

***արագ-ա-գոյն** *adv a* fastest

արագ-ընթ-աց *a adv* fast moving, express

արագիլ *n* stork

արատ *n* vice, defect

ար-ար-ած *n* creature

Արարատ *n* Ararat, the Biblical mount in historic Armenia

ար-ար-իչ *n* creator, Արարիչ God

արբ-են-ալ *vi* to get inspired, high

արգ-ել-ք *n* prohibition, ban, sanction

արգիլ-ել *WA.* **արգել-ել** *EA* *vi* to prohibit, forbid, ban

արդ *adv modal* now

արդ-ար *a* just, righteous

***արդ-ար-ութիւն** *n* justice

***արդ-էն** *RO* արդեն *adv* already

***արդ-եօք** *RO* արդեոք *modal* is that true; (I) wonder if

***արդ-իւն-ք** *n* result

արեգ-ակ *n* sun, poet. արեւ is the usual word

***արեւ** *n* sun

***արեւ-ելք** *n* east

***արեւ-մուտ-ք** *n* west

արեան-ա-կից *n a* blood relative, *see also* արիւնակից

***արեան-ա-կց-ութիւն** *n* consanguinity

արթ-ն-ա-ն-ալ *EA.* **-ննալ** *WA* *vi* to wake up

արթ-ն-ացն-ել *EA.* **-նցնել** *WA* *vc* to wake up, awaken

արթ-ուն *a* awake, alert

արժ-ան-ան-ալ *vt* to deserve, become worthy

արժ-են-ալ *vt* to cost, be valued, priced

***արժ-էք** *RO* արժեք *n* value, cost, price

արի 1 1. *a n* brave 2. male proper name

արի 2 *EA* come! *imperative* from գալ

***արիւն** *n* blood

***արիւն-ալ-ի** *a* bloody

***արիւն-ա-կց-ութիւն** *n* consanguinity

***արիւն-ա-կից** *a n* blood-relative, blood-related

***արիւն-ա-քամ** *a* bleeding, drained of blood

***արիւն-ոտ** *a* bloody, sanguine

արծաթ *n attr* silver

***արծաթ-եղէն** *n a* silver jewelry and craft

***արծաթ-աւուն** *a* silvery

***արծիւ** *RO* արծիվ *n* eagle

արկած *n* 1.adventure 2.*WA* accidcnt

***արկած-ա-խնդր-ութիւն** *n* adventure

արձ-ակ-ուրդ *n* vacation, day-off; holiday

արձ-ան *n* statue

***արմաւ** *n* date, the fruit

***արմաւ-ենի** *n* palm tree

արն-ա-վառ *a* blood-baked

արն-ոտ *a conv* bloody, *see standard* արիւնոտ

***արշա-լոյս** *n* dawn, sunrise, daybreak

արջ *n* bear

արջ-ուկ *n dim* little bear, teddy bear

արտ *n* crop field

***արտեւան-ունք** *n* eyelash

արու *a n* masculine; male

արփի *n* sun, sol poet., արեւ is the usual word

***արքայ** *n* king

արքայ-ա-կան *a* royal, kingly

արք-ուն-ի-ք *n* royal court

***աւագ** *RO* ավագ *a n* senior, older

***աւազ** *RO* ավազ *n* sand

***աւազ-ուտ** *RO* ավազուտ *n* sandy terrain

***աւանդ** *RO* ավանդ *n* 1. legacy, heritage 2. deposit

***աւանդ-ութիւն** *RO* ավանդություն *n* 1.tradition, rite 2. legend

***աւար** *RO* ավար *n* loot, plunder

***աւարտ** *RO* ավարտ *n* end, finish, conclusion

***աւարտ-ա-կան** *RO* ավարտ-ական *a n* 1. final 2.certificate

***աւարտ-ել** *RO* ավարտել *vt* to end, complete, finish; to graduate

***աւարտ-ու-ել** *EA.* -(ու)իլ *WA* *RO* ավարտվել /վիլ *vp* to be finished, completed

***աւել** *RO* ավել *n* broom

***աւել-ի** *RO* ավելի *a* more

***աւեր-ել** *EA RO* ավերել *vt* to destroy, ruin, destruct, *see WA* աւրել

***աւեր-ու-ել** *EA RO* ավերվել *vp, ref* to be destroyed, demolished

***աւետիս** *RO* ավետիս *n* 1. good news 2. male proper name

***աւիշ** *RO* ավիշ *n* sap, juice

***աւիւն** *RO* ավյուն *n* energy

***աւլ-ել** *RO* ավլել *vt* to sweep

***աւր-ել** *WA RO* ավրել *vt* to damage, wreck, ruin, break, destroy, shatter, *see EA* ավերել, փչացնել

***աւր-(ու)-իլ** *WA RO* ավրվիլ *vp* be or get wrecked, ruined, broken, destroyed, *see EA* ավերվել, փչանալ

***Աւետեաց երկիր** *RO* Ավետեաց երկիր Promised land

ափ *n* 1.palm (hand) 2. shore
ափ-ունք *n* shores, coast
աքսոր *n* exile

Բ բ

բաղ *n* duck
***բազէ** *RO* բազէ *n* hawk, falcon
բազկ-աթոռ *n* arm chair
բազկ-երակ *n* pulse
***բազմ-ա-գոյն** *a* colorful, multicolor
բազմ-ա-զան *a* various, variegated
***բազմ-ա-թիւ** *a* numerous, multitudinous
***բազմ-ա-կէտ** *RO* բազմ-ա-կետ *n* ellipsis
բազմ-ան-ալ *vi* to multiply, grow, develop, reproduce
բազմ-ել *vi* to recline
բազմ-ոց *n* sofa, couch
***բազմ-ութիւն** *n* 1. multitude 2. crowd
բազուկ *n* forearm, arm
բազում *a* numerous, multitudinous
բաժակ *n EA* glass, cup, tumbler
բաժ-ան-ել *EA.* **-ժնել** *WA vi* to divide, separate
***բաժ-ան-ուել** *EA.* **-ժնուիլ** *WA vp, recp* 1. to part, be separated 2. to get divorce
բաժ-ան-ում *n* division, detachment, separation, departure
բաժ-ին *n* 1.share, portion, part 2. section, department
բալասան *n conv* balm, balsam, nepenthes
բախել *vt* 1. to collide, ram (interests, sides) 2.to knock, strike
բախ-ում *n* collision, impact
բախտ *n* 1. luck, fortune 2. destiny, fate
***բախտ-ա-ւոր** *a* lucky, fortunate
բակ *n* yard, lot
բահ *n* spade
բաղ-ա-ձայն *n* 1. consonant 2.tone deaf
բաղդատ-ա-կան *a* comparative
բաղդատ-ել *vt* to compare
բաղկ-ան-ալ *vi* to consist of
բաղձ-ան-ք *n* desire, wish, fancy, daydream
բաղնի-ս *n EA* bathroom, bath
բաղնի-ք *n* bathroom
բաճկոն *n* waistcoat
բամբակ *n* cotton
բամ-բաս-անք *n* gossip
բամ-բաս-ել *vi* to gossip
բայ *n* verb
բայց *conj* but
բա-ն *n* 1. thing, issue, something 2. *obs* word, speech
բանակ *n* army
բան-ա-կան *a* rational, reasonable
***բան-ա-կան-ութիւն** *n* reasoning, logic, conscience
բանակ-ում *n WA* camping
բան-ալ *vt* to open, reveal
բան-ալ-ի *n* 1. key 2. clue, hint
բան-ա-ստեղծ *n* poet
***բան-ա-վէճ** *RO* բանավեճ *n* discussion, argument
բան-ա-կց-ել *EA.* **-իլ** *WA v recp* to negotiate
***բան-ա-կց-ութիւն** *n* negotiation
բա-ն-ել *EA.* **-իլ** *WA vi* to work, toil
բան-ե-ցն-ել *vc* work, labor
բանկ *n* bank *see* also դրամատուն
***բան-ու-որ** *n* laborer, worker
***բանջար-եղէն** *n* vegetables
բանտ *n* prison
***բանտ-արկ-եալ** *n frzn* prisoner
բանտ-արկ-ել *vt* to imprison, incarcerate
բանտ-ել *vt fig.* imprison, intern
բաշխ-ել *vt* to distribute, share, give away
բառ *n* word
բառ-ա-խաղ *n* pun, play of words
բառ-արան *n* dictionary
բառ-ացի *a* literal (meaning)
բարակ 1 *a* thin, lean, slim
բարակ 2 *n* hound
բարակ-ել *EA.* **-նալ** *WA vi* to thin down
բար-ա-տու *a coll* fruitful
բար-բառ *n* dialect

բար-բառ-ել *vt* to utter, enunciate, speak

բարդ *a* complex, complicated

***բար-եաց-ա-կամ** *a* well-wishing

բար-ե-բախտ-աբար *adv* fortunately

բար-ե-գործ *n* benefactor

բար-ե-գործ-ա-կան *a* benevolent, charitable

***բար-ե-գործ-ութիւն** *n* charity, altruism

բար-ե-կամ *n* 1. *WA* friend, companion 2.*EA* relative

***բար-ե-կամ-ութիւն** *n* friendship, goodwill

բար-ե-կամ-ուհի *n fem* 1*WA* friend, companion 2.*EA* relative

բար-ե-կեց-իկ *a* affluent, prosperous

***բար-ե-կեց-ութիւն** *n* 1. well-being, prosperity 2. affluence, opulence

բար-եր-կիրք *a* civil, polite, educated

բար-ե-մաղթ-ան-ք *n* well-wishes, best wishes, regards

բար-ե-պատ-եհ *a* fortunate, propitious, well-timed, favorable

բար-ե-րար *n* benefactor

***բար-եւ** *n* hello, hi, salutation

***բար-եւ-ել** *vt* to greet, say hello

բարի *a* 1.kind, good-hearted 2.noble, gentle

բար-ի-ք *n* goodness, good deed

բարկ *a* scorching, blazing (sun, heat)

բարկ-ան-ալ *vi* get angry, mad, furious

բարկ-ա-ցն-ել *vc* to anger, madden, annoy, enrage, infuriate

***բարկ-ութիւն** *n* anger

բարձ *n* pillow, cushion

բարձ-ունք *n* hill, elevation

բարձր *a* 1.high 2.tall

բարձր-ա-հասակ *a* tall

բարձր-ա-ձայն *a* loud

բարձր-ան-ալ *vi* to ascend, go/get up,

բարձր-ա-ցն-ել *vc* to raise, elevate, ascend

բարոյ-ա-կան *a* moral, ethical, just

***բար-ութիւն** *n* kindness, generosity

բարդի *EA.* **բարտի** *WA* *n* aspen tree

բար-ք *n* morals, ethics

բա-ց *a* 1. open 2. light (color); *EA* ~ թողնել to miss, fail to take. *see WA* փախցնել

***բաց-ա-կայ** *a* absent

բաց-ա-կայ-ել *vi* to be absent

***բաց-ա-կայ-ութիւն** *n* absence

բա-ց-ա-կանչ-ել *vt* to exclaim, shout

***բաց-ա-յայտ** բացահայտ *a* obvious, apparent

***բաց-ա-յայտ-իչ** *n ling.* appositive

բաց-առ-իկ *a* exceptional, exclusive, elite, sole

բա-ց-ա-տր-ա-կան *a* explanatory

բա-ց-ա-տր-ել *vt* to explain, comment

բաց-արձ-ակ *a adv* absolute, utter, complete

բա-ց-ել *EA vt* to open

բա-ց-ի *post* except

բացիկ *n EA* post card

բա-ց-իչ *n* can opener

***բա-ց-ու-ել** *EA.* **-ուիլ** *WA* *vi, vp* 1.to be opened, revealed, exposed 2.to flourish

բա-ց-ում *n* opening, inauguration

***բաւ** *RO* բավ *attr* enough, sufficient

***բաւ-ա-կան** *RO* բավական *a adv* enough, ample, sufficient, *fem proper name*

***բաւ-ել** *RO* բավ-ել *vi* to suffice, satisfy, be enough

բեղ բեղ *EA n* mustache, *see WA* պեխ

